այլ քարշեց. Ասաց սուրբն անտոն.
չէ՛ այդպէս չէ.

փէք քաշէ ինչ խառուր ուժ ունիս։
Նա դարձաւ ասաց թէ, թէ որ մյլ
փէք քաշեմ, լարն և քիրիշն կու կտրի։
Այս չիունքի այդպէս է ասաց՝ տիկ
տէն թօղ տուր։ Նա այլ ասաց թէ, թէ
որ տիփտէն թող որ թողում, նետն ՚ի
նշան ետերին չի հասնիր։ Հայ ասաց այդ-
պէս է։ Տէ խիմոի ասաց՝ ես այլ թէ
զիմ խեղճ միաքանքն որ տայիմ սխմեմ
և շունչ որ առնել չիտամ նէ, կու կըռ-
րին կու յուսահատին. և թէ ամենևին
թուլ թողում, ՚ի նշան ետերին չեն հա
սանիր յարքայութիւնն երկնից։

Այժմ քեզ ասեմ ինչ պէս որ սրբն
անտօն ասաց այն եթովպացւոյն։
բարոյական առաքինութիւն է մէկ նետ
և աղեղ մի. և դու նետահար և քեմեն
քեաշ. Թէ որ քան զչափն առաւել
կամեցար առաքինանալ, զմարմինդ
մինչ ՚ի մահանալ ճնշելով, խլտէ զլարն
կտրէցէր

և յարքունի ճամբէն 'ի դուրս ելար. Նաւ թէ ամենևին թուլ և ծուլ կեցար, ըղձարմինդ պարարեցիր և զհոգւոյդ թէտարիքն որ չի տեսար, իշտէ 'ի նըշան եէլին յարքայութիւնն չի ժամանեցիր.

Նորա համար սուրբ գրիգոր ա̃ծաբանն կասէ քի, առաքինութիւնն կայանայ 'ի միջոցի. Որ յերկուց կողմանց անկեալն է' 'ի խոտորումն չարութեան է. Այսէ որ 'ի մէջ զղման կասենք քի, յաջ և յահեակ խոտորելով. Իսկ բարոյական առաքինութիւնքն' յաջէն և յահեկէն զմարդն յետ կու քարշեն և 'ի միջին ճանապարհն կուղղեն զմարդոյ հոգին. Այժմ ասեմ թէ, քանի՞ են բարոյական առաքինութիւնքն են չորս. Առաջինն խոհեմութիւն. երկրորդն արիութիւն. երրորդն ողջախոհութի̃. և չորրորդն արդարութիւն. Խոհեմութիւնն է' առաքինութիւն բանականին. Արիութիւնն է'

առաքինութիւն ցասմնականին. Ողջա-
խոհութին է՝ առաքինութի ցանկակա-
նին. և Արդարութին է՝ առաքինու-
թիւն բոլոր անձին.

*Բարոյական առաքի նի՛
յայնժամ լինիս կատար եալ,
Յորժամ հոգիդ քո զօրդա րի՛
բարեօք լինի երա նեալ.

**************

## Հարցումն Ժ.Ա.

### Յաղագս Խոհեմութեան. Որ է առաջին Բարոյական Առաքինութեան.

Խոհեմութիւնն է առաքինութիւն որ անով սէչմիշ կանեմք զչարն և զբարին 'ի մէկմէկէ. զլաւն և զվատն կու ընտրեմք. զժամանակին բարեպէս կու մատակարարեմք. մտածելով զանցեալն. իմանալով զներկայն. և զգուշանալով յապառնեաց. Օ՛ այս խոհեմութիւն կուսանիմք մեք 'ի մեղուաց. որ թէ- պէտ շատ ծաղկանց վերայ կու

Ե նըս

նստին , լաքին զպխտանին կու հաւա
քեն և մեղր կու լինեն. Նայս պէտք է
մարդուն սէյմիշ անել զխօսից լաւն և
վատն. զէրէ ինչ պէս կու ընտրեմք ըզ
մանձայի լաւն , այսպէս և զխօսից լաւն
պիտի ընտրեմք. Պարձեալ՝ զխոհե
մութի կու սուցանէ մեզ մրջիւնն. որ
է խառընձան. որ յամարայնի ժամա
նակն կու ժողովէ զձմերվան կերակրիկն
որ սովամահ չի լինի. և ետէ ժողոված
զահրէյէկն նէմլէնմիշ որ լինի նէ ,
յարեւի դէմն կու հանէ կու չորցնէ և
թէգրարէն 'ինեւրա կու ժողովէ. և չի
բուսանի տէյի՝ զցորենկըներն 'ի մէջէն
երկու կտոր կանէ. և խոհեմութեամբ
գխաելով զանձրեւու գալն՝ եվէտի 'ի
բոյնն կու վազէ կըմտանէ. Պարձէլ՝
կու սուցանէ զխոհեմութիւն մեզի օձն.

որ 'ի տարին մէկ անգամ զհին
շապիկն և խորխն կու մեր
կանայ՝ յօրինակ

խոստովանութեան. և թէ տուշմանի
դէմ ենէ, զբոլոր անձն դէմ կու տայ
վերայ և զարնելու, և ջանք կանէ ըղ-
գլուխն պահել. զէրէ գիտէ՝ որ թէ
գլուխն ջախջախի, ինքն կու մեռանի.
Այսպէս պիտոր անէ քրիստոնէ-
մարդն. զամէն բան տայ 'ի դիպօղ
ժամու. և հաւատան որ է գլուխ ամե-
նայն բարեաց՝ չիտայ և չուրանայ.
Այս գործ խոստովանութեան է՝ ո՛չ խա-
բել զայլս և ո՛չ խաբիլ յայլոց.
Սորա համար քս̃ ասաց թէ, եղե-
րո՛ւք խորագէտք իբրև զօձս՝ որ չի խաբ-
վիք յայլոց. և միամիտք իբրև զա-
ղաւնիս՝ որ չի խաբէք զայլս.

*Խոստովանութիւնն է փէրա ահէթ.
մարդոյն մախսուս բարու թիւն.
Ով որ խոստեամ որ լի նիցի.
է կատարեալ իմաս տուն.

## Հարցումն Ժ.Բ.

## Յաղագս Արիութեան. Որ է Երկրորդ Բարոյական Առաքինութիւն.

Արիութիւնն է մի առաքինութիւն և զօրութիւն՝ որով տանի զամենայն դժուարն իրաց սիրով. որ ո՛չ ի յաջողմունս հպարտանայ, և ո՛չ ի ձախորդութիւնս տրտմի և թուլանայ. Արիութիւն կու կայանայ ի հինգ. Առաջինն է՝ որ մարդ յուսով և քաջութեամբ ձեռնարկէ ի բարձրագոյն առաքինութիւնս և չի յուսահատիր վասն բարձրութեան գործոյն. այսպէս ասաց Քս առաքելոցն սպառազինելով ընդդէմ մահու. մի՛ երկնչիք յայնցանէ որք սպանանեն զմարմին. Երկրորդն է՝ որ մարդ խոտորի և սափմիշ լինի յերկրաւորաց. ինչպէս մովսէս որ ուրացաւ լինել որդի փարաւոնի աղջկանն. Երրորդն է՝ որ մարդ համբերութեամբ տանի և կրէ զնե-



ղու

գութիւ սիրով. վերջ զօրաւոր է իբ-
րև զմահ սէր. Չորրորդն է որ մարդ-
ամէն փորձութե և պատերազմի դէմ կե-
նայ խալխանի պէս. վերջ ո՛չ ոք կարէ
պատմելն, եթէ կարգաւ և օրինօք որ
չի պատերազմի. Հինգերորդն է որ
մարդ յաղթէ և գէթհ անէ զամէն
մոլութիւ. վերջ կեանք մարդոյ՝ մեծ
ձէնկ մի է յաշխարհի վր.

*Էր դու արի և այր քա ըն՛
որպէս կորիւն առիւ ծոյ.
Մ՛ի՛ լքանիր ՚ի դժուա րին՛
և մ՛ի՛ յաղթիր ՚ի քը նոյ.

✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻

## Հարցումն Ժ.Գ.

## Յաղագս Ողջախոհութե. Որ է Երրորդ Բարոյական Առաքինութի.

Ողջախոհութին է սանձ ամենայն անկարգ ցանկութեց. որ անով մարդ զինքն պակ կանէ ՚ի նաշէրի սիրոյ աշխարհի և սէֆայէ.



Ոչ

Սէրն թէպէտ ամ զցանկական զօ-
րութիւն կապեր է ՚ի մարդն , լաւին
զանկարգ և գէշը ցանկութիւն խառնը-
ներ է ՚ի մարդս՝ որ ՚ի հայվաններուն
անխելմիշ էին . և զցանկութիւն պէտքիտ
և պիտանական գիտնայ միայն մի որդեծը-
նութեան և պարտուց հատուցման .
Լաքին զայս երկուքն այլ խափաներ
է ՚ի կուսանաց ՚ի վարդապետաց և ՚ի
կրօնաւորաց և՚ի ճշմարիտ այրեաց .
Պարձեալ՝ ողջախոհութիւն է որ մարդ-
կիւշման լինալու գործ չէ գործէ . և
՚ի խանօնէն տաշրայ չելանէ . այլ նուա-
ճէ զցանկութիւն ՚ի ներքոյ լծոյ բա-
նականութե . Սէրն ՚ի մէջ ամ մե-
ղաց՝ բըղջախոհութե հեշտութիւն շու-
տով կանցանի . և որդն խղճմտանաց
շատ կու տանջէ զգործօղն նաշէլի ցան-
կութեան . որ ինչ խըտար յառաջ կու-
սիրեր զցանկալին , յետ գործելոյն՝ այլ
առաւել կու ատէ . Ինչպէս յայտ է


՚ի

’ի դաւթի մարգարէի որդւոյն ամօնայ․
որ ինչ խորտար շատ կու սիրէր յառաջ
ըզթամար, յետ գործելոյն զչարութի̄՛
այն քան շատ ատեց․

Իլաքի յորժամ իմանայ մարդ թէ իւր
գործած չարիքն պէյան է եղեր․ տե՛ս
դու զխասաէվէթն․ պօյուն պուրուն
լինիլն․ որ ցանկութիւնն անցաւ, և րէ-
զիլութիւնն տիրեց իրեն․ Սորա հա-
մար րէզիլ չի լինիմ տէյի և յա̃յ աշա-
ցըն չէլանեմ տէյի՛ ողջախոհ մըն յով-
սէփի գեղեցիկն՛ այն խորտար պէրզահի
հափսի և բանտի համբերեց․

Այս սուրբն շուշան մէջիւ չի տըլ̂աւ
այն չար ծեր դատաւորներուն․ որ թէ
պէտ գիտէր՛ թէ որ մէջիւ չի տայ՛
իֆտիրայ պիտիր անեն և զինքն սպան-
նել տան, լաքին լաւ համարեցաւ մե-
ռանիլ՛ և ոչ զսուրբ անունն աղտոտել
և րէզիլ լինիլ և յա̃յ աշացն ելանել․
Այս մասունք ողջախոհութեան երեք

 են․

են. զգաստութիւն, ժուժկալութի՛ւն, և համեստութիւն.

Զգաստութիւնն է յուտելեան և յըմպելեան. զէրէ շատ ուտելն և ըմ-պելն ալէվլէնտիրմիշ կանեն զցանկու-թիւնն. Երկրորդ՝ Ժուժկալութի՛ւն. որ մարդ սիրտը ծննդական անդամոցն չի հետևի. Երրորդն է համեստութիւնն. և այս է բերանոյն. որ միտ խօսքեր չի խօսի. զէրէ միտ բերանն՝ միտ հոգ-ւոյ նշանակ է. այլ ինչպէս որ միտ խօսք խօսելն վատ է, այսպէս և լսելն. որ կու բորբոքէ զսիրտն մարդուն.

Նմանապէս և աչօք տրած հայելն կու հալէ զմարդու սիրտն. Անոր համար յոբ երանելին ուխտ եդիր իւր աչացն որ ՚ի կոյս չի նայի. Նոյնպէս և ըղ հոտոտելիքն զապդ անել սիրտի. զէրէ միսք և ամպեր և այլ անուշահոտ իւ-ղերն կու գրգռեն զըղջախոհին սիրտն. և այս չար իւղերօք կու հետևին իւ-



ղ

լաւքին չնացող մարդիքն·

*Դու՛ր պահապան ըզգայու Թեանց՝
Թէ որ կամիս ազա տիլ·
Մի՛ հետևիր չար ցանկու Թեանց՝
Թէ չես կամիր փուշմանիլ·

************

## Հարցումն Ժ.Գ.

### Յաղագս Արդարութե. Ո՞վ է՛ Չորրորդ Բարոյական Առաքինութիւնն.

Արդարութիւնն է հաւասարաբաշխ առաքինութիւն որ հատուցանէ ամենեցուն ըստ լայեխին իւրոյ· որում պատիւ· որում երկիւղ· որում խնամք· Լաւքին արդարութեն՝ ամէն առաքինութեն հետ խառն է· Եւ արդարութիւնն է որ կուսուցանէ քի՛ զա՜ծ ինչ պէս պէտք է պատուել և պաշտել 'ի վեր քան զա՜մ· Գութալ և ըռահմ աներ ծնողաց՝ արիւնակցաց՝ և ամենայն ներղելոց· Շնորհակալ լինիլ ըղ բարերարէն · և զմուխապիլէն աներ

այն

այն բարեբարութեան. Մշտամնջիր և տապալածի լինիլ ամ անիրաւութեց և զըրկանաց. և չի թողուլ խարը և զրուլում լինալ մեկի մի։ Ճշմարտախօս լինալ յամմի. չարին՝ բարի չասել. բարւոյն՝ չար չասել. լուսոյն խաւար չասել, և խաւարին լոյս չասել. Մէ դարձեալ՝ արդարութի է մեծին պատիւ անել և իմթիպար. հաւասարին և ախրանին հետն սիրով կենալ. և պըզտըկին քան զինքն ռահմ անել և խնամել. Դարձեալ՝ արդարութի է որ մարդ իւրն մուխթայիս բանին միայն խառնըվի. և իր մուխթայիս չեղած և սըփարիշ չեղած բանին չի մօտենայ. Որ թէ չէ՛ նէ՝ յանդուգն և ամբարտաւան է այնպիսի մարդն. և նիզամի ինթիզամի հակառակ. և խըլամ խապուլ չանօղ.

*Տէ՛ր դու խոնարհ տիրեմեղական. մի՛ փրկանոր
ԹԷ ՄՏ ԷՍ. Էմո՛ զՄՏ ՄՏ փոն զոՄն,
և մի՛ տանէք փորձուած էս.



Պըրուխ

## Գլուխ Երրորդ·

## Յաղագս եօթն Պարգևաց Հոգւոյն սրբոյ·

### Հարցումն Ա·

Հոգւոյն սրբոյ պարգևքն՝ է ընծայ և փեշքեշ մարմնացեալ բանին այ · որ իւր հաւատին եկեղեցւոյ եբեր յերկնից իբրև զընծայ և զարդ· Ո՞ էրէ այն տասն պարգևք որ կու տրուի ՚ի ձեռմերատութէ տվողին · և ո՛չ թէ յարժանաւորութենէ ընդունողին· Եւ եօթն են պարգևքս այսոքիկ · զէրէ եօթն են և մահացու մեղքերն · որք կու արտաքսին այս եօթն պարգևօքս · զէրէ Երկիւղն որ է պարգև հոգւոյն սբյ , կու արտաքսէ զհպարտութիւնն· երկրորդ պարգևն է Գթութին· և այս կու հալածէ զնախանձն· երրորդն է Գիտութին ·

թեան. և այս կու հալածէ զբարկութիւն.
չորրորդն է Օ օրութիւն. և այս կու հա
լածէ զծուլութիւն. Ե, Խրատն է. և
այս կու հալածէ զագահութիւնն.
Զ, Հանճարն. և այս կու հալածէ զորկ
րամոլութիւն. Է, Իմաստութիւն. և այս
հալածէ զըղջախոհութիւնս. Դարձեալ
երկու են կեանք. տեսական և գործ
նական. Տեսականն է մտաց և հոգ
ւոյն. որ կու նմանեցընէ զմարդն հրեշ
տակներուն. Երկրորդն է Գործնա
կան. որ զմարդն կատարեալ մարդ
կանէ. արդ Տեսական կենաց՝ երեք
պարգևք պէճիտք են. նախ Երկիւղն.
որով պիտոր պատկառանօք պաշտեմք
զԱստուած. երկրորդ Հանճարն. որ անով
ճանաչեմք զճշմարտութիւն. երրորդ Իմաս
տութիւն. որ անով պիտոր ճաշակեմք
ըզբարութիւն. իսկ Գործնական կեան
քըն՝ ունի զգթութիւն ՚ի գործել ըզ
բարիս. զարիութիւն և զզօրու
թիւն առ ՚ի համ

բերել. զպիտութիւն առ 'ի յուղղել
ըղփթութիւն. և զխրատ առ 'ի յուղղել
զզօրութիւն.

Հոգին սուրբ աստուած է տրտմանօք ճշմ սիրտ.
եօթերորդ պարգեւացն են եօթն հոգւոյն սրբոյ.

**************

Հարցումն Բ.

Յաղագս առաջին Պարգեւին, որ է Իմաստութիւնն.

Իմաստութիւն է պարգեւ հոգւոյն սրբոյ որ անով կու ճանաչեմք զԱծ. զերէ թէպէտ հաւատով ևս ճանաչեմք զԱծ, լոյսին հաւատոյն առանց քննութե կու ցուցանէ զԱծ. իսկ իմաստութիւնն ետրորմձի կու լինի հաւատոյն. և կու խրատէ զմարդն ասելով թէ՝ հաւատոյ վկայութեան իմանի մեծարգէ րէ ճշմարիտ է ասացածն. Մերթ իմաստութեամբ կու ճանաչեմք զԱծ 'ի ձեռն կրթութեան. որ զայս չունի հաւատն. քանզի



հա

հաւատն առանց քննութեան կուրու-
ցանէ հաւատալ զհաւատալին և զսէպէպն
չի թողուր որոնել և փնտրտել. Ու է
դարձեալ՝ իմաստութբ կու ճաշակեմք
զայն քաղցրութին. կեցյաքի հաւատն
կասէ զած քաղցր և անուշ, և իմաս-
տութին ճաշակել կուտայ թէրճիպէյ-
ով և փորձիւ. զէրէ իմաստութեամբ
կու լինիմք հասունք. որ հաւատով կու
ճանաչէաք մըթարար և փէրտէյով.
Ո՛նոր համար վարդապետք կասէն թէ,
իմաստութին է բարեգոյն ծանօթու-
թիւն ածայնոց, և իմացական ճանա-
չումն յաւիտենական
կենաց.

*Իմաստութիւնն է լոյս մը տաց՝
որով հաւատըն փայ լէ.
Ով զայս պարգև հոգւոյն չու նի՝
կոյր է՝ լմէ և աչք ու նի.



Հար

## Հարցումն Գ.

### Յաղագս երկրորդ պարգեւի Հոգւոյն սրբոյ որ է Հանճարն.

Հանճարն է շնորհ իմանալոյ զվերկական նշանակութիւն բնական և կացուցեալ նշանաց. Շնորհ իմանալոյ՝ անոր համար կասէ, զերբէ մարդ քանի որ յաշխարհի վերայ է՝ խաւար տգիտութեան ծածկեր է զմիտքն մարդու. և լոյսն հանճարոյ՝ կու փարատէ զայն խաւարն 'ի մտաց մարդու. Իսկ խաւարն է մեղքն որ կու մըթացնէ զմիտն մարդոյ. Ինչպէս հրեաներն որ փէրատէ ունէին կախած 'ի վերայ երեսաց. և զխորհուրդներն քո որ ծածկած էր 'ի ներքոյ հին օրինաց մարգարէութեանց և օրինակաց՝ չէին կարեր իմանալ. այլ մեք որ հաւատացաք 'ի քո՝ այն ծածկըւածներն մեզի պէյան եղան և փէր տէն վերցըւաւ 'ի մեր

մը

մրտացն . և զքո էշկեարէ ճանաչեցաք . Այսպէս և մեղքն մեկ փէրտէ մի է . և յորժամ որ ապաշխարութեամբ ոչըն-չանայ , յայնժամ կու ճանաչեմք զմեր փրկութեան պէճիտ բաներն շնորհիւ

հանճարոյ .

Փրկական նշանակութիւն՝ անոր հա-մար կասէ որ , զէրէ 'ի սուրբ գրքե-րուն մէջն ծածուկ բաներ և սըռներ շատ կան . և մեզ խապիր չէ որ զա-նոնք առանց օրինակներու իմանամք . անոր համար ած տուաւ մեզ զպարգև հանճարոյն որ անով իմանամք թէ , 'ի սուրբ գրոց մէջն ի՞նչ խրտար բան կայ մեզի իմանալու փրկական օրինակներ և գուշակութիք . Անական և կացու-ցեալ իրաց՝ անոր համար կասէ , զէրէ բան չիկայ յաշխարհի վերայ որ մեզի զած ցոյց չիտայ և չի յորդորէ 'ի սի-րել զած . և զայս առնէ 'ի մեզ հան-ճարն . Անոր համար հանճարոյն կաս-

վէքի , զամէն ան-

Երև

Երևոյթ բանէրն մեզի երևելի կանէ.
և անճար բանից ճար և մէտար կանէ.

Հանճարն է լոյս՝ որով անյայտքըն յայտնին.
անճարք խոյս՝ որով հընարք գըտանին.

**************

## Հարցումն Գ.

### Յաղագս երրորդ Պարգևի Հոգւոյն սրբոյ որ է Խորհուրդն.

Խորհուրդն է խրատ հոգւոյն սրբոյ որ 'ի մէջ դժուար և չէթին իրաց տայ ընտրութիւն առնել. այսինքն 'ի մէջ տեսական և գործնական առաքինութեց. Նոյ կամ թէ՝ Խորհուրդն է ընտրութիւն մին դժուար գործոց առ 'ի գտանել զըարեգոյն կերպ գործելոյ վասն վախճանի. Արդ գիտացի՛ր, որ խորհուրդն է մէկ միւշավէրէ մի. որ կուլինի վասն չէթին գործքերու. Ինչ պ̄ որ են աւետարանական խրատներն յաւելեալ 'ի վերայ

ածաշունչ գրոց պատուիրանաց ։

Ինչպէս այն որ կասէ քս̃ թէ , ով որ գքո մէկ երեսն հարկանէ՝ դարձուր զմէկալ երեսդ ։ ով որ զքեզ քարշելով կու տանի մէկ միլ մի տեղ՝ դու հետ նորա գնա երկու միլ ։ որ չարին հակառակ չերևիս ։ այլ քո համբերութեամբդ յաղթես զանոր զօրութիւնն ։ Նաև թէ՝ պէտք է վաճառել զամենայն ինչ և տալ աղքատաց ։ որ է խրատ կատարելութեան և ոչ խր

րատ պատուիրանի ։

Նաև այլ այսպիսիք շատ կան որ աւետարանական խրատ և խորհուրդ կավին ։ որ այսպիսի խրատներու մէջն խորհրդով պիտիր վարվին որ զձարն գտնես ։ Օ՛ էրէ պարզի քէրրէ մարդկիր խուվէթն ապաւինելով առանց միւշավէրէի շատ պէրզահներու կու հանդիպի ։ լաւքին զմարդու խուվէթն միւշավէրէն կու կառավարէ ։ և զայն բանն որ խուվէթով չես կարեր

անել՝ մուշավէրէն զանոր ճարն կու
գտնէ մէկ թէթիկով մը ·

Մէ լաւքին այս խորհուրդս և մուշավէրէս որ կասեմ նէ՝ մի՛ իմանար մարմնաւոր , այլ հոգևոր · թէ ինչ պէս պիտիր վարվիմ՝ տեսական և գործնական առաքինութեամբ և իմաստութեամբ ·

Նորա համար հոգին սուրբ՝ բերանովն եսայի մարգարէին յառաջ զխորհուրդն ասաց , և ասպա թէ զզօրութիւնն · իբր թէ մարդու զօրութիւնն և խուվէթն ՚ի հոգևոր առաքինութիւնս և իմաստութիւնս՝ խորհրդով պիտիր կառավարվի ·

Նու այն բաներն որ զմեզ յարքայութիւն կու հասուցանեն՝ լաւ մտաւու-
թեամբ և քաջութեամբ պիտիր
խորհրդի ·

*Խորհուրդն է մէկ մուշավէ րէ՝
որ մարդ անով կառավար վի ·
Ով յիր խուվէթն ապաւի նի ,
շատ պէրզահի նա հանդի պի ·


հոր

## Հարցումն Լ.

### Յաղագս չորրորդ պտղելոյ Հոգւոյն սրբոյ, որ է Զօրութիւնն.

Զօրութիւն է որ անով մարդ կարե-
նայ ընդդէմ երկչոտութեան. զոր մարդ կու կրէ 'ի գործելն զառաքինութիւն. Պարզեալ՝ զօրութիւնն է որով մարդ քաջապէս կու կրէ զչարչարանս. և հոգևորապէս կու պատերազմի ընդդէմ մոլութեց. Զի զօրութիւնն կառնէ զմարդն անյաղթելի. անոր համար կըսէր սրն պօղոս թէ, ամի կարօ՛ղ եմ այնու որ զօրացուցն զիս. Ալ է դարձեալ՝ զօրութիւնն է անշարժ մտաց փառաւորել բարձրութի. գեղեցկապէս տնօրինելով զիւրս դժուարինս. Արդ՝ մտաց փառաւորեալ բարձրութի անոր համար կասէ, զի զօրութիւնն չէ թէ միայն յաղթել կուտայ զքաշած նեղութիւնն վս այ այլ և մնաանալ



կու

կուսայ · որ չէ կարեր բարկանալ և
ցանկալ անչափ բանից · և այնպս կու-
կապէ զմարդու հոգին ՚ի սէրն այ,
որ լայ խայթէ ուրիշ բանի հալէս չու-
նենար · այլ իր զիլթեվէճէ միտքն սէրն
և բարին առ ած կու լինի · Պնդեց-
կապէս տնօրինելով զիրս դժուարինս՝
անոր համար կասէ , զէրէ զօրութին
այնպէս զմարդն համարձակ և փերվա-
սըզ կանէ , մինչ զի ածային զօրու-թն
և խուվէթումն յաղթել կուսայ զամ
դժուարինսն ·

*Լե՛ր դու զօրեղ քաջ և ա- րի ·
շնորհէ՛ հոգւոյն այր բա- րի ·
Մի՛ վախենար դըժվար յե- րի ·
այլ լե՛ր կորիւն առիւ- ծի ·

*************

## Հարցումն Օ ։

Յօդուած հինգերորդ պտղոյն Հոգւոյն սբյ՝ որ է Պնդութիւն.

Պախտութիւննէ ճանաչումն մարդկայ-

ին

ին գործոց ՚ի յօգնութիւն փրկական
հաւատոյ։ Ո՛ երբէ ինչպէս որ խնամա-
տութիւն է ձեռնաչութեան ոգւոյ, այսպէս և
գիտութիւն է ձեռնաչութեան մարդկային
գործոց. այսինքն՝ խոհեմութեան արիու-
թեան ողջախոհութեան և արդարութեան.
Ո՛ երբէ թէպէտ ամենայն յանցանաց
խոտելիք են, ինչպէս մեղքն մեղուն
և աւազն, և պատճառն արդ՝ ինչպէս որ
ամբոխն, և պատճառն ողջախոհ՝ ինչպէս
որ խառնիլին և քինն, և դատաւորին ար-
դար՝ ինչպէս որ արդարին և ըմբռնին
որ զծերացեալ ծնողս իւր կա կերա-
կրէ. լուծին առանց չէ՛ թէ գիտու-
թեամբ կա գործեն, այլ ՚ի բնութե-
ն՚ի թագաւորութեան. այլ մարդն աւա-
մամբ և օգնութեամբն ոգ. առոր հա-
մար գիտութիւն մարդոյ՝ կատարի պարգև
հոգւոյն սրբոյ. ՚Ի յօգնութիւն փրկա-
կան հաւատոյ՝ առոր համար կատարի, զե-
րէ գիտութիւն ստորուն
և դադարեցաք բըւ

նութծ և բուսոց և այլ այսպիսեաց՝ ոչ է ճշմարիտ գիտութիւն ըստ օրինացն այ․ այլ է ունայն և պօշ հետաքրքրութիւն։ Ո՛չ էրէ գիտութիւնն ոչ է ճանաչումն իրաց 'ի թապիյէթուէն որըված, այլ է ճանաչումն թէ՝ մարդ զի՞նչ պիտոյ գործէ և յի՞նչ բանէ պիտոյ խորշի և սակինմիշ լինի։ Արդ՝ զայս պարգևս պիտի ունենայ մարդ

վասն շատ սէպէպի համար։

'Նախ՝ որ ընդդէմ անհաւատներուն գիտութեամբ խօսի և հակաճառի։ Երկրորդ՝ որ անով խորշի 'ի չարէն և բարեպէս կառավարէ զժամանակաւոր բարիս։ Երրորդ՝ անով պէտք է ուղղել զգործքերն մեր՝ խանօնով բանականութեան և ըստ օրինակին այ։ Չորրորդ՝ անով կարեմք գիտնալ ըզչարն որ ձևացեր է բարիյն խիյանէթով. կէօյաքի գայլն նման գառներու։

*Մի՛ լինիր դու մոլորք յի մար՝
Հերձուածոց իմաս տուն.
Այլ լե՛ր գիտուն խոնարհ հոգւով՝
որի և հեզ և ար թուն.

✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻

## Հարցումն Ի.

Յաղագս վեցերորդ պարգևի Հոգւոյն Սրբոյ որ է Աստուածպաշտութիւնն.

Աստուածպաշտութիւնն է կրօնաւոր ջերմեռանդութիւն աստուածային պաշտաման. Կամիմ ասել թէ, զԱստուած պաշտելն է մէկ կրօնք մի՝ որ պիտոյր լինի ջերմամբ սրտիւ և ոչ թէ ցրտութեամբ ատելութեամբ. զէրն ուր անդ ատելութիւն է, անդ անկարգութիւն է. Իսկ աստուածպաշտութեան երեք բան պէտք է. Առաջին՝ որ դաւանիմք զԱյ մեծութիւն. Երկրորդն՝ որ պատկառիմք և հնազանդ անձամբ ՚ի սբ գրոց. և չիւպհեսիզ հաւատամք բանից սուրբ գրոց. ուղղութեամբ պահեմք. և հիւլէսիզ և հաւատարմութեամբ



ուս

ուսցընեմք այլոց. ոչ փոխեմք զմիտքն. ոչ յաւելցընեմք և ոչ պակասեցընեմք. ոչ թեթևացընեմք, և ոչ ծանրացընեմք. Աւելինձրին՝ է պատիժ ընկերին. որ հիմայ անեմք ՚ի մեծէն և ամաչեմք. մեր ախպարին հետ սիրով կենամք և հաւատարութը̄. և մեր փոքրին եարտըմ անեմք խնամով.

*Թէ ես բարի ածու դաշտ,
ած̃ լինի ըն̃դ քեզ հաշտ.

************

## Հարցումն Ի.

### Յաղագս եօթներորդ պարգևի Հոգւոյն սրբոյ՝ որ է Երկիւղն.

Երկիւղն է փախուստ ՚ի չարէն. զի մի՛ կորուսցէ մարդ զբարին զոր սիրէ. Եւ երկու կերպիւ է փախուստն. դովելը. և նախատելը. Նախատելը փախուստն այն է՝ որ կու վախենայ մարդ ՚ի կորսնցնելոյ ժամանակաւոր բարիքն.



և

և Գողէլը փախուստն է , որ մարդ
կու վախենայ 'ի կորսընցընելոյ զառա-
քինութ̄ի և զհոգևոր բարիքն .

Արդ գիտացի՛ր , որ երկիւղն Թիւր-
լիւ Թիւրլիւ կերպիւ է . Իփտիտա՛
երկիւղն կամքի բնական Թապիյէթ-
տէն . որ ամէն մարդ 'ի զարարէ բա-
նէն կու վախենայ . ինչ պէս 'ի կրակէ ,
'ի հեղեղէ , և ցայլոց . այս երկիւղս ո՛չ
զարար ունի և ո՛չ Փայտայ հոգւոյն .
և այս տրվա մարդուն ադամայ յետ
մեղանչելոյն իբր պատիժ մեղաց .

Իքինճի երկիւղն է՝ որ մարդ կու վախ
նայ 'ի զարարէ մարմնոյն . ասոր դէմ
ասաց քս̅ , մի՛ երկնչիք յայնցանէ որք
սպանանեն զմարմին . և այս երկիւղս
կարէ լինիլ բարի՝ յորժամ 'ի չարէն
խոյս տալու և փախչելու մտօք լինի .
և չար ես կու լինի , յորժամ հոգե-
կան բարին՝ մարմնոյ խաթեր համար
կու մոռնըլի . ինչ պէս ուրանալն .



Ուչ

Ուչիւնճի երկիւղն է աշխարհական. որ մարդ կու վախենայ 'ի կորսընցընելոյ և 'ի կողոպտըվելոյ մարմնաւոր բարեացն. Տեօրտիւնճին է երկիւղ ծառայական. որ անով մարդ կու վախենայ իւր տիրոջ և բնականաբար 'ի գեհենոյն դըժոխոց. Պէշինճի երկիւղն է սկզբնական. որ անով մարդ կու վախենայ 'ի գեհենոյն և 'ի բարկացընելոյն զա՟ծ. Ալթընճի երկիւղն է որդիական. որ մարդ կու վախենայ 'ի բարկացուցանելոյ զա՟ծ և զատվելոյ 'ի նմանէ. որպ՟ որ որդին կու վախենայ 'ի նեղացընելոյ ըզ հայրն զի մի՛ զրկեցի 'ի ժառանգութե՟ և 'ի հօր տէվլէթէն.

*Եօթն են պարգեւք հոգւոյն սրբոյ՝
փրկօղ 'ի յեօթն մեղաց.
Առնեն զհոգին դրախտ ծաղկալից՝
և զարդարուն 'ի բարեաց.

## Գլուխ Չորրորդ.

### Յաղագս Ութն երանութեանց զոր ետ Քս̃ հաստատեցելոց.

### Հարցումն Ա.

Ծանի՛ր, որ մարդ ՚ի ձեռն եօթն առաքինութեանց և եօթն պարգևաց հոգւոյն սրբոյ որով այն առաքինութիւնքն կու զօրանան, վերջապէս կու հասանի երանութեան. որ է լցումն ամենից բաղձանաց. զէ-րէ երանութիւնն է կատարեալ առաքինութիւն, և կատարեալ գործ պարգևաց.

Արդ գիտացի՛ր որ ինն են դասք առաքինեաց և հաւատացելոց. Նախ՝ կան ոմանք որ ամենևին զուրկ են ՚ի մեղաց. և ասոնք կասվին հոգւով աղքատք. Երկրորդ՝ կան ոմանք որ ամենևին անվնասք են



գա

գազանաց պէս · որ եղջիւր ունին զար-
նելու · ատամունք ունին խածանե-
լոյ · և ճանկեր ունին պատառելոյ ·
այլ են սուրբ և անմեղ · և ասոնք կաս-
վին հեզ և մահճուպք ·

Երրորդ՝ կան ամանք որ թէ մէկ հեղ
զա̃ծ բարկացուցին մեղօք և կան յաշ-
խարհի վերա կեցայքի իբրև որդեմեռ-
լալով և ողբալով · և խարիպի նըման
խեղճ ու լալի են յաշխարհի վերայ և
հեռի առնին յարքայութենէ · ասոնք
կասվին սգաւորք

Չորրորդ՝ կան ամանք որք սաստիկ սի-
րովն մայ զմայլեր են · և կուզեն որ
անունն իրենց սիրած այն տարածվի
յաշխարհի վերայ · և ասոնք կասվին
քաղցեալք արդարութեան ·

Հինգերորդ՝ կան ամանք այլ որ հոգ-
ւով և մարմնով խեղճերուն խնամք կու-
տանին · և երկրաւորօք կու շահին
զերկնաւորն · և ասոնց ողորմած կաս-
վին · Վեցերորդ՝ կան ամանք այլ որ
սրբեր և մաքրեր են

զիւրենց սիրտն 'ի պղծութենէ մեղաց. և արևի նման պայծառացեր են այն-չափ՝ մինչ զի արժան պիտի լինին ա̃յ տեսութեան. և ասոնք սուրբ սրտի կոչվին. Եօթներորդ՝ կան ոմանք մը որ հետ ա̃յ և ընկերաց խաղաղ կու կե-նան. և զկռուօղներն կու հաշտեցընեն որդւոյն ա̃յ պէս. և ասոնք խաղաղա-

րարք կոչվին.

Ութերորդ՝ կան և այլք որ տայլիմ կու հալածվին 'ի յանօրէն մարդոց և կու համբերեն հալածանաց. և ասոնք հալածեալք կոչվին վասն արդարութե̃ և իրենց ճշմարտախօսութե̃ն համար. Իններորդ՝ էին դարք առաքելոց որ պիտոյր հալածվէին վասն արդարութե̃. պիտոյր նախատվէին վասն ճշմարտու-թեան. և պիտոյր զրպարտվէին 'ի նա-քիլէ և'ի պէսաւչ տեղն. և'ի վերջն պիտոյր արքայութեան լայծիս լինէին. Սոնոր համար քս̃ 'ի վերջն պտանք ե-րանեց. որ երանութեան ուսուցող



համ

համբերէին հալածանաց և պէսպէս
պէրզահներու · և սիրով երանութեան
տայիմ խայրէթ անէին վասն փրկուե̄
հոգւոց մարդկանց ·

Ը[illegible] թէ երանութիւնն ի՞նչ է և
քանի՞ կերպ է, այսպէս իմացիր ·
Որ երանութի̄ն է պարառութի̄ ամե-
նից բարեաց · ինչպէս որ թշուառու-
թիւնն է պարառութիւն ամենից չա-
րեաց · Ինչպէս ասեմ թէ, մէկ պախ
ճայ մի լինէր պարսպաւոր՝ որ 'ի մէջն
մէվճիւտ ամէն մէյվէ և ծաղկունք
գըտնըվէին՝ որպէս որ դըրախտն ադա-
մայ · այսպէս և երանութի̄ն է պարու-
նակող ամենայն բարեաց և լցուցիչ
փափաքանաց · որ մէկ մարդ մի ար-
ժան որ լինի երանութեան, ալ հաս-
րէթ և կարօտ մէկ բանի մի չի մնար ·
և այս երանութիւնս՝ է այն տեսու-
թիւնն · զէրէ 'ի նորա տեսութե̄ն կան
ամենայն բարիք մէվճիւտ · Երա-
նութիւնն երկու ցեղ է · ճանապարհի
աա

աստի կենաց , և վերին գաւառին ·
Երանութիւն աստի կենաց՝ է կենցա-
ղավարել յաշխարհի վերայ կատարեալ
առաքինութեամբ · Որ այս կեցայքի
՚ի ձեռանէ կու ըմբռնէ և կու հանէ
՚ի կատարեալ երանութիւն վերին գա-
ւառին · որ է տեսութիւն Այ դէյան
էշքեարէ և դէմ յանդիման · այսինքն
երես ընդ երես ·

*Թէ որ ցանկաս երանու Թեան ,
առաքինի՛ լեր դու միշտ ·
Որ ազատիս դառն աշխար հէս ,
յերկինս մտնաս դու ան վերջ ·

****************

## Հարցումն Բ.

Յաղագս առաջնոյ երանութեան , որ է Հոգ-
ւոյ աղքատութիւն ·

Հոգևոր աղքատութիւն է հրաժարել
՚ի սիրոյ Տ՜ի վասն սիրոյն Այ ·
Զերէ ով որ սիրէ զաշխարհ՝ հեռի
է ՚ի սիրոյն Այ · և ով որ ըեռնաւո-
րեր և եւքընմիշ եղեր է

սիրով մարմնոյ և աշխարհի , յանոր
հոգին դատարկ և փօշ տեղ չիկայ որ
սէրն այ լցվի · Անոր համար քու նախ
երանեց զհոգւով աղքատներն՝ այսինքն
է զխոնարհներն · որ անոնց հոգին
փօշ է 'ի սիրոյ աշխարհի և կարէ ամ-
բարձել մէր հոգին զամ առաքինութի
և զսրբութի · Եւ այս աղքատութիւնս
երեք բան կու խնդրէ · Նախ՝ որ 'ի
սիրոյ այի և հեշտութեց հրաժարիմք ·
Երկրորդին՝ որ զաշխարհի փառաւորու-
թիւնն և հարստութիւնն կամաւ թո-
ղեմք · Երրորդին՝ որ մեծութե և
հիւքիւմութե և իշխանութե չի ցան-
կամք · զէրէ աղքատք հոգւով անոնք
են , որ հիչ բանիկ մի չունին և զամ
ինչ ունին · որ է ած ·

*Հոգւով աղքատ անոր կը սեմ ,
որ զուրկ է ինքն 'ի մէ ղաց ·
Որ բան չունի յաստուծոյ զատ ,
և է լցված 'ի շնորհ հաց ·

## Հարցումն Գ.

Յաղագս Երկրորդ Երանութեան, որ է Հե- զութիւնն.

Հեզութիւնն է համբերութիւն հա- մեստ հոգւոյ՝ որ ոչ ամբոխմամբ դիւր ուածոց շարժեալ լինի.

Օ էրէ ով որ հեզ է, զյաջողութիւնս և զան յաջողութիւնս Տր՛ միապէս կրու- տանի. Ինչպէս որ ի վէմ մէկ գաւառն մի՝ թէ փուշ բուսանէ և թէ վարդ՝ զերկուսն այլ միապէս և պարապար տա նի. Այսպէս և մարդն է հեզ կենդա նի և մահձուպ. անոր համար՝ անուշ հոգին կասլի հեզ մարդն. որ է համեստ և ամօթխած. Եւ այսպիսի մարդըն յաշխարհի տաղտաղայէ և յամբոխմանէ չի շարժիր որպէս ծովն ի հողմոց. այլ է նման հրեղէն երկնից որ անշարժ է տայ- իմ, յորում ամ կու բնակի. անոր պէս և հեզ և խոնարհ մարդնէ բնակա րան ամյ. Ինչ մ̄ տայ մարգարէին թէ,

Ես



Ի

Ես յո՞ բնակիմ, եթէ ոչ 'ի հեզս և
'ի խոնարհս: Պարծեալ՝ հեզ մարդն
այնպէս անուշ հոգի է, որ հեչ մէկ դառ-
նութիւն մի չի կարեր զինքն ըղծեցը-
նել. այլ և զնեղին կանուշացնէ. զչարն
'ի բարին կու դարձնէ. չի վնասեր և
չի վնասվիր. այլ և զայլոց տրած չարու-
թիւնն համբերութեամբ կու տանի, կու
հնազանդի մեծին. կու սիրէ զհաւա-
սարն, և կու խոնարհի պզտրկին. Նա-
այսպէս անելով՝ առանց գնելոյ և աշ-
խատելոյ զաշխարհ ամէն կու վայելէ.
զէրէ հեզ մարդուն՝ աշխարհ ամէն
ընտանի է. և պանդխտութիւն և խորթ-
ութիւն՝ հայրենի դառնայ. Ո՛ երէ
հեզութ՝ կու վայելէ զաշխարհս քանի
որ կենդանի է, և յետ մահուան՝ կու
վայելէ զերկիրն կենդանեաց զվերինն
Երուսաղէմ.

*Թէ հեզ եղար ով դու մարդ ծնուպ՝
աշխարհ ամէն քեզ ծառայ.
Թէ լիրբ եղար և անըրդ գամ,
 յերկինս բաժին քեզ չի կայ.

## Հարցումն Դ.

### Յաղագս երրորդ երանութեան, որ է՝ Սգաւորութիւնն.

Սուգն է շնորհ աստուածային ցաւելոյ վասն պատահեալ չարին և պակասեալ բարւոյն. Զի երբ մէկ մարդ մը որ զանձ կորուսանէ մեղօք և հեշտութեամբ՝ պէտք որ գտանէ ցաւելով և լալով. զե- րէ զեփիւռով կորուսեալ բարին՝ ձեռքայ ով պէտք գտնելի. Մեղուն և աղբն զիր ձագերն կու կորսնցընէ ՚ի պալչըխտո տեղն, և՚ի ծաղկըներու մէջն կերթայ կու փնտռտէ. դու կորուսիր զանձ մեղօք՝ պէտք գտանես ողբալ և լալով. Լացին՝ սուգ կայ տի, և սուգ կայ երանելի. Որ սգայ վասն մարմնաւոր պակասութե̄ և հեշտութե̄՝ մահ կու բերէ իր հոգւոյն. և ով որ կու սգայ վասն պակասութեան բարւոյն և պատահած չարին,

կեանք կու բերէ որեւուն. և յեր-
կինս կուրախանայ այն ամուսնութեամբն.
Ինչպէս ասաց Քրիստոս թէ, երանի որք
լան՝ զի ծիծաղեսցին. Պետրոս առա-
քեալն լացաւ՝ մեղքն քաւեցաւ. մա-
րիամ մագդաղենացին լացաւ, և զՔրիստոսի
ոտքն լուաց արտասուօք՝ թողութիւն
գտաւ.

Լաքին ո՞ւր է յայս ժամանակս լացող
ի վերայ մեղաց. այլ ամենեքեան
ծիծաղելով կու գործեն զչարիս.
Ոսկի և արծաթ կու կորուսանեն՝ կու
լան. զԱստուած կու կորուսանեն՝ կու ծի-
ծաղին. աւա՜ղ հազար այն խնդալուն՝
որ յաւիտեան կու լալընէ.

Իմացի՛ր ո՛վ խեղճ ու լալի՛ թէ զի՞նչ
կու կորուսանես. զԱստուած կու կորուսա-
նես՝ որ է քո հոգւոյդ հոգի. զհոգիդ
կու կորուսանես՝ որ է կեանք մար-
մնոյդ. զայնք որ կորուսանես՝ զմիլ
պիտոր գտանես. եթ ոչ զդժոխսն
և զսատանայ.

Ո՛վ մեղաւոր լո՛ց զինո ցե՛ղ
որ կորուսեր խղճմտա լով՝
Խղճմամ՛ արդար որ հեռի ես՝
դու ՚ի մեղաց սաստու ծով.

*****************

## Ճառցում Ն.

### Յաղագս հաւատոց եղանակութեան, որ է՝ Պահպանողն արդարութեան.

Քաղց արդարութեան՝ է միտք սիրով ըզմայլել ՚ի գործս առաքինութեան սրբութեան ուղղութեան ճշմարտութեան և մաքրութեան և այլոց բարեաց. Ո՛վ էրէ ով որ կու սիրէ զճշմարիտ բարին՝ ճաշակելով ՚ի յաւէր և զօրանար. այլ սայիմ կեօյաքի քաղցած և ծարաւ է.

Նոր համար կասեն վարդապետք թէ քաղց արդարութեան է ներքուստ արդարութեան. և կամ ծայրագոյն բարութին որ է Աստ. վերէ այն մէկ անունն արդար է. Նորք՝ ով որ քաղցեն այն արդարութեան, կեօյաքի զմայ-



լեր

ըէր է սիրուն մէյ ․ կու ճաշակէ և տուհի քաղցած է ․ Պարծեալ՝ քաղց-նու մարդ արդարուն (այսինքն մէյ) 'ի կեանս այս , զերբ կու տեսանէ զիր ցանկալին 'ի ներքոյ փէրտէյի և հայելույ ․ և'ի հանդերձեալն կու յա-գենայ զիր ցանկալին աչք տեսնելով դէմ յանդիման ․ Պարծեալ՝ արդա-րութեանն է ամենուն իւր լայեխին կեօրէ հատուցանել ․ բարեաց բարի , և չարացն չար ․ Խմոր՝ ով որ քաղցած է արդարութեան , տայիմ կու կամե-նայ թէ յաշխարհիս վերայ և'ի հան-դերձեալ կեանքն՝ բարիքն պսակվին բարեաւ՝ , և չարերն պատժըվին իւ-րեանց լայեխին կեօրէ ․ Այսպէս Դա-ւիթ որ քաղցած և ծարաւի էր ար-դարութեան , յամէն առաւօտ կու սպանանէր զմեղաւորներն ․ և խալ-խանի նման պարխապ և հովանի էր բարի մարդիկներուն ․



Բանի

*Քանի զատուցած որ ճաշա կեմ՝
մինաս քաղցած յաշխար հի ·
Եւ թէ ուտանես զերեան յեր կինս՝
հավէս քո անդ լրեա նի ·

****************

Հարցումն Օ ։

Յաղագս հինգերորդ երանութեան, որ է՝ Ողորմութիւնն ·

Ողորմութիւնն է՝ որ երկրաւորօքս կու շահվին երկնաւորքն · ժամանակաւորօքն՝ յաւիտենականքն · ապականացվօք՝ անապականքն · Օ՜ էրէ ինչպէս որ մարդս կարօտ է քան զինքն մեծին ողորմութեան, այսինքն այ, այսպէս և աղքատքն և չքաւորքն մեզ կարօտ է արծր ունենորաց ողորմութենն · որ անոնց աղատուլն զիրենց հոգին ըլանան · անոնց միրօքն զիրենց հոգուոյն ծարույն բժշկեն · և անոնց աղքատութենն՝ իրենք փարթամանան · զերէ աղքատքն՝ են դանձապետ


և

և բանալք արքայութեան. փոխանորդ-
քի, և պահապան երկնից արքայութե(ան),
Տէր չքաւորաց, և սա 'ի ճշմարտ
թագաւորէն քրիստոսէ.

Ի ջքին խնդիր'ը որ ողորմութիւն երկու-
կերպին է. հոգևոր, և մարմնաւոր.
Հոգևորն այս եօթն ցեղ է. Առաջինն՝
թողուլ պուջն խապահաթըլըքին.
երկրորդ՝ յանդիմանել զմեղուցեալն.
երրորդ՝ ուսուցանել զտգէտսն. չոր-
րորդ՝ խրատել զերկմիտս. Ե երրորդ՝
մխիթարել զտրտմեալսն. Զ, աղօթել
վասն փրկութե(ան) ընկերին. Է, համբե-
րել անիրաւութեց ընդդէմ իւր ե-
ղեալ. Եւ մարմնաւորն այլ եօթն է.
Ա, կերակրել զքաղցեալս. Բ, արբու-
ցանել զծարաւեալս. Գ, զգեցուցա-
նել զմերկս. Դ, ժողովել զօտարս.
Ե, փրկել զգերեալս. Զ, 'ի տես
գնալ հիւանդաց. Է, թաղել
ըզմեռեալս.

*Թէ որ կամիս զորդու   թիւն՝
Դու յաստուածոյ գտա   նել,
Տուր անխընայ յանուն նո   րա՛
և մի՛ ումեք խընայ   եր.

******************

## Հարցումն Լ.

### Յաղագս վեցերորդ երանութեան, որ է՝ Սրբութեան Սրտի.

Սրբութիւն սրտին է՝ յորժամ ամենայն աղտեղութիւն մեղաց մաքրեալ է և պայծառութի յաւիտենական լուսոյն թագաւորեալ. Զի որպէս որ աղտոտ հայելին զմարդոյ պատկերն ոչ կարէր յինքն ցուցանել, այսպէս և աղտոտ և մեղօք լի հոգին՝ զած ոչ կարէր տեսանել. Սուրբքն սրտիւ կու նմանին ծովու. որ հէնչ աղտեղութիւն խապուլ ոչ անէր. այլ ՚ի քէնարն կու հանէ ձգէ. Դարձեալ՝ նմանին ոսկւոյ, որ զաղտն խապուլ ոչ անէր. Դարձեալ՝ երկնից արքայութե, յորոյ մէջն փաք և ար

արդար մարդիկքն և հրեշտակք կու
բնակին . այսպէս 'ի սուրբ սիրտն ած-
կու բնակի և բարի խորհուրդքն .
Դարձեալ՝ սուրբքն սրտի՝ նմանին
եդեմական դրախտին . որ զմեռեալս
մեղօք զադամ և եւա յարտաքս ձը-
գեց . Այսպէս սուրբքն սրտի՝ ըղ-
ձութեանն չար խորհուրդս չեն թո-
ղուր 'ի ներս մտանել . այլ կարտաք
սեն շնորհիւն այ . Դարձեալ՝ նմա-
նին տապանակին մովսեսի . որոյ մէջն
և դուրսն ոսկով սրբով էր պատած .
Նմանին դարձեալ՝ քաւութեանն որ
կայր 'ի վերայ տապանակին . յորում
ած կու բնակէր : Այսպէս 'ի մբ սիր-
տըն և 'ի հոգին՝ ած կու բնակի երբ
'ի յիւրում ալթառի . ուստի սրբոց սիր-
տըն է՝ մաքուր անկողին այ . Երբ
ած ոչ հանգչի 'ի սիրտ հպարտին մը-
գոյն մէքալէց . և ոչ 'ի սիրտ ագահին
վասն գոյն փըշալէց . և ոչ 'ի սիրտ
բղջախոհին վասն գոյն տըղմալէց .

այլ ՚ի սիրս առաքինւոյն վասն գոլոյն
ծաղկալից·

Ամէն որոն է ընծ մտօք հոյժ չէ·
տեսանելոյ շնորհաւ ընկն ոգւով նէ·

**************

## Հարցումն Ի։

### Յաղագս եօթներորդ երանութեան, որ է՝ Խաղաղարարութեան·

Խաղաղութիւնն է կայացումն առաքինութեան՝ որ հեշտացուցանէ զմարդն առ ա̃ծ առանց հակառակութե̃ մարմնոյ ոգի և սատանայի· Որդ՝ կայացումն առաքինութեան անոր համար կասի, զի է ամբողջեալ և խառնեալ մինչն անհասատատ է ՚ի գործս բարութե̃ և առաքինութե̃· զի է ինչպէս որ տայ զալու ծողն փորփրած՝ զմարդու պտղ կերն ցոյց զի տար, այսպէս և խառնած և ամէն կոծած միայն զառաքինութեան պատկերն մինչն

ցուց չէր տար։ Որ հեշտացուցանէ ըզ
մարգն առ ամ կամսն, զէրէ այ տե-
ղըն և ընակութիւնն՝ խաղաղ միտքն է։
Եւ ով որ խաղաղ միտք որ ունենայ,
զամէն տաղտաղանքըն աշխարհի ՚ի բաց
կու ձգէ և ամ կու զմայլի։ Ոչ էրէ
մանկէս մարգարէն որ հեռացաւ ՚ի խա
լապայըրէ և ՚ի տաղտաղայէ ՚ի լեառն
սինայ՝ ետես զամ։ և քառասուն օր
ըրման առանց հացի և ջրոյ զմայլեցա-
աստուծով։ Նու եղիա մարգարէն այլ՝
ամոր նման ՚ի լեառն քորեբայ որ ա-
ռանձնացաւ՝ ետես զամ մեղմ և ՚իա-
կուղ հողմոյ մէջն։
Այսպէս և քս զպետրոս զյօհաննէս
և զյակոբոս ՚ի տաղտաղայէ հեռացոյց
՚ի լեառն թաբօր, և ապա թէ վեր քաշ-
ցըր և ամէնուն փառքն ցուց ետուր և
զմայլեցոյց լուսով ածութեան իւրոյ,
Նաև այս խաղաղութիս յայնժամ կու
վայելի, յորժամ զաշխարհի
ըզմարմնոյ և զսատանայի

կամքն թողումք և հաշտիմք ընդ այ ·
և այլոց հաշտութեան պատճառ լինիմք ·
որպ վարձն է կոչմին որդի այ ·

Սիրէ քս իբր միջնորդ և միջանձի 'ի մէջ մեր և հօր այ մտաւ, որ զերկու անհաշտ թշնամիքն պարբերքն · այլ որ մտանէ 'ի մէջ երկու բարկացած տիւ մանկերոր, յերկու կողմանէ այլ կու վիրաւորի և հարուածովք կու լցուի ·

Սոյնպէս քս ած 'ի մեր մեղացն և 'ի հօր այ արդարութենէն՝ գանեցաւ
խոցվեցաւ մինչև 'ի մահ ·

Տես որ սուրբութիւն և խաղաղութիւնն և մեղքն ինչ խռովար զըթէին այ՝ զ հայր ած մատնեաց զորդին 'ի մահ · Թէ զինչ է՝ լաւ է որ ես լիմ որդին չի խնայեմ, և մեղքն բարձի յաշխարհէ · քան թէ խնայեմ և մեղքն ինձ
հակառակ կենդնի ·

Սոյնպէս և որդին այ լաւ համարեցաւ մեռանիլ զխաղաղութիւն բառնալու համար · կեցայքէ կամքը առել ·



լաւ

լաւ է որ ես յիմ կենացն անցնիմ, քան թէ զխռովութիւն տեսանեմ 'ի մէջ այ̃ և մարդկան. Տես իմաստ և 'ի մի'տ առ, թէ խաղաղութե̃ն ինչ խոստար դժուարութեամբ է գտանելի. խաչին չարչարանօք և մահուամբ. և դու 'ի պօղ տեղն զխաղաղութե̃ն հողմով կու քակես.

*Խաղաղութե̃ գինն է քրիս տոս.
Իւր չարչարանքն և ա րիւն.
Ով որ քակէ զխաղաղու թիւն,
Զարիւննն առնէ անար գիւն.

**************

## Հարցումն Թ.

Յաղագս ութներորդ երանութեան, որ է' Հալածումն վ̃ն արդարութե̃.

Հալածումն վասն արդարութե̃ է' որ մարդ վասն Ճշմարտութե̃ հաւատոյ համբերէ ա̃մ չարչարանաց և նեղութե̃ց. Ո՛ երէ քրիստոս յաշխարհ եկաւ վ̃ն



վկայ

վկայութեան ճշմարտութեան , և հա-
լածվեցաւ և խաչեցաւ զճշմարիտն խօ-
սելուն համար ․

Նոյնպէս ամենայն մարգարէք , ամ
առաքեալք , ամ մարտիրոսք , և ամե-
նայն սուրբ հայրապետք վասն ճշմար-
տութեան վկայութեան քարկոծվեցան
սղոցեցան և աքսորեցան ․ Ինչպէս յօ-
հաննէս աւետարանիչն 'ի պատմոս կղզ-
ղին վասն ճշմարտութեան հաւատոյ
աքսորեցաւ ․ Նոյնպէս և սուրբն յօ-
հան ոսկեբերան վասն արդարութեան
աքսորեցաւ 'ի կոկիսոն հայոց ․

Եւ սուրբն Աթանաս , և մեծն Ներ-
սէս , և սուրբն Իսահակ հայրապետքն
մեր' վասն ճշմարտութե աքսորեցան ․
և այնքան համբերեցին չարչարանացն , և
'ի ճշմարտութէ չի դարձուցին զիւրենց
երեսն ․ Իզքին հազար ափսոս ․ այն
երանելիքն որ չարչարանօք վկայեցին
ճշմարտութեան , յայժմու ժամանա-
կիս զէֆխի և սէֆայի համար' թու-



լ

լամորթքն կու թողուն զճշմարտու-
թիւնն . որ ոչ չարչարող կայ իրենց և
ոչ նեղացնող . Այլ այն ս̅րբքն ինչու-
համար կու համբերէին այն խստար
չարչարանաց , եթէ ոչ՝ մէկ արքայութե
խաթեր մի համար . Նորա համար ա-
սաց ք̅ս թէ , նոցա է արքայութիւնն
երկնից . իբր հայրենական ժառանգու-
թիւն և միրաս .

*Արդարութեան համար մար տի՛ր՝
ոչ քրիստոնեայ մինչ՚ի մահ .
Որ ժառանգես զարքայու թիւն՝
դու անկասկած և ան ահ .

***************

## Հարցումն Ժ..

Յաղագս իններորդ երանութեան , զոր յա-
հողէս ք̅ս ետուր ս̅բ առաքելոցն .

Երանութիւն զոր ետուր ք̅ս իւր ս̅բ
առաքելոցն՝ է գերազանց և բազմա-
վարձ . զերէ ք̅ս զամէն երանութիւն
վերջապէս կայացուց ՚ի

սբ առաքեալսն։ Օ՛րէ կասէն աս-
տեղաբաշխներն և մունետիկներն թէ,
լուսինն թէպէտ փոքր է քան զամէն
աստղերը և ցած է քան զամէնն, լոյսին
զամէն աստեղաց և մոլորակաց խաւարէյ
էթն և համունքն յինքն կու ժողվէ։
Նյոպէս և քս տրն զամէն երանութե
ներգործութիւն և զզօրութիւնն՝ վեր-
ջապէս կայացոյց ՚ի սուրբ առաքեալսն․
զէրէ նոքա էին հիմունք եկեղեցւոյ։
այլ հիմն և թեմէլն տան՝ քան զամէն
շինուածք խաւի և հաստատ պիտի
լինի․ ուրեմն սուրբ առաքեալքն ե-
ղէն հիմունք և ընթակայք ամենից
երանութեանց։ Նորա համար քս ասաց
թէ, վարձք ձեր բազումեն յերկինս։
Իսկ առաջին վարձն առաքելոց՝ էր
աղքատութիւնն հոգւոյ։
որ զուրկ և դատարկ էին ՚ի մեղաց։
Իքինձի վարձն՝ էր սգաւորութիւնն․
որ միշտ սուգ ունէին ՚ի վերայ

անդարձ մեղաւորաց։ Ինչ պէս կասէր սուրբն պօղոս թէ , տրտմութիւն է ինձ և անպակաս ցաւ սրտի վասն մե-ղուցելոց և ոչ ապաշխարելոց։ և թէ, լալով ասեմ զթշնամեաց խաչին քի. որոց ած որովայնն է։

Լուչինձի վարձն՝ էր ՚ի հեզութենէ երանութեան. որ ամենեքեան իբրև զանմեղ գառինս հեզութբ կերթային առաջի մարմնաւոր դատաւորաց. և հեզութեամբ կու խրատէին զամենս։ անոր համար ժառանգեցին զերկիր մարդկային բնութեան հաւատովն քի. և եղան թագաւորք երկրի՝ իշխանք աշ-խարհի։ Ջեօրտինձի վարձն՝ էր ա-ռաքելոց ՚ի քաղցածութե արդարութե. որ այնքան քաղցած և ծարաւի էին արդարութե , մինչ զի մինչև ՚ի մահ պատերազմեցան վասն արդարութեան. զէրէ. դատաւորք էին և աթոռակիցք քի. Խիստ պէձիս էր նոցա առաքի-նութիւն արդարութեան։

զի արդարութեամբ հաստատի աթոռ թագաւորի կասէ սողոմոն. և սուրբ առաքեալքն արդարուե̄ խրեանց հաստատեցին զաթոռ թագաւորուե̄ն ք̄ի։ Պեղինձի վարձն առաքելոց՝ էր յերանութենէ ողորմութեան. որ զիրենց աղքատութ̄ին անփոյթ առնելով՝ ուրոյ և այրեաց համար կու ժողովէին ողորմութիւն. զի էին գթածք իբրև զհայր. և ողորմածք իբրև զմայր։ Նաև՝ զարդարուն էին եօթն հոգևոր ողորմութեամբ։ զերէ թողութիւն կանէին մեղուցելոց. կու յանդիմանէին զմեղուցեալսն. կուսուցանէին ըղտգէտս. կու խրատէին զերկմիտս. կու մխիթարէին զտրտմեալսն. կաղօթէին վասն փրկութեան ա̄մ մարդկան, և կու համբերէին անիրաւութե̄ց զոր մարդիկք կանէին իրենց։

Մ.ըթինձի վարձն էր առաքելոց՝ յերանութենէ սրբութեան սրտի. զերէ աննախանձք էին իբրև ըղ

 տղ

տըղայս · մաքուր էին խորհրդով իւ-
րեւ զհրեշտակս · ողջախոհք էին իբրեւ
զտատրակս · միամիտք իբրեւ զաղաւ-
նիս · եւ անոր համար ածային տեսու-
թեանն արժանաւորեցան ·

Յէտինձի վարձն առաքելոց՝ էր յէ-
րանութենէ խաղաղասիրութե · որով
կոչեցան որդիք այ: զէրէ ունէին ըզ
խաղաղութիւն հետ այ · հետ իրենց
հոգւոյն եւ մարմնոյն · եւ հետ ամենայն
մարդկան: ինչ պէս կու խրատէր տրն
պօղոս զհաւատացեալսն թէ, եթէ հնար
է ընդ ամենայն մարդկան զխաղաղու-
թիւն ունիջիք: Սէքիզինձի վարձն էր
սուրբ առաքելոց 'ի հալածմանէ վասն
արդարութեան · որ անով արժանացան
արքայութեանն երկնից: Նաւ 'ի վեր-
ջին երանութեանն քս զամէն երանե-
լոց վարձն՝ 'ի սուրբ առաքեալսն հաւա
քելով, վասն այնորիկ ասաց թէ, վարձք
ձեր բազում են յերկինս: Զէրէ
սուրբ առաքեալն յակոբոս կամէ քի,

որ ոք դարձուսցէ զմեղաւորն 'ի մոլո-
րութեան ճանապարհէ, փրկեսցէ
զանձն 'ի մահուանէ եւ ծածկեսցէ ըզ
բազմութիւն մեղաց։

Իսկ թէ մարդ որ մէկ մեղաւոր մի
դարձուցանէ, զհոգին կու փրկէ եւ
մեղքն իւր չի յիշվիր, ապա սուրբ ա-
ռաքեալքն որ անթիւ եւ անհամար մար-
դիկք դարձուցին յանհաւատութենէ
եւ'ի մեղաց, տէ իմոյ ամենեցուն փո-
խան՝ զվարձն առին յայս։ իմացի՛ր ու-
րեմն թէ որքան փառօք
ճոխացան։

*Երկոտասան սուրբ առա քեալքն՝
երկոտասան ակունք պատուեալք.
'Ի մարդկանէ փառաւոր ըեալք,
եւ յայս են պըսա կեալք։

******

***

*

 Պօղոս

## Գլուխ Հինգերորդ։

Յաղագս Կատարելութեան Պտղոյ Հոգւոյն որ են՝ սէր ևն. Թուղթ սուրբ առաքելոյն Պօղոսի Գաղատացւոց՛՛ 5, 22։

### Հարցումն Ա։

Որպէս պտուղն է կատարելութիւն ծաղկանց և ծառոց, այսպէս և պտուղքն հոգւոյն սրբոյ՝ են կատարելութիւնք ծաղկանց մարդեղութեան քո։ Ո՜վ է ով պտուղ չարչարանացն քո՝ են եօթն խորհուրդքն մեր եկեղեցւոյ, այսպէս և պտուղ բարերարութեան հոգւոյն սրբոյ՝ են երկոտասանք։ Եւ որպէս ծառըն ՚ի պտղոյ իւրմէ կու ճանաչուի, այսպէս և քրիստոնեայն՝ թէ զայն երկոտասան պտուղքն որ ունենայ, անով կու ճանաչուի լինիլ քրիստոնեայ։

## Հարցումն Բ.

Յաղագս ԲԺ՝ ո՞յք են պտուղն Հոգւոյն սրբոյ:

Պատասխանի: Առաջինն է՝ սէրն. երկրորդ՝ խնդութիւն. Գ, խաղաղութիւն. Դ, երկայնմտութիւն. Ե, քաղցրութիւն. Զ, բարութիւն. Է, հաւատ. Ը, հանդարտութիւն. Թ, հեզութիւն. Ժ, ժուժկալութիւն. ԺԱ, Ճնշումն. ԺԲ, ողջախոհութիւն:

Սէր՝ Սէրն է լրումն օրինաց. և հոգւոյն սբ է մեր յորդորիչն ի սիրել զնա. և ի սիրոյ սրտին պէճյան կու լինի մարդու գործքն թէ բարի թէ չար. ինչպէս որ ծառն մէր պտղոյն:

Խնդութիւնն է՝ որ մարդ զբարին գործելն ինքն կու խնդայ և կու ուրախանայ. ինչպէս որ մայրն ի վերայ նոր ծնած զաւակին: և այս խնդութիւն ի հոգւոյն սբյ կու պատճառի ի մեր սիրտն:

Խա

Խաղաղութիւնն է հանգստութիւն մըտաց․ որ մարդ յերբ կու գործէ զառաքինութիւն, միտքն կու խաղաղանայ․ որ յառաջ խռովութիւն ունէր հետ իւր մարմնոյն․ որ հակառակ կու կենայր հոգւոյն։ Եւ այս խաղաղութիւնս ՚ի հոգւոյն սրբոյ կու պատճառի․ զէրէ հոգին սուրբ խաղաղութիւն կամի։

Երկայնմտութիւնն է համբերութիւն վասն յապաղման վարձուն բարեգործութեան․ եւ հոգին սուրբ խրատէ զմեզ երկայնամիտ լինիլ եւ համբերել վս վարձուց բարի գործոց․ եւ մի՛ շուտով խնդրել զմխիթարութիւն՝ զնեղութին քաշածին պէս․ այլ համբերել եւ յտյ կամքն ձգել․ որ մեր վարձ տալուն հաւատարիմ եւ ինամ է․ Սորա համար կասէր սբն յակոբ թէ, երկայնամիտ լերուք մինչեւ ՚ի գալուստ տեառն մերոյ յի քի։

Ո՜վ երբ եւ մշակն զսերմն ցանածին պէս՝ նոյն ժամայն չի քաղեր, այլ կու

համբերէ մինչև 'ի հնձոց ժամանակին։
Նոյնպէս և հոգին սուրբ կու խրա-տէ զմեզ թէ, յորժամ որ սերմանեմք ըզբարեգործութիւն, մի՛ ձանձրանալ միշ-անեմք 'ի քաղել • այլ երկայնամի՛տ ե-ղէք մինչև 'ի գալուստն քի՛։
Քաղցրութիւնն է որ հոգին սուրբ սիրով առաքինութեան և սիրոյն այ զմեզ կու քաղցրացնէ • որ զամէն դժուարինսն յօժարութեամբ կու տա-նիմք • և'ի զահմէթ քաշելն կու քաղցրանամք։
Բարութիւնն է որով մարդն կու նը-մանի իւր նախաստըղծին այ • զէրէ ած բարի է • և մարդ զբարին ած սիրե-լով՝ իր չափուն կեօրէ կու բարիանայ • և սիրելն զբարին՝ հոգին սուրբ կու յորդորէ։
Հաւատն է լոյս հոգւոյն • որ անով մարդ զանտեսանելիսն կու հաւա-տայ • և այ խիրար արածին շիւպհէ-սիզ կու լինի • և զայս կուսուցանէ մեզ

մեզ հոգւոյն սուրբ։

Համդարտութիւն է՝ որ զմարդն ի թողուր եվէթէմիշ անել ի գոր-ծելն զբարի. զէրէ համդարտ ասէլն՝ ահեստէ եւ եաւաշ ասել է. խէկ որ է-վէթէմիշ անէ ի գործելն՝ շաշըրմիշ կանէ զինքն։ Տէ խմաի ի բարի գոր-ծելն՝ մարդ պիտի համդարտաբար գոր-ծէ եւ ոչ անշտապութեամբ եւ ըրբաբար.

Հեզութիւնն է առաջինութիւն մար-դոյ ի թապիյէթնէն արված. լա-քին թապիյէթի բանն, եւ հոգւոյն սրբոյ պտուղն՝ զանազան են. զէրէ թա-պիյէթի գործն՝ զմարդն ի վարձատ-րէր մինչեւ որ ի հոգւոյն սրբոյ շնոր-հացն չի լինի։ անոր համար հոգւոյն սրբոյ պտուղ կասվի հեզութիւնն. որ զմարդն փառաւոր կու հասցընէ։

Ժուժկալութիւն է, որ մարդ ամէն եկած նեղութեան որ կու գայ, վասն բարեգործութեան կու համբերէ։

Ողջունէ՝ որով մարդ զմարմնոյ



կամքն

կամքն կու նուաճէ 'ի ներքոյ կամաց հոգւոյն . և ծոմով և պահօք զզապդ-չեղած մարմինն զապդ կանէ։

Ողջախոհութիւնն է՝ ողջ և կատարեալ պահել զամէն զգայութիւնքն 'ի մերոյ աշխարհի . 'ի հեշտութենէ մարմնոյ , և 'ի կամացն սատանայի։

*Երկոտասան պտղովք հոգ- ւոյն՝
թէ զարդա- րիս,
Ընտիր մարդկան և աստու- ծոյ,
դու գտա- նիս։

## Գլուխ Վեցերորդ։

## Յաղագս Օրինաց և Պատուիրանաց այ։

### Հարցումն Ա.

Ցանի՛ր, որ մարդու փրկու-թեան հարկաւոր և պէտքիտ երեք բան կայ։

Առաջինն է գիտութիւն հաւատա-լեաց, զոր ուսուցանէ՝ հաւատամքն ի մի աձն։ Երկրորդ՝ գիտութիւն յու-սալեաց, զոր կուսուցանէ տէրունա-կան հայր մերն։ և Երրորդ՝ գիտու-թիւն գործելեաց, որ կայ յաձային սր-օրինաց մէջն։ Օ էրէ չորս կերպիւ է օրէնքն։ առաջինն՝ բնական, երկրորդն՝ բանական, երրորդն՝ մովսիսական, և չոր-րորդն՝ աւետարանական։ Բնական օրէնքն է բնածին լոյսն այն՝ զոր Աձ ծագեր է ի միտս մարդոյ, որ անով



կու

կու ճանաչէ թէ զինչ պիտոր գործէ, և յորմէ պիտոր խորշի։ Եւ այս լուսովս՝ զա̃ծ կու ճանաչէ ՚ի վեր քան զա̃մ ինչ սիրելի · այլոց վնաս չանել, և օգուտ ընել։ Եւ զայս օրէնքս՝ սատանայ ապականեց ցանկութեամբ՝ յառաջին ծնօղսն մեր · որ զհոգին հակառակ կացուց մեզ, և զմարմինն հոգւոյն։ Եւ այս օրէնքս՝ կոչեցաւ օրէնք մեղաց· անոր համար՝ հոգւի մարդոյ շատ անգամ կու ջանայ գործել զբարի, և մարմինն կու հակառակի։

Ուստի ա̃ծ մինչ ետես զառաջին օրէնքն ապականեալ, ետուր երկրորդ օրէնք՝ որ ասի բնական օրէնք, ՚ի ժամանակս աբրահամու · զի յայն ժամանակն առաւել բազմացեալ էր կռապաշտութիւնն · ուստի զկռապաշտութիւնն խափանելու համար՝ ետուր զբնական օրէնքն · զի թէրեւս հաւաքաբանութ̃ և բնական քննութ̃՝ մարդիկ ճանաչէին զա̃ծ։ Եւ զայս այլ

ապա

ապականեց սատանայ. որ իմաստու-
թեամբն այ՝ ոչ եթող մարդկան ճա-
նաչել զպղծօղն իմաստութեան:

Նոր համար առ ՚ի խափանել զորո-
գայթն սատանայի՝ ՚ի ժամանակս մով-
սեսի՝ ետ զերրորդ օրէնքն. որ կաս-
վի գրաւորական և մովսիսական. ահա-
ցուցիչ և երկիւղալի: զերրորդ մովսիսա-
կան օրէնքն տուեալ ամպով որոտմամբ
ծխով մառախլով և փողով: այլ զի օ-
րէնքն երկիւղին՝ կարգելոյ զձեռն և
ոչ զմիտն. ուստի և է անկատար.
այլ ամ անկատար՝ կու վերաբերի առ
կատարեալն. ուստի ՚ի հարկէ կարօ-
տացաւ մարդ այլոյ իմն օրինի:

Վասն այնորիկ փոխանակ այն հնոյ և
ծանր և բազմապատիկ օրինացն՝ ետուր
ած զչորրորդ օրէնքն աւետարանական.
թեթև հեշտալի դիւրին և համառօտ.
որ կայանայ ՚ի սէրն այ և ընկերին:
Որ ոչ ոք կարէ պատճառել և մահա-
նայ անել՝ թէ ծանր է՝ շատ է խոր-

թին է և դժուարին է։ Ո՛ երէ այս օրինացս՝ օգնական տրուաւ ՚ի քէ հոգին սուրբ և հօրթն պարգևքն նորա . զի ընդ տրվին հոգւոյն սրբոյ՝ տրուաւ և սէրն. Ինչպէս կասէ սուրբն պօղոս Թէ , սէրն այ ըսփուեալ է ՚ի ձեռն
հոգւոյն սրբոյ որ տրւաւ մեզ.

Նայլ զի տասն բանեան օրէնքն այլ որ նըկատեմք , կու վերաբերին քեր-կուս . ՚ի սէրն այ , և ընկերին. անոր համար քս ասաց Թէ , յայս երկու պատուիրանս ամենայն օրէնք և մար-
գարէք կախեալք կան.

Պէտք է ուրեմն նախ ասեմք ՚ի վերայ տասն բանեան օրինաց , և ապա Թէ ՚ի վերայ նոր և աւետարանական օրինաց.

*Թուէ օրինօք պատրաստ ըլաս,
յամուր դըղեակ դու գտա նըս.
Նուէ Թէ զօրէնս ուժով խըր զէս,
արտաքս ելեալ դու կորըն չէս.



Հար

## Հարցումն Բ.

### Յաղագս Առաջին հրամանի Մովսիսա-կան օրինին:

Առաջին հրամանն օրէնին և պատուի-րանն է այս: Մի՛ եղիցին քեզ աստուածք բաց յինէն. մի՛ արասցես դու քեզ կուռս ը՟ ամ՟ նմանութե՟. որ ինչ յերկինս ՚ի վերէ, և որ ինչ յերկիր ՚ի խոնարհ. և որ ինչ ՚ի ջուրս որ ՚ի ներքոյ երկրի ՚ի խոնարհ: մի՛ եր-կիր պագանիցես նոցա և մի՛ պաշտիցես: զի ես եմ տ՟ր ա՟ծ քո՝ ա՟ծ նախանձոտ. որ հատուցանեմ զմեղս հարանց՝ որդ-ւոց. յերիս և ՚ի չորս ազգս ատելեաց իմոց: և առնեմ զողորմութի՟ ՚ի հազար ազգս սիրելեաց իմոց. և որք պահեն ըզհրամանս իմ:

Արդ՝ այս պատուիրանս կու պարու-նակէ զբազում խնդիրս: Նախ և ա-ռաջ որ կասէ քի, մի՛ եղիցին քեզ ա՟ծք բաց յինէն:

Այսմի ասել քի, մի միայն է ա՟ծ գե-

րաղանց բարի · ’ի մտաց անըմբռնելի,
և միայն հաւատով ճանաչելի։ Ո ըրէ
ամ հեթանոսք ըստ զանազանութեան
իւրեանց՝ պաշտէին զզանազան ստեղծ-
ուածս զի խաբասուն դիւաց յափշտա-
կելով զծայրագոյն պատիւն այ · այլ
այն որ կու ճանաչէ զած՝ մի, մեծա-
պէս կու մոլորի զպատիւ նորա այլոց
տալով։ Ո ըրէ ծայրագոյն պատիւ՝
միայն ծայրագոյն բարութեան կու վայելէ·
Վասն այնորիկ ասաց ած թէ, սիրես-
ցես զտր ած քո յամ սրտէ քումմէ·
և յամենայն անձնէ քումմէ · և յամե-
նայն զօրութենէ քումմէ։ Եւ զայս
պնդելով ած բերանով դաւթի մար-
գարէին ասաց թէ, մի՛ եղիցին քեզ
աստուածք աւ ժամայնք· և մի՛ երկիր-
պագանիցես դու այ օտարի։
Երկրորդ խնդիրն է որ կասէ քի, մի՛
արասցես դու քեզ կուռս ըզ ա-
մենայն նմանութեան · որ ինչ յերկինս

՚ի վեր է, և որ ինչ յերկրի ՚ի խոնարհ. և որ ինչ ՚ի ջուրս ՚ի ներքոյ երկրի ՚ի խոնարհ։

Որդ՝ կուռքն է կռած և փորած ՚ի քարէ և ՚ի փայտէ. և ձուլածուն է յոսկւոյ և արծաթոյ և այլ հրահալելեաց։ Այլ ամենայն իրաց պատճառն լաւագոյն է քան զեր պատճառելին. այլ պատճառ ամենեցուն է ա՟ծ. աննման ամենեցուն։ Տէ իմոյ՝ աննմանին նմանութի՟ և պատկեր շինել և զայն ասել ա՟ծ՝ կռապաշտութիւն է։ Օ էրէ հեթանոսք որ պատկեր կու շինէին, չէին ասեր թէ այս նմանութիւն ա՟յ է, և զա՟յ նմանութի՟ն ունի տեղի կու պաշտեմք ՚ի պատի՟ ա՟յ, այլ զայն շինած պատկերներն կասէին քի ա՟ծ է. և զա՟յ պատի՟ն գողանային և այն պատկերին կու տային։ Անոր համար մեք քրիստոնեայքս որ պատկեր կու նկարեմք, ո՛չ ասեմք թէ այս ա՟ծ է, այլ իբր նշան ինչ.

որով զմիտս մեր կու վերացընեմք առ Նախատիպն այն պատկերին։ Եւ այն որ կասէ քի, որ ինչ յերկինս 'ի վեր, կարգիլէ զմեզ յերկրպագութէ հրեշտակներուն որ 'ի վեր են քան զայս երևելի երկինքս։ Եւ այն որ կասէ քի, և մի՛ որ ինչ յերկիր 'ի խոնարհ, կամի ասել թէ, և ո՛չ մարդոյ և եզան և այլոց. զի մահկանացու ստեղծուածք են. և ո՛չ անմահի մ՟յ՝ անոնց

պատիւ չի վայելեր։

Եւ այն որ կասէ քի, և մի՛ որ ինչ 'ի ջուրս, այսինքն մեծամեծ ձկանց։

Երրորդ խնդիրն է, մի՛ երկիր պագանիցես նոցա և մի՛ պաշտիցես զնոսա։ Երկրպագանելն է՝ խոնարհիլ և ծունկ չոքիլ և զերկիր համբուրել առաջի այն կուռքերուն. զերէ աբրահամ նահապետն որ երկիր պագաւ մ՟յ, զինքն հող և մոխիր ասաց առաջի աստուծոյ. և ով որ կուռց

եր

երկերպագէ, կամի ասել թէ՝ ես հող
և մոխիր եմ առաջի քո։

Լաքին այս մեծ ծուռ է. զերբ և այն կուքերն այլ՝ հող և մոխիր են. և պաշտօղն այն կուքերուն՝ ինքն լաւ է քան զայն կուքերն. զերբ կենդանի և բանական է. և անոնք անկենդան և անբան։ Եւ մի՛ պաշտիցես ասէ զնոսա. այսինքն հոգևոր սիրով։

Զորրորդ խնդիրն է՝ սպառնալեաց պատժոց և խոստացման վարձուց։

Ես ա̃ծ նախանձոտ եմ ասէ. որ ըզ մեղս հարանց և զպատիժն մինչև 'ի յերիս և 'ի չորս ազգս կու հատուցանեմ ատելեաց իմոց. և զողորմութիւն իմ կու պահեմ սիրելեաց իմոց մինչև 'ի հազար ազգս։

Այս բանովս կերևի ա̃յ անաչառ արդարութիւն և անչափ ողորմութիւնն. որ թէ մարդ յարդարութենէն չեր կընջի, պարէ՝ յողորմութենէն պատկառի. և թէ բանութեամբ չի քաշ



վի

վի՛ն էն , պա՛րէ քի՝ սիրով և ողորմութե՛ն
ա՛յ զմայլի ։ Արդարութին ա՛յ պէյան
կու լինի պատժելով մինչև 'ի չորս
ազգս , և ողորմութիւնն մինչև 'ի հա-
զար ազգս ։

Ո՛վ այս այլ իմացէ՛ր · որ այժմու ժա-
մանակի հրէաներն՝ ծածուկ կուապաշտք
են · զէրէ նեռան կու սպասեն 'ի տե-
ղը քի · և ուսմունքին լայն պիղծ է ·
բայց անիծեալ է մարդն որ զիր ու-
մուտն 'ի մարդ կու դնէ ասաց ա՛ծ ·
Եւ անոնք իսէ լայնպիսի մարդ մի
դըրեր են զիրենց ուսմունքն՝ որ ամէն
չարեօք լի է · և ամէն աշխարհի չարիք
'ի նա միմիայն պիտի գտնվի ·
Անոր համար ա՛ծ զիր ողորմութիւնն
ծածկեց նոցա մինչև 'ի հազար ազգս ·
զէրէ ատելիք եղան ա՛յ՝ քի դատաստանն
լի հաստատելով ·

Ամէն քրիստոնէից այլ կան երեք
թիւրքի կուապաշտք · զէրէ հրէից
երեք սուրբ ծանուցք արգիլվեցան

յերկրպագելոյ։ Առաջինն է՝ ՚ի վերոյ
քան զերկինս եղածներն. և հպարտն
կամելով վեր լինել քան զամէն մար_
դիկ՝ եղաւ կռապաշտ։ Իքինձին՝
երկրաւոր ստեղծվածք։ և ագահն սի_
րելով զնմանութիւն երկրաւոր ստեղծ_
վածոց ոսկւոյ և արծաթոյ՝ եղաւ կռա_
պաշտ։ Ուչիւնճին՝ ջրեղէն ստեղծ_
վածոց։ և հեշտասէրքն և բղջախոհքն
կու սիրեն զիրենց ցանկութիւն, և կու
լինին կռապաշտք.

*Աստուա՛ծ իմ՛ քեզ սրա լէշ,
զպատիւ նորա մի՛ տար այ լոց։
Յաստուծոյ զատ ճար չկայ քեզ,
և ո՛չ ընաւ յարարա_ ծոց։

****************

Հարցումն Գ.

Յաղագս Երկրորդ Հրամանի Աստուծոյ
նոր օրինաց.

Իքինձի պատուիրանն է այս. Մի՛
 առ

առնուցուս զանուն այ քո ՚ի վր սնո-
տեաց · զի ոչ սրբեսցէ տէր զայն որ
առնու զանունն այ ՚ի վերայ սնոտեաց։
Կամ աւել քի, ինչպէս որ ած ծայ-
րագոյն բարի է և անհաս մտաց, այս-
պէս և անունն այ անճառելի է և սար-
սուելի · ահարկու է, և ահեղ և դո-
ղութեամբ պաշտելի։

Որ թէ մէկ մարդ մի թեթևաբար
անհաս և լիրբ երեսօք լինի և չերկնչի
յահեղ անուանէն այ և՚ի պօշ և՚ի հա-
վայ տեղն և՚ի սուտ տեղն զած վկայ
կոչէ և երդուի, կեօյաքի զահեղ ա-
նունն այ ունայն և պօշ համարեցաւ
և խոր սրտութէն վկայ կոչեց·

Արդ՝ անունն այ երեք կերպով ըն-
դունայն կու լինի · սրտիւ, բերա-
նով · և գործով։ Սրտիւ պօշ և հա-
վայ կանեն զանունն այ սուտ քրիստո-
նեայք · որ թէպէտ մկրտութի ու-
նին, այլ զմկրտութեան շնորհն չու-
նին · այլ միայն երևելեօք


ցոյց

ցուց կուտան զիրենք քրիստոնեայ, և
՚ի ներքոյ գայլք են յափշտակօղ.
Բերանով դատարկ և ունայն կանեն
զանունն այ այն մարդիկն որ չարաչար
կերդուին. ուխտ կանեն և չեն կատա-
րեր. և վարդապետք որ քեսիմի համար
կու քարոզեն. և սուտ և փուճ առակ-
ներն կու դնեն ՚ի վերայ սուրբ գրոց
և մեծամեծ սրբոց. Պարծեալ՝ ան-
ջերմեռանդութբ և պաղ սրտիւ աղօ-
թօղներն. որոց բերանն ՚ի յաղօթն է,
և սիրտն ՚ի տունն և ՚ի տեղն է. ՚ի քեար
և ՚ի քիսպն է. զայլոց տուն աւերելն է.
զշնութիւն և պոռնկութի մտածելն է.
Տէրտէր՝ գործով պօշ և ունայն կա-
նեն մարդիկք զանունն այ. ինչպէս
կեղծաւորներն. որք ալէթով մի և վեր-
ծրէութով կու յիշեն զանունն այ և
ոչ սրբութբ սրտի. Այսպիսի մար-
դոց կասէ աստուած թէ, ժողովուրդս
այս շրթամբ պատուէ զիս. և սիրտք
իւրեանց հեռի են յինէն.


Սաստ

* Զաստուածն ահեղ մի՛ սիրեր դու-
րկ բերա նով.
Այլ սուրբ սրտիւ և լի՛ արդեամբք,
ջերմ հաւա տով.

*****************

## Հարցումն Գ.

### Յաղագս Երրորդ հրամանի Աստուածային օրինաց.

Եւ քանզի պատուիրանն այս է. Յիշեսջիր սրբել զօր շաբաթուն: Կամ ասել թէ, քանզի Աստուած ի վեց օրն ըստեղծեց զամ արարածս, և յաւուրն եօթներորդի հանգեաւ և օրհնեաց զօրն այն որ էր շաբաթ, որ թարգմանի հանգիստ: Այսպէս և դու դադարի՛ր ի գործոց մարմնականաց. և Աստուծոյ օրհնութեանն պարապի՛ր, և ծառայական գործ մի՛ գործեր: Դադարի՛ր ի մոլութենց. և ի մարմնական առևտրէ որք կու խափանեն զպարապումն



ած

ածային օրհնութեան։ Լաքին լու-
իմացիր · որ 'ի տեղի շաբաթ աւուրն՝
մեք կու պահեմք զօրն կիրակէ 'ի պա-
տիւ յարութեն Քի։

Որ նոյն օրն կիրակէ՝ պատուեցաւ 'ի
հին և 'ի նոր օրէնս։ Նախ պատուե-
ցաւ յԱյ · զի որ 'ի կիրակի օրն ստեղ-
ծեց Այ զերկինս և զերկիր և զհրեշ-
տակներն · որ 'ի ստեղծմանէն իւրեանց՝
ըսկսեցին օրհնել զԱծ · և սադայէլ որ
չօրհնեց և չի խոնարհեցաւ առաջի Այ՝
անկաւ յերկնից և ամ հաւանօղքն նր։
Այլ ինչպէս հրեշտակներն 'ի կիրա-
կի սկսեցին օրհնել զԱծ , այնպէս և
մեզ պէտք է որ 'ի մարմնաւոր գոր-
ծոց դադարիմք և Այ օրհնութեանն
պարապիմք։ Եւ չլինի թէ ասես , ըզ
կիրակին որ պահեմ , վաստակ չունիմ
զի՞նչ ուտեմ · զի որ Այ զայն աւուր
նափարոն 'ի շաբաթու մէջն կուտայ·
Ինչպէս գրած է Ելից 16 գլուխն 29
համարն թէ , հրէայք որ շաբաթ


օրն

օրն պահեցին , ած անոնց երկու ա-
ւուր կերակուր ետուր: ապա մինչև
առաւել զկիրակին պահողին կուտայ:

Երկրորդ՝ 'ի կիրակի օրն ազատեցան
հրեայք 'ի փարաւոնի գերութենէն ·
և քս 'ի կիրակի օրն ազատեց զմեզ
'ի դժոխոց:

Երրորդ՝ 'ի կիրակի օրն տուաւ ած
զհին օրէնքն 'ի սինա · և 'ի կիրակի հո-
գին սուրբ էջաւ 'ի դասս առաքելոց
և ետուր զնոր օրէնքն ·

Չորրորդ՝ 'ի կիրակի աւերեցաւ երի-
քով քաղաքն · և 'ի կիրակի օրն անբնակ
և աւեր դարձաւ դժոխքն: Հինգ-
երորդ՝ 'ի շաբաթ օրն մէկ հրեայ մի
'ի ժամանակս մովսէսի թալաշ կու ժո-
ղովէր՝ քարկոծել ետ ած , մինչև
ես առաւել քարկոծելի է մարդ որ 'ի
կիրակի օրն կամաւ կերթայ 'ի մարմնա-
ւոր գործ:

Վեցերորդ՝ սամփսոն յաւուր կի-
րակէի զգազայ քաղաքի երկաթէ

դռուներն եղբիւրներուն փակեց․ որ կու-
նշանակէր զքն̄ յարութիւնն։ որ ըզ
դռունս դժոխոց պղնձիս խորտակեց
և զադամ իւր ծննդօքն ազատեց։ ըզ
մանանայն ՚ի կիրակի օրն ետուր ա̄ծ
հրէից․ և քս̄ զհացն ՚ի կիրակի օրն ա-
ճեցոյց։ ՚ի կիրակի ծնաւ քս̄․ և ՚ի
կիրակի մկրտեցաւ։ Եօթներորդ՝
Թէպէտ ամենայն աւուր տ̄րն՝ ա̄ծ է,
լաքին կիրակի օրն մախսուսէն քն̄ է․
զէրէ տէր է ասաց որդի մարդոյ և
շաբաթ աւուրն․ նորա համար կիրակի
կասմի որ է տէրունի։
Ութերորդ՝ պօղոս առաքեալն շաբաթ
օրն ըստաւէր և քէօրկէ կասէ կողոսաց
ւոց 2 գլուխն 16 համարն․ այլ քէօրկէն՝
ղահիր պիտիր ճշմարիտ բանի մի քէօր-
կէ լէնի․ այլ շաբաթ օրն՝ քէօրկէ
էր կիրակի աւուրն․ անոր համար քս̄
նոր օրէնսդիրն զշաբաթ օրն չէր պա-
հէր՝ զէրէ զկիրակին պիտիր սահմանէր։

Իններորդ՝ քս՛ զամէն բժշկութի՛ ՚ի շաբաթ օրն կու գործէր. ևզմեր հոգին ՚ի կիրակի օրն պիտոր բժշկեմք: Տասներորդ՝ քս՛ ասաց թէ, տաւնել պէտք է ՚ի շաբաթ օրն բարիս գործել. շաբաթումն՝ իմանամք զկիրակին. որ շատ բարի պիտոր գործեմք:

Լաքին հազար եղուկ. այժմու ժամանակիս ՚ի մէջ շաբաթու չի գործած չարիքն՝ կու պահեն և՚ի կիրակի կու գործեն արբենալով և հայհոյելով: Ծա՛, Քս՛ և սուրբ առաքեալքն զքարոզութի՛ն՝ ՚ի շաբաթի օրն կու տային. զէրէ հրեաներն յայն օրն ՚ի օխնովայն կու ժողովէին. և քրիստոնէից պէտք է իլաքի ՚ի կիրակի օրն լսել ըզքարոզութիւն: Բայց աւաղ հազար. աճապա ի՞նչ խըտար հայհոյանք կու լսէ վարդապետն որ ՚ի կիրակի օրն քարոզ կու տայ:

Մէյլ քս՛ ասաց հրէից թէ, ՚ի շաբաթ օրն տաւնել պէտք է բարի գոր

գործել · հոգի ապրեցընել քան թէ
կորուսանել։ անոր համար քս զԼԸ
տարվան անդամալոյծն , զուռուցեալ
կին , զԺԸ տարվան կապված կինն 'ի
սատանայէ , զծնէ կոյրն , զջրգողեալն ,
և զգօսացեալ ձեռքն' 'ի շաբաթ օրն
բժշկեաց · 'ի յօրինակ մեր հոգւոյն
բժշկութեան յաւուր կիրակէի։ Տէր ,
և գլխաւորն ։ որ քս 'ի Կիրակի օրն
յարեաւ ։

'ի Կիրակի օրն դրօջն փակելոց մտաւ
'ի վերնատունն սուրբ սիօնի և զԹով
մայի թերահաւատութիւն հաստատեց։
'ի Կիրակի երևեցաւ մարիամու մագ-
դաղենացւոյն · պետրոսի առաքելոյն ·
յակոբայ տեառն եղբօրն առաջին' սե-
ղան բարելի եդիր 'ի կիրակի օրն յա-
րութեան խորոյ։ 'ի Կիրակի' ողջոյն և
խաղաղութիւն ետուր առաքելոցն 'ի
գալիլիա · ցոյց տալով թէ , ով որ զիմ
կիրակին որ պահէ , իմ ողջոյնն և խա-
ղաղութիւնն յանոր վերայ լինի։



'ի

՚ի Կիրակի օրն հրեշտակապետն գաբ-
րիէլ պայծառ հանդերձիւ երևեցաւ
մօտ գերեզմանին քի ՚ի նշան ուրա-
խութեան ․ և լացող կանանցն ասաց
թէ ․ ինչու համար զկենդանին ՚ի մէջ
մեռելոց կու խնդրէք ․ չէ՛ աստ՝ այլ-
յարեաւ ․ զսուգն փարատեցէք ․ և ինձ
նման պայծառ հանդերձ զգեցէք ։

Որ այս օրհնեալ սովորութիս մնաց ․
որ բարի քրիստոնեայք ՚ի կիրակի օրն
նոր հանդերձ կու հագնին ՚ի պատիւ
յարութեանն քրիստոսի ։

Լաքին լաւ կու լինէր թէ ․ հետ այն
նոր հանդերձին և զիրենց հոգեկն ալ՝
զարդարէին խոստովանութեամբ ․ ինչ-
պէս կասէ դաւիթ մարգարէն թէ ․
խոստովանութիւն և մեծ վայելչութի
զգեցար ։

Ժզ ․ Սուրբ խաչն քի ՚ի կիրակի օրն
երևեցաւ ՚ի վերայ սուրբ գողգոթայի ․
և ցոլացաւ մինչև ՚ի սուրբ լեառն ձի-
թենեաց ։ Ժէ ․ երկրորդ գալուստն



քի

քէ սիրտը լինի յօրն կիրակի․ և օրն կիրակի՝ սիրտը մնայ աներեկյ յաւի- տեանս յաւիտենից։

*Ով որ պահէ զօր կիրա կին,
Բազում վարձուց է արժա նի․
Ով չի պահէ կամ չար գոր ծէ,
Շատ պէրգահի կու հանդի պի։

****************

## Հարցումն Ժ․

### Յաղագս Չորրորդ պատուիրանի Սուրբ տասն օրինաց։

Չորրորդ պատուիրանն է այս․

Պատուեա զհայր քո և զմայր քո․ զի քեզ բարի լիցի․ և երկայնակեաց լիցիս ՚ի վերայ երկրին բարութեան․ Բնական օրէնքն է որ ամէն փոքր հնազանդի մեծին․ լաքին մեղքն զայս օրէնքս խախտեր էր․ անոր համար Ած զգրաւորական օրէնքն ետուր, որ խախտուած օրէնքն բնական՝ թէքրարէն նորոգվի․ որ փոքրերն հնազանդին իրենց

մեծին անոր համար ած տաց թէ,
պատուեա՛ զհայր քո եւ զմայր: Արդ՛
ծնօղքն երկու կերպիւ պատուելիք են.
պատկառանօք, եւ զպէտիս պէտս նոցա
տալով: Զէրէ թէպէտ այս պարտք է,
լաւքին չի աներ ամլորդին հատած զպարտք
ծնողացն. զէրէ այս պարտքս տէյլ
բարերարութեամբ չի վճարվիր. անոր
համար կասէ քի՛ պատուեա.
Զէրէ ծնօղքն չեա մ՛յ՛ իքլինճի ա-
բարէչ կասվին. այլ որպէս մ՛յ գերա-
զանց պատիւ պիտի, այսպէս եւ ծնօ-
ղաց ընակյան պատիւ. զէրէ բնութե-
ակպէպք են ծնօղքն: Զէրէ կու-
տան ծնօղքն որդւոց երեք բարի. ծը-
նունդ, սնունդ եւ աճուամն, եւ ուսումն:
Առ ՚ի ծննդեան թէպէտ հայր եւ
մայրն պատճառ չէն հոգւոյն, լաւքին
բոլոր զաւակին պատճառ կասվին:
Ինչպէս որ սահաթձին թէպէտ սակ-
ւոյն եւ արծաթոյն սէպէպ չէ, լաւքին
շինման կողմանէ ըստ զէնահաթին

պատճառ է բոլոր տահաթին: Այսպէս և հայրն և մայրն՝ բնութեամբ սէպէպ են զաւակաց · անոր համար զաւակներն ալ պարտական են որ պատուեն զիրենց սէպէպն պատկառելով և խնամելով:

Երկրորդ՝ չիւնքի զաւակաց սընընդեան պատճառ են ծնօղքն , պարտական են և որդիքն սնուցանել և պէօլէմիշ անել զծնօղսն:

Երրորդ՝ չիւնքի յանօնցմէ ունին զուսումն՝ պարտական են հնազանդիլ: ինչ պէս կասէ պօղոս · որդիք հնազանդ լերուք ծնողաց ձերոց յամենայնի · զի այն է բարի: Լաքին չար խըրատու ծնողաց և չար գործոց՝ չէ պէտիր որ հնազանդին որդիքն և հետևեին · այլ օրինակ առնեն ՚ի վարդէն · որ թէպէտ ՚ի փշոց կու բուսանի , լաքին չի նմանիր փշոց: Նմա ծնօղաց պէտք է որ երկու բան ուսցընեն զաւակաց · այսինքն երկնչիլ յԱյ , և



զաւա

զատ կենալ ՚ի մեղաց։ Աւքին այս պատուիրանովս պիտոր իմանամք նաև ըզհոգևոր ծնօղս մեր պատուել. և հրնազանդել ՚ի հոգևոր բանից կողմա նէ. և զայն մարմնաւոր և համեստ բանն որ հոգևոր ծնօղք և առաջնորդք չեն կարծեր անել՝ հրամանաւ նց կատարել։ Նոյնպէս պէտք է հրնազանդել ծե րոց որք են բարի խրատատու հարք. և մարմնաւոր թագաւորաց և տէրանց՝ որք են տէր ըստացուածոց և վաստակոց։ Եւ այս հրամանիս վարձն՝ է բարի լի նելն, և երկայնակեաց լինելն ՚ի վերայ երկրի։ զերբ ով որ պահէ զայլոց կեան քըն, կու պահվի և իրեն կեանքն յայս։

*Պատուեա՛ զծնօղս քո աստուծոյ.
որք են երկրորդ քեզ պատճառ,
Որ շատ ապրիս երկար կե նօք.
և ըստանաս փառս ան ճառ։



Հար

## Հարցումն Ո.

### Յաղագս հինգերորդ Հրամանի Մովսի-սական օրինացս.

Հինգերորդ հրամանն է այս. Մի՛ սպանաներ: Այս հրամայական հրամանովս կարգիլէ մեզ պէյան էնքեարէ զմարդասպանութիւն և յայտնապէս զչար ժամն բարկութեան. զէրէ ՚ի բարկութենէն կու պատճառի մարդասպանութիւն: Անոր համար Քրիստոս ՚ի քեօքէն տիփտէն կտրեց զպատճառն սպանման ըզբարկութիւն ասելով թէ, այլ ես ասեմ, որ բարկանայ եղբօր խուրում ՚ի պէսուշ տեղն՝ պարտաւոր լինի գեհենոյն: Ո՛ էրէ՝ թէ զմէկ ծառի միտալէրն որ կտրես, և զքեօքն չի հանես, թէքրարէն յայն քեօքէն ֆիլիզ լէնմիշ կու լինի. անոր համար բարկութիւնն որ արմատ է սպանման՝ Քրիստոս կտրեց ՚ի քեօքէն: Դարձեալ բար-



կու

կութիւնն է սրտին․ նախատինքն է բե-
րանոյն․ հարկանումն և փետատումն մօր-
ուաց՝ է ձեռաց։ Այլ այս հրամանովս
կարգիլէ զերեք կերպ անիրաւ սպանու-
թիւն։ Առաջինն է՝ սպանանել զոք
առանց մեղաց 'ի պէտուչ տեղին․

Երկրորդ՝ զանիրաւ սպանութիւնն,
յորժամ սպանօղն դատաւոր չէ լինի։
Երրորդն է, յորժամ դատաւորն ըս-
պանանէ ոչ օրով արդարութե, այլ
չար ցանկութեամբ վրէժխնդրութե և
ատելութե։

Դարձեալ՝ մարդասպանութիւն երկու
կերպիւ է․ ՙՄին՝ մարմնաւոր, որ բա-
ժանէ զհոգին 'ի մարմնոյն․ և այս է
ըսպանութիւն աշխարհէ։ Երկրորդն
է հոգևոր և համարեալ․ յորժամ մարդ
ատէ զեղբայր իւր, անոր մարդաս-
պան կոչէ յՕհաննէս աւետարանիչն․
զիրէ ով որ կատէ զմէկ մի, կէօյա-
քի կու մեռցընէ զնա 'ի սրտի մէջն։
Այսպէս մարդասպան է այն մարդն՝ որ

ըղձարդոյ անուանն կավերէ 'ի մարմնա-
ւորս և 'ի հոգևորս: 'Ի մարմնաւորսն՝ յոր
ժամ կազդոտէ զմարմնաւոր համբաւն
և նամն: Իսկ 'ի հոգևորսն՝ յորժամ մե-
կի մի հաւատոյն խլէթ կու դնէ:

Նոյպէս մարդասպան կասվի յորժամ
մէկ մի խօսք չքաւոր լսի և աւուրն
պարէնի կարօտ, և ինքն կարէ օգ-
նել և չի օգնէր՝ մարդասպան կու հա
մարվի: զէրէ հոգ մեծատանց՝ կեանք
աղքատացն է: որ զրկէ զնա՝ այր արեան
է կասէ սաղոմոն:

*Թէ որ կամիս չսպանա  նել
մի՛ բարկանար պէտ գա  զան:
Զի բարկութիւնն է սուր մը ըեալ
և չար գործիք ըսպան  ման:

****************

## Հարցումն Ի:

Յաղագս վեցերորդ հրամանի Մովսիսա-
կան օրինաց:

Վեցերորդ պատուիրանն է այս:

ՄԻ՛ ըսեր։ Ճանի՛ր, որ այս հրամա-
նովս կ՚արգելլի ամենայն անօրէն և
արգիլուած խառնակութեան. եթէ ազատ
ընդ ազատի՝ որ է պոռնկութիւն. եթէ
կնոջ ընդ կուսի՝ որ է կուսապղծութիւն.
եթէ արու ընդ արուի՝ որ է սոդոմայա-
կան և անյիշելի գարշութիւն. եթէ
աշխարհականի ընդ եկեղեցականի՝ որ է
սրբապղծութիւն։ այսպէս սրբապիղծ է
որ զկուսութիւն խոստացողին կապականէ.
եթէ ամուսնացելոյ ընդ այլոյ՝ որ է շնու-
թիւն։

Արդ՝ գիտացի՛ր, որ այր և կին խոր-
հրդով պսակին՝ մի մարմին են. և
շնութեամբ մէկ կերպի՛ մի կու մե-
ռանին. զէրէ որպէս որ հոգին բա-
ժանի՝ մարմինն կու մեռանի, այսպէս
թէ կինն և թէ այրն որ բաժանին
ցանկութեամբ և գործով հետ այլոց՝
կեօյսքի կու մեռանին։

Արդ այս մեղքս խիստ գարշելի է և
անիրաւ յերկուց կողմանց՝ թէ առն և
թէ կնոջն։

 Նամ՝

Նախ՝ զի դէմ է բնական օրինաց որ
ասէ թէ, զոր ինչ որ չես կամիր քեզ՝
զայն մի՛ կամիր այլոց. այլ ո՛չ ոք կու
կամի թէ իւր կինն երթայ յայլ մարդ.
ուրեմն և ինքն չի պիտի երթայ։ այս
պէս իմացիր և՛ի կնոջ կողմանէ։ Բ,
Զի է ընդդէմ այ և եկեղեցւոյ. զի
պսակն կու լինի յեկեղեցւոյ մէջ՝ ինչ
թէ յայս ոչխարաց առաջև. և զած վկայ
կու կոչեն այրն և կինն թէ՝ մեկ մէ-
կի ինամ կու մնամք՝ վկայ լեր ած.
և շնալովն զած կու խաբեն։
Գ։ Այլ և կինն իւրենց մարմնոյն վր
իշխանութիւն չունին. այլ կինն շնա-
լովն՝ յիշխանութենէ երկանն կապ-
տամբի. և այրն շնալովն՝ յիշխանութէ
կնոջն կապտամբի։
Դ, Շնալով կու լինին գող. որ կու
վասարկին բիծ որդիք։ Ե, Շնացողն
կորսանանէ զիր հոգին ՚ի դժոխս, և
զմարմինն կու տայ ըսպանանել ՚ի դա-
տաւորաց։ Զի է շնացողն ը ածայ-


ին

րին և քաղաքական օրինաց՝ արժանի է մահուան. Թէ այրն լինի թէ կինն։ այլ ոչ յերենցմէ՝ զի չէն դատաւորք։

*Բան զղուն վատթարէ չնա ցօղն,
զիւրն և զօտարն ոչ գի     տէ.
Զի նա անբան, ամ բանա     կան,
զիւր պատիւն ոչ ճանա     չէ։

****************

## Հարցումն Բ.

### Յաղագս եօթներորդ Հրամանի Աստուածային օրինացս.

Եօթներորդ հրամանն է այս։ Մի՛ գողանար. Այս հրամանաւս կարգե-լէ ամ ի գործ ածելոյ զայլ օտար ստացուածս. զի որէ գողութիւն է իւրացընել զայլ ինչ օտարաց. Թէ ըզ հոգևորս և թէ զմարմնաւորս։ Զերէ ով որ ի կենդանութեան առաջնորդի, պատըմարգի և կաթողիկոսի՝ առանց ընտրութ



եկե

եկեղեցւոյ կամենայ զհոգևոր պտուղն
յափշտակել՝ գող է։

Նաև այս է կերպիւ ինչ նման շնութեան. զերդ որ շնայ, յայլմէ գողանայ՝ ըղ-ձուր ընկերին զրկելով . և այս վնաս է ընկերին անձին . իսկ որ գողանայ՝ ապ-նէ անիրաւութիւն ընկերեց օտարին.

Որդ գողութիւնն զանազան կեր-
պիւ կու լինի։

Նախ՝ առնելով գաղտ և կերպիւ. Երկ-րորդ՝ զօրով յափշտակելով. Երրորդ՝ անիրաւաբար քարշելով ՚ի հնազանդէ-լց . և այս է թագաւորաց և դատա-ւորաց. զերդ առն չար տէրութիւն՝ գողութիւն է կոչեն վարդապետք. Չորրորդ՝ կարելով զվարձս բանւորաց. և կամ յօրէ յօր ձգելով։ Որ դէմ կայ ամծ թէ, մի՛ մնասցէ վարձ վարձկանին առ քեզ մինչև յառաւօտ. Պարծանք՝ գողութիւն լինի ՚ի չափս և ՚ի կշիռս առողաց և գնողաց . որ կու գնեն մեծ և ծախեն կշռով , և կու ծա-



խեն

խեն փոքր կլուալ։ Ու կամ կառնեն ’ի լոյս տեղն, և կու ծախեն ’ի մութ տեղն։ Կամ ’ի գնելն թուլ կու չափեն, և’ի ծախելն կու քարշեն որ երկայնանայ։ Ու կամ կու գնեն չոր, և’ի ծախելն նէմ կու կերցընեն որ ծանր գայ։ Ու կամ ’ի ծախելն ըղ լան ցոյց կու տան, և զվատն կու հագցընեն։

Մարդ՝ այս գողութիւնք շա՛տ մնասակարք են։ Նախ՝ զի մարդասպանութիւն կու համարուի․ զէրէ կասէ սիրաք թէ, որ հեղու զարիւն, և որ յափշտակէ՝ եղբա՛րք են։ Երկրորդ՝ զի այլ մեղքերն ապաշխարութե՛ կու ջընջին, և այս՝ ’ի տէրն յետ դարձընելով։ Երրորդ՝ զի փայտասրդէ թէ և ողորմութիւն այլ որ տուի․ զէրէ յուսաբաց ընծեց պատարագ մատուցանելն ի՞նչ շահ է․ զէրէ կասէ սիրաք իմաստունն թէ, որ մատուցանէ յընծեց աղքատաց, կերյա՛քի կու սպանանէ զորդին յառաջն հօրն։

Չորրորդ՝ ջի մինաս կանէ և հէլալ մաքին. զէրէ այնպիսին կեօյա քի յօտար տանէ կրակ կու բերէ մէջը մաքին մէջն. և յայլոց հանդերձից ցէց կու գոյանայ, և յիր հանդերձից մէջն կու ծնէ որ ուտէն.

*Որ գողանայ՝ օտար հը  րով՝
զինքն կայրէ կու մա  շէ.
Նա խարդաւանակ և անդ պա  տիժ՝
տէս թէ որքան կու քա  շէ.

***************

## Հարցում Թ.

Յաղագս ութերորդ Հրամանի Մովսէ- սական օրինաց.

Ութերորդ հրամանն է այս. Մի՛ սուտ վկայէր զընկերէ քումմէ.
Այս մեղքս այն քան չար է՝ որ ըզ- մարդն ՚ի դրախտէն կու զրկէ. Զի է- րէ ադամ որ չարախօսեց զեւա, և եւա որ չարախօսեց զօձն՝ երկուքն



այլ.

այլ անիծվան և՛ի դրախտէն արտաքսվե-
ցան։ Եւ ծեր դատաւորքն որ շուշա-
նայ համար սուտ վկայեցին՝ երկուքն
այլ չարաչար սատակեցան․ Եւ յուդա
որ չարախօսեց զքս՛ խեղդեցաւ․
Անոր համար դաւիթ մարգարէն կա-
սէր թէ, որ խօսէր գաղտ զընկերէ
իւրմէ՝ զնա բացէ ՚ի բաց հալածէի․
Դարձեալ՝ այս մեղքս կանէ զմարդն
ատելի այ․ ինչպէս կասէ սբն պօղոս,
չարախօսք՝ ածատեացք․ զէրէ ոչ ինչ
բան գնոջ կայ քան զբարի անուն․
որպէս կասէ սողոմոն թէ, լաւ է ա-
նուն բարի՝ քան զմեծութիւն բա-
զում․ այլ բանբասողն և սուտ վկայն
զայս գնոջ բարիս կապականէն․
Դարձեալ՝ կու մեղանչէ ականջ դը-
նողն բանբասողին և բամբասանաց․
անոր համար կասէ սիրաք իմաստունն
թէ, խի՛ց՝ փակէ զականջս քո որ չի
լսես լեզվի բամբասողին․ այլ
պէտք է որ մարդ



թը

թլթու չէ հրէ ցուց տայ բանբասողին
եւ սուտ վկային. զէրէ թլթու չէ հրէ-
րէն կու կարկեցընէ զչար եւ որդնալից
լեզու բանբասողին: Գովարժեալ չար է
եւ բանսարկութիւնն՝ որ տարաձայնութի
կու ձգէ ՚ի մէջ եղբարց հարց եւ որդ-
ւոց. որպէս ասէ սողոմոն թէ, բոր-
բոքէ զչարութիւն վկայ անիրաւ. եւ
արկանէ կռիւ ՚ի մէջ եղբարց:

Գովարժեալ չա՛ր է եւ միւրայութիւնն.
զէրէ ա̃ծ ասաց եսայի մարգարէի բե-
րանովն թէ, ժողովուրդ իմ որք ե-
րանեն ձեզ՝ խաբեն զձեզ:

Գովարժեալ՝ սուտ վկայելովն մարդ կու-
լինի որդի սատանայի. եւ ճշմարիտ խօ-
սելովն՝ որդի ա̃յ: անոր համար քս̃ ասաց
թէ, որ սուտ խօսի՝ յիւրոց անտի խօ-
սի. զի սուտ է եւ հայր նորա սատա-
նայ: այլ ինքն որ էր բնութեամբ
որդի ա̃յ՝ ասաց թէ, ես յայդ իսկ ե-
կեալ եմ զի վկայեցից ճշմարտութե̃:
Գովարժեալ՝ սրտասացն կու կորուսանէ

ըղձանմն · զիրէ ողորախօք վկայութիւն չէրը չէ · Պարծեալ՝ սուտ վկայն կու կորուսանէ զհոգին ՚ի դժոխս · ինչ պէս կասէ սողոմոն իմաստունն թէ, որ ստէ՝ սպանանէ զհոգին ·

*Մի՛ սիրէր դու սուտ վկայ եղ·
ապա թէ ո՛չ պապան ծիս,
Երկուց կենաց դու կու զըր կիս·
և՚ի գեհեան կու մտա նիս·

****************

Հարցումն Ժ.։

Յաղագս իններորդ հրամանի Մովսիսա-
կան օրինաց։

Իններորդ հրամանն է այս · Մի՛ ցանկար կնոջ ընկերի քո։

Աստուածոյ օրէնքն և մարդկային օրէն քըն զանազան են ՚ի միմեանց · զիրէ այ օրէնքն կարգէ և զմիտսն · իսկ մարդկային օրէնքն կարգէ զձեռն։

Ո՞ երէ մարդն երևելի է՝

 զպէ

զպէյան եղած գործքն կու դատէ · այլ ա̃ծ աներևոյթ է՝ զհոգւոյ խորհուրդն այլ կու դատէ · ինչպէս որ յայս պատուիրանիս պէյան կու լինի · Ո էրէ մարդկային օրէնքն մինչև որ զչարն կատարված չի տեսնէն՝ չէն կարեր զխալպն և զխորհուրդն դատել · այլ ա̃յ առաջև՝ կամքն մարդոյ , գործկատարեալ կու համարվի · Ինչպէս ասաց ք̃ս թէ , որ ոք հայի 'ի կին մարդ՝ ու 'ի ցանկանալոյ , անդէն շնացաւ ը̃ նմա 'ի սրտի իւրում · Նորա համար հրամայեց թէ , մի՛ ցանկար կնոջ ընկերի քո · Ո էրէ ա̃ծ 'ի դէպ ցանկութեան և պատճառաւ որդեծնութեան՝ հրաման ետուր ամուսնանալ · լաքին զաւելորդ ցանկութիւն օտարաց՝ արգիլեց · որ մարդ զկին և զօտարն ձանաչէ · և 'ի հայվաններուն սէչիլմիշ լինի · Ո էրէ ինչպէս որ զհէլալ վաստակն հրամայեց՝ և 'ի գողութենէ արգիլեց ·

այսպէս զհեշտ ամուսնութիւնն հրա-
մայեց՝ և զդանկան այլոց կանանց ար-
գիլեց։ Զէրէ ինչպէս որ մարդ չու-
զէր որ ուրիշ մարդ իր կնոջն ցանկայ
և աչք դարնէ, այսպէս ինքն այլ չի
պիտիր աչք դարնէ յայլոց կանայս. որ
է չար ագահութիւն.

Դարձեալ՝ որպէս ծառն ՚ի յարմատոյն
և՚ի քեօքէն կու բողբոջի և ճիւղէն-
միշ կու լինի, այսպէս և շնութիւնն
և կատարեալ գործքն ՚ի սրտի ցանկու-
թենէն կու զօրանան և կու կատար-
վին. և ցանկութիւնն անհնար է ար-
գիլելու։ Տէ խմոր պարէ զաչքն պի-
տիր զապղ անէ մարդ, որ ՚ի փէնճէ-
րէյէն և՚ի դռնէն զգողն ՚ի տուն չի
մուծանէ. զէրէ աչքն մարդոյ՝ է
դուռն հոգւոյն և սրտին. և յայս
դռնէն մահն ՚ի հոգին մուտ կանէ։
Նա այս ցանկութիւնս և խոտէքլէկս՝
յերեք բանէ զուհուր կու լինի. Նախ
և առաջ ՚ի սատանայէ քիթ տալուն.

Երկրորդ՝ ՚ի հեշտութենէ մարմնոյն։
Երրորդ՝ ՚ի հաւանութենէ մտացն և
կամացն։ Վասն առաջնոյն կասէ ա-
ռաքեալն թէ, ընդդիմացէք սատա-
նայի, և փախստական լիցի ՚ի ձէնջ։
Վասն երկրորդին կասէ, եթէ մարմ-
նով կեցջիք՝ մեռանելոց էք հոգւով։
Վասն երրորդին կասէ քի, խորհուրդ
մարմնոյ՝ մահ է։ Ո՜ երբ ցանկութի
յղացեալ զմեղս կու ծնանի. և մեղքն
որ ՚ի կատար հասնին՝ զմահ կու ծնա-
նին։ Սորդ՝ թէպէտ ցանկութին յատ-
կապէս առ սիրտն կասվի և՚ի սրտէն,
լեզին կայ ցանկութիւն աչաց. որպէս
արգելեալ գեղեցիկքն։
Այս ցանկութիւն ականջաց. որպէս
գարշելի խաղերն. և ամենայն տնաւեր
խօսքերն։ Այս ցանկութի բերանոյ.
որպէս անուշահամ կերակուրք, և տըռ-
փական գարշելի խօսքեր. Այս ցան-
կութիւն հոտոտելեաց. որպէս խգա-
ցուցիչ իւղեր. Սալ յետ ասելոյ

ըղձիւանդութենց՝ ասասցուք զդեղոց.
Նախ՝ պէտք է 'ի տեսութէ օտար կը-
նոջ փախչել. որպէս ղովտ փախեաւ
'ի սոդոմայ.

Երկրորդ՝ չի թողուլ չար խորհրդոց մտանել 'ի սիրտն. զէրէ ծուռ խորհուրդքն կու զատեն զմարդն յայ. Երրորդ՝ պարապել աղօթից. զէրէ ած է որ կու պահէ զմարդն 'ի մեղաց. մէկալ իմաստութիւնն և մէկալ խըղճ մտանքն մաքուր։ Չորրորդ՝ պահօք և ծոմով. զէրէ ցանկութիւն չի կարէր մտանել 'ի սիրտ այն մարդոյն որ պարապել լինի աղօթիւք պահօք և ծոմով։ Հինգերորդ՝ էյլէնմիշ լինիլ ընթեռնըլով և կարդալով և այլ բարի տաղտաղայով. որ սատնյ պօշ ժամանակ չի
գտնէ զմարդն փորձելոյ.

*Ցանկութիւնն է սերմանէ օձի,
որ հայեցմամբ ըսպանանէ.
Ով որ կամի թէ ազատիմ,
զայս իւր փութով յետ դարձուցէ.

## Հարցումն Ժ.Ա:

### Յաղագս տասներորդ Հրամանի Մովսէ-սական օրինաց.

Տասներորդ հրամանն է այս. Մի՛ ցանկար տան ընկերի քո. և մի՛ անդոյ նորա. և մի՛ ծառայի նորա. և մի՛ աղախնոյ նորա. և մի՛ եզին և իշոյ նորա. և մի՛ ամ անասնոյ նորա. և մի՛ ամի զինչ ընկերի քո իցէ:

Կենդանի և բանական տուն՝ է կինն մարդոյ. անկենդան տուն՝ է բնակարանն. Որդ՝ չինչի յառաջ կենդանի տան և կնոջ համար ասաց չի ցանկալ, 'ի վերջին հրամանիս կասէ վասն անկենդան և բնակարան տան համար:

Զերէ իմաստունք կասեն քի, մարդոյ սիրտն և աչքն անկուշտ է. զսիրտն մարդոյ՝ ած մինակ կարէ լեցնել, և աչքն մարդոյ՝ ափ մի հողն:

Տէ իմանի ոչ է պարտ մարդոյ ցանկալ օտարի մալին. Թէ կայուն, որ է տունն.

տուՆն . և թէ գնայուն , որ է ծա-
ռայն՝ աղախինն՝ եգն և էշն։
Ո՜ էրէ կայէ տուրբն պօղոսխէ , որք
ցանկան մեծանալ՝ հասանելն փորձու-
թեան , և մանուկն կորոգայթս սատա-
նայի։ Ո՜ էրէ մարդ ու չատ ապրա-
նաց տէր որ լինի , զիւր ապրանքներն
կու կորուսանէ և կու լինի գերի ըն-
չից . և կու մտանի հոգոց և փէսփէ-
սէլի։ Ինչպէս այն մեծատունն որ
կասէր քի , քանդեցից զշտեմարանս , և
ես մեծամեծս լինեցից . սատցաւ նմա
թէ , անմիտ՝ յայսմ գիշերի զհոգին
՚ի քէն ՚ի բաց պահանջեն . և զժողո-
վածդ ո՞ւմ պիտի թողուս։
Ու եսայի մարգարէն այսպէս ցան-
կացողաց վայ կուտայ ասելով , վա՜յ որք
յարեն զտուն առ տուն . որ զընկերինն
այլ յափշտակեն։ Նոյնպէս արարին
աքայաբ և եզաբէլ . որ յափշտակեցին
զայգեկն նաբովթայ . տես թէ ինչ պէս
պատժեցան . զերկուքին արիւնն այլ

շընէրն լիցեցին։ Նաւ և դոլսիա Թա-
գուհին որ զայրի կնոջ այգին քաշեց
՚ի ձեռացն՝ է տարի լման գերեզմանն
երերաց. տես իմտի թէ ցանկութին
ինչ գէշ բան է։

Մի՛ ցանկար օտար մա    լը.
և մի՛ այրէր անշէջ հը    րով։
Չես կարէր օտար մա    լով.
այլ կու մաշիս չար հալէ    սով։

******************

## Հարցումն Ժ.Ը.

Յաղագս Սիրոյն ալ և ընծիւղին , որ է՛
լրումն օրինաց . և հնչէ նոր նորոգեալ
Դ.ՌԷ.

Պսակն և Թագն և գերազանց լրումն
օրինաց և սպասաւորանացն այլ՝ է սէրն։
Ըստ առաքելոյն Թէ , լրումն օրինաց՝
սէր է . ՚ի սուրբ սրտէ և՚ի բարի մը



տաց

տաց և յանկերգծաւոր հաւատոց սրտին
զմտ վասն իւրեանց. և զընկերն՝ վասն
այ, և առ ած, և այլ: յայս երկու-
պատուիրանս ամ օրէնք և մարգարէք
կախեալ կան: Զերէ տասն պատուի-
րանաց երեքն որ գրեալք էին ՚ի վերայ
միոյ տախտակին՝ կու վերաբերին առ
ած. որք էին այսոքիկ: ո՛չ առնել
կուռս: և ո՛չ առնել ընդունայն զա-
նուն այ: և պահել զօր շաբաթուն.
Իսկ եօթն պատուիրանքն որ գրեալք
էին յերկրորդի տախտակին՝ կու վերա-
բերեին ՚ի սէրն ընկերին:

Սա և սուրբն Պօղոս զամ պատուի-
րանսն կու վերաբերէ ՚ի սէրն այ. ա-
սելով թէ, ամ պատուիրանք ՚ի մի բան
կատարին ՚ի սէրն այ. վերէ և զընկերն
վասն այ պէտք սիրեմք:

Որ է՝ պարտիմք սիրել զած յամ սըր-
տէ. այսինքն յիմացականութէ առանց
սխալման ՚ի հաւատալիսն: Յանձ-
նայն անձնէ. այսինքն ՚ի կամաց



ա

առանց ներհակութեան: Իսկ յամենայն
մտաց · այսինքն 'ի յիշողականութէ ա-
ռանց մոռացման: զէրէ յաճախ յիշումն
բարերարութեանցն այ՝ շարժէ զմեզ
'ի սէրն այ. Իսկ նախկին բարերարու-
թիւնն այ՝ էր 'ի յաւիտենից նախա-
սահմանելն զմեզ յըստեղծանել:
Երկրորդ՝ 'ի ժամանակի ստեղծանելն:
Երրորդ՝ ըստ հոգւոյն 'ի պատկեր իւր
զմեզ ստեղծելն: Չորրորդ՝ սկզբնա-
կան արդարութբ եւ շնորհիւ զարդարելն:
Հինգերորդ՝ 'ի դրախտին դնելն զնա
'ի պահպանութիւն եւ'ի վայելումն.
Զ, 'Ի մեղանչելն՝ ոչ պատժելն.
Է, Այլազան ձրիական շնորհօք 'ի
զարդարելն · Ը եւ ծայրագոյնն, 'Ի ժա-
մանակի առաքելն զորդին միածին եւ
նորա մարմին առնուլն եւ զամ տնօրէ-
նութիւն վասն մեր կատարելն մինչեւ
'ի խաչ եւ 'ի չարչարանս: Որ այսքիկ
մեծամեծ եւ մտածելի բարերարութիւնք
են · որք շարժեն զմարդն 'ի սիրել


զասա

զԱստուած ՚ի բոլոր սրտէ։ զի ո՛չ ոք
կարէ զա՟ծ բոլորով սրտի՟ սիրել յոր-
ժամ բաժանեալ ունիցի զսիրտ իւր
առ աշխարհս և առ ա՟ծ։ որպէս ասէ
սուրբն յօհան ոսկեբերան։

Դարձեալ՝ բարութի՟ և քաղցրութի՟ն
ա՟յ քարոզէ զմեզ ՚ի սիրել զնա. զի թէ
ծնողքն սիրելիք են և պատուելիք վ՟ն
տալոյ զմարմին միայն, ապա ո՟րքան սի-
րելի է ա՟ծ որ ստեղծ զմարմինն և
ըզհոգին. Դարձեալ՝ այն է շատ սի-
րելի որ առաւել հեշտացուցանէ. իսկ
առ ա՟ծ գըտանի ամենայն և անտաղ-
տուկ և համեստ հեշտութիւն. որ է
վախճան և ծայր ա՟մ հեշտութեանց.
ուրեմն առաւել սիրելի է.

Դարձեալ՝ որպէս ա՟մ ջուրք ՚ի ծո-
վէն կելանեն և ՚ի ծովն կու դառնան,
այսպէս և մեր սիրոյն պատճառն և նա-
խագաղափարն է ա՟ծ. ուրեմն առ նա
պիտի դառնայ որպէս ՚ի յըսկիզբն և
աղբիւրն սիրոյ. Ուստի ասաց սուրբն

յօհաննէս աւետարանիչն թէ, սիրես-
ցուք զած · վասն զի նախ նա սիրեաց
զմեզ եւ առաքեաց զորդին միածինն իւր·
Պարծեալ՝ յամ օրինադրաց մէջն մի-
այն ած է անսխալելի օրէնսդիր · որ
'ի տալն զօրէնս՝ եւս եւ զշնորհն օգնա-
կան · եւ զվաւս խոստացաւ կատարո-
ղացն։ Ուստի ասաց ինքն քս օրէնսդրու-
թիւրն մեր թէ, որ ունի զպատուի-
րանս իմ եւ պահէ զնոսա՝ նա է որ սի-
րէ զիս · եւ որ սիրէն զիս՝ սիրեսցի 'ի
հօրէ իմմէ · եւ ես սիրեցից զնա · եւ
երեւեցուցից նմա զիս։ Նորդ՝ ասելով
թէ՝ որ ունի զպատուիրանս իմ, ցու-
ցանէ զանսխալութիւն օրինին եւ օրինա-
դրին։ Նու ասելովն · եւ պահէ թէ զնոսա
նա է որ սիրէ զիս, ցուցանէ զօգնա-
կանութիւն շնորհաց իւրոց · զի ոչ ոք կա-
րէ պահել զօրէնսն նր եւ սիրել զնա
առանց շնորհաց։ Նու ասելովն թէ,
եւ հայրն իմ սիրեսցէ զնա եւ ես սիրե-
ցից եւ երեւեցուցից նմա զիս, ցուցանէ



ըզ

ըղձիւաւքն հանդերձեալ կենաց·

Պարծեալ՝ նշան սիրողացն այ՟ որպէս ասէ առաքեալն՝ է յամի գործակցին ՚ի բարիս· զի ոչ ոք ՚ի մահացու մեղս գոլով՝ կարէ սիրել զած՟ ՚ի բոլոր սրտէ և գործակցիլ ՚ի բարիս· այլ դատարկեալ է հոգին ՚ի մեղաց՝ զի լցցի սիրովն այ՟։

Պարծեալ՝ սիրողն այ՟՝ տանի և սապականէ ամ՟ վշտաց վասն այ՟ ի սէր սիրելւոյն· զի աբրահամ վն՟ այ՟ ոչ խնայեաց միւր որդին· և յոբ երանելին այնքան սարսափելի նեղութեց համբերեաց· և առաքեալքն և ամ՟ սբ՟ մարտիրոսք զարիւն իւրեանց հեղին վասն այ՟։ Ո՜ ի սէրն այ՟ ՚ի վեր քան զբնութին առնէ զյօժարութի՟ մարդոյ· զէրէ գերազանց սիրոյ զօրութին՝ մասցումն առնել տալ տկարութեան։

Եւ վերջապէս կերպ սիրելոյն զած՟՝ է սիրել զնա առանց կերպի՝ զամ՟ ինչ վերաբերելով ՚ի փառս աստուծոյ։



Բաց

*Բայց յաստուծոյ զոր ինչ մի ընես՝
զգուշիս և յոյժ տաղտկանաս.
Նու թէ զած միայն մի ընես,
որքան սիրես քաղցրանաս։

***************

## Հարցումն ԺԱ.

## Յաղագս Սիրոյ Ընկերին.

Հրամանն սիրոյ ընկերին է այս. Սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո։ Յետ աստուծոյ և մեր հոգւոյն և մարմնոյն՝ սիրելիք են ընկերքն մեր. զիրէ այն իբրևն՝ ոչ է հաւասարութեան, այլ նմանութեան. որ կամի ասել թէ, նման անձին քո. իսկ նըմանն պակաս է քան զնոյնն. զի ամենեւին նմանն՝ նոյն է. այլ ոչ ոք կարէ ամենեւին սիրել զընկերն այնքան մինչ զի նոյն լինիցի ընդ նմա։

Բայց՝ սիրելի է ընկերն ՚ի վերայ քան զած

զա̃ծ և քան զհօգիս մեր • այլ ոչ 'ի վեր քան զմարմինս մեր • որ սիրելով ըզմարմին մեր' վնաս առնիցեմք ընկերի հոգւոյն • այլ վասն փրկութե̃ հոգւոյ ընկերին' պարտական եմք ոչ խնայել 'ի մարմին մեր. Սէրն ըստ առաքելոյն , քս̃ եդ զանձն իւր վս̃ մեր. և մեզ պա՛րտ է դնել զանձինս վասն եղբարց մերոց.

Պօղոս թէպէտ շատ կու սիրէր զա̃ծ , և գիտէր թէ որ ելանէ յաշխարհէ' պիտոր մտանէ առ ա̃ծ , լաւին իւր ազգին փրկութե̃ խաթերին համար նը զօվ կամէր քինիլ 'ի ջէ̃ • այսինքն առ ժամանակ մի ևս պանդուխտ մնալ յաշխարհի մինչև տեսանել ըզդարձումն հրէից առ ա̃ծ.

Արդ' բազումք են որք կու յորդորեն զմեզ 'ի սիրել զընկերն.

Նախ բնութիւն • զէրէ ա̃մ նման' կու սիրէ զիր նմանին. բ , Օգնականութիւնն • ինչպէս կասէ պօղոս թէ ,

զի

զմիմեանց բեռն բարձէք։ Գ, Եղբայ-
րութին · որ ամէն մէկ ադամայ որ-
դիք եմք · և սուրբ աւազանաւն որ-
դիք այ և եղբարք միմեանց։
Դ, Վասն միոյ մօր · որ է սուրբ ե-
կեղեցի։ Ե, Վասն միաբանութեան
'ի մի հաւատ, 'ի մի ած, և'ի մի մը
կրտութին։ Զ, Վասն միոյ փառաց·
որ է տեսութին այ։ Է, Վասն ազատ-
ման 'ի մարդասպանութէ · զի որ ոչ
սիրէ զեղբայր իւր' մարդասպան է կա-
սէ ըստ յօհաննէս աւետարանիչն։
Ը, Վասն ազատման 'ի մեղաց · զի որ
ոչ սիրէ զեղբայր իւր' տակաւին 'ի
նոյն մեղս կայ ասէ նոյն աւետարանիչն։
Թ, Վասն նմանութե քի · զի որպ
նա զմեզ սիրեաց, նմանապէս և մեզ
պէտք է զեղբարս և զընկերս սիրել
հոգևոր սիրով։ Ժ, Վասն դարձու-
ցանելոյ 'ի մեղաց և մերձեցնելոյ առ
շնորհս այ · և այս է կատարեալ սէր
եղբայրական։ և զայս ուսանիմք 'ի հրեշ-

տակաց՝ որք միշտ կու կամին զդարձուածն մեր 'ի մեղաց։ Իսկ որ սիրէ զընկերն, շատ բարեաց կու հանդիպի։ Նախ՝ կու յաղթէ զթշնամին. զի թէ մինն բռնացի, երկուքն դէմ կարեն կե- նալ ասէ սողոմոն։

Է, Ո է իւր պակասութիւն կու լցուի բարեօք ընկերին։ ինչպէս կասէ մէկ վարդապետ մի թէ, բարձ զնախանձն՝ և քո է զոր ունիմ. բարձիր զնախանձն՝ և իմ է զոր ունիս։ Գ, Սատարութեան խնդրուածաց. զէրբ թէ որ երկուք միաբան լինին 'ի վերայ երկրի՝ կա- ռնուն յայն զինչ որ կու խնդրեն բարի։

*Եթէ եղբարք զիրեար սի- րեն,
զի են ծնեալք 'ի մօր դըփ.
Հոգւով եղբարք պարտին սի- րել,
զի են որդիք աստու- ծոյ։



Հար

## Հարցումն Ժ.Գ.

### Յաղագս Աւետարանական մէջ Հրամանացն Քի.

Աւետարանական պատուիրանքն քի նորա են, որովք քս զթերին եւ ըզպակասն հնոյ օրինաց լցոյց առ 'ի նշան կատարելութե նոր օրինաց 'ի վր մովսիսական օրինաց։ Անոր համար ասաց ինքն քս թէ, ոչ եկի լուծանել զօրէնս եւ զմարգարէս՝ այլ լնուլ։

Բայց գիտացի՛ր, որ քս քաղցր եւ անուշ օրէնադիր լինելով՝ ոչ սաստկօրէն եւ խստութբ օրէնք եդիր, այլ խրատի կերպ եւ յորդորման. որք թէ 'ի գործածվին՝ հանեն զմարդն 'ի մեծ կատարելութի. եւ թէ 'ի գործ չածվին՝ ոչ պարտաւորեն դժոխոց։

Արդ՝ առաջին աւետարանական խրրատն քի՛ է աղքատութին. որ մարդ կամաւ հրաժարի յընչից յոր-

ժամ որ կու տեսանէ զնոսա բերել հոգ-
ւոյն։ Ուստի ասացաք, որ ՚ք ոչ
հրաժարեսցի յամ ընչից՝ ոչ կարէ իմ
աշակերտ լինել։

Նոյն ժամ որ հրաժարի յաշխարհական
մեծութենէ կամաւ, որպէս կրօնաւորք՝
վարդապետք՝ կուսանք և այլք, հարիւ-
րապատիկ վարձ առնուն զվարձս ՚ի
քէ։ և ասի այս կամաւոր աղքատութի։

Երկրորդն է հնազանդութիւն. ուս-
տի ասացաք, եթէ որ գայ զկնի իմ,
ուրասցի զանձն. այսինքն զիւր յատուկ
կամքն և ախորժակն։

Եւ այլ հնազանդութիւնն երկու ցեղ է.
Նախ՝ մէկ հնազանդութի այն է որ
մարդ կատարէ զինչ հրաման որ կու-
լինի ՚ի մեծաւորէն. որ մ̃յ զլթ չէ
լինի. որ կատարի հնազանդութի որ ոչ է
՚ի մեղս։ և այս է կատարեալ հնազան-
դութիւն։

Երկրորդ՝ հնազանդութի այն անկա-
տարելագին փրկաւէտ. և այն է յորժամ

մարդ իր կամօքն յանձն կառնէ մեկ
գործ մի առանց հրամայողի։

Ինչպէս կուսութիւն խոստանալ․ ա-
ռանց սահմանեալ ժամանակի աղօթել․
և այլք։ Եւ այս ևս Քրիստոնէից է․ և առ-
նէ զմարդն կատարեալ։

Արդարև խրատն քո է ողջախոհութին․
ըստ այնմ, են ներքինիք՝ որ զանձինս
իւ րեանց արարին ներքինիս վասն ար-
քայութեն այ։ Որ կարէ՝ ի սրտէ հե-
ռացուցին զամենայն չար ցանկութի․
և կամ կուսութիւն խոստացան․ որ է
յապականացու մարմնի՝ խոկումն մէջ
տրնջենաւոր անապականութեան։

Զերէ մարմնաւոր կուսութին անկա-
տար է յորժամ մտօքն այլ կոյս չի լի-
նի մարդ․ և կուսութիւն մտացն է
ոչ հայիլ ի կին մարդ և յերկրասարդ-
տղայ վասն ցանկանալոյ և կամ զհա-
ճեսն անցուցանելոյ։

Զերէ այնպիսին թէպէտ մարմնով
առաջի մարդկան կոյս կասվի»

ապա մտօք առաջին ոչ ընթացող կասին.
զէրդ ոչ միայն դատապարտելի է հա-
ւանումն 'ի գործ շնութեան, այլ և
հաւանումն հեշտութեան:

Լաջին թէ որ ցանկութիւն խափէլ
գայ մարդոյ՝ է մեղք ներելի. և թէ
ցանկայ մարդ ընտրողութեամբ՝ է մեղք
մահու չափ:

Չորրորդ խրատն է սիրել զթշնամին
և բարի առնել ատելեաց. օրհնել
զանիծիչս և աղօթել 'ի վերայ հալածո-
ղաց: Արդ՝ սիրել զթշնամին՝ է կա-
մենալ նմա զհոգևոր բարիս, զշնորհս
և զփառս. և այս է հարկաւոր և հրա-
ման քի: Զերբ թշնամին ընդու-
նելով զշնորհս, ոչ կարէ այլ ևս մնալ
յատելութեան որ է մահացու մեղք.
այլ և ինքն դառնայ 'ի բարեկամու-
թիւն և 'ի սիրելութիւն.

Դարձեալ՝ ոչ է պարտ ատել զայն
թշնամին որ բարեաց կու լինի պատ-
ճառ. ապա թէ ոչ՝

 սուրբ

սուրբ մարտիրոսքն չէին օրհնէր զհա-
լածիչս իւրեանց . այլ գիտելով մար-
տիրոսքն թէ իրենց հալածիչքն չար-
առնելն ինքէն՝ բարւոյ պատճառ եղան .
անոր համար կօրհնէին և կաղօթէին ՚ի
վերայ հալածողաց . և մ̃ծ աղօթիւք
նոցա շնորհ կուտայր հալածողաց և կու
դարձուցանէր յանհաւատութենէ և
մեղաց . այլ ոչ միշտ . զէրէ շատքըն
անձնիշխանութ̃բ չէին ընդունէր ըզ
շնորհն այ̃ . և կու մնային խստացեալք
յանհաւատութեան ։

Հինգերորդ խրատն է հեզութ̃ին .
որ զմեկ երեսն զարնողին՝ դարձուր
կասէ և զմիւսն ։ Զէրէ թէ որ կա-
կուղ ձէվապն կու դարձուցանէ ըզ
բարկութ̃ի , ապա ի՞նչ խասար ես
համբերելն ապտակին ։

Ասորա օրինակն ունիմք ՚ի քէ̃ . որ
ասաց բերանով մարգարէին թէ , ըզ
ծընօտս իմ ետու ՚ի հարուածս . և
զերեսս իմ յապտակս . և ոչ դարձուցի

զերծեալ յորժամ Թշնամէին։

Ո՛վ Տէր ո՞չ է այնքան զարմանալի մարդ-
որ հարկանէ և ո՛չ կակղանայ, և՛ ի բար-
կութէն քո չմեղանի և հեզանայ։ Աւ-
րեմն հեզ մարդն՝ հեզ կանէ զբար-
կացողն՝ իւր համբերութեն. և զքեզ
կու հարկանէ և կու ձայնէ ի ր հե-
զութեամբն։ Քո ոչ յինչ յաղթէ հալա-
ծողին որպէս համբերութեն հալածելոյն
կասէ սուրբն Գրիգոր Ածաբան։
Գրած է ՚ի հարանց վարուց մէջն թէ,
մին ՚ի մծ հարանց գնաց մօտ դիւա-
հար աղջկան մի. և աղջիկն ա̅ հիւանդայ
ապտակ էհար Ճգնաւորին. և նա
դարձոյց զմիւսն երեսն։ և նոյն ժա-
մայն դեւն աղաղակեց ասելով, ո՞վ բու-
ռըն և սաստիկ է հրամանն քո։ և հա-
լածէ զիս աստի. և ելեալ յաղջկա-
նէն հալածեցաւ։

Արդ՝ ով յաղթեց. դեւն, թէ ճգ-
նաւորն. պէտապէլի որ ճգնաւորն
իւր համբերութեամբն։

Այս

Այսպէս և դու ծով մարդ հեզահո-գի՛ համբերելով յաղթեա թշնամւոյդ և ոչ դէմ կենալով։

Ասէին թէ որ ասես, քո և պօղոս ա-ռաքելոյն ապա ինչի՞ համար չի դար-ձուցին զիրենց երեսն. այլ քո ասաց զարնողին թէ, եթէ չար ինչ խօսե-ցայ՝ վկայեա վասն չարին. և թէ բա-րի՛ էր հարկանես զիս։ և սուրբն պօ-ղոս՝ անանիա քահանայապետին ասաց թէ, հարկանելոց է զքեզ ած՝ որմ բռեալ, որ առանց իրաւանց հրամայեաց զիս հարկանել։ Ասեմ թէ, քո և պօղոս առաքելոյն շատ նեղութեան համբերեցին. և հալածողքն չի կալ-ցան. այլ տահա պէթէր քարացան. անոր համար իմաստութեամբ հարին զերեսս զարնողաց։ զէրա պէտք է ձէ վազ տալ անմտին որ զիր անմտու-թիւնն ճանաչէ և չի պարծի իր ան-մտութեամբն.

Վեցերորդ խրատն քոն է ողորմու-թին.

թէին · որպէս ասէ՝ ամ որ խնդրէ ՚ի քէն՝ տուր · և թէ կամիս կատարեալ լինել , երթ վաճառեա՛ զինչ քո և տուր աղքատաց։

Նամի ասել թէ , յորժամ որ մէկ չքաւոր մի կու խնդրէ ՚ի քէն՝ եթէ ունիս , տուր · և թէ չունիս՝ մի՛ ազարդամիր անոր · այլ բանիւ մխիթարէ · զի աղքատն բարեկամն է հոգւոյդ · այլ բարեկամն բարեկամին երես չի դարձուցանէր · այլ թշնամին։ Նայլ և՝ աղքատն՝ է բարեկամ քո և քեզ · ուրեմն վասն սիրոյ բարեկամութեան պարտիս տալ։

Լաքէն թէ որ ասես , հինչ խապիլ է զամ ինչ ծախել և տալ աղքատաց , իմացի՛ր որ այս բանս խրատ կատարելոց է և ո՛չ պատուիրան։ զէրէ խրատն կու յորդորէ , և պատուիրանն կու պարտաւորէ։ Նաև կարէ մարդ դրակաս տալ · լաքին այնպիսի ձեօմէրտութը սրտով որ թէ խապիլ լինէր՝ զամէնն կու

կուտայր։ այսպիսիս կեօյաքի զամենն
ծախեց և տվաւ. թէ որ իւրեանն այլ
իխտիզար չի լինէր։ Նոյնպէս աբրա
համ նահապետն զորդին մատաղ կանէր
էյ, թէ որ ած շարժիլէր. լաքին ած
զնէրն սրտին աբրահամու խապուլ ա
րաւ 'ի տեղի մատաղի և զորդին պա
զշլամիշ արաւ. և աբրահամ 'որդւոյն
պտտարագօղ կոչվեցաւ.

Եօթներորդ խրատն քի է պարզութի
և յստակութիւն խօսից. ինչպէս
ասաց թէ, ճղճիլի բան ձեր այոն՝ այո,
և ոչն՝ ոչ։ Որ կամի ասել քի, ճշմա
րիտ բանին ճշմարիտ ասէ, և սրտին
սուտ. և մի՛ 'ի ճշմարտութեան մէջն
սուտ խառնէր. զէրէ յստակ բանն
սուտ բանով պղտորամիշ կու լինի։
Նու մի՛ պահէր 'ի սրտիդ զայլ իմն,
և բերանով խօսիր զայլ իմն. եթէ ոչ
'ի մեծ և պէճիտ տեղն. չի կամելով
տալ զորբութիւն շանց և զմարգարիտ
առաջի խոզաց։ և զայս քրիստոս ասաց



մը

Մըտօք չերդուելոյ։

Ո՛ րբէ ամժ յառաջին օրինաց տըւ-չութեան ասաց թէ, սուտ մի՛ երդ-նուր. և մարդիկ սովորեցան չերդու-մըն կու վէնմիշ լինելով՝ զրկել կողոպ-տել և զհախն մոռանալ և զանունն այ աւ ոչ ինչ համարիլ սուտ երդուելով։ Յուքս ասաց թէ, չիւնքի զայն բա-րի պատուիրանն դուք առիք և՚ի չար կողմն դարձուցիք, զքաղցրն լեղվե-ցուցիք, և զլոյսն մըթացուցիք, տէ իմ-տի յայսմհետէ եթէ կարելի է, ամե-նևին մի՛ երդնուք. եթէ ոչ ՚ի խիստ պէճիտ տեղն ՚ի փառաւորութիւն

Ճշմարտութեան։

Ո երբ շատ անգամ սուտն՝ ճշմա-րիտ կու ձևանայ. և մարդ խաբիլ կու գտընվի. և ճշմարիտ երդւին ի-քէն՝ սուտ կերդւի. երբ թէ հիքէլի է աշխարհիս բնական թիւնն. անոր համար ասաց թէ, ամենևին



մի՛

մի՛ երդնուր. եթէ ոչ կատարեալ վե-
րահասու և վուխուց լինիս ճշմար-
տութեան։

Ութերորդ խրատն է հեռացընելն 'ի պատճառէ մեղաց. անոր համար կա-սէքի, եթէ աչն քո գայթակղեցու-ցանէ զքեզ՝ հան զնա։ Այսինքն, թէ-որ բարեկամ մի ունիս աչացդ պէս սի-րելի. և թէ սէնահաւթ մի ունիս ձեռացդ պէս պիտանի. և թէ ծառայ ունիս ոտիցդ ծառայօղ. որ քեզ գթըր-մամբ պատճառ կու լինին՝ կտրէ զայն բարեկամութիւն. քէրահաւթ աբէ, այն սէնահաւթէն. կորցուր զայն ո-տից նման ծառայն. և մի՛ գնար 'ի դժոխս անշէջ սէպէպովն։

Պատճառ՝ մեղքն է մարդուն ձախ աչք. և բարին՝ աջը աչն. և թէ բարին որ չար մտօք գործըլի, կրու-ըէլի և հանելի է զայնպիսի բարին։
Պատճառ՝ ձեռքն է գործելք շօշափ-ման. և թէ 'ի շօշափմանէ մեղք



կու

կու ծնանի , փքերահամթ արք յայն պիսի շօշափմանէ . և ահա կարծեցիր զձեռքդ 'ի չար գործոյն . և ո՛չ եթէ զձեռքդ 'ի մարմնոյդ։

Դարձեալ՝ աջով խնամամք զհոգևոր պատիւս . և ձախովն զժամանակաւոր մեծութիւնս . որ եթէ կու գլորեն ըզ հոգին 'ի դժոխս , հեռանալի է յայն պիսի մեծութենէ և իշխանութենէ։

Իններորդ խրատն է քեզ՝ զբարի գործսն չի գործել 'ի ցոյց և 'ի փառս մարդկան . ըստայնմ , մի՛ առ նիցէք զարդարութիւն ձեր առաջի մարդկան։ Եւ այն եթէ , մի՛ գիտաս ցէ ձախ քո զինչ գործէ աջ քո։ Եւ այն եթէ , լուսաւորեսցի՛ լոյս ձեր առաջի մարդկան։ Օ երբ կասեն իմաս տունքն եթէ , մարգարիտն որ 'ի հովու դէմն կու ծնանի , զկեղևն ունի մարգարտի՝ և մէջն փուճ է . և հաւն որ զհաւկիթն կածէ և կու կարկաճէ՝

սանսարին կերցընել կուտայ։ Ս. յապէս
և մարդ որ զբարեգործութիւն քեւիմ
համար առաջև մարդու անէ և ոչ թէ
բարի ընենալ տալու համար , յիրաւի
ընդվարձն կու կորուսանէ . և իւր
վարձքն՝ փօհփօհնէ որ կու լսէ 'ի սա-
ստղաց։ իսկ այն որ համայ լինի մարդ-
կան անհաւանելի լինի այ։

Տէս խմնի որ 'ի բարի գործեմն և յո-
ղորմութի տալն ինչ խորտար մարդ պէ-
տիր սախրիմե լինի 'ի գովութէ մար-
դոյ որ չանկանի 'ի սրնապատութիւն։
Ո երէ ձեռքն մարդոյ թէ աջ ձեռն
և թէ ձախն՝ էն 'ի մասանց մարմնոյ .
և այնքան մուղյէթ պէտք է լինել
յողորմութի տալն որ ձախն չիմանայ
թէ աջ ձեռքն ինչ կուտայ։
Այսմ ասել թէ , ձեռքն չունի միտք
իմանալու և ուշք ունանելու . լոքին
թէ որ ունենային պիտէ , պէտք չէր
որ զմէկի գործածն միւսն իմանայր .
որ բարեգործութիւնն ծածուկ մը-
նայր։ Ս.պա ինչ խորտար պէտք է որ

մարդ 'ի սատանայէ և 'ի մարդկանէ զա-
հէ զգործած բարին . և յայնժամ
բարի գործքն ծածուկ կու մնայ և
չիմացվիր , յորժամ բարի մօք լինի
առանց սնափառութեան .

Տասներորդ խրատն է քի՝ զասած-
բանն նախ գործով կատարել . և չի
նմանիլ դըպրաց և փարիսեցւոց որք
կասէին և կու քարոզէին և չէին գոր-
ծեր . այլ այլոց բեռն կու բեռնային ,
և իրենք մէկ մատով պիլէ չէին մօտե-
նար գործելու :

Որ այնպիսի մարդիքն նմանք են սու-
տակապաստ ասած մեղլեց . որ զայլ
Ճըմարիտ մեղուքն կաշխատեցրնեն և
կու յօրդորեն 'ի մեղր շինել և ի-
րենք բնաւին չեն աշխատիր . այլ
զշինած մեղրն այլոց՝ մէկ կողմանէ
կու սկսեն ուտել : և թէ մէկ մե-
ղու մի որ ծուլանայ 'ի մեղր շինել ,
կու ծեծեն և կու վարեն 'ի մեղուա
նոցէն :

Այսպէս են և ամենայն ասողք և ոչ առնողք · որք կու նմանին դպրաց և փարիսեցւոց և սուտասկասպաս մեղկաց: Այլ Քս նախ գործով կու կատարէր զասածն , և ապա թէ այլոց կու քարոզէր: Օ՜ երբ իշխանին պէտք է ոչ երբեք խնայել իւր անձին ՚ի կատարել զօրէնս · այլ յոյժ սաստիկ և անաչառ դատաւոր լինիլ իւր անձին · իսկ ՚ի վերայ հնազանդելոց իւրոց՝ պարտ է լինիլ հայր գթած և ներօղ և բարեաց բաշխօղ:

Մետասաներորդ խրատն է քեզ որ արգելու ՚ի հոգացողութենէ · ըստ այնմ թէ՝ մի՛ հոգայք թէ զինչ ուտիցէք · կամ զինչ ըմպիցէք · և մի՛ խորհիք վասն վաղուին:

Այսու բանիւ ոչ արգելու զժրաջան արիութիւնն և զաշխատութիւնն , այլ զաւելորդ տաղտաղան և զբաղմունքն վասն մարմնաւոր հոգեպահի· զերծ առնել զբաղմունքն և տաղ



տա

տաղան՝ կեցաքի զմարդու հոգին կու-
րածանէ ՚ի հոգւոյն զկամքն ա՜յ·
Արդ՝ երեք կերպ կայ հոգալու·
գովելի · տանելի · և պարսաւելի·
Գովելի հոգալն է՝ որպէս ասէ պօղոս
առաքեալն թէ , որ անկինն է՝ հոգայ
զտեառն թէ որպէս հաճոյ լինիցի ա՜յ·
Երկրորդն է տանելի · որ է հոգալ
զպարուստ և զհոգեպահիկ կերակուրն·
ինչպէս ասաց քս՜ մարթայի , մարթա
մարթա՝ դու հոգաս և զբաղում ինչ
ըզբաղեալ ես· ո՛չ արգիլեց քս՜ զհոգալ
կերակրոյն · այլ զաւելորդն արգիլեց·
ինչպէս ասաց , բայց ասա սակաւ
ինչ պիտոյ է·

Երրորդն է պարսաւելի · որ է զբա-
ղիլ միշտ զաւելորդովք· ինչպէս կա-
սէ սիրաք իմաստասէրն թէ,
աշխատեցաւ մեծատուն
՚ի հաւաքման ընչից·

Դարձեալ՝ ՚ի ժամանակս քո կային
ոմանք հերձուածողք և հեթանոսք որք
կասէին թէ, ած չունի նախախնա-
մութիւն յիւր ստեղծուածոց վերայ.
այլ ամենեքեան իւրեանց բերմամբքն
կու վարին։ Ինչպէս էր աղէքսանդ-
րոս եղբայրն փիլոն իմաստասիրին։
Նուքս ասաց թէ, այնքան նախախ-
նամութիւն ունի ած ՚ի վերայ արա-
րածոց՝ որ թէ և չաշխատին՝ կարէ
կերակրել զնոսա. ինչպէս որ զթռչու-
նըս առանց վարելոյ և վաստակելոյ։
Աչքին ած դժուարկութին արգիլե-
լու համար՝ թող եա մարդուն որ աշ-
խատանօք ուտէ զհացն. որ զխէյմէթն
իմանայ։ Այսպէս պօղոս առաքեալն
զթէմպէլնէրն կու յանդիմանէ ասե-
լով, լսեր եմ որ ոմանք գործ չեն գոր-
ծեր և կուտեն. աղաչեմ որ ձեռօք
գործեն և զիրենց հացն ուտեն։ և
թէ, ձեռք որք ոչ վաստակիցին՝ կե-
րիցեն մի՛։ Տէ իմանի ածային սուրբ

գիրք զաշխատիլն չէն արգիլեր · այլ զա-
ւելահոգութիւն · որ մարդ զլոյսն կու-
կորէ յայն և յիր ձեռաց վաստակն կա-
պուինի · որ է գործ հեթանոսաց ·
զԱ̃ծ չի ճանաչողաց նախախնամօղ և
կառավարիչ աշխարհի ·

Ներքին դուք կասէք որ՛ք քրիստոնեայք
իմացի՛ք՝ որ թէ զայս կամքն կատարէք,
Ա̃ծ այլ զձեր ժամանակաւոր բարիքն
կու հոգայ · դուք կու սերմանէք՝
այլ Ա̃ծ կաճեցուցանէ ։

Երկոտասաներորդ խրատն է ք̃է եղ-
բայրական յանդիմանութին · որ պէտք
է նախ յանդիմանել առանձին և թէ ն-
հայ ։ և այս է յանդիմանութիւն սիրոյ ։
Երկրորդ՝ առաջի երկուց և երից մար-
դոց ։ և այս է յանդիմանութիւն եր-
կիւղի ։ Երրորդ՝ ՚ի լուր բազմութեան
եկեղեցւոյ ։ և այս է յանդիմանութիւն
ամօթոյ ։ Ներքին յանդիմանութին և
սիթէմ պէտք է լինել խառն ընդ
զղջութեան · անոր համար պ̃ղոս ա-

ռաքեալն կատէ քի, սաստեալ յանդիմա-
նեալ · և դարձեալ մխիթարեալ։
Սաստելն և յանդիմանելն՝ է արդարու-
թեան · և մխիթարելն՝ գթութեան
և ողորմութե։ Ո՛չ էրէ պէտք է մեզ
զանարգանքն մեր եղեալ յեղբօրէ մո-
ռանալ · այլ ո՛չ զվէրս եղբօրն մերոյ
թողուլ առանց բժշկութեան։ զէրէ
ծածկել զվէրս հի՛ւանդին՝ մահ գոր-
ծել է կամէ սուրբն բարսեղ կեսարա
ցին։ Լ՛ոքին իմանալ զվէրս եղբօրն
ծածուկ և յանդիմանել յայտնի՝ ո՛չ է
բժշկել, այլ մատնել։ Վ՛նոր համար
քո ՚ի ծածուկ յանդիմանեալ կամէ ·
որ թէ ծածուկ սիրելով չի շահվէ-
յաւ, երկու երեք մարդու առաջև
յանդիմանեալ · որ վկայ լինին անոնք
քո խրատելոյդ և անոր անդարձութեն
և պատուց քո վճարմանն՝ որ պար-
տական էիր սիրով խրատել։ Ու թէ
անոնց այլ որ չի լսեց, ասա եկեղեց-
ւոյն · այսինքն գլխաւորին եկեղեց-


ւոյ

ւոյ եպիսկոպոսին և կաթուղիկոսին։
Նու թէ անոնց այլ չէ լեց, բանս
դըրանքի արժանի է։ Ո՛ այս այլ իմա-
ցի՛ր • որ թէ մարդ մի մեղանչէ՛
և այլ մարդ մի տեսնէ և լռէ, նոյն
մեղքն ինքն ևս կապականի • իբր իշխան
լինելով գործոյին • թէպէտ ոչ գոր-
ծոյն։ Ո՛ երբ կու տեսանեմք որ ա-
մէն ստեղծուածք մէկմէկի խրատիչք
են • հուրն կու սրբէ զխուրն, և
ջուրն կու սրբէ զերկիր։ Ո՛ երբ որ
մէրմէնէ կառավարիլ որ չէ գիտէ,
պէտքիտ է որ ի գիտողէն և՛ ի կարողէն
կառավարվի • որ մինն զուսուցոյն
վարձ առնու, և միւսն հնազանդու-
թեան։

*Աստուած կռիւին՝ առնեն ըղձորդ՝ հասան
և միջոց նշանաբերող • պատուհանիրանագրին ընթռ-
ցին՝ առնեն շփոթծոյն երամեալ։

Արդ՝ յետ աւետարանական խորա-
տուց փրկչին Թէպէտ ասելոց
էաք և՛ի վերայ եօթն խորհրդոց սբ.
եկեղեցւոյ իբր նոր օրինաց զնոր խոր-
հուրդս հետևեցուցանելով, սակայն
խորհուրդքն եկեղեցւոյ գոլով դեղ
սկզբնական և ներգործական մեղաց,
հարկաւոր եղև նախ խօսիլ ՚ի վերայ
ողջախոհութեան հրեանդութեան՝ որ է
մեղքն, և ապա թէ ՚ի վերայ սպեղա-
նեաց և դեղոց՝ որք են եօթն խոր-
հուրդքն սրբոյ եկեղեցւոյ.

*****************

## Գլուխ Եօթներորդ.

## Յաղագս Մեղաց Հասարակաբար.

## Խնդիր Ա.



արտ է գիտել որ ամ զամէն
բան՝ չափով կշռով վէզնով
սահմանա և սխօրով ստեղ-
ծեր

ծէր է ․ զէրէ ինքն ամ միայն ան-
չափ է եւ անսահման․ եւ այլ ամէն ստեղծ-
վածք՝ չափով եւ թուով եւ վէզնով ըս-
տեղծվէր էն ․ որ թէ իրենց չափէն
՚ի դուրս որ ելնէն , այն արտաքսուլէն
ներհակ եւ զըթ կու լինին ․ եւ իրենց
բարւոյն կու զրկվին ։

Որպէս որ հրեշտակներն զիրենց չափն
որ չի ճանաչեցին եւ ամբառնալ կամեցան,
անկան ՚ի փառաց ։ Նու ադամ եւ եւա
որ կամեցան գիտենալ զբարի եւ զչար , եւ
այն նմանիլ անհուն գիտուէ՛ ՚ի դրախ-
տէն անկան եւ արտաքսեցան ։ ուրեմն
մեղքն է զրկող ՚ի բարւոյ եւ՚ի փառաց ։

Մալ գիտել պէտք է , որ մեղաց ու եւ
եւ այլ անուանք կայ վասն զանա-
զան ներգործութեցն ։ Նախ՝ զի ասի
չար ․ որ է պակասութիւն բարւոյ ։
ինչպէս որ խաւարն է պակասութիւն
լուսոյ , եւ տգիտութիւնն պակասու-
թիւն իմաստութեան ։

Մէ գործեալ՝ չար կասքի մեղքն ,


զէ

զէրէ զմարդն յայ յետ կու դարձու-
ցանէ յանփոփոխ բարութէն:

Երկրորդ՝ կասվի մեղք․ որ է դառ-նալն մարդոյ ՚ի փոփոխական բարին: Ինչպէս որ մէկ մարդ մը թողու զա-պուհայաթ յստակ և պաղ ջուրն և երթայ զպղպջխոտ և զհոտած ջուրն խմէ: Ինչպէս ած կասէր հրէից թէ, թողին զիս աղբիւր ջրոյ կենդանւոյ․ և գնացին փորեցին ինքեանց գուբս ծակոտեալս: Երրորդ՝ կասվի մեղա-դրութիւն․ որ մարդն անձնիշխան և պատկեր այ լինելով՝ զհայվանի գործ գործէ: ինչպէս մէկ ծեր և խելայի մարդ մը՝ չօճուխի պէս խօսի և խաղայ․ ամէն տեսնօղ զնա կու մեղադրէ: և կամ թէ, իւրեան մուսատահաւ բանէն յետ կենայ և զանց առնէ: Չորրորդ՝ կասվի արատ․ զէրէ մեղքն կարա-տաւորէ և կապտկանէ զպատկերն այ որ է ՚ի մեր հոգին․ և նէտիրքէ կանէ: Զէրէ մեղքն զբանականն կու մոլո-

 րե

րեցընէ 'ի ճշմարտութենէ · զդասամնա-
կանն կու տկարացնէ 'ի զօրութենէ ·
և զցանկականն կու սառեցնէ 'ի սիրոյ
բարւոյն ։ զյիշողականն կանէ մոռաց-
կոտ երկնաւորին այ և դժոխոց և սիրոյն
արքայութեան ։ Ա խղճմտանքն ցեցա-
կեր կանէ և որդնալից · որ մեղաւորին
այլ չի կարեր ուրախանալ ոչ մեղան-
չողի պէս · ինչպէս կայէն որ զաբէլ
սպաննեց՝ յաշխարհի վերայ երերեալ
և տատանեալ շրջեցաւ ։

*Չարէն մեղաց լէր դու հե   ռի ·
որ չի լինիս մեղաւորե   լի ։
Հոգին բարեօք կու զարդա   րի ·
որպ՜ պարտէզ մի ծաղկա   լի ։

*****************

## Խնդիր Բ.

### Թէ ինչ է Մեղքն ըստ Աստուածայինն.

Մեղքն է որով մարդ յետ կու
 դառ

գտանեայ յանփոփոխ բարւոյն՝ որ է ա՟ծ, և կու գտանեայ առ փոփոխական բարին որ է ժամանակաւոր հեշտութիւն.

Ուրէ ա՟ծ զամէն բան՝ մարդոյն համար ստեղծեր է. և զմարդն՝ վասն իւր, որ ճանաչէ զինք ստեղծօղն. ճանաչելով՝ սիրէ. սիրելով երթայ և առ նա միաւորի մտօք և կամօք.

Իսքին՝ թէ որ մարդ զինք ստեղծօղն չի սիրէ որ է կեանք իւր հոգւոյն. այլ զաշխարհս սիրէ, և զէվքինի և սէվտայի տալմիշ լինի, կեօյաքի իւր մնացական բարին՝ հեշտութիւն աշխարհիս է. այնպիսի մարդն՝ զա՟ծ անփոփոխ բարին, հետ [illegible] տէյիշ կանէ.

Սէ դարձեալ՝ մեղքն՝ է խորհիլ խօսիլ և գործել զինչ որ ա՟ծ և օրէնքն կարգիլէ.

Ուրէ մեղքն՝ կամ մտօք կու խորհրդի, և կասուի մեղք խորհրդոյ. կամ բերանով, և կասուի մեղք բերանոյ. և կամ գործով կու կատարուի, և կաս

վի մեղք գործոյ։ Եւ այլ ած կարգիլէ զմեղքն մտաց. ինչ պէս ասաց ՚ի սբ աւետարանին, զի՞ խորհիք ՚ի սիրտս ձեր չարիս։ Եւ զմեղքն բերանոյ. ինչ պէս կասէ տըն յակոբոս, որ բանիւ ոչ մեղանչէ՝ նա է մարդ կատարեալ։ Եւ զմեղքն գործոյ. ինչ պէս կասէ ած մի՛ շնար, մի՛ գողանար, մի՛ սպանաներ։ Օրէն տասն պատուիրանքն այ՝ զայս երեք մեղքն այլ կարգիլէն։ Ընդդէմ մտաց մեղաց կասէ թէ՝ սիրեսցես զտէր ած քո յամ սրտէ։ Ընդդէմ բերանոյ մեղաց կասէ քի, մի՛ սուտ երդնուր. և զանուն այ քո մի՛ առնուր ընդունայն. և մի՛ սուտ վկայեր։ Եւ զմեղքն գործոյ. ինչ պէս կասէ քի, մի՛ երկիր պագաներ կռոց. մի՛ շնար. մի՛ գողանար. մի՛

ըսպանաներ։

Դարձեալ՝ մեղքն է որ կանէ զմարդն վնասապարտ, և պատժապարտ։

Վնասն է որ զրկէ ՚ի տեսութենէն այ։



և

և Պատիժն է՝ յաւիտենական տան-
ջանքն դժոխոց։

*Մեղքն է գործումն ՚ի յաստուծոյ·
որ է բարի անփո   փոխ։
Որ զմարդս հոգին կա   նէ·
անլոյս խաւար և դը   ժոխ։

****************

## Խնդիր Գ։

### Յաղագս Սկզբնական Մեղաց։

Սկզբնական մեղքն է անհնազանդու-
թիւնն ադամայ · որ յորդւոց յոր-
դիս կանցանի · և կանէ զմարդն որդի
բարկութեան · ատելի ա̃յ · և գերի
սատանայի։ Զերբ ադամ որ ստեղծ-
ւաւ և եղաւ ՚ի դրախտին · և եւա
՚ի նորա կողեցն շինեցաւ ձեռամբն
ա̃յ , ա̃ծ նոցա մէկ թէմպիհ մի արաւ
թէ՝ յամէն ծառոց դրախտին կերէք·
բայց ՚ի պտղոյ ծառոյն գիտութեան
բարւոյ և չարի մի՛ ուտէք · զէրէ թէ
որ ուտէք , հոգւով կու մեռանիք։



Լա

Լուծքին եւա և ադամ անհնազանդ գը-տըվան ա՟յ . և հնազանդութեան օձացքե-ցօղ չար սատանային և կերպան։ և բա-րեկամ և սիրելի ա՟յ լինին , դարձան թշնամի և ատելի։ Ինչպես կասէ պօ-ղոս առաքեալն թէ . մինչդեռ թշնա-միքն էաք , հաշտեցաք ընդ ա՟յ մահ-ուամբ որդւոյ նորա։

Նաև ազատ լինէն , եղանք գերի սա-տանայի հնազանդելով կամաց նորա . ինչպես կասէ սուրբն պօղոս թէ , ծա-ռայ էք որում հնազանդիք։ և ք՟ս ա-սէ , որ առնէ զմեղս՝ ծառայ է մե-ղաց։ Լուծքին ոմանք կասեն թէ , ըս-կըզբնական մեղքն հպարտութիւն էր . և ոմանք թէ՝ բղջախոհութիւն։ Սակայն ասեմք թէ , հպարտութիւնն թէպէտ մայր է ա՟մ մեղաց՝ զէրէ նոքա ան-կան հրեշտակք յերկնից որ սկիզբն գո-լով ամենայն մեղաց՝ ասի մայր , լուծքին ադամայ ձըգողն և գլորիչն ոչ եղև

հպարտութիւն և բղջախոհութիւն, այլ
անհնազանդութիւնն որ 'ի հպարտու-
թենէ յառաջ եկաւ․ վերջէ ամ ան-
հնազանդն՝ հպարտ է․

Ասոր համար ած զադամ յանդիմա-
նեց իջէն՝ չասաց թէ հպարտացար,
այլ թէ՝ փոխանակ զի լուար ձայնի
կնոջ քոյ․ որ կամի ասել թէ, ո՞չ հնա-
զանդեցար ինձ, այլ կնոջդ․ Նաև
թէ որ հպարտութիւն և բղջախոհուին
լինէին սկզբնական մեղքն, յանհաւա-
տից մէջն ասա խոնարհ և ողջախոհ
մարդ չի պիտէր գտանիր․ լաւ ին ան-
հաւատքն որ չէն մկրտըված, շատ-
կան որ խոնարհ և ողջախոհք են․ այլ
սակայն անհնազանդութե՝ բարկութե
որդիք են՝ գերի սատանայի․ և առա-
քեալ ասէ․ Նաև թէ որ հարցանես, թէ
մկրտեալ մարդն սրբըված է յսկզբ-
նական մեղաց, ինչէ որ նորա ծնած
զաւակն անմկրտուր և մեղօք կու ծը-
նանի․ Ասեմ թէ, ինչպէս որ



մէկ

մէկ մարդ մի կոյր լինի՝ իւր ծնած
զաւակն չէ թէ կոյր կու ծնանի, այլ
աչքով․ և երբեմն հայրն տեսօղ՝ և զա-
ւակն կոյր ծնանի։

Նոյնպէս թէպէտ հայրն և մայրն ողջին մկրտ-
ւած լինին և օրհնեալ ՚ի մեղաց լաւքին՝ ի-
րենց ծնած զաւակն մեղօք կու ծնանին։
Դարձեալ՝ որպէս ՚ի բարի ծնողաց չար
զաւակ կու ծնանի, այսպէս և ՚ի սրբ-
բեալ ծնողաց՝ անմաքուր զաւակ։
Ինչպէս որ Մանասէ թագաւորն եղա-
կռապաշտ՝ վարեցաւ ՚ի գերութիւն․
՚ի մէջ գերութեն զղջացաւ․ և ած̃-
քեռ դարձոյց ՚ի գերու[թ]է․ եկաւ ՚ի
սբ̃ եէմ՝ աճ̃պաշտութեամբ կեցաւ
մինչ ՚ի մահն։ լաւքին այն առաջին իւր
կռապաշտութեան պատիժն և պատու-
հասն՝ մնաց քորդւոց քորդիս․ որպէս
գրեալ է 4 թագաւորաց 23 գլուխն 26
համարն։ Նմանապէս և ծնողքն թէ-
պէտ մկրտութեամբ կու սրբվին, բայց
կրօնական մեղաց, լաւքին ծնեալ



զա

զաւակն՝ ադամայ մեղօքն անմաքուր
կու ծնանի · զերէ ամենեքեան 'ի
յարմատն կային 'ի յադամ · և զազգին
նա կերաւ · լաւքին որդւոց ատամուն-
քըն առին · զերէ և մեր կամքն ե-
դեալ կայր 'ի կամքն ադամայ · և կամքն
ադամայ՝ էր կամք հասարակ ամենայն
յետնածին զաւակացն նորա։

Այնոր համար և մեր կամքն 'ի նա լի-
նելով՝ յապականելն կամաց նորա՝ ապա-
կանեցաւ և մեր կամքն · թէպէտ և
նա զղջացաւ և ապաշխարեց · լաւքին
մեք նորա հիւանդութեն հիւանդա-
ցաք · սակայն ապաշխարութեամբ նր
ոչ սրբըլեցաք։

Ինչ պէս ասեմ թէ , մէկ մարդ մի 'ի
հիւմմայէ պառկած լինի , և կամ 'ի
ժանդամահէ · և մէկ սաղ մարդ մի 'ի
տես գնալըն բանըվէ · յորժամ այն ա-
ռաջին պառկողն ողջանայ աստուծով ,
այն յետի բռնըված մարդն այլ կող-
ջանայ մի · միւմքըւն չէ։

Այսպէս և ադամ ապաշխարեց. և քս̃
ազատեց զնա իւր անհուն ողորմութե̃ն
'ի դժոխոց և յսկզբնական մեղաց. մի՞
թէ ազատեցան և որդիքն յայն մե-
ղացն որ 'ի յադամ մերմէն. ո՛չ ազատե-
ցան. այլ միայն անմաքուր. և կու-
սրբուհին շնորհօք չարչարանացն քս̃ 'ի
ձեռն մկրտութեան.

Նաև ինչպէս ասեմ թէ, գէեզի
աշակերտն եղիսէ մարգարէին՝ 'ի նէե-
մանայ գնաց ծածուկ կաշառք առաւ.
և եղիսէ մարգարէն իմացաւ. դար-
ձաւ անիծեց զգէեզի և ասաց թէ,
բորոտութին նէեմանայ 'ի քեզ դարձ-
ցի և յորդիս քո մինչև 'ի յաւիտեան:
Ասեմ թէ՝ ած̃ գեղեցեայ կէօյաքի
ողորմեցաւ և սրբեց 'ի բորոտութենէ.
բայց որդիքն՝ անոր սրբվելուն սրբը-
վեցա՞ն մի. ո՛չ: Արդ՝ մեղքն ադա-
մայ՝ էր բորոտութիւն մի. որ տիրա-
պետեց ամ̃ որդւոց նորա. և ապա
սրբվեցաւ



շնոր

շնորհօքն քո՛ և ապաշխարութե՛ բերով ։ Նաւ մեկ մարդ. մի որ ասէ թէ, իմ հայրն որբըվեցաւ ես չեմ մեղուիր՝ ես այլ որբըվեցայ, մենէր կու որբըվի՛ մի առանց մեղուութեան. միւմքին չէ. այլ պետքէ որ ինքն այլ մեղուի՝ որ որբըվի.

*Մեղօք նախնւոյն որ բոլոր տիսս,
Իբր յարմաթոյ ապակա նիս.
Շնորհիւ փրկչին դու գերծա նիս,
Թէ յաւազանն որ մըլը տիսս.

****************

## Խնդիր Գ.

## Յաղագս Ներգործական Մեղաց.

Ներգործական մեղքնէ անմիջապէս և կամաւոր յետս դարձումն յանփոփոխ բարւոյն այ, և դարձումն 'ի փոփոխական բարիս։ Որդ՝ անմիջապէս անոր համար ասի, զէրէ թէպէտ ակզբնական մեղքն այլ կամաւորէ պի անձեան

մեք 'ի յարմասն մեր ադամ էաք․ յորժամ նա կամօք անհնազանդ եղաւ, և մեք այլ վասն հօր մերոյ՝ անհընազանդ գլուխընկմանք․ լաքին չէ թէ մեք մեղէն, այլ միջնորդութ՟ սերման և ապականութ՟ ծննդեան քաշէցաք 'ի մեզ զմեղքն ադամայ։

Իսկ ներգործական մեղքն զանազան է․ Նախ՝ զի կամաւոր է․ և երկրորդ՝ զի առանց միջնորդի՛ է․

Նու այս գազանս որ է մեղքն ներգործական՝ (որ 'ի մեր հոգին կու թափանցի և կու մտանէ, և կը՞նչ որ կու գործէ 'ի ներքս 'ի մեզ և շուրջ ըղ մեզ կու գործէ) ունի Է չարաքայն գլուխ․ որ կեօյաքի 'ի ծովէ կու բըղխին եօթն մեծամեծ գետորայք և չայեր․ և զմեզ որ 'ի ձեռն մկըրտութեան ազատեալն էաք յսկըզբնական մեղաց և 'ի գերութենէ սատանայի և յատելութենէ որ բարեկամ և սիրելի այ եղած էինք՝ թէքրարէն 'ի ձեռն ներ

գործութե իւրոյ կամինէ զմեզ գերի և որոգայթի և թշնամի այ և որդի բարկութե · որ այլ մկրտութեամբ չեմք կարենար ազատիլ · ( զի մկրտութիւնն մի է և ոչ երկրեք կրկնի · թէպէտ մեկ մարդ մի յուրացութենէ զղջայ՝ ոչ է մկրտէլի · ) եթէ ոչ կրկին աւազանաւ արտասուաց ապաշխարութե, և դառն զղջման, և ճշմարիտ խոստովանութե ·

Սա այս գազանիս առաջին չար գլուխն՝ հպարտութիւն է · երկրորդ՝ նախանձն · երրորդ՝ բարկութիւն · չորրորդ՝ ծուլութիւն · ե, ագահութիւն · զ, որկրամոլութիւն · է, բղջախոհութիւնն ·

Որ այս եօթն մեղքս՝ նախ քան զմեղանչելն ադամայ չէր կային 'ի նմա · միայն հպարտութիւն և նախանձն կայր 'ի սատանայն · Իսկ ադամ զայս եօթն մեղքս թելադրութեն սատանայի՝ ծնաւ մեր հոգին այսու կարգաւ ·

Նախ՝ զի հպարտութեամբ՝ եղաւ անհնազանդ աստուծոյ ·



Երկ

Երկրորդ՝ նախանձն և բարկութիւնն թագաւորէց 'ի նոյեն։ Երրորդ՝ ծնաւ ագահութիւն ամ անալց , և փափաքն անհուն գիտութեանն այ 'ի յադամ և յեւա։ Չորրորդ՝ յագահութենէ յառաջ եկաւ որկրամոլութիւն։ Հինգերորդ՝ յորկրամոլութէ պտղոյն ճաշակման՝ բղջախոհութիւնն. զի երբ նախ քան զուտելն պտղոյն՝ չէին իմանար զգանկութի. անոր համար մերկ էին և ոչ ամաչէին ինչ պէս անմեղ տղայքն. այլ յորժամ կերին և մերկացան , իմացան զգանկութիւն բղջախոհութեան և զամօթի հարան։ Նա և երբե ծոյլք և անկարօղք գործելոյ զդրախտն և պահելոյ՝ անոր համար արտաքսեցան 'ի դրախտէն։

Մեղքն է գազան եօթնագը    լուխ.
և չար վիշապ թունա    ւոր։
Ով որ մօտի 'ի նորայն    ծուխ.
մահուան լինի պարտա    ւոր։

## Խնդիր Ն.

### Յաղագս առաջին Մահացու մեղացն որ է Հպարտութիւն։

Հպարտութիւնն է՝ անկարգ ցանկութիւն պատուոյ եւ փառաց։ Աւ հըպարտն է որ տայիմ կու ջանայ թէ քան զամէն մարդ փառաւոր երեւի. անոր համար քան զինքն մեծին չի հնազանդիր. զէրէ քան զինքն այլ մեծ չի համարիր։ Իւր հաւասարին եւ ախրանին հետ չի կենցաղավարիր. զէրէ իլթիքեապ չանէր. եւ իրեն հաւասար զայլ ոք չի գիտէր։ Ինչպէս որ առիւծն հիչ մէկ կենդանւոյ մի հետ խօնուշ միշ չի լինիր ՚ի հպարտութէն. այսպէս եւ հպարտն հիչ չի ասէր թէ ինձ նըման այլ մարդ կայ. ինչպէս փարիսեցին կասէր թէ, ո՛չ եմ իբրեւ զայլ մարդ։ Նաեւ հպարտն՝ փոքրին վերայ զինքն գազան ցոյց կուտայ. եւ

մե

մեծին առաջև խաբեբայ այնպէս և
Թիւքի կու ձևանայ · յորժամ կու
տեսնէ թէ չի կարեր յաղթել և նմա-
նիլ քան զինքն մեծին:

Որդ՝ հպարտութիւն փոխ գարշելի է:
Նախ՝ զի բառնայ զշնորհն այ·
զի ած ամբարտաւանից հակառակ կայ·
և տայ շնորհս խոնարհաց:

Երկրորդ՝ զի հպարտութբ ստնյ ան-
կաւ յերկնից · և ադամ ՚ի դրախտէն:
Երրորդ՝ հպարտութիւն ատելի է այ·
զի սոդոմն կասէ թէ , գարշելի է այ
ամ մեծամիտ: Չորրորդ՝ զի հպար-
տութիւնն կորուսանէ զամ բարի ՚ի
հոգւոյն , և՚ի ներքս կու բերէ զամ
չարս · զերբ որպ խոնարհութիւն կու
ցրուցանէ զհոգին ամէն բարութբ և
առաքինութեամբ · որպէս ասաց քս
թէ , վայելէ մեզ լնուլ զամ արդա-
րութիւն · որ ամէն արդարութիւն
զխոնարհութիւն կու կոչէ , այսպ և հպարտու
թիւն զամէն չար կու բերէ ՚ի հոգին· զան
հա

հաւատութիւն , զկամապաշտութի՟ ,
ըղձերձուածողութի՟ , և զամէն չարու-
թիւն։ զէրբ մէկ մեղաց մի հետ հը-
պարտութիւն որ չի կենայ , այն մեղքն
չէ կատարեալ մեղք։

Հինգերորդ՝ հպարտութիւն է պատկեր սատանայի . որպէս խոնարհութիւնն պատկեր քի՟։ սատանայ ասէ , ուսարուք յինէն զի հպա՛րտ եմ . և քս՟ ասէ , ուսարուք յինէն զի հեզ եմ և խոնարհ։ Վեցերորդ՝ հպարտն է տիկ լցված գարշ փքով . որ քանի որ գէր գլուտայ՝ զժահահոտութիւն կու բուրէ ՚ի բերանոյն։ զէրբ ՚ի տեսլեանն ասի թէ , երբաց զբերան գբոյն անդընդոց . և ելանէր ծուխ ՚ի գբոյն . այսինքն , ՚ի բերանէ հպարտին ծուխ ամբարտաւանութ՟։ Եօթներորդ՝ հըպարտն է չեառն գերբուծայ . որ ասաց դաւիթ մարգարէն թէ , չէ՛րիք գեղբուծայ մի՛ խիցեն ՚ի ձեզ ցօղք անձրևաց։ զէրբ ՚ի հոգի հպարտ մարդոյն չի


իջա

իջանէր շնորհն այ. Ութերորդ՝ հը-
պարտն է նման կափառնայում քաղա-
քին. որ թէպէտ յաշխարհիս վերայ
յերկինս ելանէ, 'ի դժոխսն կու իջանէ
որպ՝ ասաց քս. Իններորդ՝ հպարտու-
թիւնն առնէ զմարդն գազան. ինչ պս
արար զնաբուգոդոնոսոր և զորդսա.
Տասներորդ՝ հպարտութիւն ընկղմէ ըզ-
մարդն 'ի ծով դժոխոց. որպ՝ զփարա-
ւոն 'ի ծովն կարմիր. Այլ է երկնից
հրով. ինչպէս զնաբադ և աբիուդ
որդիքն ահարոնի.
Երենդանի իջէն՝ կլզուցանէ 'ի դժոխսն.
ինչպէս զկորխ և սահաւ թշնամիքն մով-
սէսի և ահարոնի. Առնէ զմարդն խող
և բնակարան դիւաց. ինչ պս որ քս
զդիւանքն 'ի մարդոյ որ հալածեաց՝ ա-
ղաչէյին թէ ելթամք 'ի խոզերն մըտ-
նումք. և յորժամ մտան, տարին 'ի
ծովն խեղդեցին. Այսպէս հպարտու-
թիւնն զմարդոյ հոգին 'ի ծով դը-
ժոխոց կու խեղդէ.



Հպար

*Հպարտն յերկինքն որ ելա   նէ.
Երկնից պիղծ չի հաւա   նիր.
Թէ որ խապիւ որ լինէր   նէ,
Ի դժոխն այլ չէր պարտակ   վիր.

***************

## Խնդիր Օ.

Յաղագս Երկրորդ Մահացու Մեղաց, որ է Նախանձն.

Նախանձն է հազմ՝ չանել զայլոց բարին. և այլոց բարի չի կամենալ. և ջանալ վրկել ի բարւոյն. Պարզեալ՝ նախանձն է ցաւիլ յայլոց երջանկութեան և բախտաւորութեան վ̄ր, և տրտմիլ ի վ̄ր այլոց բարւոյն. Որպէս կայէն որ տեսաւ թէ աբելի պատարագն ա͞յ հաճոյ եղաւ, տրտմեցաւ և գլխակոր եղաւ ի նախանձուն և ի հասէթէն. Եւ այս ա͞վլ է. որ նախանձոտն քանի որ կու նախանձի՝ ինքն զինքն կու հալէ և կու մաշէ. Ինչպէս կասէ սիրաք իմաստասէրն թէ,



ին

ի՞նչ համար աչք ունի նախանձոտն .
որ յամէն բարեաց վերայ հոգոց հա-
նիցէ . և աչօք խուռօք արտասուիցէ . և՛ ի
գիրութենէ դրացուն՝ ինքն նիհարա-
նայցէ և զապունասցի . և բարեօքն
օտարին՝ չարչարվիցի .

Նախանձոտն ո՛չ միայն զայլոց բարին
չի կամենար , այլ և զիւր բարին .
ինչ պէս հրեայք կասէին վասն ք̅ի թէ ,
զի՞նչ արասցուք զի այրն այն բազում
նշանս առնէ . Նա՛ այն սքանչելիքն
ք̅ի՝ իրենց օգուտ էր . լոքին ՚ի հա-
սէթէն կու կամենային կոյր մնալ .
մեռեալն հոտիլ . խուլ կենալ . համր
և տիլսիզ կենալ . քան թէ զք̅ի հրաշ-
քըն տեսանել . ինչ պէս կասէին բերա-
նովն սողոմնի թէ , ծա՛նր է մեզ և
տեսանել զնա . Նոյնպէս ժամանակաւ
մէկ թագաւոր մի՝ երկու նախանձոտի
ասաց թէ , ձեզի ի՞նչ պատիւ տամ .
մէկն ասաց թէ , զիմ մէկ աչքն հա-
նէ , և զանոր երկուքն .



Դոր

Պարծեալ՝ ոչ կամենար տեսանել զայ
լոց բարիսն. ինչպէս որ եղբարքն յով
սեփայ չէին կամենար տեսանել զծաղ
կեայ պատմուճանն յովսեփայ և ոչ
զինքն. Պարծեալ՝ չորէ այլքն նախան
ձոտի. զէրէ արեանարբու օձի նման՝
այցք զմարդն կու հալէ. և այլոց հուր
վառեալ՝ զինքն կայրէ. Ինչպէս սա
ուղայ քուննն յաչացն հատեր էր ՚ի նա
խանձուն. Թէ ինչ է՝ զդաւիթ լը
պանանել: Պարծեալ՝ չոր է նախան
ձըն. զի երբեր յաշխարհ զմահ. զի նա
խանձու բանսարկուին եմուտ մահ յաշ
խարհ: Պարծեալ՝ նախանձոտն ՚ի դը
ժոխոց մէջն զինքն մնաս գործելով ոչ
կըշտանար. ինչպէս որ Ճծառունն ՚ի
դժոխս կամեցաւ քարշել զղազար ՚ի
գոգոյն աբրահամու. որ չէ թէ ջրոյ
ցանկաց որ զովանայ. զէրէ զխոսեր որ
խաղին չէ. այլ կամէր ՚ի հուր տանջա
նաց քարշել զաղքատին: Պարծեալ՝
որպէս ծառն ՚ի պտղոյն ճանաչի. այն


պէս

պէս և չար նախանձն 'ի հօրէ և 'ի մօրէ. Իսկ հայրն նախանձուն' է սատանայ. և մայրն' հպարտութիւն. զի սատանայ է֊ ղաւ հայր և ծնօղ նախանձու. որ մար֊ դոյն նախանձեցաւ թէ էր 'ի դրախտն եդաւ հողածինն. և մայրն և սնու֊ ցիչն է հպարտութիւն. զի նախանձն է դուստր հպարտութեան. զի հպարտութիւն այնպէս գործէլ մայր մի է, որ ունի և մերձենայ' ծնանի զչար դուստր.

Դարձեալ' ամ մեղք են չար, և մս չարի. այլ նախանձն մաքառի և ընդ֊ բարեաց. զի որպէս տրտմի 'ի յաջողու֊ թիւնս այլոց, այսպէս խնդայ ընդ֊ անյաջողութիւնս.

Ո էրէ նախանձն է տրտմութիւն այլոց բարեաց. որ զբարին չար կուտայ ա֊ սել. զլոյսն խաւար. զքաղցրն դառն. զհրեշտակն սատանայ։ Եւ նախանձոտ մարդն կու նմանի կէճէ խուչէյի.

 որ

որ զխաւարն կու սիրէ և զլոյսն կատէ:
Դարձեալ՝ նմանի թիթեղան, որ է քե-
փինէկն. որ տայիմ կու ջանայ թէ
զլոյս ճրագին մարէ. լաքին իր թե-
վերն կայրի և՚ի մէջ բոցոյն անկեալ
կու սատակի: Դարձեալ՝ նմանի պայ-
խուշի որ յաւերակ տեղիս կու բնա-
կի. այսպէս նախանձոտն տայիմ յան-
յաջողութիս այլոց կու բախանայ:
Դարձեալ՝ նման է շան. զէրէ շունն
որ քան կու շտ որ լինի, զաւելցած ոս-
կորն չի կամենար որ այլ շուն ուտէ:
Դարձեալ՝ նման է օձի. զէրէ օձն
զինչ որ ուտէ, զէհէր և աղը կու
դարձուցանէ. այսպէս և նախանձոտն
զամէն բարի բան՚ի չար կողմն կու
մեկնէ: Դարձեալ՝ նախանձն նմանի
զունկակի. որ զայլը կայրթնցընէ, և
զինքն կու մաշէ: Յորանի թէ նախան
ձոտն յամէն քաղաք և տեղ աչք ու-
նենար. որ ամէնուն բարեօքն զինքն
չարչարէր և սատակէր. զէրէ նախան-

 ձո

ձօտն է մարտիրոս սատանայի.

Պարծեալ՝ նախանձոտն է հայհոյիչ հոգւոյն սրբոյ. զէրէ հոգին սուրբ աղբիւր բարութեան է. ամենուն բարի կու կամենայ։ Պարծեն՝ է թշնամի այ. զէրէ ած զչարն այլ կու կամենայ թէ բարի լինի. և նախանձոտն զբարին կու կամենայ չարացնել. Վերջապէս՝ նման է կուդայի՝ որ համբուրելով կու մատնէ զած.

*Ով ոք նախանձի, նախ ինքն խանձի.

****************

## Խնդիր Լ.

### Յաղագս երրորդ Մահացու մեղաց որ է Ոխակալութեան.

Ոխակալութիւնն է բաղձանք և փափաք վրէժխնդրութե. Այլ վրէժխնդրութեն և տակլածութիւնն՝ միայն այ կու վայելէ (որ է դատաւոր հոգւոց և մարմնոց) և դատաւորաց՝ որք են այ



վէ

վէքիլ ՚ի վերայ երկրի · պատկօղ բա-
րեաց , և պատժօղ չարաց ։ Նորդ՛ բար-
կութ̃ին կու ծնանի ՚ի հօրէ և՚ի մօրէ ·
հայրն է հպարտութ̃ին , և մայրն է նա-
խանձն · և ինքն է որդի կորստեան ։
՚Սախ՝ զէրէ բարկութ̃ին կաւիրէ ըղ-
շինուածն մ̃յ · որպէս կայէն զաբէլ ։
Է , Բարկութիւնն թալալէ նման թե-
թեացնէ զմարդն · որ ասար դէմ կա-
սէ սուրբ յակոբ առաքեալն , եղիցի
ա̃մ ոք արագ առ ՚ի լսել · և ծանր ՚ի
խօսել · և ծանր ՚ի բարկանալ ։
Գ̃ , Բարկութիւնն կու մերժէ զլոյսն ·
և զբարկացօղն կու նմանեցանէ ՚ի խա-
ւարի ։ քանզի արեգակն ՚ի վերայ բար-
կութե̃ ոչ մտանէ · այսինքն՝ մ̃յ շը-
նորհքն ՚ի բարկացօղի հոգին ։
Դ̃ , Բարկութ̃ին զմ̃յ դատաստանն կու
խափանէ · զէրէ ա̃ծ որ կու տեսնէ
թէ մէկ մարդ մի զդատաստանն՝ իւր
ձեռքն կու տեսնէ բարկանալով , այլ
ինքն տակաւանձութիւն չանէր · պօղոս



սուս

տաճարեալն կայ ․ բարկութի մարդոյ՝
զարդարութիւն ա͞յ ոչ գործէ․
Ե, Բարկութիւնն զընդհանուր նիզամ
և կարգն ա͞ծի կու քակտէ ․ զէրէ աշ
խարհի երանութիւն՝ խաղաղութիւն է ․
այլ բարկութիւնն բառնալով զխաղա-
ղութիւն աշխարհի՝ թշուառական և
խեղճ կանէ զնիզամն աշխարհի․ ռիլաք
իմաստունն ասէ ․ բազումք անկան
սրով ․ այլ առաւել բարկութեամբ․
զէրէ մ͞տի վերայ կուրն ջինայ առանց
բարկութեան․ Զ, Բարկութիւն զա͞յ
պատկերն կապականէ ․ զէրէ ինչպէս
որ 'ի պղտոր ջուրն պատկեր մարդոյ
չերևիր ․ այսպէս 'ի բարկացողի հոգին
պատկերն ա͞յ․ զէրէ ա͞մ գեղեցկութի
հեռի է 'ի բարկացողէն ․ և որքան մար
մին բարկացողին տգեղ է ․ հազարա-
պատիկ հոգին․
Է, Բարկութիւնն առնէ զմարդն յի-
մար ․ զէրէ շատ անգամ 'ի բարկա-
նալն չէմք գիտեր թէ որոյ



կու

կու բարկանամք, լաւքին կու բարկա-
նամք։ խայրի մեղքեր քինի թէ կու
ծածկվին, լաւքին բարկութին տայիմ
'ի դուրս կու վազէ։ Է, Բարկացօղն
է ծով աւէկոծեալ. ինչպէս կասէ
սուրբ Թադէոս առաքեալն, անտառ
ալէք ծովու։ զէրէ ինչպէս ալիք ծո-
վու զնաւն կու ընկղմեն, զպարիսպ-
ներ կու փլցընեն, լաւքին իրենք այլ
կու խորտակին. այսպէս բարկացօղն
այլոց վնասելն իւքէն՝ զինքն այլ կու
չարչարէ։ որ նման է խումպարայի որ
յանկած տեղն կու քակէ. լաւքին ինքն
այլ կու փլչի։
Թ, Բարկութին յանզգայից պիէ
ինթիխամ կուզէ առնել. զէրէ շատ
հեղ մարդ 'ի բարկութենէն՝ զգինքն
կու թափէ. զլիչէն 'ի գետին կու
զարնէ. զթուղթն կու պատառէ. ըղ
գրիչն կու կոտրէ. դրան ճռճռալուն
կու նեղանայ. զվառած մոմն կան-
ցընէ, թէ կու չթչթէ. լվան կու

նեղանայ , և զկծած տեղն քերելն ի
քէն՝ զիւր մարմինն կու ցաւցնէ ։
Ժ , Բարկութիւնն կու մերկացնէ ըզ
մարդն ՚ի նմանութենէն այ · զէրէ այ գործքն
խաղաղ և հանդարտ են · այլ բարկու-
թիւնն կորուսանէ զիմաստութիւն · և
դալ և զսհեակ կեօզէթմիշ անել կը
տայր · կու բացուցանէ զմիտքն որ զճըշ
մարիտն չի տեսնէ ։ Աւանէ զմարդն
կատաղի շուն · որ ՚ի պօշ տեղն թէ գի-
տէ թէ ոչ՝ հաչել կու տայ · ինչ պէս
փողոցի շներն · որ ՚ի մէկ թաղ մի լսեն
թէ շուն մի կու հաչէ , իրենք այլ ըզ
պատճառն չի գիտնալով կու հաչեն ։
որ թէ հարցանիս թէ էր կու հաչէք ·
կասեն թէ , ինչ գիտնամք · ՚ի միւս
թաղն կու հաչեն , մեք այլ կու հա-
չեմք ։ Այսպէս երբեմն յեփեսոս քա-
ղաքն ժողովեցան ՚ի վերայ պօղոսի առա-
քելոյն կուապաշտներ · և չէին գիտեր
թէ ինչ բանի համար ժողոված են ·
այլ կաղաղակէին

Երկու սահաթ խոտոր ժամանակ ասե-
լով Թէ, մեծ է Արտեմիս Եփեսացւոց.
Ահա՛ բարկութին ամենևին կատաղի շուն
կանէ զմարդ և յունայն տեղն կուտայ
հաչէլ.

*Բարկութիւնն է անդ գովն քի,
մինչ բարկանամք բարկու Թեան.
Նու Թէ վրէժ առնուլ կա միմք,
բարկուԹիւնն է յուժ խոտան.

✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻

## Խնդիր Ը.

### Յաղագս չորրորդ Մահացու Մեղաց, որ է Ծուլութիւն.

Ծուլութիւնն է Թմրութիւն ի գործս քաջաբար առնելոյ. Քաջաբար և արիաբար առնելք գործքն' են առաքինութիւնքն. և ընութիւն յումար և անանգոտնելի կիրառութիւնքն. Այլ Թէ, ծուլութիւնն և Թեմպէլութիւնն այն է որ մարդ Թէպէտ կա



րող է

րող է գործել զառաքինութին եւ քաջա-
նալ, լուքին յանձին եւ երկիւղին մահ
կու քաշէ կամաւ եւ չի մօտենար. ասե-
լով թէ՝ դժուար է. Ինչպէս ասեմ
թէ, կրակ չի վառեր՝ թէ ծանրուն
կու լինի. հաց չուտեր՝ թէ ակռաներս
կու մաշին. Նոյն եւ կու յուսահատի՝ ի
դժուարութենէ առաքինութեն ուշ յու-
սալով յաւծ. որ կեցաքի՝ կամի եւ ոչ
կամի. տեսօղ է եւ կոյր. կենդանի է
եւ մեռեալ. Նոյն զայսպիսի ծոյլ մարդս՝
դաղձ կու կոչէ յօհաննէս 'ի տեսլեանն.
Ո՛չ էրէ ինչպէս դաղձ եւ խլէնէ ջուրն
փոխել կուտայ զմարդն, այսպէս եւ
ծոյլ մարդոյ արարքն փոխել կուտան
զքն̃. որ քն̃ անիծելով զծոյլ մարդն
փոխէ եւ 'ի դուրս ձգէ զնա յաշ-
խարհէ, յեկեղեցւոյ, եւ յարքայու-
թենէ.

Ծոյլ մարդոյն հիչ խօլայ բան չկայ.
զէրե ինչ բան որ թէքլիֆ ընես՝ դի-
ժար է կսէ.

Չի սաէր թէ , ծոյլ և թէմպէլ եմ. այլ գործոյն մահանայ կու գնէ. Ինչ պէս սողոմոն իմաստութիւնն կասէ քի , զծոյլն յորժամ 'ի ճանապարհ ուղարկես , կասէ թէ առիւծ կայ 'ի ճանապարհին և գայլ 'ի հրապարակին. Նախատի ծոյլն 'ի չիչին մրջիւնեն և խաղընձայէն , սողոմոն իմաստութիւնն կասէ թէ , երթ առ մրջիւնն ով վատ. և ուսի՛ր 'ի նմանէ թէ ո՞չ գործունեայ է. որ յամարայնի թէտարկը կանէ ձմռան պահրէին.

Իսկ ծոյլն զձեռն 'ի կերակուրն կումխէ , և'ի բերանն իւ չէնամիշ կու լենի տանիլ.

Սորդ ծուլութիւնն չար է և վատ. Նախ՝ զի ոչ հակառակի . որ զմարդն գործունեայ արար և'ի դրախտն եդ գործել . և քրտամբ երեսաց զհաց ուտել յետ ելանելոյն 'ի դրախտէն.

Բ , Մանիծ զի 'ի քէ որպէս զթզենին տերնական և անպտուղ . զէրէ ծոյլն



քրիս

քրիստոնէայ կու ձեռնայ, և ծուլու-
թեամբն՝ անհաւատի կու նմանի։
Գ, Յամէն առեղծուածոց կու յան-
դիմանի. որ ամէն առեղծուածք կան
'ի վերայ մեծ հրամանին. արեգական,
լուսնին, աստեղք, երկինք, երկիր,
գազանք և անասունք։ Նաև 'ի չար և
'ի գող մարդոց պիղծ կու յանդիմանի.
զերբ գողն մինչև 'ի կախաղանն չալըշ-
միշ կու լինի։ Դ, Սորուանէ զպատ-
ուական և զգնող ժամանակս այս. և
լոյս կայ իջէն չէ ընկթանար. այլ գիշե-
րի կու սպասէ յետ կենացս որ մարդ-
չէ կարեր այլ գործել. որպէս յիմար
կուսանքն։ ոչ ինչ պատուական քան ըզ
ժամանակ. և ոչ ինչ վատ քան զկո-
րուստ ժամանակի։ Ե, Յոյսն կու կո-
րուսանէ զժամանակ վաճառականուէ.
և յետոյ կրմուրանայ և ոչ ոք տայ։
Զ, Ամենայն մոլութեան տուն կու
լինի, և մեղաց



մե

մեծաց մայրաքաղաքք • որպէս ասէ սո֊
ղոմն , անցի յանդաստանս ծուլին ,
եւ այն լի՛ էր փշով·

Է , Լինի բնակարան սատանայի • զի
ծոյլ մարդն վհերտուրայեց բարձէ սուրբ·
ուստի քս ասաց Թէ , դեւն ելեալ շրջի·
՚ի խուաճ տեղիս հանգիստ չի գտանէր·
ապա դառնայ առ ծոյլն եւ գտանէ ըզ
նա պարապորդ եւ լցուցանէ զնա եօթն
մահացու մեղօք • որ կոչին է դեւք եւ
այսք չարագոյնք· Ը , Ծոյլն է քաղաք
անպարիսպ • որ յամէն կողմանէ բացէ
մեղաց։ Թ , Ծոյլն արի է ՚ի չարն ,
եւ Թմրած առ բարին • քաջ ՚ի հիւան
դանալ , եւ յամր ՚ի բժշկիլ·

Ժ , Ծոյլն անարժան է կերած հացին·
զի պօղոս առաքեալն ասէ , ձեռքն որ
չի վաստակիր՝ Թող չուտէ· Ծոյլն
ծանր է , ՚ի դժոխս շուտ կիջանէ·
եւ ոչ Թէ Թեւ՝ Թէ յերկինս ելանէ·
Ծոյլն ՚ի տապանն ոչ մտանէ որ ապրի·
ուստի ՚ի ջրհեղեղէն կու խեղդի·



Մեր

Վերջապէս ծայր մարդն շուտով կո-րուսանէ զհաւատն · զէրն թէ պետ-րոս տապջեալն արիաջար աղօթած էր 'ի գիշերի մատնութեանն քնի , զորն ծի տարանայր 'ի տունն կայիափայի·

Ոսկին է դատարկ բառի գոր ծոց·
և քի փշոց խայթո ցաց·
Մաէ ինքեան հուր դժո խոց·
Նշեցէ 'ի մէջն ընդ գի ճաց·

**************

## Խնդիր Թ·.

### Յաղագս հինգերորդ Մահացու մեղաց, որ է Ագահութիւն·

Ագահութիւնն է անյագ ախտ ար-ծաթոյ · և ամ կորստեան պատճառ իրաց· Զի՝ երէ ովոր ագահ որ լինի, նոյն և անկուշտ և անյագ է · և գիտէ թէ արծաթով հոգին կու ցցի · յաքին ղհոգին ընդունանին մայ՝ միայն ամէ կա-րէ

րէ լցուցանել։ Նայել ով որ կամենայ
արծաթով զհոգին լցուցանել, կծօյա֊
քի փախանակ պատուական և անգին ձէ
վահիրի՝ զհոգին աղբով կըլցուցանէ. և
սիրելով զարծաթն՝ կու լինի կռա֊
պաշտ. որպէս ասէ սուրբն պօղոս ա֊
ռաքեալն։ Արծաթն է իբրև շուն մի
որ երկու մարդոյ կու հետևի. և ոչ
ոք գիտէ ՚ի տեսողացն թէ շունն երկու
տէրանց հետևելով որոյն է. այլ յոր֊
ժամ այն երկու մարդն բաժանին,
տէս թէ շունն որոյ կու հետևի՝ ա֊
նոր է։ Նոյս երկու տէարքս՝ աշ֊
խարհն է, և մարդն. յորժամ մարդ֊
մեռանի և ջոկէ բաժանի և արծաթն
մնայ յաշխարհի, տես յայնժամ պէ֊
լի կու լինի թէ որոյ է այն մեծու֊
թիւնն. թէ մեռածն ՚ի հետն տա֊
րաւ՝ իւրն է. և թէ չի տարաւ՝ աշ֊
խարհին է։ Նուաղ հազար. առաջինու֊
թիւնն և իմաստութիւնն որ մեր են՝
անոր հոգ անօղ չի կայ. և մեծու֊

 թիւնն

թիւնն որ մեր չէ՝ որ քան խայրէթ կանէն սիրողքն։ Որքան մեծանաս՝ չես կարեր լինիլ սողոմոն և օգտաւոր կայսր. սողոմոն յետ ամենից՝ գիտացաւ զունայն լինելն և ասաց թէ՝ ունայնութիւն ունայնութեանց ամ ինչ ընդունայն է։

Արդ՝ բաց զաչքն քո և տես զչարութիւն ագահութե և արծաթսիրութե. Արմատ ամ չարեաց՝ արծաթսիրութիւն է կասէ պօղոս առաքեալն. Ո՛վ արար ըզյուդա առաքեալն զող և այլ մատնօղ. արծաթն. Արծաթսիրութիւն է փորձութեանց թելալ և կոչօղ. զի որք ցանկան մեծանալ՝ անկանին 'ի փորձութի. Ագահին մեծ կուռքն արծաթն է. զէրէ զհաւատն և զյոյսն և զսէրն որ այլ պիտոյր տայ. զայն կուռոյ արծաթոյն. Պարծեալ՝ ագահութիւնն է գողութեան յորդորիչ. ստութեան վկայ. քակտօղ օրինաց. բողութեան և չնութեան



պատ

պատՃառ · կռուոյ և պատերազմի բոր
բոքիչ·

Արդ՝ ագահութիւն բազում չարեաց է սկիզբ· Նախ՝ զի վա՛յ բերէ մարդոյ գլխոյն · քանզի ա՛ծ տէր է , և մեջ ծառայ · ա՛ծ ազատ և Ճեօմերտ , և ծառայն նեքեղ · վա՛յ ժլատ ծառային որոյ տէրն առատ է · Բ , Ագահն միշտ կարօտի · զէրբ աղքատն բազմաց ըն չից կարօտի · և ագահն ամի·

Գ , Ագահն է յիմար պազիրկեան · որ ղարքայութին և զըա՛՝ քիչ մի բանի կու վաՃառէ· զէրբ ագահն վա՛տ է քան զյուդա · զի նա զտրն Լ արծաթոյ ծախեց , և ագահն երբեմն մէկ փողի զիր հոգին և հաւատն կու վաՃառէ·

Դ , Ագահն կու մաշի և կու հալի ի՛րով արծաթոյն · զէրբ մեծութին՝ աշխատանօք կու վաստակվի · երկիւղի՛ կու պահվի · և ցաւօք կու կորնչի· և շատ անգամ ագահն կու վաստակի , և օտարաց գողոց և չար զաւակաց կու



թո

թողու զվաստակն. Ե, Ագահն նմա-
նի ոսկիւմ ձեկի · որ ճանճ ակլամիշ
անձամ տէյի , զիր աղբըն կու գատար
կէ 'ի փորուն.
Պարզեալ ագահութիւնն կու նմանի
ծակ կարասի · դժոխոց , տզրկի , ծո-
վու և հրոյ որ կշտանալ չեն գիտեն.
Նաև ագահն նմանի ջրգողի · որ ինչ
խմտար ըմպէ , այնքան կու ծարաւի.
Իսկ չար զաւակներն ագահութե՛ան են
այսոքիկ. Նախ՝ խստասրտութի՛ւն · որ է
քարասրտութիւն և տղմարդութիւն ·
Երկրորդ բռնութիւն · որ է յա-
փշտակելն զայլոց.
Երրորդ անհանգստութիւն · որ է անէր
և ցանկութիւն շահից. Չորրորդ սու-
տերդմնութիւն · որ լինի 'ի գնելն և 'ի
ծախելն. Հինգերորդ՝ պատրանքն և
խաբելն թէլպիզական խօսքով.
Վեցերորդն է քինէյութիւն · որ
զմարդն խաբէն յաչաց առաջին.
Եօթներորդն է մատնութիւն · որ


լի

լինի ՚ի հեռաւորութեան խաբուածին։
Պարծեալ՝ ագահն զրկէ զմեծ. որ զնոյն
տուած բարին՝ չի բաշխեր ՚ի պէտս իւր
և ՚ի պիտոյանացու ուրիշն տալով աղքատաց։
Այս զրկէ և զիւր մարմինն. զերե
տայիմ փեսփեսէ անելով կու հալէ
և կու մաշէ զմարմինն։ Այս զրկէ և
զբարեկամներն որք են աղքատքն քո.
որ ՚ի ձեռն անիրաւ մամոնայի՝ պէտքէ
որ բարեկամ վաստակի. և նա անիրա-
ւաբար կու պահէ և ՚ի սեղանաւորս ՚ի
յաղքատս թէալիմ չաներ որ աճի և
շահի. այլ չարաչար կու պահէ։ և ինքն
այլ կու զրկվի. զերե հետն չի կարեր
տանիլ. այլ թողու օտարաց զմեծու-
թիւն իւր։

Ագահին ոսկին է փշա լից.
արծաթ անփորձ և աղտա լից։
Որքան բազում ունի մէն չից.
այնքան դատարկ է յամէ նից.

## Խնդիր Ժ.

### Յաղագս չորրորդ Մահացու Մեղաց որ է Որկրամոլութեան.

Որկրամոլութիւնն է փափագ անսահման բարի ուտելոյ. Իսկ կամ այսպէս, որկրամոլութիւն է աւելի ուտելն քան զբնութեան չափն եւ սահմանն. Իսկ որկրամոլն շատ կերպիւ կու մեղանչէ. Նախ՝ յորժամ յառաջ քան զժամանակն ուտէ. որպէս Ադամ յարգիլեալ ծառոյն գիտութեան. որ որկրամոլութեան յաշխարհ եբեր զմահ. Երկրորդ՝ յորժամ խնդրէ անուշ եւ համեղ կերակուր ոչ նայելով յինխտիզայն բնութեան եւ թապիյէթին. եւ այս նման է եսաւայ. որ վասն մէկ ոսպապուրի՝ զանդրանկութիւն վաճառեց. որ կարէր կշտանալոյ հացով. Նաեւ նման է այն չար մեծատանն որ խորտկով եւ թիւրլիւ թիւրլիւ կերակրով կու զըզլնէր

Եւ

և մրափկանայր . յետոյ եղաւ կերա-
կուր անքուն որդանց. Երրորդ՝ յոր
ժամ ուտէ ամենայն չափով . որ է ընդ-
դէմ բնութեան որ սակաւ մի կերակրով
կու շատանայ. Ինչ պէս ասաց Ք͞ս Մար
թայի թէ , դու հոգաս բազում կե-
րակուր . բայց աստ սակաւ ինչ կերա-
կուր պիտոյ է. Չորրորդ՝ յորժամ ու-
տէ խրատահով և ջերմ ցանկութեամբ . որ
չէ թէ կերակուր ուտելն մեղադրելի է,
այլ ցանկութիւն ուտելոյն մոլեկան է.
Հինգերորդ՝ յորժամ շատ աշխատու-
նօք պատրաստէ զկերակուրն թէ հա-
մեղ լինի . լաւին քաղցն պիտի զկերա-
կուրն քաղցրացնէ.
Վեցերորդ՝ որկրամոլութիւն առնէ ըզ
տամձարն ա͞յ՝ տուն սատանայի . զերե
խոզն որ շատակեր է , դեւքն խընդ-
րեցին ի քէ մտանել ի խոզսն.
Եօթներորդ՝ առնէ զմարդն շնացող.
ինչ պէս յայտ է ի ղովտ . որ ըմպեց ըղ
գինի շատ , հետ իւր դստերացն շը-



նա

նացա. Ութերորդ՝ բարկացուցանէ
զնա. ինչպ̃ կայ դաւիթ մարգարէն,
մինչ գիշեր կերակուր ՚ի բերանս իւրեանց
էր, բարկութին այ̃ եւ ՚ի վերայ նոցա.
Իններորդ՝ առնէ մարդասպան. ինչ
պէս հերովդէս ՚ի մէջ մեծախնին սպան
նեց զյօհաննէս մկրտիչն. Տասներորդ՝
առնէ զմարդն յուդա. որ զձեռքն ՚ի
յամանն տարաւ յառաջ քան զքս̃. եւ
զպատառն որ առաւ՝ սատանայ մտաւ
՚ի հոգին. Ժա, Մեռուցանէ զմարդն
հոգւով եւ մարմնով. հոգւով՝ ինչպէս
առաջ ած̃ ադամայ, յորում աւուր
ուտիցէք՝ մահու մեռանիցիք. եւ մարմ
նով՝ ինչպէս կասէ պօղոս առաքեալն
թէ, գիրգ եւ փափուկ այրին՝ կեն
դանույն մեռեալ է. Ժբ, Արկրամո
լութին առնէ զմարդն քարասիրտ. ինչ
պէս ՚ի դաւթի ժամանակն կայր նա
բաղ անուն զէֆիմի մէկ մարդ մի.
որ ՚ի հեշտութեան եւ զէֆիսի մէջ տալ
մն լինելով՝ սիրտն քարացաւ եւ երեք

ա

աւուր յետոյ չարաչար մեռաւ։
ԺԴ, Որկրամոլութիւնն կանէ զմարդն
քէօթիւրիւմ. զերբ կայ սուրբն յօ-
հան ոսկեբերան թէ, սեղան բազմա-
խորտիկ՝ մայր է հիւանդութեան. զէ-
րբ մարդոյ մարմինն քանի որ շատ պէս
լեցնմիշ լինի, այն խորտար կու զայ իք-
նայ. ԺԵ, Որկրամոլութիւն կարգիլէ
զմարդն յառաքինութենէ. ինչ պէս
թապըն որ շատ կերած լինի, զնապաս-
տակն չի կարեր ըմբռնել. և տօղանն՝
զաւն չի կարեր ուսալ. այսպէս շատա-
կեր մարդն՝ առաքինութիւն չի կարեր
ստանալ. Ալ Դանիէլ մարգարէն իւր
օր ծոմ կենալով, զերազն նաբուգո-
դոնոսորայ մեկնեց. և Գ մանկունքն
ունդ և թօհում ուտելով՝ գեղեցկա-
ցան. և որչն Խ օր ծոմ պահելով՝ ըզ-
սաֆրան կու թափէ. Այսպէս սակա-
ւակերութեամբ՝ մարդն զմեղքն և
զսատանայն յիր հօգւոյն կու վարէ.
Ինչ պէս քն ասաց, այս ազգ ոչ ելնէ

ելանէ . եթէ ոչ՝ պահօք և աղօթիւք։
Որկրամոլութիւն հանեաց զադամ ՚ի դրախ տէն . ջրհեղեղ բերաւ . զնոյ նահապետն մերկացոյց . զղովտ ընդ դստերացն ընացոյց . զտախտակն կտակարանաց մովսէսի կոտորատել ետուր . զժողովուրդն իսրայէլացւոց ՚ի բէլբեգովր պղծեցոյց . զէրէ կերան զմատաղ կուոց և զմեռելոտի , յետոյ անկան ՚ի շնութի։
Մերժապէս որկրամոլութիւն առնէ ըզմարդն՝ կռապաշտ . ինչ պէս ասէ սբն պօղոս , բայց արդ լաւ ասեմ զթշնամեաց խաչին քի , որոց ած որովայնն է։
Նաև վատթա՛ր է որկրամոլն քան ըզկռապաշտն . զէրէ կռապաշտքն՝ զարեգակն և զլուսին՝ զարծաթ և ոսկի կռապաշտեին . իսկ որկրամոլն զաղբ որովայ նին կրպաշտէ։

*Փոր շատակերին՝ անդունդ դժոխոց է։
որպէս շատ կերօղ՝ շատեր էն ցաւ է։

## Խօսք ԺԳ.

### Յաղագս չորրորդ Առաքինութեան Բարոյ, որ է Ողջախոհութիւն.

Ողջախոհութիւն է՝ անյագ հեշտութի ցանկութէ. յառաջ եկեալ 'ի պերճ-տռփմանէ շաղաշարութէ. Սորա՝ այս չար և անօրէն մեղքս՝ զանազան կերպ ունի. Նախ՝ ազատ ընդ ազատի. կամ ամուսնացեալ ընդ ամուսնացելոյ. և այս կասի պոռնկութի. Երկրորդ՝ ազգականաց և խնամեաց. և հոգևոր ազգական յորժամ խառնակին. այն ազգապղծութիւն. Երրորդ՝ այն շնութի. որ անկողին ամուսնացելոյն օտարին մասնելոյն կապականի.

Չորրորդ՝ ապականել զկոյս. և կասի կուսապղծութիւն. Հինգերորդն է՝ յորժամ զեկեղեցական և զկուսութի խոստացողն ապականեն. կասի սրբապղծութի. Վեցերորդն է, որ ընդ



բռ

բոլին մարդ ննջէ և պղծվի. կասվի
բոլութիւն.

Եօթններորդն է վավաշոտ շաղաշարութիւն
զուգակցաց. որ քան զչափն առաւել
հետևին իրենց չար ցանկութեն. ժամ
և ժամանակ չի դիտանալով. այլ հայվա
նի նմաներով. և վատ քան զանոնք. զի
որ անոնք ժամանակ ունին. և այս կաս
վի վիս և պիղծ առվորութի. Եւ այս
զանազան կերպիւ է. Օ երն կայ որ
արժան կասվի. ինչ պէս որ վասն որ
դեծնութե լինի. Ան ուրկար կասվի.
որ ամուսնացեալքն զպարտքն հատու
ցանեն միմեկի. Ան սանձարձակա
կան կասվի. որ չէ վերնոց պէս. այլ
վասն փախչելոյ 'ի պոռնկութենէ կու
կատարվի. այս երեքն այլ՝ մեղք չա
վեր կ'ածեն վարդապետք.

Ս է լաքին՝ Է կերպ կայ որ խոտելի է
ամուսնական գործն. Նախ՝ յորժամ
լինի բողական գրկանք և պիղծ
համբուրիւն.

Երկրորդ՝ յորժամ լինի սովորութեան դէմ. որ չէ մեղչելու։ Երրորդ՝ յորժամ լինի ՚ի եախըջլասըզ և յանպատրաստ տեղ. ինչպէս ՚ի սուրբ տեղ, և կամ
՚ի մէջ տեսնողաց։

Չորրորդ՝ յորժամ լինի առ յղի կինն որ մօտ լինի ծնանելն. թէպէտ անասունքն յետ յղանալուն այլ չեն մերձենար մէկ ՚ի մէկ. որ խիստ լաւ կու լինէր թէ և բանականք յայնմ մասին
անասնոց հետևէին։

Ութերորդն է՝ արու ընդ արուի. և կամքի սոդոմայական արուագիտութիւն. պիղծ և անյիշելի. ատելի այլ քան զամէն ատելի. բնութեան թշնամի. և անասնոց անգիտելի. մահուան և գժոխոց ՚ի կեանս և յետ մահու արժանի. ծծմբով և երկնատեղաց հրով պատժելի. անխնայ առանց ողորմութեան սպանանելի և պչալն ՚ի մէջս
քաղաքի ըստ ածադիր
հրամանի։

Արդ՝ բղջախոհութիւն շատ պերճանս կու բերէ և խիստ վատ է։ Նախ՝ զի ապականէ և պղծէ զտաճարն այ։

Բ․ Հանէ ՚ի դրախտէն որպէս զադամ և եւա։ Գ․ Ծնանի զչար զաւակս․ ինչպէս մովաբ և ամօն ՚ի դստերացն ղովտայ։ Դ․ Առնէ անիծից արժանի․ ինչպէս ռուբէն առջինեկն յակոբայ նահապետին։ Ե․ Ընկէ յարքայութենէ․ ինչպէս կասէ պօղոս․ շնացողք զարքայութիւնն այ ոչ ժառանգեն։ Զ․ Առնէ զմարդն թշնամի այ․ ինչպէս կասէ յակոբոս առաքեալն․ շնացողք՝ ոչ գիտէք, զի սէր աշխարհիս թշնամութիւն է առ այ։ Է․ Դառնացուցանէ զխղճմտանքն մարդոյ․ սողոմոն ասէ․ մեղը կաթեցընեն շրթունք կնոջ պոռնկի․ որ առ ժամանակ մի պարարէ զոսկերս․ բայց յետոյ դառնագոյն գտցես զնա քան զլեղի։ Ը․ Բառնայ զխաղաղութիւն

յաշխարհէ. զէրէ սուր և պատերազմ առանց կնոջ չէ եղեր. անոր համար ա՟ծ ասաց դաւթի մարգարէին թէ, սուր 'ի տանէ քումմէ մի' պակասեսցի. Թ, Սէռ յափշտակէ զմիտքն. զէրէ գինի և կանայք կապստամբեցընեն զիմաստունս. Ժ, Զ երկաթէ զմիտքն կուհալէ. քեզ օրինակ դաւիթ մարգարէն ընտիր ծառայն ա՟յ. և սողոմոն իմաստունն. և ուժեղն սամփսոն. Մ երջապէս յաշխարհիս վէրայ շատքն 'ի չափահասակ մարդկանց 'ի դժոխն կերթան վասն բղջախոհութեան. Յորմէ զմեզ ազատեսցէ ամենակարողն ա՟ծ. զէրէ ոչ ոք կարէ ժուժկալ լինիլ, եթէ ոչ ա՟ծ տայցէ.

*Հուր դժոխոց այլ զօրէ լի,
քան զհոգի բղջախոհ հին.
Զ էրէ կայրէ նա զմեղա ծորն,
և սա այրէ զառաջի նին.

# Խնդիր Ժ.Բ.

## Ցուցուն Նեքեւէ Մեծը.

Ներքին մեղքն է փոքրագոյն յանցանք որ դժոխոց պարտական ըներ զմարդն. Որպէս 'ի փոքրիկ տղակներն որ անգիտութեամբ կու մեղանչեն. Նու 'ի մեծ մարդիկներն, որոնք դատարկաբանութեան, ծաղրածութեան, շախայն և հանաքն. Կամ 'ի տգիտութենէ և յանկարծութենէ եղած մեղքն. Բայց և պոռնկութեան այլ՝ երբեմն 'ի տկարութենէ կու հանդիպի, սակայն մահացու մեղք է. Ապին զգուշ լեր, զի որպէս 'ի ծաղկանց պտուղ յառաջ կու գայ, այնպէս 'ի սովորութենէ ներքին մեղաց՝ մահացու մեղք. Ո՛ էրէ շատ անգամ 'ի շախայէն մարդ է մեռեր. Քանզի ամէն մեծ բաներ՝ 'ի փոքր բանէն յառաջ կու գայ. և ամէն մեծ՝ 'ի փոքրէն կու մեծանայ. Ինչ պէս

'ի

՚ի մէկ կայծէ՝ հուր մեծ կու բորբո
քի. և ՚ի տամկայէց՝ կեօլ կու լինի.
Նայպէս ՚ի ներքին մեղաց սովորու
թենէ՝ սակաւ առ սակաւ մահացու
մեղք կու ծնանի։ Զոր օրինակ՝ ՚ի
խեղկատակութե՛ և ՚ի ցոփաբանութենէ՝
հայհոյութիւն. ՚ի հայհոյութե՛ կռիւ.
և ՚ի կռուոյ արիւնհեղութիւն։ Նա
ներքին մեղքն չէ թէ բերանոյն մի
այն է, այլ և աչաց. ականջաց. բռըն
գաց. և շօշափելեաց։ Նաև ներքին
մեղքն է՝ խաֆիլութեն հայիլ ՚ի կին մարդ
ոյ դանկալոյ մտօք. որ թէ սակաւ մի
յամեցար ՚ի նայիլն և սիրտդ պղտորե
ցաւ, լաւքին հաւանութի՛ չի տվիր՝ նե
րելի է. թէ հաւանեցար՝ մահացու է։
Տեսար զաղքատն՝ չի տվիր ողորմութի՛
զէրէ չունէիր. թէ որ քանիցս չի մխի
թարեցիր՝ ներելապէս մեղանչեցիր։
Տեսար զմեղաւորն ՚ի չար գործն.
աչքդ տեսաւ, և սիրտդ չի կսկծաց
զհոգին. և կամ տեսար զմեղաւորն



այս

պատիժն և ուրախացար և ո՛չ վախեցար ՚ի պատժոյն ։ Ներելապէս մեղար․

Ա՛կանջաց ներելի մեղքն է՝ թէպէտ ո՛չ քամքասեցիր՝ ո՛չ հայհոյեցիր ։ լսելին քամքասողին միամտաբար ականջ դըրիր ․ որ թէ հաւանեցար ։ մահացօրէն մեղանչեցիր ․ և թէ ո՛չ ներելապէս։

Ա՛յսպէս և հայհոյելոյն ․ և լսել զտըրտունջ ։ և զգանգատ ։ և զ զրպարտութի․

Այլ թէ բարի խրատուց և քարոզի ժամանակին ծուլութեամբ քնացար ։ որ թէ չի լսեմ տէյլի քնանաս ։ մեղանչես մահացօրէն ․ և թէ ո՛չ ներելապէս։

Ո՛ւրնգաց և քթի ներելի մեղքն է հեշտանալ ՚ի հոտս ծաղկանց և անոշահոտ իւղոց ․ ո՛չ վերաբերելով ՚ի փառս ա՛յ ։ այլ ՚ի հեշտութիւն հոտոտելեաց։ այլ քթով հեշտանալ և իգանալ՝ է մեղք մահացու ․ և կամ զըղջախոհութեան պատճառ իւրը հոտոտալ ։ և կամ ՚ի հոտոց աղքատաց զզուիլ և զքիթն փակել։



Որ

Որ թէպէտ բնութիւն կու գարշէ 'ի վատ հոտէ, ըսքին թէ զհոտոյ սարսուռն չի համբերեցար 'ի փառս այ, մեղար ներելապէս: Նա վերջապէս զայս է մայր'ր. որ այն բանն որ հոգւոյ և մարմնոյ շահ չէ և փառաւոր ասկար մի մօտէ՝ ներելի մեղքէ.

* 'Ի մեծամեծ վիմաց խոր — չիս.
և 'ի գետոյ զերծա — Նիս.
Գուցէ աւազով սուզա — Նիս.
և 'ի յաւուց ընկլըլ — Միս.

**************

## Խնդիր ԺԳ.

Յորդոր այն Մեղայ որ — ԼԸ
ողորմելին.

Առաջինն է կամաւոր մարդասպանութիւնն. ինչպէս կայենին զաբէլ սպանանելն. որ ամ ասաց թէ, ձայն արեան եղբօր քո յերկրէ բո-



ղոքէ

ղջէ աւխս. Որ կամի ասել թէ, վը
րէժխնդրութիւն կուզէ և դատաստան։

Երկրորդն է սոդոմայական չար մեղքն.
Ինչպէս ասաց ած աբրահամու թէ,
աղաղակ սոդոմացւոց և գոմորացւոց
յաճախեաց. Զէրէ ընդդէմ այ խա_
նօնին էր մեղքն սոդոմայեցւոց. թէ_
պէտ ած մեղք ընդդէմ այ է, լաքին
արուագիտութին հէմ այ դէմ է հէմ
բնութեան. ուստի բնութին այլ հազմ
չանելով՝ առ ած ստեղծօղն իւր կա_
ղաղակէ թէ՝ դատ արա.

Երրորդն է աւատւել չարչարեալն զծա_
ռայս և զխզմէթքեարս. ինչպէս ած
ասաց մովսէսի թէ, աղաղակ որդւոցն
իսրայէլի էհաս յականջս իմ. և արդ
իջի փրկել զնոսա։

Զէրէ թէպէտ ած զմարդն թոյլ
կուտայ գերել, լաքին գերեվարին կու
բարկանայ՝ թէ որ աւելի չարչարէ։
Ինչպէս ասաց եսայի մարգարէի բե_
րանովն վասն բաբելացւոց թէ, ես



մատ

մատնեցի զնոսա 'ի ձեռս քո . և դու
ոչ արարեր 'ի վերայ նոցա ողորմութիւն.
ծանրացուցեր զլուծ ծերոց յոյժ. այ-
սինքն զլուծ տկարաց: 47 գլ. 6 համարն:

Չորրորդն է կորել զվարձ մշակաց.
ինչ պէս կասէ յակոբոս առաքեալն
թէ, զըկեալն 'ի ձենջ աղաղակէ. և
բողոք հնձողաց է հաս յականջս տեառն
զօրութեանց. Զերէ մեծ անօրէնու-
թիւն է՝ որ մարդ այլոց աշխատանօք
հարստանայ. և զանոր հոգեպահիկն և
զաւուրչէքն կորէ և չի տայ. կեցաքի
այնպիսի մարդն՝ զանոր որդին առաջև
աչացն կու սպանանէ և մկր հելալ մալին
մէջն կրակ կու վառէ. և զանոր մար-
մինն կու սպանանէ, և զիր հոգին:

*Մարդ սպաննել, արտ՝ադի տել,
զվարձ կորել, շատ չարչա րել:
Զլուծ դրդեն առ 'ի պատ ժել,
և բողոքեն զդատ առ նել:

# Խնդիր ԺԳ.

Յաղագս Մեղաց որ ընդդէմ հոգւոյն սբյ.

Մի է ամենակարող, ամենիմաստ, և ամենաբարի։ Կարողութիւնն առ հայր կու վերաբերի։ Իմաստութիւնն առ որդի։ և Բարութիւնն առ հոգին սուրբ։

Այլ թէպէտ ամ մեղք ընդդէմ այ է երիցն և միոյն, այլ մեղքն անկարութեան՝ է ընդդէմ հօր այ. մեղքն անգիտութեան՝ է ընդդէմ որդւոյն այ. և մեղքն կամաւ և կարողութբ գործելի՝ ընդդէմ հոգւոյն սբյ։ Ուստի մեղքն որ ընդդէմ հոգւոյն սբյ է՝ կամաւ գիտութբ և կարողութբ գործեալ մեղքն է. և այն անթողլի կամի։

Սախ՝ քն ասէ, իսկ հոգւոյն հայհոյութիւն մի՛ թողցի։ Երկրորդ՝ պօղոս առաքելայն ասէ, կամակար մեօք եթէ յանցանիցեմք յետ ընդունելութեան գիտութեան ճշմարտութեանն,

 այն

այնու հետեւ ոչ եւս պիտոյ է վասն մե-
ղաց պատարագ. այլ ահեղ ակնկալութիւն
դատաստանի.

Եւ տեսակք անթողլի մեղաց որ
ասի հայհոյութիւն հոգւոյն սրբոյ՝
վեց կերպ է. Առաջինն է յուսահա-
տութիւն. որ այսպէս էր մեղքն կայ-
ենի եւ յուդայի. զերբ կայէն յետ սպան-
ներոյն զաբէլ, ասաց ոչ թէ, մեծ է
իմ մեղքն քան զքո թողուլդ. կեօյա
իմ մեղքն մեծ է քան զքո ողորմու-
թիւնն. Իծու յուդա յուսահատելով ՚ի
քո ողորմութենէն՝ գնաց զինքն կախեց
եւ խեղդեցաւ. Եւ թողուլ զմեղս՝ է
՚ի շնորհաց հոգւոյն սրբոյ. եւ ով որ
ասէ թէ՝ իմ մեղացն թողութիւն չի
լինիր, կեօյա կասէ թէ՝ հոգին սուր-
տկար է եւ չէ կարեր զիմ մեղքն թո-
ղուլ.

Երկրորդն է յանդգնութիւնն. որ է
ինատձութիւն. որ մարդ զարդա-
րութիւն ոչ կրուբանայ. եւ չարաչար



յո

յորորմութիւն մէջ կապուտին՝ խայրէթ
ցանկելով բարի գործոց. որ կեօյաքի չէ
բանելով կըւնուէլին ումիշ կանէ.
Կամ թէ զինքն 'ի ծուլն կու ձգէ և
կասէ թէ. հաշմաթն է նէ՝ թող ած զիս
ազատէ. Նաև այս է զած փորձել. և
զայս արդարութիւն ուրանալ. Որ այնպի
սի մարդն կեօյաքի կասէ թէ. թող
հոգին մը զիմ չար գործքն պատկէ. և
զհոգին մը՝ ի՞ւր մեղացն խըհախ կանէ.
Պատրձեալ՝ յանդգնութիւն է որ մարդ
քան զիւր կարողութիւն 'ի վեր իմաստով
բան կանէ. Ինչպէս որ սիմոն կա
խարդն կամեցաւ յերկինքն ելանել քի
նոյման. Նաև կամ մանիքուս որ խոստա
ցաւ զորդին պարսից թագաւորին ող
ջացուցանել՝ և սպաննեց. որ հաւատա
ցունէր՝ և զառաքելոյ գործք կուզէր
կատարել. Որ այսպիսի մարդիկս կա
մին ասել թէ՝ ած անիրաւ է. առանց
վաստակի և բարի պատերազմի՝ զմարդն
կու պսակէ.

Սրբոցդն է մարտնչումն ը̄ դէմ ճա-
նաչեալ ճշմարտութե̄ : Ինչպէս ա-
սել , ես գիտեմ որ լոյսն բարի է և
մեղքն քաղցր է . լաւքին մէ․ուես չես ես ,
ես զլոյսն խաւար կասեմ և զմեղքն լը-
ղի : որ այսպիսի մարդոց վայ կուտայ
եսայի մարգարէն : Սու կամ թէ մէկ
մարդ մի ասէ թէ , ես գիտեմ որ
զղջումն՝ խոստովանութե̄ն և ապաշխա-
րութե̄ն բարի է , լաւքին անոր համար չեմ
զղջար խոստովանիր և ապաշխարեր՝ որ
ա̄ծ չուրախանայ .

Սու դարձեալ՝ մէկ մարդ մի ճանաչէ
զճշմարիտ հաւատն . և բնաւ անէ և
չի գայ յուղղութիւն : Ինչպէս որ
հրէայքն՝ որ այն քան զարմանալի հրաշք
ներ տեսան 'ի քէ̄ և յառաքելոց . և
զ'ի ծնէ կուրին լուսաւորելն տեսան ու
չի հաւատացին 'ի քս̄ . այլ և կուրին
ասացին թէ , մեք գիտեմք որ այն
մարդն մեղաւոր է . ահա զքարին չար
ասացին . Սու յառաքելոց ժամանակն

տայիմ հակառակ և գըթ կու կենային հոգւոյն սբյ շնորհացն. անոր համար սուրբն ստեփաննոս նախավկայն պէյան էշքերէ ասաց թէ, դուք հանապազ հոգւոյն սրբոյ հակառակ կայք։

Որ կամէր ասել թէ, դուք տայիմ յայտնի ճշմարտութէ կու հակառակիք. որ է անիթողելի մեղք։

Չորրորդն է նախանձն եղբայրական շնորհաց. որ մէկ մարդ մի ջանք չանէ թէ ես այլ շնորհաց տիրանամ. (ինչ պէս սուրբն պօղոս առաքեալն կասէ թէ, նախանձաւորք լերուք շնորհացն որք լաւքն են) այլ նախանձի թէ ինչու համար իմ եղբայրս և հաւատակից այս շնորհացս հասանի։ Ինչ պէս որ կայէն նախանձեցաւ աբէլին. թէ ինչու համար անոր պատարագն խափուլ լինի, և իմն չէ։

Հինգերորդն է խոստովանութիւնն. որ է քարաշարութի. որ մէկ մարդ մի խրատու չի լսէ. քարոզի

 ուն

ունկն չի դնէ. ածային շնորհաց տէ-
ղիք չունենայ. յօրինակաց չի վախե-
նայ. այլ զմիտն քարայնէ որ ընդ-
ծին բան մի թէհսիր չանէ 'ի միտն.

Ինչպէս որ յապառաժ քարին վերայ
բան չի բուսանիր. զէրէ ջուր չի կա-
րէր ծծեր. այսպէս և խստասիրտ մար-
դոյ միտն թէ նէտ ածային բարկու-
թեան պիլէ դպչի, թէ կակուղ և
միւլայիմ խրատ՝ բնաւ ին 'ի միտն չի
մտաներ.

Ինչպէս որ մեծատունն յօրինակէն
ղազարոսի չի շահեցաւ. 'ի շանց չի պատ-
կառեցաւ. որ անոնք զվէրաներն կու
լիզէին ևզհիւծրանն կու սրբէին. և ին-
քըն քարասիրտ լինելով բնաւ ին հայլա-
միշ չէր աներ. տես թէ 'ի վերջն՝ ինչ
պէրզահի համդիպեցաւ.

Որանի ինչպէս ասաց սուրբն պօ-
ղոս թէ, այլ ըստ խստութեան քո և
անդարձութեան սրտի քո՝ գանձես
քեզ զբարկութիւն յաւուրն բարկու-



թեան

թեան և արդար դատաւորութեանն այ։
Օ այս պատիժ պատուհասին գիտնա-
լով դաւիթ մարգարէն կու խրատէր
զխստասիրտ մարդիկն և կասէր թէ, ո՛ր-
դիք մարդկան մինչև յե՞րբ էք խստա-
սիրտք. ընդէ՞ր սիրէք զունայնութիւն
և խնդրէք զստութիւն։

Վեցերորդն է անզգուշութիւն. որ մէկ
՝ մարդ մի, կամ թէ չարաչար ու-
մուտ կանէ թէ շատ կապրիմ, կամ
կամաչէ խոստովանիլ. և կամ կնտա-
բար կու վախենայ թէ վերստին կան-
կանխիմ ՚ի մեղս՝ ի՞նչ շահ է խոստովա-
նիլն։ Նաև մեծ յիմարութիւն է մար-
դոյ որ ասէ թէ՝ ես շատ կապրիմ.
որ այս օրուին չի հասանիր. և քի՟ դէմ կու
խօսի որ ասէ թէ, արթուն կացէք
զի ոչ գիտէք երբ տէր տանն գայ։
Նաև առաւել յիմար է որ ՚ի մէկ
մարդոյ մի ամաչէ և չի
խոստովանիր.



և

և ՚ի տխեղծ բական ահեղ հրապարակին և
անաչառ ատենին խայտառակ լինի. Ինչ
պէս կասէր ած ընդ բերանով մէկ մար
գարէին թէ, յայտնեցից զառականս
և զխայտառակութիւն քո առաջի ամ
մարդկան.

Նման ևս առաւել յիմարէ՝ որ կնա-
տաւքար փախենայ թէքրարէն յանկա-
նելոյ և չի խոստովանի. լաջին երկ-
չոտ վանձառականն ոչ շահ կանէ և ոչ
զարար. ամկայն երկչոտն ՚ի ոչ խոստովա-
նելն տայիմ զարար կանէ. որ կեօյաքի
զըդ, եանըն չի ցանէր, թէ հողն չիւ-
րիւթմիշ կանէ. կրակ չի վառէր, թէ
եանղըն կու լինի. հաց չուտէր,
թէ կու փախեմ. Նոյն մանաւանդ թէ
քարասարտութե անզեղջ մնայ և յորդո-
րողաց չի լսէ և անզեղջ մեռանի. չի-
րաւի այնպիսի մարդն թողութեան չի
հասանիր. զէրէ կորուրանայ զավօղն թո
ղութեան պընիր. ք հօգւոյն սրբոյ.
Նայպէս էր չար ուրացօղն



քրիս

քրիստոսի՝ յուղիանս․ որ ՚ի սատանայէն՝ գիտցաւ որ ՚ի քէն սատանեցաւ ասելով թէ՝ յաղթեցէր զաւրէնայի․ յաղթօղ խոստովանեցաւ և ոչ զղջացաւ․

Այսպէս ամէն անզեղջ մարդ ՚ի կեանս այս որ չէ ճանաչէր զքո՛ ողորմութիւն, ՚ի մահուան օրն կամայ յակամայ կու ճանաչէ զնորա արդարութիւն։

Նաւ այնպիսի անզեղջ մեռանողի հոգւոյն՝ ողորմութիւն և պատարագ և յիչէք և այլ բարեգործութիւնք ազգականացն՝ շահ չունին․ զերէ կոյր մարդուն՝ լոյսն արեգական շահ չունի։

Ինչ պէս ասաց եզեկիա թագաւորն և դաւիթ մարգարէն, ոչ թէ մեռեալք օրհնեսցեն զքեզ․ այլ կենդանիքս օրհնեսցուք զքեզ տէր։ Նաւ թէպէտ անզեղջ մեռնողին՝ ողորմութիւնն և պատարագն շահ չունի, լաւքին սաւոցուցն ողորմութեան՝ շահ ունի․

Պարձեալ՝ անզեղջ մարդն կամ ՚ի բազմութենէ մեղացն յուսահատեր է,

է, կամ զեկեղեցւոյ խորհուրդն չըն-
դունիր . և կամ սադուկեցի է և ըզ-
յարութին կուրանայ։ Մեծ բազմու-
թիւն մեղաց առաջի հոգւոյն սրբոյ
կարողութեանն որպէս մեկ կաթիլ մի
ջուր է . զերէ շնորհին հոգւոյն սըր-
բոյ է թողութիւն մեղաց։

Նա որ զեկեղեցւոյ խորհուրդն արհա-
մարհէ՝ այն ևս կու մեղանչէ ընդդէմ
հոգւոյն սբյ . որ է սրբարար զօրու-
թիւն խորհրդոց եկեղեցւոյ։ Նա որ ըզ-
յարութիւնն ուրանայ՝ այն ևս կու
մեղանչէ ընդդէմ հոգւոյն սրբոյ . զէ-
րէ կուրանայ զկարողութին նր։

Մեծ ըստ քն վճռին՝ հայհոյութին
հոգւոյն սբյ այն է՝ որ մեկ մարդ-
մի զբարին չար ասէ . և զհրաշագոր-
ծութիւնն ավ եղեալ՝ ի սատանայէ
համարի։ Որպէս հրէայքն ասացին քն
թէ, բէհեղզեբուղաւ իշխանաւն դի-
ւաց հանէ զդևս։

Դարձեալ՝ այն հայհոյէ զհոգին սբ՝

որ արարած առնէ զնա ․ որպէս մա-
կեդոն բարբանջեց։

Այլ որպէս զանձն հոգւոյն արարած ա-
սելն հայհոյութիւն է հոգւոյն ս̃բյ, այսպէս
և զմարդոյ բարի անուանն թէ ՚ի հաւատոյ
կողմանէ և թէ ՚ի գործոյ՝ ով ոք որ աղ-
տոտէ՝ լուսոյն խաւար ասելով, ճշմա-
րիտ հաւատացելոյն՝ հերձուածօղ, ու-
ղղամիտ մարդոյն՝ մնափառ, ողջախոհին՝
բղջախոհ, և այլն։

Յիրաւի այնպիսի մարդն՝ հայհոյիչ է հոգ-
ւոյն ս̃բյ ․ զի ՚ի վերայ տուեալ շնոր-
հաց հոգւոյն ս̃բյ արատ կու դնէ ․ որ
չունի թողութիւն։

Լաքին ա̃ծ ոչ յաղթի ՚ի չարէ ․ այլ
յիւր ողորմութենէն ․ ուստի՝ թէ-
պէտ թողութիւն կարէ լինիլ այն վե-
րոյ ասացեալ մեղքերուն, լաքին խիստ
դըժուարաւ ․ զերբէ հիչ չեմք լսեր
թէ մէկ մարդոյ մի թողլերբէ հայհոյ-
ութիւնն՝ որ ընդդէմ ս̃բյ
հոգւոյն։



Այս

*Հայհոյութիւն հոգւոյն սըր բոյ՝
կամ ոչ թողլի յաւի տեան.
Եւ կամ թողլի յորդ արտաս ուօք,
և մինչ 'ի մահ զղջա ման.

## Գլուխ Ութերորդ.

## Յաղագս Խորհրդոց Նորոյ Օրինաց.

Որպէս որ ասացաք, թէ մեղքն է հիւանդութիւն հոգւոյ, և խորհուրդքն եկեղեցւոյ՝ ըղ-դեղանիք և մէհլհէմ. հարկ է ասել այժմ զդեղոց մեղաց. Նա որ գիտել պէտք է, թէ մարդն է 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ. ըստ մարմնոյ՝ կու ծնանի 'ի մարմնաւոր ծնողաց՝ մարմնաւոր մարդ, ունելով բանական հոգի կենդանացուցիչ. և ըստ հոգւոյն՝ կու ծնանի խորհրդովքն եկեղեցւոյ՝ հոգևոր մարդ և որդի այ. Նման որպ 'ի մարմնաւոր



ծնա

ծնանիլն՝ հայրն կու տայ զնիւթն մարմնոյ. մայրն կու կազմէ և ձևակերպէ զմարմինն. և հոգին նորաստեղծ կու կենդանացնէ: Այսպէս 'ի հոգևոր ծնունդ նոր օրինաց՝ տարերքն կու տան զնիւթն որպէս հայր. եկեղեցի կու ձևակերպէ և կու մատակարարէ որպէս մայր. և հոգին սուրբ կու կենդանացնէ որպէս բանական հոգի շնորհօք լուսոյ:

Անոր համար քս Նիկոդիմոսի ասաց թէ, ծնեալն 'ի մարմնոյ մարմին է. և ծնեալն 'ի հոգւոյ հոգի է: Ու որպ 'ի մարմնաւոր հիւանդութեան՝ տարերքն կու տկարացնեն. դեղորայքն ծարտըմ կանեն. այլ ա՛ծ կու բժշկէ միջնորդութեամբ դեղոց՝ տալով դեղոց ուժ և խասիէթ: Այսպէս մեղքն՝ տարերացն նման կու տկարացնէ զհոգին. խորհուրդքն կու օգնեն տկարութե. այլ հոգին սուրբ կու բժշկէ և կառողջացուցանէ հեղմամբ շնորհաց:

Այլ թէպէտ մեղքն յառաջ եկաւ 'ի յադամայ հաւանութե՟ բանականին, լաքին զսկիզբն առաւ 'ի զգայութե՟ց. զի աչօքն ցանկացաւ պտղոյն գեղեցկութեան. ոտիւքն ընթացաւ առ ծառոյն. ձեռօքն առաւ. ականջօքն լսեց օձին. և բերանովն ճաշակեց զհամն.

Արեմն հարկաւորէր որ դեղն այլ լինէր հոգևոր և մարմնաւոր. տեսանելի, և անտեսանելի. Որէ չիւնքի խորհուրդ կասվի՝ ծածուկ պիտոր լինի. և յայտնի ներգործութիւն ունենայ. Ծածուկ են խորհուրդքն եկեղեցւոյ ըստ շնորհաց. և յայտնի՝ ըստ նիւթոյն. և ծանօթ հաւատոյն աչաց՝ խաւարելեցն նց՟.

* Չորս խորհուրդքն են մորդա ըխոք՝ 'ի յանտառակ ծոցն աստու ծոյ. Օ որ տէրն մեր կարծիւ խա չին՝ ենհան 'ի վէր զէա մարգար տոյ.

# Խնդիր Մա.

## Ցուցակ Աստուածային Խորհրդոյ

Որպէս որ ամէն մարդոյ տուն և այգի և թառայ սինօռով և սահմանապէյման կու լինի և յայլոց սէչիլմիշ՝ այսպէս ամէն բան և խորհուրդ սահմանով: Մարդ՝ խորհուրդ ասէլոյ՝ որու ասէլ է. ծածուկ և ոչ ամ մարդոյ գիտէլը. այլ միայն բարեկամաց:

Այսպէս և խորհուրդքն եկեղեցւոյ՝ մարդացեալ այն մերոյ յի քի ծածուկ սուրբերն են. որ բարեկամաց իւրոց յայտնեց սուրբ առաքելոցն. ինչ պէս ասաց թէ, զձեզ կոչեցի բարեկամ. զի զոր ինչ լուայ 'ի հօրէ իմմէ՝ ծանուցի ձեզ: Մարդ՝ զայս խորհուրդս քի այսպէս կու սահմանէն վարդապետք եկեղեցւոյ. Խորհուրդն է՝ աներևոյթ շնորհացն այլ երևեցուցօղ հայելի:

Օրէ որպէս որ զհեռաւոր բանն

տիւր

տխուրութենով կու մօտեցնեմք և կու
տեսանեմք , այսպէս և զանտեսանելի
շնորհքն այ՝ երևելի խորհրդով երբու-
տխուրութենով հոգւոյ աչաց կու
մօտեցնեմք։

(Լ.)

Որ օրինակ՝ քս ասաց Նիկոդիմոսի Թէ , պէտք է Թէքրարէն ծնա-նիլ ։ Նու այս ծածուկ բան էր . և չիմացաւ Նիկոդիմոս Թէ աւազանի ծընն-դեան համար կասէ ։ Ասաց քս՝ որ ով որ չի ծնանի ՚ի ջրոյ և՚ի հոգւոյ՝ չի կա-րեր մտանել յարքայութիւնն այ։
Ահա ջուրն յայտնի . և հոգին ծա-ծուկ . որ միջնորդութեամբ ջրոյն կու ծնանի զմարդիկ որդի այ։

(Լա.)

Դարձեալ՝ քս ասաց Թէ , որ ո՛չ ու-տէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ ո՛չ ունի կեանս յաւիտենականս։ Ահա այս ծածուկ էր . այլ յորժամ ՚ի հաց և՚ի գինին աւանդեց , պէյան արար .



որ

որ ՚ի ներքոյ տեսանելի պատահմանց
հացին և գինւոյն՝ կու ճաշակեմք ըզ
մարմին և զարիւնն քրիստոսի։

(Գ.)

Դարձեալ՝ խորհուրդ մարդեղութե՟ն
և միաւորութե՟ն բանին այ՟ կայր ՚ի նա-
խասահմանութե՟ն այ՟ և ՚ի հաւատս մար-
դարէից. թէ բանն այ՟ ՚ի ժամանակի
պիտի գայ և մարմին առնու բանական
հոգւով. և անբաժանելի միայ ՚ի միա-
ւորելոյն։ Նա ին քս՟ զայս ծածուկ
խորհուրդս յայտնեաց ՚ի սուրբ պսակին ա-
սելով թէ, զոր այ՟ զուգեաց՝ մարդ
մի՛ մեկնեսցէ։ Եւ պօղոս առաքեալն
կասէ թէ, խորհուրդս այս մեծ է.
բայց ես ասեմ ՚ի քս՟ և յեկեղեցի։
Զի որպէս փեսայն հետ իւր հարսին
անբաժանելի կու միաւորի, այսպէս
և քս՟ որ է երկնաւոր փեսայ՝ հետ հար-
սին եկեղեցւոյ ընդ հոգւոց հաւա-
տացելոց կու միաւորի շնորհօք։


Ի. հա

Ահա տե՛ս որ աներևոյթ շնորհքն այ՝
երևելի կու լինին հայելեաւ խորհրդոց։

(Գ.)

Վարձեալ՝ քս ասաց թէ, ոչխարք իմ
ձայնի իմում կու լսեն. և ես ճանա-
չեմ զնոսա։ ահա այս ծածուկ էր. այլ
ինչ պէս որ ոչխարքն 'ի հովուէ-էն և 'ի
տիրոջուէ-էն նշանով կու ճանաչվին, այս
պէս և հաւատացեալքն նշանով դրոշ-
մին. Որ սրբալոյս մեռոնաւ՝ կօծվին
'ի ճակատն 'ի ժամ մկրտութեան. և
նշանաւոր ոչխարք կու լինին քի. Նա-
հոգին սուրբ միջնորդութեամբ իւրոյ
մեռոնին՝ կու տպաւորի 'ի հոգիս հա-
ւատացելոց։ Ահա՛ իւղն երևելի, և
շնորհքն հոգւոյն սբյ՝ աներևոյթ. այլ
որպէս հոգին մարդոյ աչաց չերևիր,
լաքին 'ի շարժմանէ մարմնոյն կու ի-
մանամք թէ հոգի կայ 'ի մարմինն. այս
պէս և հոգին սուրբ մարմնաւոր աչաց
չերևիր, լաքին 'ի ներգործութենէն
մե

մտաւորին որ երեւելի է՝ անտի կու ձայ-
նաչեմք զներքին զօրութիւնն աներեւ-
ոյթ շնորհաց։

(Ե)

Դարձեալ՝ քո՛ տայիմ կասէր թէ, ա-
պաշխարեցէք. լոքին թէ ապաշխա-
րութիւն զի՞նչ էր՝ յայտնի չէր. եւ թէ
ի՞նչ զօրութիւն ունէր՝ պէյան չէր։
Ապա քո՛ օրինակաւ չարչարանացդ ծա-
նոյց մեզ. որ վաստակեցաւ. քաղցեաւ.
ծարաւեցաւ. յետոյ եկաւ կամաւ ՚ի
խաչ. եւ եօթն մահացու մեղաց դէմ որ
մեք գործեր էաք՝ ինքն ապաշխարեց։
Զէրէ թէ որ քո՛ զայն խոստար չար-
չարանքն որ չէր քաշեր, ամէն մարդ-
այն խոստար պիտիր չարչարվէր եւ ապա
յարքայութիւնն մտանէր։ Լոքին քո՛
զմեր հպարտութիւն բժշկեց՝ զգլուխն
խոնարհեցնելով։ զՈրկրամոլութիւն՝ լե-
ղի եւ քացախ ըմպելով։ զԲարկութիւն՝
աղօթելով ՚ի վերայ խաչհանողացն։



զՆա

զՆախանձն բժշկեց՝ զկողն ծակել տալով։ զԱգահութիւն բժշկեց՝ զձեռքերն ձեօմէրտորէն տարածելով ՚ի խաչին։ զԾուլութիւն բժշկեց՝ ՚ի ձայն բարձր աղաղակելով։ զԱղջախոհութիւն բժշկեց՝ զբոլոր արիւնն հեղլով։ զէրէ բըղջախոհութիւն առաւել չար մեղքէ. անոր համար և բժշկելն դժվարին։

( Զ. )

Դարձեալ՝ թէ քահանայութիւնէ գործ հրեշտակական և այլ նմանութի՝ ծածուկ էր. քս՟ յայտնի արաւ խմաստնացուցանելով զառաքեալսն. և զկերպ հանդերձից քահանայից և քահանայապետաց՝ յայտնի արար ՚ի խաչելութեանն. Նախ՝ զշապիկն սպիտակ զգեցաւ ՚ի հերովդէսէ. Զուրար սրտին ՚ի հին օրէնս՝ ծանոյց դատաստանի տախտակովն. և ՚ի մարդանալն ծանոյց քաղցրութեամբ սրտին. Զգօտին՝ որ չուանաւ կապեցաւ ՚ի պարտիզին գեթսեմանի։ Զբազպանն՝ որ ՚ի գերեզմանին

երիզապնտօք կապեցաւ․ զէրէ այնպէս
սովորութիւն ունէին հրէայք ՚ի թա-
ղելն զմեռեալն․ Շուրջառն՝ էր քղա-
միթն կարմիր, և անկար պատմու-
ճանն․ Մականն՝ էր տախտակն որ ՚ի
վերայ նորա գրեց պիղատոս՝ յս նազօ-
րեցի թագաւոր հրէից․

Թագն՝ էր փշեղէն պսակն․ Եմիփո-
րոնն հինգ խաչով, ե̅ խոցուածքն․
բ̅ ձեռաց․ բ̅ ոտից․ և ա̅ կողին․

Մատանին որ միայն եպիսկոպոսաց է՝
էր նորա թագաւորութեն և փեսայու-
թիւնն․ յորոյ օրինակ փեսայութեան՝
եպիսկոպոսն դնէ զմատանին ՚ի մատն
չորրորդ․ առ ՚ի ցոյց տալ՝ թէ զկնի ե-
րեք կարգ երկնային քահանայապետու-
թեանց՝ չորրորդն է ըստորին եկեղեցա-
կան քահանայապետութեն․ Աթոռն և
գաւազանն՝ էր սուրբ խաչն․

(Լ)

Կարծեալ՝ քո առ ՚ի ծանուցանել
զխորհուրդ վերջին օծմանն որ էր

ծածուկ · ծանոյց հրեշտակաց առող-
ջացուցանելովն · թէ վասն ներելի մե-
ղաց է այս խորհուրդս · որպէս որ ա-
պաշխարութեան վասն մահացու մեղաց։
Այս պէյան արաւ ՚ի վերայ ղազա-
րու · զէրէ քանի որ հրեշտակ էր ղա-
ղարոս , քո՞ աստ թէ՝ այն հրեշտա-
կութիւնն չէ ՚ի մահ։ կեցաքի նե-
րելի մեղքն այլ՝ թէպէտ հրեշտակու-
թիւն է , լաւքին չէ մահացուցիչ։ այլ
յորժամ մեռաւ ղազարոս , արտասուեց՝
աղօթեց՝ և բարձր ձայնիւ աղաղակեց։
Ոերբ լալ է մահացու մեղաց տխ-
րոջն վերայ · արտասուելի է ՚ի վերայ
կորստեանն · աղաղակելի է իմացնելով
զանձն մեծ դատաստանին և դժոխոց , և
զերն ապրքայութէ։ Նա տես՝ որ ա-
մէն խորհուրդք եկեղեցւոյ երևելի են ,
բայց աներևոյթ շնորհ կու ընծայեն։
Ու թէ՞ որ հարցանես թէ՝ ինչու հա-
մար եօթն են խորհուրդքն եկեղեց-
ւոյ , այսպէս իմացիր · զէրէ եօթն

կերպ

կերպ հիւանդութիւն կայր հոգեկան. Գ հիւանդութե մեղաց. և Գ պատճառաց։

Մեղաց հիւանդութեն նախ՝ սկզբնական մեղքն. և անոր դեղն է մկրտութիւնն։

Երկրորդ՝ ներգործական մահացու մեղքն. և անոր դեղն է ապաշխարութիւնն. Երրորդ՝ ներելի մեղքն. և անոր դեղն է վերջին օծումն։ Եւ չորս պատիժքն ադամայ՝ առաջինն էր տգիտութիւն. և անոր դէմ քահանայութիւնն. Երկրորդ՝ չարութիւնն. և անոր դէմ հաղորդութիւնն։ Երրորդն էր անկարութիւն. և անոր դէմ դրոշմն. Չորրորդն էր ցանկութիւն. և անոր դէմ պսակն դրվաւ, որ գործն անմեղադրելի լինի.

Դարձեալ՝ մկրտութիւն ը դէմ հպարտութե. դրոշմն ը դէմ ծուլութե. հաղորդութիւն ը դէմ նախանձու. պսակըն ը դէմ բղջախոհութեան. քահանայութիւնն ընդդէմ

բարկութ՟ե · ապաշխարութ՟ին ը՟ դէմ որկրամոլութ՟ե · վերջին օծումն ընդ-դէմ ագահութ՟ե ·

*Եօթնեակ մեղօք վիրաւո րեալս
Եօթն դեղօք բժշկէ կիս ·
Թէ 'ի դեղոց հեռի կե ցայր ,
կորնչէր մեղօք խոցո տիս ·

**************

## Խնդիր Ը.

## Յաղագս Խորհրդոյ Մկրտութ՟ե.

Մկրտութ՟ին է՝ վերստին հոգևոր ծնունդ ընդ լուացմամբ ջրոյ · սրբեալ բանիւ կենաց՝ կոչմամբ անուան սրբոյ երրորդութ՟ե. Պէտք է գիտել որ մկրտութիւնն երեք կերպիւ է. Առաջինն ջրով · ինչպէս ամենայն հաւատացելոց։ Երկրորդն է հրով · այսինքն հոգւով սրբով · որպէս որ առաքեալքն 'ի վերնատունն մկրտեցան 'ի հոգին ս՟բ և 'ի հուր։ Երրորդն է արեամբ · որպ՟ ասաց ք՟ս · մկրտութ՟ի



մի

մի ունիմ մկրտիլ. և զի արդ փութամ
մինչև կատարեսցի։ Նաև այս մկրտու-
թիւնս կատարեցաւ ՚ի խաչին. որ բո-
լոր մարմնոյն ներկեցաւ և մկրտեցաւ
իւր անապական արեամբն. և զայս մը-
կրտութիւն թէպէտ ասաց որդւոցն ո-
րոտման յակոբայ և յովհաննու. որ ա-
սաց թէ, զբաժակն իմ կարէք ըմպել.
և զմկրտութիւն իմ մկրտիլ։ Նոյն ա-
ռաջին մկրտութիւն որ ջրով կու լինի՝
ամեն քրիստոնէից համարձակ է. լաւին հը-
րով և արեամբ մկրտութիւնն՝ յատկա-
պէս պատուելին կու համրեմի։ Նաև մը
կրտութիւնն է դուռն ամ խորհրդոց.
զերէ ով որ զայս խորհուրդս չունենայ՝
զայլ խորհուրդ չի կարեր առնուլ։
Նու հինգ բան կայ որով մկրտութիւն
կատարեալ կու լինի.
Նախ՝ էական բանն որ բերանով կա-
չէ թէ, մկրտի երեխայս յանուն հօր
և որդւոյ և հոգւոյն սրբոյ։ Կամ թէ՝
ես մկրտեմ յանուն հօր և որդւոյ
և

և հոգւոյն սրբոյ։ Ու այս բանս՝ անպակաս պիտոր ասվի և առանց աւելացնելոյ։ Ու չէ՛ պարտ զայս կարգս փոխել. և յետ և յառաջ ասել զանուանքն հօր և որդւոյ և հոգւոյն։

Ու էրէ չէ՛ ասվիր՝ յանուն հոգւոյն սբյ և հօր և որդւոյ. այլ ինչպէս որ քս՟ ասաց։ Ու չէ՛ պարտ զանուանքն փոփոխել և ասել, յանուն հզօրին. իմաստնոյն. և բարւոյն. որք յատկութիք կասվին։ Ու չէ՛ պարտ ասել փոխանակ մկրտելոյ՝ թանամ, կամ ընկղմեմ։

Երկրորդն է լուացումն ՚ի ջուր. թէ ծովու և թէ աղբիւրի. թէ ջերմ և թէ ցուրտ. զէրէ ջերմն և ցուրտն՝ զթապիէթն չէն փոխեր ջրոյն։

Ու պէտք է զբոլոր մարմին մկրտվողին թանալ՝ երեք անգամ ընկղմելով ՚ի յօրինակ երեքօրեայ թաղմանն քի։

Ու էրէ ինչպէս որ կասէ սուրբն պօղոս. որք ՚ի քս՟ յս՟ մկրտին, ՚ի մահ անորը նորա մկրտին. և թաղին ընդ



նմին

Նմին միջնորդութեամբն ՚ի մահ։

Տէրտէրը՝ ո՛վ որ զբանն որ կարէ թէ, Ես մկրտեմ զքեզ յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այն պիտի մկրտէ և՚ի ջուրն թաղէ. և ո՛չ այլ և այլ մարդիկ։

Երկրորդն է դիտաւորութիւնն. զերէ յամէն խորհրդոյ կատարման՝ ինչ խորհուրդ որ կու կատարվի, անոր կերպէ միտք և դիտաւորութիւն պէտք է որ ունենայ կատարողն խորհրդոյն։ Իսկ միտք և դիտաւորութիւն մկրտողին այս պիտի լինի. թէ այս որ կու մկրտի՝ սրբեսցի յակզբնական մեղաց. և որդի բարկութեան գոլով՝ շնորհի որդեգրեսցի ա՛յ։

Իսկ թէ որ այսքան չի կարէ մտածել մկրտողն, պարէ պիտի զայս մըտածէ. թէ զոր ինչ եկեղեցին ունի դիտաւորութիւն, այն մտօքն մկրտեմ ես։

Զինչ երրորդն է հաւատն մկրտեցե-
լոյն. թէ որ չափահասեալ է, ներ-
գործական հաւատ պիտիր ունենայ և
դաւանի զոր ինչ հաւատայ եկեղեցի.
որպէս որ ներքինին որ 'ի փիլիպպոսէ
մկրտեցաւ՝ նախ դաւանեաց թէ քս է
որդի այ, և ապա թէ փիլիպպոս մկր-
տեց. Իսկ թէ չափահասակ չէ, զօ-
րութէ հաւատացեալ կասմի. որ բերա-
նով կնքահօրն պիտիր դաւանի զհաւատն

Օ երբ չափահասեալքն կու մկրտին 'ի
ջուր՝ յստուկ հաւատով, և տղայքն՝ հա-
ւատով եկեղեցւոյ.

Այլ թէ ընդէ՞ր ջրով աւանդեց քս
զմկրտութիւն, առաջինն է՝ որ մի-
այն ինքն գիտէ. որպէս կամեցաւ՝ այն-
պէս հրամայեաց. Երկրորդ՝ ըստ մեր
իմացածին կերպէ. որ ջուրն յամե-
նայն տեղ դիւրագիւտ է.

Երրորդ՝ որ հոգին սուրբ յառաջին
ըստեղծագործութեան շրջէր 'ի վերայ
ջրոց. և 'ի յորդանան՝ էջ 'ի վր քն և



յոր

յորդանանու ջրոյն. եւ եբաց զարգանդ աւազանին։ Չորրորդ՝ Մկրտութիւնն սրբէ զմեղս. եւ այս օրինակեցաւ ՚ի ջրհեղեղն որ լուաց զաշխարհ ՚ի մեղաց։

Ե, Իսրայէլացիք մկրտեցան ՚ի կարմիր ծովն եւ յամպն, եւ ապա թէ մտան ՚ի մբ եր̄մ յօրինակ արքայութեան. այսպէս եւ մեք կու մկրտիմք, եւ ապա կու մտանեմք յարքայութի̄ն. թէ որ բարեգործ որ լինիմք։ Զ, ՚Ի ժամանակս եղիսէի մարգարէին՝ երիքովի ջրերն լեղի էին եւ անպտղաբեր. եւ եղիսէ մարգարէն նոր ամանով մի եւ աղով բժշկեց զջուրն. եւ ասաց թէ, այսուհետեւ մի՛ լիցի յանպտղութի̄ եւ յանզաւակութիւն. եւ եղեւ այնպէս։ այսպէս մինչ ՚ի քս̄ ջուրքն անզաւակ էին. ապա քս̄ իւր մկրտութե̄ն զանզաւակն

պտղաբեր արար։

Է, Եղիա մարգարէն զմատաղն որ արար՝ ջրով բորբոքեց. եւ քի̄ մկրտութեամբն՝ հոգին սուրբ երեւեցաւ. եւ



զա

զամենայն մկրտեալն կաւնէ բանաւոր
ողջակէզ այ։ Ը, Նզելիւ մարգա
րէն բերանովն այ ասաց թէ, և ցա
նեցից 'ի վերայ ձեր ջուր սուրբ. և
սրբեսջիք յամ պղծութեանց ձերոց.
որ այս կատարեցաւ 'ի մկրտութեան.
Թ, 'Ի դրախտէն ադամայ մէկ աղ
բիւր մի կելանէր և զամ երկիր կու
ջրէր. աղբիւրն այն՝ է սուրբ աւա
զանն. և ոռոգեալ երկիրն՝ են մկր
տեալքն որ կու մկրտվին և պտղաբեր
կու լինին. զէրէ առանց մկրտութե՝
ամ բարեգործութիք ունայն և պօչ են.
Ժ, Երեք մանկանց վերայ 'ի հնոցին
բաբիլօնի ցօղ իջաւ և զհուրն 'ի ցօղ
փոխարկեց. հուրն այն՝ է սկզբնական
մեղքն. և ցօղն իջեալ որ կու շիջու
ցանէ զնա՝ է շնորհք աւազանին։
ԺԱ, Խորհուրդ մկրտութեան 'ի պղ
պտոյկէ աւազանն և 'ի սեղանոյ աղ
բիւրն յայտնեցան։ Նաւ վերջապէս
կատարեալն մկրտութն քն 'ի յորդանան,



Սախ

Նախ՝ զի քո̃ մկրտեցաւ ՚ի յորդա-
նան, յորմէ էանց յակոբ նահապե-
տըն միով ցպով. և յետ դառնալն ե-
ղև ու̃ բանակ. և քո̃ յետ չարչարանաց
մկրտութեան՝ եղև բ̃ բանակ, ՚ի հրէից
և ՚ի հեթանոսաց մի եկեղեցի շինելով։
Երկրորդ՝ խոստացեալք անցին ՚ի յորդա-
նանէ և ապա մտան յէ̃մ. այսպէս և
քո̃ նախ մկրտեցաւ և մեզ ետ զօրի-
նակ՝ զի մկրտութբ̃ մտցուք ՚ի վերինն
երուսաղէմ։
Երրորդ՝ զի յորդանան օրինակ էր քի̃.
զի որպէս յորդանան ելանէ ՚ի միջոյ բ̃
լերանց՝ և մի միայն գետ է, այսպէս
քո̃ ել յաւ̂իտենական ծննդեամբ ՚ի
հօրէ՝ և ժամանակաւոր ծննդեամբ ՚ի
մօրէ. և միայն մի անձն է և մի գետ
շնորհածաւալ։ Չորրորդ՝ ՚ի մկրտութե̃ն
քի̃՝ հայր վկայեաց. հոգին աղաւնա-
կերպ երևեցաւ. և ինքն մկրտեցաւ.
և խորհուրդ երրորդութե̃ն յայտնեցաւ։
այսպէս ՚ի մեր մկրտութե̃ն՝ մկրտողն

լինի շնորհօք որդւոյ այ̄. հայր ամ̄ որ-
դեգրէ. և հոգին սբ̄ սրբէ. և քրիս-
տոս եղբայրացուցանէ:

Ե. Բացաւ երկինք. որ փակեալն էր յադամայ ՚ի վեր. զի մկրտեալն թէ-առ ժամայն ելանէր՝ թռչի որպէս աղաւնի յերկինս: Զ. Քս̄ ՚ի մկրտելն ասաց յօհաննու մկրտչին թէ, պարտ է մեզ լնուլ զամենայն արդարութիւն. այսպէս ամ̄ մկրտօղ պարտական է կատարել զամենայն օրէնսն քի̄:

Է. Քս̄ մկրտեցաւ և յետոյ յաղթեց զսատանայ. այսպէս ով ոք որ մկրտի՝ այն միայն յաղթել կարէ սատանայի:

*Ով ՚ի յայս դուռն ոչ մտա — նէ,
յերկինս ելնել ոչ կա — րէ.
Ա. Այլ այնպիսին չար և գող — է,
և իւր տեղին դժոխն — է:

## Խնդիր Գ.

## Յաղագս Խոհեմոց Գործոց.

Դրոշմն է կնիք հաստատութեան մկրտե–ցելոց. որ սրբալոյս մեռոնաւ կնքի ճակատ մկրտելոյն. առ 'ի լինել նշա–նաւոր զինուոր Քրիստոսի եւ զանազանել յան–հաւատից. Ո՛ երէ այս խորհուրդս կու–տըրվի 'ի ճակատն. որ է տեղի ամօթ–խածութեան. եւ այս խորհուրդս՝ բառ–նայ զամօթն որ զՔրիստոսի հաւատն համար–ձակ դաւանինք. Երկրորդ՝ զի 'ի Քրիստոսի մկրտութեան՝ հոգին սուրբ աղաւնակերպ երեւեցաւ. որ ծանուցանէր զխորհուրդ դրոշմին. որ նոյն հոգւով վարեցաւ 'ի յանապատ պատերազմիլ ընդ սատանայի. այսպէս եւ մեզ կու տրվի այս խորհուրդս մեռոնաւ. եւ տայ կարողութիւն պա–տերազմելոյ ընդ աշխարհի՝ մարմնոյ՝ եւ սատանայի.

Երրորդ՝ 'ի մկրտելն Քրիստոսի թէպէտ հայր

վկայ

վկայեաց թէ զա՛է իմ որդի սիրելի , սակայն հոգին սբ էջ 'ի վերայ նորա առ 'ի հաստատել զվկայութիւն հօր այ· այսպէս և 'ի մեր մկրտելն' թէպէտ կու լինիմք որդիք այ , այլ հոգին սուրբ է որ կու սուցանէ զմեզ' աբբայ հայր կոչել զած · որպէս կասէ պօղոս առաքեալն· Չորրորդ' այս խորհրդովս կու հաստատի 'ի մեզ շնորհն մկրտութե· ինչպէս դաւիթ մարգարէն ասէ թէ, հաստատեա՛ ած զայս' զոր գործեցեր 'ի մեզ 'ի մկրտութեան· Ե , Նշանէ ըզ մարդն հոգևոր զինուոր քի · զերէ որպէս ըմբշամարտքն իւղով կօծին' որ 'ի թշնամւոյն չի ըմբռնվին , այսպէս և մկրտեալքն կու դրոշմվին' որ 'ի սատանայէ չի ըմբռնվին· Զ , Այս խորհուրդս զարդարէ զմարդն ներքին և արտաքին գեղեցկութբ· 'ի ներքուստ' մաքուր խղճմտանօք · և արտաքուստ' անուշահոտ բուրմամբ բարի համբաւոյ· և զայս ցուցանէ մեռոնն· որ կու սրբագործի

'ի

՚ի ծիծեռնեաց խաղոյ, և՚ի պալատանէ.
զի ծիծեռնայ խաղն՝ լուսաւոր է. և
պալատանն՝ անուշահոտ: Եւ թէպէտ
հետ մեռոնին շատ ծաղկունք այլ կու
խառնվին, լոքին հարկաւոր և պէ-
տքոն այս երկուքն է. և այլ ծաղ
կունքն փայծըղականք են: Է, Այս
խորհուրդս զօրացուցանէ զմարդն ՚ի
գործել զբարի և յաղթել զչար՝ ընդ
հօք հոգւոյն սրբոյ: Ը, Ու սպա-
ռազինէ զհոգին կնքով. և զմարմինն նշա
նաւ խաչին: ՚ի հոգւոյն՝ կնիքն բառ-
նայ զերկչոտութիւն. և՚ի մարմնոյն կու
հալածէ նշան խաչին զդիւականն
երևմունքն:

*Ով ոք նշանաւ դրոշմին կըն քի,
յարմար զինաւոր քո լի նի.
Եթէ քաջապէս որ պատերազ մի,
՚ի փրկչէն մերմէ փառօք պսակի:



Ծ

## Խնդիր Գ.

### Յաղագս Գերագունից խորհրդոյ Պատարագին.

Հաղորդութիւն է՝ խորհուրդ մարմնոյ և արեանն Քրիստոսի. կացուցեալ ՚ի ծայրագոյն ճարտարապետութենէն ընդհանուր Տէր՝ առ ՚ի հոգևոր սնունդ մեր. և ՚ի քաւութիւն և ՚ի թողութիւն մեղաց անցելոց. և ՚ի զգուշութիւն ապառնեաց. և ՚ի պահպանութիւն ներկայի ժամանակի: Գիտել պէտք է որ պատարագն է նշան սիրոյն Աստուծոյ ՚ի մեզ. և նշան մեր սիրոյն դէպ ՚ի յԱստուած:

Ո էրէ այս խորհրդովս՝ Աստուած զիւր սէրն յայտնեաց ՚ի մեզ. որ որդին միածին ետ ՚ի խաչին ՚ի մարմինն և ՚ի յարիւնն և ՚ի հոգին ոչ խնայեաց վասն անձառ սիրոյն իւրոյ որով զմեզ սիրեաց. այսպէս կամեցաւ զայն նշանն սիրոյն միշտ պահել ՚ի մէջ մեր. որ մեք մտածեմք զեղանակ անձառ սիրոյն նորա. և ա-

Նոր փոխանն՝ բոլորովին մեզ այլ 'ի սի-
րել զնա։ Անոր համար աստ Տէրն Յօ-
հաննէս թէ, սի՛րելիք սիրեսցո՛ւք զա̃ծ.
վասն զի նախ նա սիրեաց զմեզ.
Նու դարձեալ 'ի սբ. աւետարանին ա-
սէ նոյն Տէրն Յօհաննէս թէ, յառա-
ջագոյն քան զտօն զատկին՝ գիտաց Յս.
զի փոխելոց է յաշխարհէս առ հայր.
սիրեաց զիւրսն որք յաշխարհի աստի
էին՝ իսպառ սիրեաց զնոսա. Սուրբն 'ի
վերայ այս խորհրդոյս՝ չիւպհէսիզ հա-
ւաստակէ զանձառ սէրն քի.
Ո՛ էրէ թէ մէկ մարդ մի մարդոյ փոխ
ըստակ տայ առանց շահի, նշան սիրոյ
է. թէ պատիւ՛ անէ, նշան բարեկա-
մութեան է. թէ որ խաթեր համար
իսկէնձէ քաշէ, առաւել նշան սիրոյ է.
Ապա որչափ առաւել որ քս որդին այ
սիրեաց զմեզ. որ առանց փոխարինի՝
զաղքատութիւն մեր մեծացոյց. պատ-
ուեաց, որ լինքն միաւորեց. Մեծ
է անճառելի բարեկամութիւն

առաւ մեզ. որ վասն մեր վաստակե-ցաւ, քաղցեաւ, ծարաւեցաւ. զմար-մինն առեալ մեզ կերակուր. զարիւնն՝ ըմպելի. զնուր կողին՝ ՚ի լուացումն. զմայրն՝ յօհաննու. զհանդերձն՝ բա-ժանողաց. և զհոգին՝ մեր հոգւոյն գին ետ հօր այ: Տես իմանի թէ դու այլ ինչ խրատ պիտիր սիրես զքո սիրողն աստուած:

Արդ՝ այս խորհրդոյս՝ չորս բան պի-տոյ որ կատարեալ լինի: Նախ՝ որ օրհնողն լինի քահանայ: Երկրորդ՝ նիւթն. որ լինի հաց ցորենոյ և գինի ՚ի բերոյ որթոյ:

Երրորդ՝ դիտաւորութիւն քահանայ-ին. թէ զայս հացս և գինիս՝ քի բե-րանովն կանեմ մարմին և արիւն քի. զերբ թէ մէկ քահանայ մի՝ որ զհացն և գինին ՚ի ձեռն առնէ ոչ օրհնելոյ մտօք՝ և զբանն քի ասէ միայն պատ-մելու մտօք, այն հացն և գինին չէ լինիր խորհուրդ: Չորրորդն է ձև բա-



նին

նին՝ որ է. այս, առէք կերէք՝ այս է մարմին իմ. և արբէք ՚ի սմանէ՝ այս է արիւն իմ։

Ու թէ որ մէկ քահանայ մի հարցանէ, թէ որովհետև առէք կերէք այս է մարմին իմ ասելով, արբէք ՚ի սմանէ այս է արիւն իմ ասելով, մարմին և արիւն կու լինի, ապա ե՞ր է որ կասենք ՚ի վերջն թէ՝ որով զհացս զայս և զգինիս արարցես Ճշմարտապէս մարմին և արիւն տն մերոյ յի քի. ուրեմն դեռևս չէ եղեր։ Պէտք է գիտել՝ որ կամի ասել թէ, հայր ամ՝ զհոգիդ սբ առաքեա ՚ի մեզ. և՚ի յայս հացս և գինիս, որ բանիւն քո որդւոյն միածնի՝ զայս հացս և գինիս՝ մարմին և արիւն տն մերոյ յի քի կատարէ. ինչպէս որ երբեմն յարգանդի կուսին՝ յարենէ սրբուհոյն զմարմին որդւոյդ միածնի սքանչելապէս կատարեց։ Ուրեմն այն որ կասէ թէ, որով՝ կամի ասել թէ, բանիւն քո քոյ



որդ

որդւոյն միածնի․ որ ասացթէ, այս է
մարմին իմ և այս է արիւն իմ․ այն
բանիւն դու զայս հաց և գինիս մար
մին և արիւն քո որդւոյն միածնի կա-
տարեսցես՝ փոխարկելով հոգւովդ
սրբով․

Որդ՝ ՚ի մարմինն քո և յարիւնն՝ կայ
միաւորեալ աստուածութիւն և բանա-
կան հոգին․ Ո՛չ է որպ՝ ՚ի ժամ յղաց-
մանն՝ յայն փոքրիկ մարմնոյն որ աչք
մարդոյ կիւճիլէ կու տեսանէր՝ էր
միաւորեալ անչափելին ած և բանա-
կան հոգին, այսպէս ՚ի փոքրիկ նշխա
րի մէջն և յամ մասունս նորա․ նաև
՚ի բեկանելն՝ յամ նշխարաց մէջն կայ
քո բոլոր՝ աստուածութիւն հոգւովն մարմ-
նովն և արեամբն․ այսպէս և ՚ի մէջ ա-
րեանն նմանապս․ Ո՛ր օրինակ՝ մե-
ծամեծ լեռներ և երկինքն որչափ մարդ-
կու զօրէ նայիլ՝ կերևան ՚ի հայելւոյ
և ՚ի մարդոյ աչաց մէջն․ նմանապ և ՚ի
մէջ փոքրիկ նշխարին և ամ մասանց



կայ

կայ բոլոր քս՟։ Ինչպէս հայելին թէ
մէկ լինի, և դէմ արեգական ըմբռ-
նես՝ մինքն կերևեցնէ զարեգակն։ և
թէ հարիւր կտոր անես զհայելին,
յայն հարիւր կտորին մէջն այլ՝ մի և
նոյն արեգակն կերևի։

Նոյնպէս՝ մէկ նշխարի մէջ կայ բոլոր
մի և նոյն քս՟։ և թէ հազար բաժին
անես, յամենին մէջն դարձել կայ նոյն
մի քս՟ն։ և նշխարին բաժանմանքն՝ մար
մինն քն չի բաժանվիր։ Դարձեալ՝ ըզ
մէկ մարդոյ ձայն՝ ճն հոգի այլ կու
լսէ, և մէկ հոգի այլ. այլ ձայնն մէկ է։
Ու մէկ ծաղիկն՝ մէկ հոգի այլ հոտո-
տայ, և հարիւր հոգի այլ. և հոտ ծաղ
կին մի և նոյն է և չի պակասիր։ զմէկ
ծաղիկ՝ հազար հոգի այլ փոխ առ փոխ
՚ի ձեռն ըմբռնեն, մի և նոյն ծաղիկ է
և չի մաշիր։

Ու թէ հարցանես՝ թէ ՚ի մարմինն
քն կայ հոգին և աստուածութիւնն, ա-
պա էր չի խօսիր և շարժիր։



Ասեմ

Ասեմ թէ, ինչպէս ծառն ՚ի ձմռան ՚ի յարմատն ունի զկենդանական զօրութիւն և չի կանչիր, և՚ի նընջած մարդն կայ հոգի և չի լսեր և տեսներ.

Այսպէս՝ թէպէտ ՚ի մարմինն քո կայ բանական հոգի և ա̃ծութիւն, լաքին՝ ինչպէս մարմինն քո պատահմամբ կուծածկի ՚ի հոտոյ ՚ի համոյ. և՚ի գունոյ հացին և գինւոյն և աչաց չերևիր, այսպէս ՚ի մարմինն և յարիւնն կայ հոգին և ա̃ծութիւն. լաքին՝ երևելապէս չի գործեր. զերէ չէ մարմնոյ կերակուր՝ այլ հոգւոյ. անոր համար միայն հոգւոյ աչաց կերևի հաւատոյ աչօք.

Ուրէ՝ թէ որ մեզի հետ խօսէր, պիտէր որ մարդանման և մանկանման երևէր. այլ թէ մարդանման երևէր, ով կարէր զմարմինն՝ մարմնոյ նման, և զարիւնն՝ արեան նման ճաշակել. անոր համար պատահմունքով հացին և գինւոյն զինքն ծածկեց. որ մարդ՝ ախորժելով մերձենայ և ճաշակէ.

Պարզեալ՝ որպէս արեգակն կու ծած-
կի ամպով. և կրակն ՚ի հրահան ճախ-
մախ քարի մէջն, այսպէս և մարմինն
քի ՚ի ներքոյ պատահմանց հացին և
գինւոյն.

Արդ՝ կարճ ՚ի կարճոյ իմացի՛ր՝ որ ՚ի
սուրբ հաղորդութեն կան չորս զար-
մանալիք. Նախ՝ զի լինի ՚ի հացէ ցո-
րենոյ և ՚ի գինւոյ որթոյ.

Երկրորդ՝ որ հացին և գինւոյն գոյա-
ցութին և բնութին կու փոխի ՚ի մար-
մին և յարիւն քի. որպէս ջուրն ՚ի
կանա գալիլեացւոց փոխեցաւ ՚ի գինի.
Երրորդ՝ պատահմունքն հացին և գին-
ւոյն կու մնան. և հացութիւն և գի-
նութիւն չկայ. այլ միայն պատկերն
մնայ. Չորրորդ՝ մարմինն քի կայ ՚ի
փոքրիկ նշխարին մէջն բոլորապէս. և
կու գտանի նոյն բոլորն ՚ի մէջ ամէն
մասանց նշխարին. որպէս մեր հոգին
՚ի բոլոր մարմինն, և յամենայն մա-
սունս մարմնոյ.

Ե̄, Մարմինն քո որքան էր 'ի վր̄ խա-
չին, այնքան է և 'ի մէջ նշխարին. որպ̃
և այժմ է յերկինս: Որ օրինակ ա̃
ջոշ մի բանպակ՝ ինչ խորտար տեղ կու-
ըմբռնէ. և յորժամ յայտն ժողվէս,
բուռ մի և ավուռձ մի կու լինի, և
ծանրութիւն չի պակասիր: Եւ կամ
թէ՝ 'ի մէկ խազան մի լեցուն ջուր լը-
նուս. որ յայազի դէմն պուղ կտրի՝
կէս խազանն անձախ կու լեցնէ. լայնին
առաջին չափ ջուրն է. գէրէ թէ որ
ետցնես, զնոյն խազանն կու լեցնէ.
այսպէս և բոլոր մարմինն քո՝ կայ 'ի
մէջ փոքրիկ նշխարին. որպ̃ օխայ մի
բանպակն 'ի մէջ բուան: Զ̄, Պատահ-
մունքն հացին և գինւոյն կու մաշվին
'ի լերողաց. բայց մարմինն քո ոչ մաշ-
վի կամ մանրի և փշրի. ինչպէս 'ի
հայելւոյ մէջն արեգակն կերեւի. թէ
զհայելին որ կոտրատես, արեգակն չի
կոտրատիր:
Է̄, Մարմինն քրիստոսի յամէն օրհ-

նած նշխարի մէջ՝ մի և նոյն է և ո՛չ
բազմանայ. Որ օրինակ՝ թէ ամէն
մէկ ասող՝ լինէր մէկ մէկ հայելի, և
յարեգական դէմ բռնէիր, յայն ամէն
հայելեաց մէջ՝ մի և նոյն արեգակն հա-
ւասար երևէր. այսպէս և մարմինն Քի
յամէն նշխարաց մէջ մի և նոյն է.

Նաև այլ բազում զարմանալիք կան 'ի
մարմին և յարիւնն Քի. որ միայն հա-
ւատով կու ըմբռնեն և ո՛չ աչօք և
ականջօք.

Իսկ 'ի կողմանէ ներգործութեան և
խասլէյէթին մարմնոյ և արեանն Քի ի-
մացի՛ր զայսոսիկ. Նախ՝ զի որ ուտէ
և ըմպէ՝ կատարէ 'ի հոգի իւր զյիշա-
տակ մահուանն Քի. որ խիստ ախորժ
է նմա. զէրէ այս խորհուրդս՝ է յի-
շատակ մահուանն Քի, սիրելութեան
նորա, և ազատելոյն զմեզ.

Երկրորդն է ներքին զմայլողութին.
զոր մաքրեալ հոգին կու իմանայ. Նր
համար ասաց դաւիթ, ճաշակեցէք



և

և տեսէ՛ք զի քա՛ղցր է տէր։ Լաչքի՛ն՝ աւելին մարդ զըան ինչ որ կուտէ, նախ կու տեսանէ և ապա կու ճաշակէ. այլ դաւիթ կսաէ թէ, ես ասացի թէ ճաշակեցէ՛ք. ինչո՞ւ համար, զէրէ քաղցր է. լաչքին՝ թէ ինձ չէք հաւատար, ճաշակեցէ՛ք որ իմանայք. Ու այս բանով ա՛յլ խորին բան կու իմացընէ մեզ.

Որ կամի ասել թէ, մարմին և արիւնն քի̅՝ մտաց լուսաւորութե̅ պատճառ է. մի՛ կամենայք իմանալ որ ճաշակէք. այլ ճաշակեցէ՛ք որ իմանայք. ինչպէս որ կղէոպեանքն զբեկեալ հացն ՚ի քէ̅ որ կերան, բացան աչք նոցա։

Երրորդ՝ մարմին և արիւնն քի̅ հոգեկան կեանք կուտայ. որպէս որ ծառն կենաց ՚ի մէջ դրախտին մարմնաւոր կեանք. որ կու սընուցանէր զմարմին ուտողին՝ որ չէր հիւանդանայր և մեռանէր.

Նոյնպէս և մարմինն քի̅ զհոգին կու սնուցանէ շնորհօք յայս կեանքս.

և

և փառօք ՚ի հանդերձելումն: Ինչպէս ասաց Քս ՛ որ ուտէ զմարմինն իմ և ըմպէ զարիւնն իմ, նա յիս բնակեսցի և ես ՚ի նմա: այս է շնորհօք բնակելն Քի ՚ի մեր հոգին:

Եւ՝ որ ուտէ և ըմպէ զմարմին և զարիւն իմ, ունի կեանս յաւիտենականս: այս է փառքն ՚ի հանդերձելումն: զի որպէս մահն՝ ուտելով մտաւ ՚ի մեր բնութիւն, այսպէս և կեանքն:

Չորրորդ՝ մարմին և արիւնն Քի տայ սրբապէս ճաշակողին զզանազան առաքինութիւնս: որպէս որ մանանայն ինչ համ որ ուտողն կուզէր՝ զայն համն կուտայր: այսպէս և հաղորդութիւնն տայ փափաքանօք ուտողին՝ զզանազան առաքինութիւնս:

Է, Մարմինն Քի տայ և զմարմնաւոր առողջութիւն՝ հոգւով առողջին: որպէս որ տայ զհրեշտակութիւն մարմնաւոր՝ հոգւով հրեշտակին:



որ

որպէս կասէ պօղոս առաքեալն.
Զ, Մ՚արմին քի զբազումս մի առնէ.
և զբաժանեալսն միաւորէ. որպէս ասէ
առաքեալն պօղոս, մի մարմին եմք բա-
զումքս. զի ՚ի մի չէ հացէ անտի վայ-
ելեմք. վասն այնորիկ ասի հաղորդու-
թիւն, որ է մասնակցութիւն ընդ քի
և ընդ միմեանս. Է, Տայ զշնորհս ար-
ժանապէս ճաշակողաց. ինչպէս որ
յորժամ մանանայն կերջանէր յերկնից,
ընդ նմա և ցօղ կու իջանէր. մանա-
նայն՝ է մարմինն քի. և ցօղն՝ պար-
գևեալ շնորհքն. Ը, Բարձրացնէ
զմարդն ՚ի յարքայութիւն. յորոյ օրինակ
առաքեալքն յետ ուտելոյն զմարմին և
արիւնն քի՝ գոհացեալ ելին ՚ի լեառն
ձիթենեաց. և յուդա որ արժանապէս
չէր կերեալ, ՚ի լեառն չի բարձրացաւ.
այլ գնացեալ մատնեց զքն. ուստի ամ
անարժան ճաշակօղն՝ է մատնիչ քի.
Թ. Բաւականէ և զօրացնէ ՚ի հոգևոր
պատերազմին. ուստի քս մեզ օրինակ
տա

տալու համար՝ նախ եկեր և եսուր 'ի մարմնոյ և յարենէ իւրմէ. և այս գը-նաց 'ի չարչարանս խաչին. Ժ, Ո՞չ է պատարագն է 'ի խորհուրդ խաչին. իսկ 'ի խաչելութեն քի ամ խորհուրդքն այն զգօրութիւն. ուստի պատարագն այն օրհնութեն օրհնութեց, և աղօթք աղօթից, և խորհուրդ խորհրդոց.

*Մարմին և արիւն փրկչին յիսուսի.
կենդանի տայ ուտողին արժանաւորի.
Անարժանապէս ով ոք հաղորդի.
մարմնոյ և արեան պարտական լինի.

****************

## Խնդիր Ի.

## Յաղագս Խորհրդոյ Ապաշխարութե.

Ապաշխարութիւնն է զանցեալ մեղ-քըն լալ. և զլալին այլ ոչ գոր-ծել. Դարձեալ՝ ապաշխարութիւնն է ըստ մեղաց չափոյ՝ կրել զկամաւոր պատիժս. Ո՞չ էրէ ով որ կու ապաշ-



խա

խարէ , կամ Թէ զանցեալ չարիքն կու-
լայ . և կամ զայն ողբալի չարիքն չէ
գործեր . և կամ մեղաց կեօրէ՝ զպա-
տիժն կամաւ կու կրէ .

Զէրէ՝ Թէ որ մեղաւորն յայս կեանք-
քըս զպատիժ մեղացն կամաւ չի կրէ ,
՚ի հանդերձելումն ակամայ կու կրէ
և չի օգտիր .

Երրորդ՝ ապաշխարութիւն զանազան կեր-
պիւ է . Զէրէ կայ ապաշխա-
րութիւն՝ որ կասղի կեղծաւորեալ . որ
զկեղեւն ունի՝ և մէջն դատարկ է . այս
պէս էր ապաշխարութիւնն կայենին . որ
միայն զաչքն և զերեսն խոնարհեցուց և
ոչ զսիրտն . անոր համար ած ասաց
Թէ , ուղիղ ոչ մատուցանես .

Չորրորդ՝ սուտ ապաշխարութի . որ
մարդ յապաշխարելն իքէն՝ կրնէ ըղ-
նոյն չարիքն կու գործէ . Ինչպէս որ
սաւուղ՝ Թէպէտ դաւիթ մարգարէին
շատ հեղ մեղայ ասաց , լաքին դայիմ կու
ջանայր սպանանել զնա . Նոյնպէս սիմօն



կա

կախարդն՝ առաջնոց ասաց թէ․ յաղա-
չեցէք դուք վասն իմ զա՛ծ․ զի մի՛ ե-
կեսցէ ՚ի վերայ իմ չար ինչ․ լաքին՝ ին-
քըն ՚ի չարեաց չի դադարեցաւ։ Նաև
քրմենէ խայրէթ չըրաւ․ այլ՝ այ-
ոց սըվորէլ արաւ զապաշխարէյն․ ա-
նոր համար չարդարացաւ։ զէրէ չասաց
թէ, և ես ը̃ ձեզ կաղաչէմ զաստուած․
այլ թէ՝ դո՛ւք աղաչեցէք վասն իմ։
Երրորդ՝ ոմն է անադան և կէձինանէն․
որպէս որ աջարայ ապաշխարութին․ որ
մեղըն ծածուկ իքէն՝ չի խոստովանե-
ցաւ․ այլ յորժամ պէյան եղաւ մեղըն,
յայնժամ մեղայ ասաց․ և քարկոծե-
ցաւ փոխանակ թողութեան։ այսպէս էր
և սաւուղայ, և յուդայի մեղայն։
Լաքին՝ թշնամին որ ՚ի դուռան որ հա-
սանի՛, ո՛չ առնու պէղմանակն և զսաղն
՚ի գերեցելոյն․ ուստի և յուդա զին-
քըն կախեաց յակամայ ապաշխարելով
և չարդարացաւ։

Չորրորդ, ամն է բանադատեալ. որ
յակամայ մորդ կապաշխարէ՛ տեսանե-
լով թէ փորձութիւն պատեց զինքն.
Ինչպէս կասէ դաւիթ մարգարէն.
յաճախեցին հիւանդութիւնք նոցա,
յետ այսորիկ ապա վաղվաղեցին.
Եւ վասն իւր ասէր թէ՛ դարձայ 'ի
թշուառութիւն, զի հարան յիս փուշք.
Այսինքն, յանդիմանութիւնքն նաթա-
նայ մարգարէի՛ իբրև փուշ մտին 'ի
սիրտն դաւթի վասն շնութեան և մար-
դասպանութեան. Ե, Ամն է անօրէն
ապաշխարութիւն. որպէս յուդային. որ
թողեալ զքշմարիտ քահանայապետն քս
և գնաց մեղայ ասաց սուտ քահանայա-
պետից. և դատապարտեցաւ հոգւով և
մարմնով. նաև՛ յայս դէմ մեղանչեց.
և ամ պատրաստ իքէն՝ գնաց թշնա-
մեացն մյ խոստովանեցաւ և չարդարա-
ցաւ. այսպէս է և ապաշխարութիւնն
պաղի մարդոյ. որ զայլս կու զրկէ,
և այլոց զրկմութիւն կուտայ.

Զ, Որմն է անկարութեան․ որպէս մարդ յայնժամ դառնայ 'ի մեղաց, յորժամ այլ մեղանչել ոչ կարէ․ որ ոչ թէ ինքն զմեղսն թողու, այլ մեղքն զինքն։

Է, Որմն է յուսահատել ապաշխարութիւն․ որպէս որ դատապարտելոց ապաշխարութիւն 'ի մէջ դժոխոց․ որ 'ի կսկծանաց տանջանաց՝ լան և ողբան և ոչինչ օգտին։ որպէս ասէ սողոմոն իմաստունն, առ նեղութեան անձանց իւրեանց՝ յոգւոց հանիցեն և զղջացեն ասասցեն։ Ութերորդն է յախտէ սնափառութեան եղեալ․ որպէս էր ապաշխարութիւն և լալն Եսաւայ․ որ զանդրանկութիւն կորոյս որկրամոլութեամբ․ և լալով խնդրեաց զօրհնութիւն վասն սնափառութեան և ոչինչ օգտեցաւ։

Իններորդն է նաչարի և ակամայ և սուտ ապաշխարութիւն․ որպէս փարաւոնի ապաշխարութիւն․ որ հարուածովք կշտամբեալ՝ կու կականնայր, և 'ի հարուածոց ազատեալ՝ կու կարծրանայր։

զպատիժն կու կրէր՝ մեղաց կասէր. և
'ի պատծոյն կազատվէր՝ կու
քարանայր։

Իսկ Յիմարին ապաշխարութիւննէ լալ վասն մեղաց. և վասն դառնացնելոյն զխիղճն մէջ. և վասն հեռանալոյն 'ի հայրենի գաւառէն յերկնից արքայութէն։ Այսու ապաշխարութե՛ արդարացաւ դաւիթ մարգարէն. և մարիամ մագդաղենացին։ Ով է դաւիթ մեղաց ասելն իւէն՝ լռեաւ 'ի նաթան մարգարէէն թէ, տէր անցոյց 'ի քէն ըզ մեղս քո։ Եւ մարիամ մագդաղենացին արտասուօք որ լռեաց զոտս քի՝ լռեաւ 'ի քէ թէ, թողեալ լիցին քեզ մեղք քո։ Եւ պետրոս առաքեալն որ ելաց դառնապէս զմեղքն ուրացութե, յետ յարութեան քի 'ի մէջ արանց՝ նախ անոր երևեցաւ և մխիթարեց։ Տես թէ Յիմարին ապաշխարութիւնն՝ զառիւծն մծ ինչ պէս մանճուկ գառն կանէ. և զշարճուրելի դատաւորն՝

 'ի

՚ի գթած հայր կու դարձուցանէ։
Ուրեմն մի՛ յուսահատիր եղբայր սի-
րելի՛ զի քաղցր է ած ՚ի վերայ ապաշ-
խարողաց. աղօթեա՛ւ չի՛ ամաչեցիր, լա՛ց-
ի՛ր մի՛ ամաչեր։
Ա. Յլ և ապաշխարութիւն՝ պէտք է որ լի-
նի դառն և լեղի. զերէ լալն է դժո-
գին՝ կեցցէ ՚ի վերայ անդրանկէն և միա
մօր մեռեալ զաւակի. սուգ անդրան-
կի՝ արա քեզ կասէ Երեմիա մարգարէն.
Բ. Կամաւոր պիտի ապաշխարութիւն.
զերէ կասէ սբն Գրիգոր Նարեկացին
թէ, յակամայից ոչ կատարեալ են.
և ոչ կատարեալ առողջութիւն. զերէ
ուրախութեամբ պիտոր անձամբ զայն՝ որ
՚ի յաւիտեան ժառանգելոցն եմք։
Գ. Կատարեալ պիտի. և ապաշխարու-
թիւնն յայնժամ կատարեալ կու լինի,
յորժամ զղջմամբ խոստովանութբ և
հատուցմամբ որ լինի. և հատուցա-
նելն է՝ զամէն մեղաց մուխայիլէն
քաշել կամա.

Զօրօրդ, փութով պիտի․ ինչ պ̃ս կամէ սիրած խնամատուին, մի՛ յապաղէր դառնալ առ տէր։

Ե, Ապաշխարութիւն ձան ի կեօյիւլոյէն պիտի լինի․ ինչ պէս ամէ ամօս մարգարէն, դարձարո̃ք առ մ̃ր ա̃ծ ձեր յա̃մ սրտէ ձերմէ․ պահօք, լալով, և կոծով․ այսպէս ապաշխարեցին նինուէացիքն․ Զ, Ապաշխարութիւն պէտք է որ լինի սպառով և յարատևութեամբ․ ինչ պէս ասաց ք̃ս, որ համբերեսցէ խոպառ՝ (՚ի մէջ ապաշխարութեան) նա կեցցէ․ Է, ապաշխարութիւն յորէ յոր ոչ է ձգելի․ ինչ պէս անառակն որդին որ մոածեց զէր խղճութիւն՝ ասաց թէ, յարուցեալ գնացից առ հայրն իմ․ և նոյն ժամայն ծկաւ առ հայրն և ասաց, մեղայ յերկինս և առաջի քո․ Ը, Խոնարհու̃թ և մոռանօքամբ սրտի․ ինչ պէս որ մաքսաւորն բախէր զկուրծս․ և՚ի գետինն նայելով կոր ՚ի գլուխ՝ ասէր, ա̃ծ



քա

քաւեա՛ զմեղաւորս. և էջ ՚ի տուն իւր
արդարացեալ: Թ, Ապաշխարութիւնն
խոկոյն պիտի լինի. և խոկոյնն այն է՝
որ յանկարծ մէկ բարի միտք մի կու
գայ ՚ի մարդն թէ խոստովանիմ, պէտք
չէ որ մարդ զայն սահաթն անցնէ. ո՛վ
գիտէ պէլքի յո՛յ է այն դրդումն.
որ թէ մարդ զայն սահաթն անփոյթ
առնէ, լինի թէ յետոյ կամենայ և՚ի
ձեռքն չանկանի:

Սուտի ասաց քո՛, մինչդեռ ունիք
զլոյսն, գնացէ՛ք առ լոյսն՝ զի մի՛ խաւար
ձեզ հասցէ. զերե գայ գիշեր, յոր
ժամ ոչ ոք կարէ գործել: Սուտի ա
սեն վարդապետք, գայ ժամանակ յոր
ժամ կամենաս զղջալ և ոչ կարասցես.
զի յորժամ կարէիր՝ ոչ կամեցար:

Արդ՝ ապաշխարութիւն շատ բարեց
պատճառ կու լինի:

Նախ՝ զի զԱծ հաշտեցուցանէ. որպ
ասէ մարգարէն, հաշտեալ եմ ընդ-
քեզ տառապեալդ և խոնարհեալդ:

Բ, Ո՛վ հնացեալն վերստին նորոգէ · որպէս յայտ է յանառակ որդւոյ նոր հանդերձէն։

Գ, Ո՛վ ամ՟ եւ զհրեշտակս կուրախա- ցընէ · զի ուրախութիւն լինի յերկինս վասն միոյ մեղաւորի որ ապաշխարիցէ · Դ, Ո՛վ տառապեալն եւ աշխատեալն հան- գըստացնէ · եկա՛յք առ իս ամ՟ աշխա- տեալք եւ ես հանգուցից զձեզ ասէ ք՟ս · Ե, Ո՛վ ուրն ա՟յ յետ դարձուցանէ · ինչպէս որ ամ՟ ասաց հրեշտակին՝ վ՟ս ապաշխարողին դաւթի թէ, դարձո՛ զսուրդ ՚ի պատեանս իւր · Զ, Փրկէ ՚ի գերութենէ · ինչպէս որ զմանասէ թագաւորն դարձոյց ՚ի թագաւորութի իւր · Է, Տանի ՚ի դրախտն · որպէս զաջակողմեան աւազակն · Ը, Ո՛վ մաք- սաւորն առնէ աւետարանիչ · որպէս զմատթէոս · զհալածիչն՝ առաքեալ · ո՟պ զպօղոս · Թ, Կենդանացուցանէ ըզ մեռեալ հոգին · ինչպէս ամ՟ ասաց · մեղաւորն եթէ դարձցի, կենօք կեց-



ցէ

ցէ եւ մի՛ մեռցի։ Ժ , Ո՛վ որդեակ՛ ըզ
մարդն զանազան պտղով առաքինութե.
որպէս ասաց սուրբն յօհաննէս մկրտիչ,
արարէք այսուհետեւ պտուղ արժանի
ապաշխարութեան։

ԺԱ , Տայ մարդոյ զծամածանակլու որ
կեանք · որպէս որ եզեկիա թագաւորին
ԺԵ տարի։ ԺԲ , Նորոգէ զպատկերն
այ · որպէս յայտ է ՚ի մատանին անա-
ռակ որդւոյն։ Կոխէ զգլուխն սատա-
նայի · որպէս յայտ է ՚ի կօշիկն ոտից։
առնէ արժանի մարմնոյ եւ արեանն քի·
որպէս յայտ է յեզն պարարակ։ Գտա-
նէ զկորուսեալն · կենդանացուցանէ
զմեռեալն · ինչպէս ասաց , թէ այս
որդի իմ մեռեալ էր եւ եկեաց · կորու-
սեալ էր եւ գտաւ։

Եւ այս մե խորհրդոյս որդիքն են
այսոքիկ։ Անխկրտութիւն սրտի ·
որ ձիու նման ՚ի քեօրկէ կու վախե-
նայ։ Ամօթն · լոքին ամօթն է սանձ
մոլութեանց։


պտղ

Զարհուրին ՚ի պատժոյն զոր խոստա վանահայրն կու դնէ · լուծին՝ որքան ծանր որ լինի ապաշխարութիւնն, զդ ժոխոց տանջանաց քերօրկէն պիղծ չէ. Հեշտութիւն մեղաց · լուծին՝ ժամա նակաւոր է որ հեշտացուցանէ՝, և յա ւիտենական որ տանջէ. Յոյս երկար կենաց · լուծին՝ տապար արմին ծառոց կայ · որ է մահն ՚ի մէջ հոգւոյն և մարմնոյն. Յուսահատութի ըունելոյ զթողութն այ · լուծին՝ քեզ ումաւն, մա րիամ մագդաղենացին. Երկիւղ վերս տին անկանելոյ ՚ի մեղս · լուծին՝ քո ա սէ, այն՝ որ ննչէս ՚ի մեռելոց. և յօ հան ոսկեբերանն ասէ, ո՛րքան գըլխ՝ դարձեալ կանգնիր. Օրինակ մեղան չելոյ · լուծին՝ թէ հետևեցար մեղանչո

ղին, հետևե՛ր և ապաշխարողին.

Սովորութիւն մեղանչելոյ · լուծին՝ թէ սա տանայ սովորեցնել կարէ ՚ի մեղս, և՛ս առաւել այծ սովորեցնել կարէ ՚ի բա րեգործութիւն. Մեղքինն է յան



դէմ

դրդնաքար յուսալ յողորմութեն այ անզեղջ մնալով. և այս է հայհոյութի հոգւոյն սրբոյ։ Այսինքն՝ յարդարութեն այ թէ չէմք վախնար, պարքէ՝ յողորմութենէն պիտոր անմաչեմք և դառնամք ՚ի մեղաց։

Օ այս եւ պէտք է գիտել՝ որ ապաշխարութեն երեք մասն է. զղջումն, խոստովանութիւն, և հատուցումն՝ գործեալ մեղաց ՚ի ձեռն ապաշխարութե։ Սու զղջումն է սաստիկ ցաւ սրտի վս տհաճութեան մեղաց, և վասն դառնացուցանելոյն զայ՝ կսկծալ. միտս ունենալոյ խոստովանութե, և զփոխարէն պատիժն կրելոյ. Օ էրէ մեղքն կամ մտօք կու գործվի. կամ բերանով. կամ գործով։

Մղաց պատիժն՝ է զղջումն և ցաւն սրտին. բերանոյն՝ խոստովանութիւնն. գործոյն՝ ապաշխարութիւնն։ Այսինքն՝ թէ բերանոյն և թէ գործոյն կողմանէ ես զղջացերք՝ է



սիր

սիրտն. զի ինքն է եղեալ պատճառ գլոր-
ման նոցա: Դարձեալ՝ սորին պտուղ
գարշելիք ՚ի մեղաց. բերանով մեք ՚ի
մէնէ գանձկաւ անեմք. և գործով
զպատիժ մեղացն կրեմք: Դարձեալ՝
մարդ մեղանչելով՝ զԱծ կու զայրացնէ.
զեկեղեցի կու գայթակղեցնէ. զինքն
կու վնասէ: Պէտք է զղջմամբ զԱծ
հաշտեցնել. խոստովանութբ զեկեղե-
ցի. և ապաշխարութբ զինքն հետ իւ-
րեան: Դարձեալ՝ քս երեք մեռեալ
յարոյց. զմէկն ՚ի տան մէջ՝ յօրինակ
սրտի մեղաց. զմէկն ՚ի դըրան՝ յօրի-
նակ մեղաց բերանոյ. և զՂազարոս ՚ի
գերեզմանէն՝ յօրինակ գործոյ
մեղաց:

Իսկ խոստովանութիւնն է՝ որով ծա-
ծուկ հիւանդութիւն հոգւոյն՝ յայտ-
նի յուսով թողութեան: Ո՛րք նիւթ
խոստովանութեան՝ մեղքն է. գործ
խոստովանութեան՝ զծածկեալ վէրքն
յայտնելն է. և վախճանն՝ թողութիւնն է:



Իսկ

Իսկ և խոստովանութին երեք կերպ է·
Մի է խոստովանութիւն, որ ասի գոհութիւն և շնորհակալութիւն վասն ընկալեալ բարեացն որ յԱյ։
Եւ է խոստովանութիւն, որ է մեկնութիւն ճշմարտութեն Այ · և այս է խոստովանութիւնն հաւատոյ։ Եւ է խոստովանութիւն, որով մեր պակասութիւնն և հիւանդութին կու յայտնի քահանային՝ յուսով թողութեան · և այս է խոստովանութիւն մեղաց։ զի եարայն որ ծածուկ մնայ՝ անբժշկելի կու լինի։
Այլ Քս որ էր երկնաւոր բժիշկ որ դեղոյ և հնարի կարօտ չէր՝ յետ ելնելոյն յաշխարհէ, փոխանորդ իւրն եթող զքահանայս ՚ի մէջ եկեղեցւոյ· որ վէքեալէթէն թողուն զմեղս խոստովանողաց։
Եւ զայս յայնժամ պէյան արար, յորժամ բորոտաց ասաց թէ, գնացէք ցուցէք


զան

զանձինս՝ քահանայից ․ թէ ինչ պատու-
ճառաւ այդ քրիստոնէութեան հանդի-
պէր էք ։ Այլ 'ի նոր օրէնս՝ մեղքն է
մէկ քրիստոնէութիւն մի հոգւոյ ․ որ քա-
հանայից պիտոր յայտնեմք ․ զէրէ քա-
հանայք են աչք մեր ․ որպէս ասաց ած ,
թօթափիցէք զփոշին ձեր առաջի ա-
չաց իմոց ։

Արդ՝ ա 'ի բազում խոստովանի-
լ պէտք է որ , պարագայիւքն հանդերձ
խոստովանիմք ․ զէրէ պարագայքն այն
են՝ որ կու ծանրացնեն և թեթևացնեն
զմեղս ։ Օրէն՝ այլ է մեղանչել կար-
գաւորին , և այլ աշխարհականին ․ այլ է
'ի սուրբ տեղւոջ , և այլ 'ի հասարակ
տեղի ։ Յամէ՞ն 'ի մեղս ։ Սէպէպն ,
թէ 'ի տկարութենէ՞ էր մի , կամ 'ի
բռնադատութէ ․ թէ 'ի կամաց և գի-
տութենէ ․ թէ գիտելով թէ անգի-
տութեամբ ։ Ժամանակն ․ թէ 'ի տօ-
նական օրն , թէ 'ի լուր աւուր ։
թէ սակաւ փորձութեամբ անկար 'ի

 մեծ

մեծ մեղս և չի ընդդիմացար· Կամ թէ՝ ուխտի դէմ մեղանչել· ուխտա-րով և ոչ կատարելով· Կամ թէ՝ կու-սուն և կրօնաւորուն խոստացար և չես կեցար· Թէ ի՞նչ տեսակ մեղք աղ-

տեղացար·

Ո՛ Տէր բաւական չէ որ ասես՝ զէօթն մահացու մեղաց մէկն գործեցի· և զա-նուն մեղաց ծածկես· Թէ յոր աս-տիճանի մէջ գտանվար· քահանա՞յ էիր։ Թէ եպիսկոպոս· և այլ· Կամ թէ՝ նշանաւոր և անուանի մարդ էիր· և այլոց շատ գայ-թակղութեան տուիր· Կամ թէ՝ քանի՞ անգամ անկար· Իսկ թէ հասակդ որ-քա՞ն էր· թէ կատարեալ և ծեր· թէ արու, և կամ թէ էգ· Իսկ թէ յո՞ր մե-ղաց յոր մեղս անկար· Իսկ թէ որո՞վ եղանակաւ և քէնտով մեղանչեցիր· Կամ թէ՝ նախանձու մտօք յափշտա-կեցիր· թէ ագահութեան· Ահա

այսոքիկ պարագայք կամքին·

Իսկ թէ ի՞նչ պէս պիտոյ է խոստովանիլ·



Նախ

Նախ՝ պէտք որ 'ի մէջ մեղաց չի յա-
մենալ · այլ շուտով խոստովանիս · որ
սովորութիւն չի դառնայ․ Երկրորդ՝
յաճախ և թէզ թէզ · հինչ օրմասայ՝
տարին Գ անգամ · և թէ մէկ անգամ
պարտ որ չի խոստովանի մարդ , զուրկ է
'ի քրիստոնէութէ․ Երրորդ՝ խոստո-
վանելի է պարագայքն․ Չորրորդ՝ ընտ
րողութբ և հաւաքմամբ · և զլու խոս-
տովանահայր գտնելով։ Ե , Ան
ամօթոյ չի ծածկել զմեղս․ Զ , Արի
ամօթխածութբ խոստովանիլ և ոչ լրբա-
բար․ Է , Արգալ խոստովանելի է
և ոչ աստ և անդ ցաթկոտելով · զէրէ
ցաթկոտելով՝ շատ մեղք կու մոռացվի։
Ը , Խոնարհաբար խոստովանելի է․ Նախ՝
սրտիւ խոնարհելի է առջի այ՝ թէ չեմ
արժանի շնորհացն այ · Երկրորդ՝ մարմ
նով կորագլխութ և գետնահայեցութ
առաջի քահանային ծնրև փոխանորդի
այ․ Թ , Ամբողջապէս խոստովանելի է
և ոչ հատակտուր․

Ժ, Սիրով խոստովանելն է և ոչ յակա-
մայ և բռնութեամբ. զիրէ զշո՛ւն որ
զօրով յամ տանիս, տիրոջն խէր չանէր։
ԺԱ, Արտասուօք խոստովանելն է. զի-
րէ արտասուքն 'ի խոստովանութե՛ն' է հո-
գւոյ բաղանիք լուացման։
ԺԲ, Ամօթօրէն խոստովանելն է.
մէկ երկու օրով յառաջ զամենայն մե-
ղս մտմտալ պէտքէ՝ որ 'ի խոստովանելին
չի մոռացվի։ ԺԳ, Հնազանդ աբար խոս-
տովանելն է. որ քահանայն զինչ ասպաղ
խարութիւն դնէ՝ խոստովանողն կատա-
րել յանձն առնէ։
ԺԴ, Յատկօրէն խոստովանելն է. զի-
րէ խոստովանողն յիւրմէնէ պիտիր
գանկատի, և ոչ զայլ մարդ
սէպէպ բռնէ։

Մ՛ի ով [illegible]՝ խոստովանանի՝ [illegible] [illegible]
[illegible] [illegible]՝ [illegible] [illegible] [illegible] [illegible]։

 Յ-

## Խնդիր Ձ։

### Յաղագս Խորհրդոյ Վերջին Օծման.

Վերջին օծումն է խորհուրդ՝ կացուցեալ վասն ներելոյ մեղաց․ որպէս ապաշխարութիւն վասն մահացու մեղաց․ Սակայն այս խորհուրդս ոչ է խափանեալ․ այլ միայն ժամանակին փոխել․ որ կու տրուի հետ դրոշմին․ Եւ ունիմք զաւագ հինգշաբաթի առնալուայն եւ՝ ամենուն 'ի տեղի վերջին օծման․

Նաեւ՝ այս խորհուրդս ոչ է այնքան հարկաւոր թէ չունողն զրկի 'ի փրկութենէ․ որպէս ասէ լաթինացւոց վարդապետն Թովմաս աքուինացին․ Վասն այնորիկ 'ի վերջին հարկաւորութեան կատարեալ զղջումն լցուցանէ զպակասութիւն այսորիկ խորհրդոյս․

[illegible]
Վերջին օծման՝ [illegible]

## Խնդիր Լ.

### Յաղագս Խորհրդոյ Աստուծոյ, այսինքն Քահանայութեան.

Արդեօք է նշան ինչ եկեղեցւոյ, որով պարգևի հոգևոր իշխանութիւն ձեռնադրեցելոյն. Այո՛. կարգ ասելով կու զանազանէ զքահանայութիւն 'ի ժողովոյ ռամկաց և խառնիճաղանճից. Իսկ նշան ասելով, որոշէ յաննշանից՝ որ ոչ են նշանաւորեալք կարգին իմն. Իսկ եկեղեցւոյ ասելով, զանազանէ զկարգն և զնշանն յայլոց նշանաց. Ինչպէս ասեմ թէ, նշան հաշտութեան այ 'ի ժամանակս Նոյի՝ աղեղն ամպոց. 'ի ժամանակս աբրահամու՝ թլփատութիւնն. Երկնից նշանքն են երկոտասան կենդանակերպքն. Փորեաց հողմն՝ նշան պարզութեան է. Արևելեան ամպն՝ նշան անձրևի է. Գարնան նշան՝ ծառոց տերևն է. Ձմռան նշան՝ ձիւնն է.

Այսպէս նշան եկեղեցւոյ կարգն է. անոր համար նախ ասացուաւ թէ, կարգն է նշան։

Իաջին նշանն թիւրլիւ թիւրլիւ կուլինի · որպիսի նշան, ասացաւ նշան է եկեղեցւոյ. Այլ զի եկեղեցի անուն ՚ի հրեշտակաց և յընտրելոց վ՞ր այլ կասվի · և թէպէտ հրեշտակներն այլ՝ երկնային քահանայապետութիւք կամին, լաքին ձեռնադրութիւն չէն առեր զքահանայութիւնն · այլ ՚ի ստեղծմանն. վասն այնորիկ ասացուաւ թէ, որով պարգևի հոգևոր իշխանութիւն ձեռնադրելոյն. Ո՛ երբ չար եկեղեցի և ժողովք չարաց այլ կայ, որ չունի զհոգևոր իշխանութիւն ձեռնադրութեամբ · անոր համար ասացաւ՝ հոգևոր իշխանութիւն. Ո՛ երբ որպէս ամ զերկրաւորքս կուռ կառավարէ միջնորդութ երկնաւորաց, այսպէս և զեկեղեցին կառավարէ քահանայական իշխանութ. Այլ յառաջ քան զքահանայութիւն՝

հեր գլխոյն կու հասանի խաչաձև. և 'ի գագաթն' թագի և բոլորակ պսակի նման' բաց կու թողլի. ապ 'ի նշանակել թէ' բարձրելոյն Աստուծոյ սպասաւորէ. որոյ ծառայելն է թագաւորել.

Սէրք եկեղեցականաց թագաւորութիւնն չէ յայսմ աշխարհի. անոր համար յետ կտրելոյ հերաց' աւել կու տրվի 'ի ձեռքն. որ կու ցուցանէ թէ' աւելածուն տանն այ թագաւորելոց է յերկինս։ և թէ' լաւ է 'ի տանն այ աւել ածելն, քան զբնակիլն 'ի յարկս մեղաւորաց.

Նու խորհրդոյ կարգին' վեց բան գիտել. Նախ' որ տվօղն կարգին' եպիսկոպոս լինի. Երկրորդ' նիւթն. որ է օծումն և պատշաճաւոր գործածելիքն. որք կու տրվին 'ի ձեռն կարգառողին 'ի շօշափել.

Երրորդն է ձև բանին. Չորրորդ' որ կարգ առօղն պիտի լինի արու. զէրէ կին մարդն ո՛չ է ը̃ունակ կնքոյ կարգին.



Է

Է, Ուղիղ դիտաւորութիւնն:

Ը, Որ կարգ առօղն պիտի որ մկրտած լինի:

Եւ արդ՝ եօթն են կարգ և աստիճանք քահանայութեան:

Առաջինն է՝ դռնապանութիւնն. և գործ դռնապանին է պահել զսրբութեան տեղին ՚ի պղծոց և՚ի բանադրելոց: և զայս քս ցոյց ետուր՝ յորժամ արար խարազան չուանեայ և զանարժան վաճառօղս և գնօղս դուրս արար ՚ի տաճարէն:

Երկրորդն է՝ ընթերցողութիւնն. և գործ ընթերցողին է կարդալ զմարգարէական գիրքերն: և զայս քս ցոյց ետուր՝ յորժամ եբաց զգիրքն եսայեայ մարգարէի և յարեաւ ընթեռնուլ:

Երրորդն է՝ երդմնեցողութիւնն. և գործ երդմնեցողին է՝ զգալօղն ՚ի մկրտութիւն հրաժարեցնել ՚ի սատանայէ. և զդևս հալածել աղօթիւք ՚ի դիւահարաց՝ երդմնեցնելով անուամբ տն:

տեառն. և զայս ք͞ս յայտնեաց՝ զդևս
հանելով. և առաքելոցն ասելով թէ,
զդևս հանէք. զհիւանդս բժշկեցէք:
Չորրորդն է՝ ջահընկալութիւնն. և
գործ ջահընկալին է՝ զվառեալ մոմ'ի
ձեռին առնուլ'ի դէմ ս͞բ խորհրդոց.
և աւետարան կարդալու ժամանակին.
և վառեալ մոմն կցուցանէ զլոյս աւե
տարանին. և զայս յայտնեաց ք͞ս յոր
ժամ ասաց թէ, եսեմ լոյս աշ͞խի. և
զառաքեալսն յայնժամ արար ջահընկալ՝
որ ասաց թէ, դուք էք լոյս աշ͞խի:
Հինգերորդն է՝ կիսասարկաւագութի.
և գործ կիսասարկաւագին է՝ առնուլ
զնուէրս 'ի ձեռանէ բերողաց և տալ
'ի սարկաւագն. և զայս ք͞ս յայտնեց
յորժամ փէշթիմալ ղուշանմիշ եղաւ
և լուաց զոտս աշակերտացն. Նաև՝
զսկիհն և զմաղզմանն և զամանն գինւոյն
և զնշխարն առ սարկաւագն տանիլ. և
զհանդերձ սեղանոյն լուանալն է գործ
կիսասարկաւագին.

Վեցերորդն է՝ առաջ սարկաւագու-
թիւն. որոյ գործն է ծառայել քահա-
նային ՚ի ժամ խորհրդոյն եկեղեցւոյ.
և զաւետարան կարդալ. և զողջոյն ՚ի
քահանայէն առնլով տալ ժողովրդ̃ն.
զայս ցոյց ետուր ք̃ս ՚ի ժամ պատարա-
գելոյն՝ որ ետ զմարմին և զարիւնն ՚ի
ճաշակել. անոր համար սարկաւագն
հետ ժողովրդեան չառնուր հաղորդու-
թիւն. այլ ՚ի սեղանն՝ հետ քահանային.
Եօթներորդն է՝ քահանայութիւն. որ
է բարձրագոյն կարգ ՚ի վերայ վեց ա-
ստիճանաւորաց. որոյ գործն է զսրբազ-
նա̃ն պատարագն մատուցանել. և այս է
նախկնագոյն գործ քահանային. և զայս
յայտնեաց ք̃ս յորժամ ՚ի վերնատունն
պատարագեաց. և իշխանութիւն ետ
նոցա ասելով թէ, զա՛յս արարէք առ
իմոյ յիշատակի. և հետևեալ գործ քա-
հանային է կապել և արձակել. կապել
զանդարձն ՚ի մեղաց, և արձակել զդար-
ձօղն. նաև եցոյց ք̃ս զկարգ քահանայ-



ու

ութեան յանձն իւր՝ ՚ի խաչին զինքն պատարագելով։ Բայց եպիսկոպոսութին և հայրապետութիւնն ոչ են այլ կնիք և կարգ. այլ բարձրագոյն իշխանութի յեկեղեցւոջ։ զի քահանայութին է՝ ոպ թագաւորութիւն. և եպիսկոպոսութին և կթղկոսութին՝ ոպս զկայսերութիւն հոգևոր.

Իսկ փականքն և բանալիքն՝ երկուք են ՚ի քահանայս. մինն է բանալի կարգին. և միւսն է բանալի գիտութեան։ զի քահանայն է հրեշտակ տն ամենակալի. որ հոգ պիտիր տանի միշտ ուսանելոյ և ուսուցանելոյ. որ կարենայ ընտրել և սէջմիջ անել ՚ի մէջ զանազան մեղաց։

Քահանայն բարի՝ նըման աստուծոյ.
հրեշտակ ՚ի մարմնի՝ և դէր ՚ի վերոյ.
Զարն զէտ դիմաց՝ զօրուրկ է ՚ի լուսոյ.
հաղորդ է կարգին՝ դատարկ ՚ի բարուց.

# Խնդիր Ռ.

## Յաղագս Խորհրդոյ Պսակի.

Պսակն է արդար զուգակցութիւն ամուսնացելոց արուի և իգի․ ունելով անբաժանելի կապակցութիւն և կենցաղավարութիւն․ Արդ՝ ասելով թէ, արդար զուգակցութիւն, սէշ միշ կանէ զնա պսակն ի շնութենէ և ի պոռնկութենէ և յազգապղծութենէ որ ո՛չ են արդար զուգակցութիւն․ այլ պիղծ և անմաքուր խառնակութիւն։ Արուի և իգի ասելով, բաժանէ ըզսուրբ պսակն ի յարուամոլութենէ․ որ է անլուր չարիք․ Եւ ասելով թէ, ունելով անբաժանելի կենցաղավարութիւն՝ հաստատէ զայս վասն թէ, ծնելոցն երկուքն ի մարմին մի․ զոր և Քրիստոս վճռեաց ասելով թէ, զոր Աստուած զուգեաց՝ մարդ մի՛ մեկնեսցէ․ Օքրէ այս խորհուրդս՝ է օրինակ և գաղափար միաւորութեան

ք̅ն ընդ մարդկային բնութեան ․ և
ընդ եկեղեցւոյ։ Սա ք̅ս ասաց վասն
եկեղեցւոյ թէ , ես ը̅ ձեզ եմ զա̅մ
աւուրս մինչև 'ի կատարած ա̅հի։

Սոյն վասն անբաժանելի միաւորութե̅ն
ընդ մարդկային բնութե̅՝ ս̅բն յօհաննէս
մկրտիչն ասաց , զխորաց և զկապ կօշ
կացն ոչ կարեմ լուծանել ․ այսինքն
զբանն 'ի մարմնոյն․ Սոյն ով ոք ուրեմն
որ զսուրբ պսակն քակէ , այնպիսին
քակէ զբանն 'ի մարմնոյն․ և զք̅ս վի֊
սայն 'ի հարանէ եկեղեցւոյ։ որ թէպէտ
անհնարին է որ բանն ա̅ծ 'ի մարմնոյն
և յեկեղեցւոյ բաժանի , լաքին պսակի
քակօղն թէ որ հնար որ լինէր՝ կու քա֊
կէր և զայն․ Ո էրէ ինչպէս որ աղ
քատաց համար ասաց թէ , զինչ որ ն̅յ
անէք՝ ինձ կանէք ․ այսպէս և ով ոք
ս̅բ պսակի քակման պատճառ կու լինի
և կու քակէ , այնպիսին չար քան ըզ
նեստոր , միաւորութեանն ք̅ի
բաժանօղ է․



Սա

Այլ թէ որ ասես, ապա քս̄ ասաց
թէ, եկի բաժանել զորդի 'ի հօրէ և
զդուստր 'ի մօրէ և զկնեսուր 'ի հարսնէ.
Ասեմ թէ, տես բարակ մտօք. որ
չասաց թէ՝ եկի քակել զհարսն 'ի կնե-
սոյն և զփեսայն 'ի հարսնէ. զէրէ ա-
նոնց անբաժանելի միաւորութիւնն՝
օրինակ էր իւր միաւորութեան. Այլ
զհայրն 'ի յորդւոյ և զդուստրն 'ի մօրէ
որպէս բաժանէ. այնէ որ ասաց թէ,
որ սիրէ զհայր և զմայր, զդուստր և
զորդի առաւել քան զիս՝ չէ ինձ ար-
ժանի. զէրէ առաւել և գեր 'ի վերոյ
սիրով՝ միայն ա̄ծ է սիրելի.
Այլ մարդիկ որ յառաջ քան զքս̄ գա
լուստն՝ զհայր և զմայր և զայլս առաւել
կու սիրէին, քս̄ եկաւ 'ի յաշխարհ
որ զառաւել սիրելին որ է ա̄ծ՝ ծա-
նուցանէ՝. և զայն սէրն որ ա̄յ կու-
վայելէ՝ (որ մարդիկ սխալելով կուտայ-
ին հօր և մօր՝) դարձուցանէ առ ա̄ծ.
Որ թէ մարդիկ զհայր և զմայր, զոր-


դիս

դիս և զդստերս այլ որ սիրեն նէ՝ վ͞ս
ա͞յ սիրեն. և վասն նորա հրամանին կա-
տարմանն. զէրբ ով որ սիրէ զհայր և
զմայր իւր՝ զերախտիքն նոցա կու ճա-
նաչէ. այլ զերախտիք ծնողաց ճանա-
չելն՝ զա͞ծ ճանաչէլ է.

Փորձեալ՝ այնպէս իմացի՛ր զպսակի ան-
քակտութիւնն 'ի միաւորութենէն ք͞ի.
որ ք͞ս վասն յաւիտենական ծննդեանն
ասաց թէ, ելի 'ի հօրէ և եկի յաշ-
խարհ. այլ ոչ երբէք ասաց թէ՝ ելի
'ի մարմնոյս. կամ ելանեմ։

Այսպէս և մարդ զհայր և զմայր կա-
րէ թողուլ և հեռանալ և՛ 'ի հեռաստա-
նէ կեօզէթմիշ անել. այլ ոչ կարէ ե-
լանել և բաժանիլ 'ի զուգակցուն և ա-
նել այլ. որպէս որ ք͞ս ոչ կարէ բա-
ժանիլ 'ի մարդկային բնութենէն (որ
առ ինքն միաւորէր է) և առնել
հրեշտակի բնութիւն.

Սուրբ՝ պսակն 'ի նշանէն կու ելնան
լի ․ փետրային և հարսին որոնց հաւա
նութիւն կու հաստատուի ․ և'ի մէջ անկո
ղին մտանելով 'ի միաւորին՝ կու կա
տարուի ․ Սյս նշանն է՝ ծաղկի պսակին
դաշնադրեալ քահանային աղօթիւքն ․
և ո՛չ է պարտ զծաղիկն թօթափել և
ձգել վայր տալ ․ զի այնպիսի մարդն
նշան է այսպէս և ձեռնի և սատանի քա
մեկի ․ որ զծաղիկ ծառոց վայր կու
տան և կոյրեն ․ և անպտուղ կու լինին
'ի քահանայական աղօթից ․

Իաքին ամէ այնպէս չասաց ․ զերե թէ
պէտ պսակի մեծ պատճառն որդեծը
նութիւնն է , լաքին մը ամսամինն որ
նշանած էր հետ յովսեփայ ամահօրն ․
'ի հօգուոյն սրբոյ թէպէտ յղացաւ և
պտղաբերեաց զքն ․ յովսէփ որ կա
մեցաւ զնշանն քակել , հրեշտակն յայ
տնեցաւ և ասաց թէ , մի' երկնչիր
առնուլ առ քեզ ․ և թէ՝ ա՛ռ քեզ
զմարիամ կին քո ․

Սեօյա կամքը առել թէ, մի՛ թուղթը
զմաքուր նշանածդ ՚ի ձեռաց. Այսպէս
և յակոբ նահապետն՝ եօթն տարի աշ
խատեցաւ վասն նշանածին և ՚ի ձեռաց
չի թողաւ. զերբ օրհնած նշանն՝ է
կէս պսակ. և յակոբ նահապետն վասն
կէս պսակին որ էր նշանն, զռաքէլ՝ կին
իւր կու կոչէր.

Այսպէս և ամ̃ նշանված կերպիւ մի՛
կուսաբար և հեռուրէն պսակվածի պէտք
ընդ նշանվածին. Այլ վասն կախարդ
և բանաարկու պիղծ և անիծեալ չարա
բերան պառաւանց խօսից՝ ով որ կու
քակէ զնշանն, այնպիսին նման է եւայի
որ օձին կու լսէ և ՚ի լուսեղէն պատ
մուճանէն կու զրկվի. զերբ կու լսէ
օձակերպ և աղըլու չար պառաւանց.
և ոչ լսէ ածային կանոնաց.

Այլ թէ որ մէկ մարդ՝ զնշանածին մէկ
պակասութիւնն մահանայ անէ բան
աարկուաց լսելով և զանուն կոյս աղջը
կան և կոյս տղայն ապականէ, թող

զՅակոբ նահապետին օրինակ առնէ իւրն․ որ նորա զուգէլ նշանեցին՝ որ էր գեղեցիկ, և զմեծ քոյրն լիա ողվին՝ որ էր աչօքն խացակ և նէմլի․ լաքին նա չի բաժանեցաւ 'ի լիայէ այլ խապուլ արաւ․

Այլ և գիտելի է, որ պսակին երեք թիւրլիւ բարի կայ․

Առաջինն է հաւատն․ որ է հաւատարմութիւն և մէկմէկի ինամութիւն․ որ յուխտին վերայ հաստատ կենան և օտար անկողնով չի պղծվին․

Երկրորդն է զաւակն․ որ ծնանին և վարժեն և անուցանեն 'ի փառս այ̃․

Երրորդն է խորհուրդն․ որ չի բաժանվին մինչ 'ի մահ․ որպէս որ քս̃ յիւր մարմնոյն անբաժանելի է մինչև յաւիտեան, այսպէս և ամուսնացեալքն մնան անքակ մինչ 'ի մահ․

Այս այլ գիտելի է․ որ ե̃ կերպ է միաւորութիւնն․ և երկու կերպ մահ․

Առաջին միաւորութիւնն է հոգևոր․



որ

որ է հաւանութիւն որոց։ Եւ այս բա-
ժանի յորժամ մարդ մեռանի յաշ-
խարհի՝ մտանելով ի կրօնաւորութիւն.
որ երկուքն մեկմեկի քոյր և եղբայր
լինին և ուխտեն մինչև ի մահ. և կամ
առ ժամանակ մի յանկուցին չի
մտանել։
Երկրորդ միաւորութիւնն է մարմնա-
ւոր. ըստ օրինի մերձաւորութեան.
և այս կարձակվի մարմնաւոր մահուամբ
միոյն, կամ երկուցն։
Մալէ՝ չորս պատճառ կայ մերձաւո-
րութեան։ Առաջինն է որդեծնութիւն.
Երկրորդն է՝ վճարել զպարտքն մեկ-
մեկի. Երրորդն է փախչելն ի պոռն-
կութենէ. որպէս ասէ սբն պօղոս թէ,
այլ վասն պոռնկութեան՝ ամէն այր
թող զիւր կինն առնու. և կինն զիւր
այրն։ և այս երեք կերպս ոչ են մեղք.
Չորրորդն է լցուցումն ցանկութեան.
և այն երբեմն մահացու մեղք է, և
երբեմն ներելի.



Եւ

Եւ ՚ի մէջ կարգըվորաց՝ զանազան մեղջ-
կան · չարաչար գործածութիւնն ·
անդէպ ժամանակն · աղտեղի միտքն ·
անպատշաճ կամ սուրբ տեղին · որպի-
սիութի յղացածին և կերպն ·

Զորս կերպ զարդ կայ Հարսին և փե-
սային · որ հոգևոր մտօք իմանալի
են · Նաշջինն է մատանին ՚ի մատն ·
Երկրորդն է պսակն ՚ի գլուխն ։
Երրորդն է կարմիր քօղն · և Չորրորդն է
կանաչ և կարմիր էպիբրշիմն ·

Մատանին՝ կու նշանակէ թէ , հարսն
և փեսայն ՚ի մէջ իրենց սիրով պի-
տիր միան · և օտարին՝ կնքեալ և մե-
հրրված ։ զէրէ սէրն ՚ի սիրտն է ։ Սու-
տի տղոմին իմաստունն կասէ թէ , դի՛ր
զիս իբրև զկնիք ՚ի վերայ սրտի քու ։

Գլխոյն պսակն՝ կու նշանակէ թէ ,
կուսութեան համար մինչև յայս կէտս
խայրէթ արին և պատերազմեցան և
յաղթեցին · և այս պսակիս արժանա-
ցան · զէրէ յաղթողին կու տայ ան և

եկեղեցի զպսակ փառաց։ Ուստի 'ի պսակէն՝ խաչ կու ըմբռնեն 'ի վերայ գլխոյ հարսին և փեսային․ յօրինակ
յաղթութեանն քրիստոսի։

Նաև՝ զէրէ խաչն է պսակ չարչարանացն քի․ և պարծանք եկեղեցւոյ։ Նոյն փեսայն և հարսն մինչ 'ի մահ մեկ մեկի վերայ գլուխ պիտի տան վասն
պսակին։

Կարմիր քօղն հարսին՝ կու նշանակէ
զհնազանդութիւն հարսին առ փեսայն․ որ մինչև 'ի մահ պիտի հնազանդի իւր փեսային․ զէրէ կարմիր քօղն ունի զգոյն արեանն․ որ կամի ասել թէ, արեան չափ պիտի հնազանդկենայ իւր փեսային․ լաքին այնպէս
հնազանդ՝ որ մեղք չի ծնանի։

Նաև՝ որպէս եկեղեցի հնազանդի քի մինչև 'ի հեղումն արեան, (զէրէ և քս սիրեց զեր եկեղեցին հարսին պէս և զարիւնն թափեց վասն նորա) այսպս
և հարսն՝ իւր փեսային։

Կարմիր և կանաչ էպիրշեմն՝ կու նշա-
նակէ զՔ̄ի մարդկութիւնն · կանաչն՝
յօրինակ ա̄ծութեն, որ կու նշանակէ
զմշտանջենաւոր և զանթառամ թագա-
ւորութիւն քր · և կարմիրն՝ զարեամբ
ներկեալ մարմինն և մարդեղութիւն ·
այլ որպէս ա̄ծութիւնն ՚ի մարդկութեն
անբաժանելի է, որպէս կանաչն ՚ի
կարմրէն, այսպէս և փեսայն մեր
հարսնէն մինչև ՚ի մահ անբաժանելի պի
տիր մնայ։ Անոր համար՝ յայնժամ կու
կապեն ՚ի գլուխ փեսային և հարսին
զկանաչ և կարմիր, յորժամ կասէ տէր
ատենապանն թէ, զոր ա̄ծ զուգեաց՝
մարդ մի՛ մեկնեսցէ։

*Ով զպսակն սուրբ քա    կէ,
նա է նման պիղծ նեստա    րի·
Որ բաժանեալ ասաց զՔրիս    տոս,
և՚ի դժոխս միշտ տան    ջի·

******************

## Գլուխ Խնձորոյ.

Յաղագս երից տեսակաց բարեգործութեան, այսինքն Ողորմութեան. Պահոց. եւ Աղօթից.

### Խնդիր Ա.

### Յաղագս Ողորմութեան.

Ողորմութիւնն է գթութիւն սրտի ՚ի վերայ ողորմելեաց. Օ երբ ով ոք որ քարասիրտ է՝ չի գթար ՚ի վ̃ր ողորմե-լեաց. որ այնպիսի մարդն՝ զայ̃ տուքն՝ այ̃ կու խնայէ. եւ այ̃ նման իջեն՝ անա-տուն կու լինի. զերբ քս̃ ասաց թէ, Եղերուք գթածք՝ որ̃ Հայրն ձեր երկնաւոր գթած է։ Անգութ մարդն նման է շան. որ թէ յուտածէն աւել-նայ պիտի՝ չի տար այլոց. Լաքին թէ որ բարակ աչօք եւ մտօք նայիմք, յամէն ստեղծուածոց պիտի՝ զգործ ողորմութ̃ կու

կուսանիմք. Նախ՝ յետ ա̃յ՝ ուսուցա-
նեն մեզ զգթութիւն դաշ հրեշտա-
կաց. որոց վերինքն միշտ հաղորդեն
զընկալեալ շնորհն յա̃յ՝ ստորինագունից
հրեշտակաց. և ստորինագոյնքն մեզ հա-
ղորդեն: Ո երէ զխափանումն բար-
ւոյ և զպատճառն չարի՝ կու մերժեն
'ի մէնջ. Որպէս ասաց ա̃ծ, ես առա-
քեցից զհրեշտակ իմ առաջի քո. և
պահեսցէ զազգս և զթշնամիս քո.
Ո փորձութի̃ս կու թեթևացնեն. որ̃պ
հրեշտակն որ էջ 'ի մէջ հնոցին և ըզ-
հուրն 'ի ցօղ փոխարկեց. Ըդդէմ
թշնամեաց կօգնեն. որպէս հրեշտակն
որ էհան յասորւոց ՃՁԵՌ հոգի.
Ո աղօթքն մեր ա̃յ կու նուիրեն. որ̃պ
զաղօթքն տօբիթայ և կուռնելիոսի.
Մ արժեն 'ի գործ. որ̃պ գաբրիէլ խելա-
մուտ արար զդանիէլ մարգարէն և ըզ
զաքարիա քահանայապետն.
'Ի մեղաց արգելուն. որպէս որ զղովտ
հանեցին 'ի սոդոմայ.

 Սուրբ

Սրբացուցանեն և կերակրեն. որպէս հրեշտակն՝ զեղիա մարգարէն արթնացուց ուտել զեփրած կերակուրն.

Մխիթարեն. որպէս հրեշտակն ռափայէլ ասաց տուբիթայ թէ, քաջալերեա՛ց՝ խաղաղութիւն լիցի քեզ։ Եւ երկու հրեշտակք զառաքեալսն մխիթարեցին ՚ի համբառնալն քո։ Զերկիւղն փարատեն. որպէս գաբրիէլ ասաց ա̃ծածնայ թէ, մի՛ երկնչիր մարիամ.

Արձակեն զկապեալս. որպէս հրեշտակն՝ զս̃րբն պետրոս և զայլ առաքեալսն. Զբարձրագոյնս մեզ աւետեն. որպէս գաբրիէլ զծնունդն քո։ Զծածուկս յայտնեն. որպէս հրեշտակն որ յովսեփայ ա̃ծահօրն ասաց վասն ք̃ի ա̃ծանի թէ, ծնեալն ՚ի նմա՝ ՚ի հոգւոյն սրբոյ է։ Պահեն զմեզ. որպէս ասէ դաւիթ, հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո պահել զքեզ։

Եւ թէ՝ հոգիք են հարկաւորք որք առաքին ՚ի սպասաւորութիւն վասն ժա-

ռան

ուանդողաց զփրկութիւն. Նաև մէջ բա-
զում գործք կան հրեշտակաց. որ ա-
մենն կըցուցանեն զգործ ողորմութե՟.

Երկրորդ՝ ուսանիմք զողորմութիւն յերկնից և յամ՟ աստեղաց. որք զիւ-րեանց ազդմունքն և զխասնըյեթն միջո կու հոսեն ՚ի վայր. և արեգակն տայ զլոյս իւր ամ՟ աստեղաց. և ամպքն կուտան զանձրև և զարեգական ջեր-մութիւն կու բարեխառնեն. զծովն կու շարժեն որ չի հոտի. և ձկունքն կեն-

դանի կու մնան.

Երրորդ՝ ուսանիմք զողորմութիւն և ՚ի թռչնոց. զէրէ աղաւնին ՚ի տապանն Նոյի՝ չիւղ ձիթենւոյ բերաւ յօրինակ ողորմութեան. և ագռաւն կերակրէր զԵղիա մարգարէն. և մեղուն զիւր քաղցր մեղրն կու տայ ՚ի վայելչութիւն մարդոյ. և քաղցրախօս թռչունքն

զուարճացուցանեն զլսելիս մեր.

Չորրորդ՝ ուսանիմք զողորմութիւն յոչխարաց. որ թէ մէկն հիւանդա-



նայ.

նայ , կու գան առողջներն կանգնին
դէմ արևուն և քէօրլէ կանեն ։

Դարձեալ՝ ուսանիմք և՚ի ձիոց • որ զմեռած ձիու քուռակն՝ մէկ այլ ձին կու սնուցանէ ։ և այսպէս զմօրեալ մարդիկն կու ճանապարհորդէ • և որ զայրոց և կանանց գութ կածէ ։

Դարձեալ՝ ուսանիմք զողորմութիւն ՚ի սուրբ գրոց • որ յամէն տեղ կու յորդորէն առնել զողորմութիւն ։

Քս̃ ասէ , երանի ողորմածաց ։ դարձեալ՝ ասէ , արարէք ձեզ բարեկամ ՚ի մամոնայէ ։ դարձեալ՝ զարժանն տուք ողորմութիւն ։ դարձեալ՝ որ խնդրէ ՚ի քէն , տուր ։

Ուսուր և ինքն չի խնայեց ՚ի մարմինն և յարիւնն • ՚ի հանգերձն • և՚ի ջուր կողին ։ այլև՝ զմայրն եւ յօհաննու աւետարանչին ՚ի մայրութիւն • և զհոգ դին՝ գին ետ մեր հոգւոյն ։

Նաև՝ աչօքն ողորմեցաւ ՚ի լալն ՚ի վերայ ղազարու ։



Հայ

Ձայնիւն՝ ՚ի կոչելն. սրտիւն՝ ՚ի գթալն։ Ձեռօքն՝ զհաց ՚ի բաշխմանսն, և կաւ ծեփելն յաչս կուրին։ Բերանովն՝ ՚ի վարդապետելն։ Ականջովն՝ ՚ի լսելն ըզ ձայն հիւանդաց։ Ոտիւքն՝ ՚ի վաստակելն։ Գլխովն՝ ՚ի փշով պսակելն։ Մահուամբն՝ ՚ի փրկելն զհոգիս ՚ի դըժոխոց։ Յարութբն՝ ՚ի մխիթարելն զտրտմեալս։

՚ի Համբառնալն՝ զհոգին սուրբ առաքելն։ Եւ յերկրորդ գալստեանն՝ ողորմելոց է սրբոց ՚ի վեր քան զարժանն փառաւորելով զնոսա. և մեղաւորաց ՚ի վայր քան զարժանն պատժելով զնս։

Պարծեալ յորդորեն զմեզ յողորմութիւն՝ և օրինակքն սրբոցն այ. ով աբրահամու, որ առանց մուսաֆիրի հաց չէր ուտէր. և արժանի եղաւ մուսաֆիր ընդունելոյ ՚ի չատըրին զբանն ած. և զեղբօրորդին ղովտ՝ ՚ի գերութենէ դարձոյց։ Եւ ղովտ՝ զհրեշտակս այ կերակրեաց։



Եւ

Նաւ մովսէս մարգարէն այնքան ողոր-
մած էր՝ որ ա՟ծ պատժելն իւրէն զհրէ-
այսն՝ կասէր թէ, թո՛ղ զմեղս սոցա.
և թէ ո՛չ՝ ջնջեա՛ և զիս ՚ի դպրութենէդ
կենաց.

Նաւ յեսու որդի նաւեայ ողորմեցաւ
ռախաբ պոռնկին և ազատեց ՚ի սպան-
մանէ. Նաւ սուրբն պետրոս և յօհան-
նէս զանդամալոյծն բժշկեցին.

Նաւ պետրոս զտաբիթայն յարոյց. Նաւ
պօղոս առաքեալն զեւտիքոս պատանին
կենդանացոյց. Նաւ սուրբն մարկոս և
սրապիոն մեծ ճգնաւորքն՝ զիւր աւե-
տարանն այլ պիղծ ծախեցին և ողորմու-
թիւն տուին. Նաւ սուրբն գրիգոր մեր
լուսաւորիչն՝ ժ՟է կերպ չարչարանք քա-
շեց ողորմելով մեր ազգին և դարձոյց
՚ի կռապաշտութենէ.

Նաւ այս շատ օրինակ և վկայութիւնք
կան յա՟ծային գրոց մէջ. և յա՟ծա-
շունչն թուղթ չի կայ՝ որ ՚ի մէջն ողոր-
մութեան օրինակ չի գտնվի.

Իսկ

Իսկ այս գործք ողորմութեանս՝ երկու կերպ է . հոգևոր և մարմնաւոր։

Հոգևոր ողորմութիւնն ասոնք են։ Նախ՝ ցաւակցութիւն սրտի ՚ի վերայ տկարաց։ Երկրորդ՝ ներել և պաղըշլամիշ անել զսուչն այլոց։ Երրորդ՝ յանդիմանել զմեղուցեալսն։
Չորրորդ՝ ուսուցանել զտգէտս։
Հինգերորդ՝ աղօթել ՚ի վերայ հալածողաց։ Վեցերորդ՝ մխիթարել զտրտմեալս։

Իսկ մարմնաւոր ողորմութիւնն ասոնք են։ Կերակրել զքաղցեալս։ Արբուցանել զծարաւեալս։ Զգեցուցանել զմերկս։ ՚Ի տես գնալ հիւանդաց։ Երթալ մխիթարել զբանտարկեալս։ Ժողովել զօտարս և խարիպս։ Թաղել զնանքր մեռեալս։ Եւ վերջապէս տալ աթոռոց , վանորէից , և եկեղեցեաց։ Եւ մանաւանդ՝ յանունն այ̃ սր-երուսաղէմի . և տնօրինական տեղեացն մերոյ փրկութեան։ Ո՞ր է առաջե-

լակած կանոնէ զտասանորդս ընչից տալ
սուրբ եկեղեցի. քանզի առաքեալքն ու ր
և քարոզչերն՝ ի քրիստոնէից ողորմութի
կու ժողովէին և յեկեղ կու յղէին որ
բոց և այրեաց. և աղքատաց հոգեպա
հէին: Նաև ով որ կուզէ իմանալ անձա
խանձ մտօք, թող բանայ զսուրբ ա
ւետարանն և զառաքելոց գրեանքն, և
տեսանէ թէ որքան պէտք է տալ ողոր
մութիւն սուրբ եկեղեցի: Ամէկն ա
սեմ. և դու զայլ մտօք իմացիր:
Մախսուսէն գանձապետմ մը եկեղ
ջոյ է. զէրէ կու նստէր ի դէմ գան
ձանակին. և կու նայէր թէ՝ ով կու
տայ և ով դատարկաձեռն կելանէ և
կըմտանէ ի տաճարն: և զմէկ լըմայեկ
տվօղ այրի կինն որքան երանեաց ասե
լով, այրին այն տառապեալն շատ էարկ
ի գանձանակն:

Ամեն բոլոր գործոց՝ նորոյ ողորմութեան,
են ճըրագ չինելու՝ հով՝ ի վրա ման:

## Խնդիր Բ.

## Յուղոց Պահոց.

Պահքն է ճնշումն մարմնոյ . և ար-
գելումն ախորժակաց . և փափուկ
և պարարտ կերակրոց: Զերբ միշտ
ուտելն և ըմպելն՝ զմարմինն ՚ի հոգւոյն
կապստամբեցնէ , և զհոգին՝ յոյժ: Զի
շատակեր և անպահեցող մարդն՝ մտօքն
կու թանձրանայ . և զերկնայինն և
զհարակ և նուրբ իմաստութիւնն ո՛չ
կարէ իմանալ: Ուստի Մօսէս որ ո՛չ հետ
կու խօսէր՝ նախ կու պահէր և կու
ճնշէր զմարմինն և մտօքն կու նրբա-
նայր , և ապա թէ ո՛չ հարցածին պա-
տասխան կու տայր . Նոյն կռապաշտ փի-
լիսոփայքն ծոմով և պահօք այնքան ի-
մաստութեան հասան . որ պայծառին՝ յորն
մէկ ջամիչ կուտէր.

Նոյն մը ձգնաւորացն շատքն ՚ի ձեռն ծո-
մի և պահոց՝ մարգարէութեան և զա-

նա

Նազան շնորհաց իմաստութե̃ն ընկալան.
Եւ դանիէլ մարգարէն 'ի ձեռն պա-
հոց' զզերկնվերոյ սոսկալի երազներն նա
բուգոդոնոսորայ կըմեկնէր. Եւ'ի ձեռն
պահոց' ընդ գաբրիէլի և միքայէլի կու
խօսէր. Եւ'ի նոցանէ տեղեկացաւ և
խելամուտ եղաւ ժամանակի գալըս-
տեանն ք̃ի. Եւ եղիա ի̃ս օր պահելով'
'ի լեառն քորեբ ա̃յ տեսութե̃ն արժա-
նացաւ. Ո՛ երէ միտն 'ի պարարտ և
'ի փափուկ կերակրոց' կու ծանրանայ
կու գուլանայ և'ի բարձունս չի կարեր
ելանել. որպէս որ բազէն և տօղղանն
որ ծոմ կու լինի' շուտով կու հասնի
այլին. և թէ կերած որ լինի' չի կա-
րեր բարձրանալ և զայն ըմբռնել.
Ուստի կուապաշտ իմաստունքն կասէին
թէ, ծոմապահի հոգին' արտաքոյ լի-
քեան ելանէ. Եւ'ի բարձունս փու-
թով սլանայ որպէս զարծիւ.
Նաև' պահքն զմարդոյ կեանքն եր-
կարացնէ. որպէս յայտ է 'ի սուրբ

ճգնաւորսն։ Ուստի՝ ադամ թէ որ յայն ծառոյն չէր կերեր ՚ տայիմ կենդանի կու մնայր։

Նու ենոք որ պահեաց ծոմս՝ ի դրախտն յափշտակեցաւ. եւ հալէ կենդանի է։ Դարձեալ՝ պահքն յաղթէ զմարմնաւոր եւ զհոգեւոր թշնամին. զէրէ սրբուհին յուդիթ յաղթեց հողէփեռնեսի ի ձեռն պահոց. եւ եսթեր թագուհին՝ ազատեց ի խոտորմանէն համանայ զհրէայսն ի ժամանակս արտաշէսի. եւ յուդա մակաբէ՝ պահօք յաղթեց զանտիոքոս չար թագաւորն։

Նու զհոգեւոր թշնամին յաղթէ պահքն. որպէս քս յաղթօղն ամն մեզ օրինակ տալու համար՝ խ օր պահեց եւ յաղթեց զսատանայ ի լեառն փորձութեան։ եւ առաքելոցն ասաց թէ ՚ այս չար՝ ո՛չ ենէք ելանէ. եթէ ո՛չ աղօթիւք եւ պահօք։ Ուստի՝ սատանայ որ ի մէկ դեւահարէն հրամանաւ մէկ ճգնաւորի մի որ ելաւ եւ յինքն մտաւ ի ճգնա-



ւորն ՚

ւորն , սկսաւ այն Ճգնաւորն՝ մինչ ա-
ռաւել պահել և աղօթել . և դեւն ձանձ-
րացաւ՝ ելաւ թէ փախչի։ ասաց սուրբ
Ճգնաւորն , ո՞ւր չար ո՞ւր փախչիս .
էկ , որ ՚ի մէկ տեղ բնակիցէք։ ասաց
դեւն , մեծ պէլատ տայ ո՛վ չար ծեր .
զիս սպաննեցիր քաղցած և ծարաւի . և
հեռացաւ ՚ի Ճգնաւորէն։

Դարձեալ՝ զաղօթքն մեր՝ պահքն կու-
գեղեցկացնէ . ինչ պէս ասաց ռափայէլ
հրեշտակն տուբիթայ թէ , բարի են
աղօթք՝ պահօք և ողորմութեամբ։

Դարձեալ՝ պահքն ուսուցանէ մարդոյ
զխոնարհութիւն . որպէս ասէ դա-
ւիթ մարգարէն , խոնարհ առնէի պա-
հօք զանձն իմ։

Դարձեալ՝ պահքն զհեռացեալսն յԱյ՝
մերձեցուցանէ առ Ած . որպէս ա-
սէ յովէլ մարգարէն , դարձարուք
առ տէր աստուած ձեր . պահօք ,
լալով , և կոծով։



Բայց

Բայց աւա՜ղ հազար․ ո՞ւր է լաց և
կոծ յաւուրս պահոց յայսմիկ ժամա-
նակի․ կեցայք այժմու ժամանակի
պահոց օրերն՝ նիւթ չարութեան են
եղեր անզգամաց․ որ յուտելոյ օրն
զլէ գործած չարիքն՝ յաւուրս մեծ
պահոց կու գործեն։

Որ այնպիսի պահոց համար՝ ա՟ծ ասաց
եսայեայ բերանովն թէ, յաւուրս պա
հոց՝ կամք ձեր գտանին կատարեալք։
Այնպիսի մարդոց պահքն՝ եզաբէլի
պահքն է․ որ պահք պահել տուաւ,
և զնաբոթ սպաննեց։

Նա այժմու ժամանակի՝ եզաբէլի հոգ-
ւով չարքն՝ զեկեղեցի կու տապալեն։
Որ թէ ՚ի ձեռաց գայ, մարդ այլ սպա
նանելն բան մի չէ․ որ թէպէտ գոր-
ծոյն չեն հասանիր, լաքին կամօք ըս-
պանօղք են։ Զէրէ բարի և չար գոր-
ծոյ թէմէլն կամքն է․ թէ կամքն բա-
րի է, գործքն այլ բարի է․ և թէ
կամքն չար է, և գործքն այլ չար է։

զի ծառա չար՝ պտուղ չար բերէ։
Մ. ԱԼ ՟Ոք պահքն աղտոտ է յանկարգու-
թենէ . Ե՛ւ ի խոնարհս հոգւով՝ կու-
փայլէ։ Մ— ԱԼ սատանայ գիտէ՛ որ այ
փէք մախպուլ է պահքն և աղօթքն .
Ե՛ւ իւր չար գլուխն՝ պահօք և աղօթիւք
խորտակեցաւ ՚ի քէ . և կու խորտակէ
՚ի բարի պահողաց . անոր համար կու-
ջանայ որ խռովութիւն սերմանելով՝
տեղ և տեօշէկ փէյտահ անէ ՚ի հոգիս
խըռովարարաց . որ անարժանութեամբ
ճաշակել տայ զմարմին և արիւնն քր .
որ ճաշակօղն պատժի և պատուհասի։
Լալքն վասն այ լինի՝ կըռեցէ՛ք զա-
սածս . Ե՛ւ ի պօշ տեղն մի՛ բարկանայք
ծառայի ձերոյ . տեսէ՛ք թէ որ չէ այն
պէս , զինչ որ կամիք այնպէ՛ս արարէք։
Եւ թէ այնպէս է , աղաչեմ զձեզ
սիրօղն այ . մեղքէ հօգեկն ձեր .
զայն սուրբ պահքն սրբութեամբ պա-
հեցէ՛ք . խաղաղութեամբ և պարկեշ-
տութեամբ .

զերկե մեղք է ազգն մեր · որ մեկ
քանի մարդոյ համար՝ պիթեվրճէ տիւ
լենմիշ լինի յայլ ազգ քրիստոնէից·

Նու չի լինի թէ՝ ՚ի մարգարէէն զվայն
ժառանգեն · որպէս ասէ եսայի 58 գլ·
՚ի հակառակութիւն և՛՚ի կռուիւ պահէք·
զի՞նչ պիտոյ են այնպիսի աւուր պահք·
գալ բողոքել ձեզ առիս · և ինձ ոչ
լսել։ Նամ պահքն նինուէացւոց՝ է
ղև ընդունելի · և զած հաշտեցոյց·
Նու յոլէլ մարգարէն պատուիրէ բեւ
րանուն այ թէ , սրբեցէք պահս · և
ոչ թէ պղծեցէք։ Սերջապէս զինչ
ասեմ , պահքն կանէ զմարդն՝ քի տե
սութեանն արժանի · որպէս աննա մար
գարէուհին՝ որ ՚ի տաճարին պահէր և
աղօթէր ,քի տեսութեանն եղև արժա
նի։ Նու առաքեալքն յետ համբարձ
մանն քի՝ որ սրբապէս պահեցին , հոգ
ւոյն սրբոյ արժանացան·

Պարձեալ՝ ծոմ մարդոյ թուքն զօձն
կսպանանէ · զի՞նչ զարմանք թէ զսա

տա

տանայ սպանանէ. Պարձեալ՝ օձն ըզ-
հին խորխն ծոմ պահելով կու մերկա-
նայ. և մեք զհնութիւն մեղաց՝ պա-
հօք պիտի մերկանամք. Պարձեալ՝ 'ի
ձեռն ուտելոյ անկաք տղամ և մեք
յայս ցաւալի երկիրս. և 'ի ձեռն պա-
հոց պիտի որ ելանեմք առ ած 'ի բան-
տէ աշխարհիս. Որպէս օրինակն է 'ի
հընդկաց մուկն. որ զհնոտխատան մէ-
վերջին ծակէ. և 'ի մէջն մտեալ՝ որքան
կուտէ՝ կու գիրանայ. և 'ի նեղ ծա-
կէն՝ այլ 'ի դուրս չի կարեր ելանել.
ուստի անճար մնացեալ՝ այնքան կու
պահէ, մինչև յառաջին չափն պզտիկնայ
և ապա թէ 'ի դուրս կելանէ.
Նոյպէս և մեք՝ ադամայ ուտելովն մը-
տաք յայս աշխարհս. ուտելով զմեղս
գիրացաք. և չեմք կարեր ելանել յաշ-
խարհէ և մտանել առ ած. ուրեմն
պիտի պահեմք՝ որ յառաջին թարխին
ժամանեմք. և յաշխարհէ ելեալ՝ առ
ած մտանեմք.



Պահ

*Պահքն է հոգւոյն լըցեալ բան.
Նաև մարմնոյն սուրբ պահա բան.
Առնէ զմարդ հրեշտականըն ման,
Թըռուցանէ յերկնից խօ բան.

**************

## Խնդիր Գ.

## Յաղագս Աղօթից.

Աղօթն է պտուղ սրտի և բերանոյ. ընծայեալ այ ՚ի շնորհակալութի ընկալեալ բարեաց ՚ի նմանէ. Նա և ըս սրբոյն դիոնէսիոսի, աղօթն է լուսեղէն լար իմն կախեալ յերկնից ծայրութենէն առ մեզ. որ զմեզ ըս այ մերձաւորէ, և զած ընդ մեզ։ Զերբէ յոր ժամ որ աղօթեմք, մեք ընդ այ կու խօսիմք. և յորժամ կարդամք զաւետարանն, ած ընդ մեզ կու խօսի։ Այլ բարձր է ած, և մեք ցած. և միտք մեր տային կու ջանայ որ առ

ած հասանի և չի կարէր . անոր համար
ած մեզի հնար է ցոյց տվէր զաղօթն.
որ զնորա ծայրն ըմբռնեմք . և աղօ-
թիւք 'ի վէր յերկինս ելանեմք . և ը-
նմա խօսիմք . և զմեր պակասութիւն'
անմռունջ բնութեանն մյ իջատէ ա-
նեմք. և առնումք 'ի նմանէ զպէտսն
մեր փրկութեան.

Օ՜ երէ աղօթն է բանալի արքայութե.
որով բանամք զգանձարանն և զխազնէն
այ. և առնումք 'ի նմանէ զբարի խըն-
դրուածս մեր. Ուրեմն պէտք է որ
մտօք դառնամք առ ած մր և խոնարհ
յօժարութեամբ . և մաքուր հայցուա-
ծովք զած խոնարհեցնեմք յաղաչանս
մեր.

Սուրբ' աղօթից պտուղն շատ է. Նախ'
զի աղօթիւք Մովսէս մարգարէն զծովն
կարմիր պատառեց . և զորդիսն իսրայ-
էլի անցոյց յերկիրն աւետեաց. և մեք
աղօթիւք զծով մեղաց պատառեմք.
և յերկինս ելանեմք.

Պատճառ՝ մովսէս աղօթիւք մանանայ
յերկնից իջոյց, և՛ի վիմէն ջուր բղ-
խեցոյց։ և մեք աղօթիւք զքաղցրու-
թիւնն մ̃յ կու ճաշակեմք. և՛ի կարծր
վիմէն որ է, ա̃ծ զջուր զղջացուցիչ ար-
տասուք և ըմպեմք. որ է ողորմութիւն
նորա։ Երկրորդ՝ աղօթքն զամուլ և ան-
ծին հոգին ծննդական կանէ. որպէս
որ աղօթքն աբրահամու բժշկեց ըզ-
տունն աբիմելէքայ յանծննդականու-
թենէ։ Երրորդ՝ աղօթքն յաւելու ըզ-
կեանքն մարդոյ. որպէս յայտ է յա-
ղօթիցն եզեկիա թագաւորին. որ
ԺԵ տարի կեանքն աւելցաւ։
Չորրորդ՝ աղօթքն դարձուցանէ ըզ-
մարդն ՚ի գերութենէ. որպ̃ յայտ է
՚ի մանասէ թագաւորէն. որ աղօթե-
լով ազատեցաւ ՚ի բաբելոնի գերուէ̃։
Է, Աղօթքն կու հալածէ զթշնամին.
որպէս յայտ է յաղօթիցն յեսուայ որ-
դւոյ նաւեայ. որ յաղօթիւն՝ քարէ կար-
կուտ իջաւ յերկնից ՚ի վերայ թշնա-
մեաց։

մեաց։ և մոսէս՝ աղօթիւք կոտորեաց
զամաղէկացիսն տարածմամբ ձեռացն
որպէս զքս՟ ՚ի խաչին։ և սամուէլ մար֊
գարէն աղօթիւք կոտորեաց զայլազգիսն
երկնային որոտմամբ։ Զ, Աղօթքն պտղա֊
բեր առնէ զամուլն. որպէս զմայրն
սամուէլի. որ աղօթիւք եօթն որդիս
ծնաւ։ և փենանայ որ ոչ աղօթէր,
յեօթն որդւոց զրկեցաւ։ և զաքարիա
հայրն յօհաննու մկրտչի աղօթիւք ըն֊
կալաւ զուրբ յօհաննէս։ և յովակիմ
և աննա զտիրամայրն մարիամ ա՟ծածին։
Է, Բանայ զդուռն դրախտին. որպէս
որ աջակողմեան աւազակին. որ սա֊
կաւ աղօթեց, և բազում ընկալաւ.
անագան ընթացաւ, և կանուխ ժա֊
մանեց։ Ը, Աղօթքն պայծառացու֊
ցանէ զմարդն երկնային փառօք. ուս֊
տի յօրինակ մեզ՝ քս՟ յաղօթելն
պայծառացաւ. որպէս
ասէ սբ՟ն ղուկաս
թէ, և եղև


ի

Ի կալն նորա յաղօթս՝ եղեւ տեսիլ ե-
րեսաց նորա այլակերպ. որ չէ թէ իւր
աղօթիցն վարձ ընկալաւ զայն պայծա-
ռութիւն · այլ մեզ ծանոյց թէ , ով
ոք որ անդադար աղօթէ , ի վերջին այս
պէս պայծառանալոց է։

Թ , Աղօթքն բժշկէ զմարդն ի հի-
ւանդութենէ · որպէս ասէ սուրբն յա-
կոբոս թէ , աղօթքն հաւատով փրկես
ցեն զաշխատեալն. Յարուցանէ զմե-
ռեալս · որպէս զղազարոս։ Փրկէ ըզ
զրպարտեալս · որպէս զշուշան.

Տանջէ զսատանայ · որպէս որ աղաղակէր
դեւ մի առ սր. առաքեալն բարդուղի-
մէոս թէ , չարչարեն և տոչորեն զիս
աղօթք քո. Փակէ և բանայ զերկինս ·
որպէս եղիայի աղօթքն զերկինսն փա-
կեց Գ. տարի և Զ. ամիս · և վերստին
եբաց։

Այլ թէ ինչ պատճառաւ աղօթքն
ընդունելի չեն լինիր երբեմն · բա-
զումք են պատճառքն. Նախկինն է՝


մեղք

մեղք աղօթողին․ որպ՟ ասէր ած՟ ե-
սայեաւ, յորժամ յաճախիցէք յաղօ-
թըս, ոչ լուայց․ զի ձեռք ձեր լիք
են արեամբ․ Եւ՚ի ծնէ կոյրն ասէր, գի-
տեմ զի ած՟ մեղաւորաց ոչ լսէ․
Երկրորդ, երկբայութբ՟ և չեւպհեով
աղօթեն․ որպս՟ ասէ սբ՟ն յակոբոս,
խնդրեսցէ հաւատով և մի՛ երկմտեսցի․
զի պետրոս առաքեալն ՚ի վերայ ծովու-
գնալն իջէն որ երկբայեցաւ, սկսաւ
ընկղմիլ: Երրորդն է՝ որ մարդ զան-
պէտն խնդրէ յայ՟․ որ ոչ տուողին
վայելէ, և ոչ առնողին օգտէ․ որպս՟
խնդրեն յայ՟ գեղեցիկ կին․ մալ և
ապրանք․ Չորրորդ՝ անարժանութիւն
վասն որոյ մարդ աղօթէ․ ինչ պէս հր-
էայք որ անարժան էին ազատութե՟,
երեմիա մարգարէի աղօթքն վասն նց՟
ընդունելի չեղաւ․ Ե, Չար և աղ-
տեղի խորհուրդքն կարգելուն զաղօթքն․
որպէս որ տօբիթ պղտորեալ մտօք նըն-
ջեր՝ ծիծռանց աղբովն կուրացաւ․

Զ, Խոտէն զա͞ծային օրէնս. որպէս
որ մէկ վարդապետ մի անլուր աշա-
կերտին դաս չի տար. այսպէս և ա͞ծ
անլուր մարդոյն զխնդիրն չի կատա-
րէր։ որպէս որ դաւիթ շատ աղաչէց
վասն մանկանն, այլ ա͞ծ չի լսեց. զէ-
րէ և դաւիթ անլուր եղաւ օրինացն
ա͞յ որ ասէր թէ, մի՛ չնար, և մի՛
սպանաներ։

Է, Խոստովանութիւնն. զէրէ մարդ-
որ չի լսէ աղքատին, և ա͞ծ չի լսէր
այնպիսի աղօթողին. ինչպէս մեծա-
տունն որ չի լսեց ղազարոսին, և ո՛չ աբ-
րահամ լսեց մեծատանն։ և սողոմոն ա-
սէ, որ խցէ զականջն առ ՚ի չի լսել
աղքատին, և նա՛ կարդասցէ առ ա͞ծ և
ո՛չ լուիցէ ա͞ծ։ Դարձեալ՝ ով ոք որ
քարասիրտ է և չի ողորմիր իւր պարտա-
ւորին, և ա͞ծ չողորմիր յաղօթելն ն͞ր.
զէրէ կասեմք թէ, թո՛ղ մեզ՝ որպէս
և մեք թողումք։ Ը, Յաւելուն ՚ի
մեղս. որ͞պ որ եսաւ ո՛չ եղաւ ար-
ժա

ժամի օրհնութե՟ն սահակայ հօր խրոյ·
զի ՚ի մտի ունէր սպանանել զյակոբ·
Թ՟, Անհամբերութիւն աղօթողին·
ուստի սաւուղ որ ոչ համբերեաց սամու–
էլի գալստեանն, այլ զպատարագ մա–
տոյց՝ ած ոչ ընդունեց· Ժ, Ո՟ չիմա–
սակարն խնդրել· որպս որ յակոբոս և
յօհաննէս խնդրեցին հրաման ՚ի քէ՟՝
յերկնից կրակ իջուցանել և այրել ըզ
գիւղ մի սամարացւոց՝ քս՟ արգիլեց·
և պօղոս խնդրեց որ խայթ մարմնոյն
բարձցի, և ած ոչ լսեց·

ԺԱ՟ տեղի աղօթից յատկապէս և
մանաւանդ եկեղեցին է · որպէս ասէ
դաւիթ, յեկեղեցիս օրհնեցէք զած·
և թէ՝ քեզ վայելէ ած օրհնութիւն
՚ի սիոն · և քեզ տացին աղօթք յէմ·
Նու պետրոս և յօհաննէս զիններորդ
ժամ աղօթիցն ասէին ՚ի տաճարին·
Իւքին եկեղեցին չի խափանէր զաղօ–
թելն ՚ի տան մէջ՝ յանկարծի
ժամանակի ·

այլ՝ կու խափանէ զկատարումն սուրբ
խորհրդոց 'ի մէջ տան . զէրէ եկեղե-
ցի՝ մախսուսէն զխորհուրդս և զաղօթս
կատարելոյ համար կու լինին.

Ո՛չ էրէ յեկեղեցին գալ և աղօթել՝
համբարապատիկ լաւ է քան 'ի մէջ տան
աղօթելն . զի ուր ժողովին երկու և
երեք , անդ եմ ես 'ի մէջ նոցա ա-
սաց քս. 'Նաև' գաւիթ ասէր թէ ,
հաղորդ արա զիս տր ամ երկիւղածաց
քոց. Այլ լինի թէ՝ մարդ անարժան է
զքած աղաչելոյ . և եկեղեցի որ կու-
գայ , արժանաւորաց աղօթիցն մասնա-
կից կու լինի. Որպէս որ 'ի քի ժա-
մանակն զմէկ անդամալոյծ մի 'ի ցըռ-
ռոց և պաշտօնեայէն որ քէժկերէյով 'ի
վեր կախեցին առաջի քի . Թէպէտ
այն քէօթըրիւմն կատարեալ հաւատքու-
նէր , լաքին սուրբ աւետարանն կա-
սէ թէ , և տեսեալ յս զհաւատս նց՝
ասէ ցանդամալոյծն , որդեակ՝ թո-
ղեալ լիցին քեզ մեղք քո.

զայս տասց վասն կատարեալ հաւատոյ
իջուցողացն այն անդամալուծին։

Այսպէս և մէկ մարդ մի որ արժանաւոր աղօթք չկարէ անել յեկեղեցին, լաքին խոնարհելովն և գալովն յեկեղեցի, արժանաւորաց աղօթիցն մանակից կու լինի որպէս զանդամալոյծն. որ հաւատով բերողացն բժշկեցաւ։ և այս է որ հաղորդութիւն սրբոց կասեմք
՚ի մասանց հաւատոյ մերոյ։

Այլ վասն ժամու աղօթիցն գիտացի՛ր, որ քն ժամանակ չէ սահմանեց, թէ յերեկոյին և կամ յառաւօտուն միայն աղօթէ. այլ ասաց թէ, պարտ է յամ ժամ յաղօթս կալ և մի՛ ձանձրանալ։ և ինքն տէրն՝ զգիշերն բոլոր
աղօթէր և՚ի ցերեկն քարոզէր։

Բու դաւիթ՝ եօթն անգամ յաւուրն օրհնեցից զքեզ ասէր։ Լաքին գիտել պէտք է, որ տայիմ աւանց գործ գործելոյ՝ աղօթից պարապելն միւնքիւն չէ. զէրէ մարմինն այլ զիւրն կու



խընդ

խնդրէ․ ապա յամենայն ժամ աղօ-
թելն որպէս լինի։

Իմացի՛ր որ աշխարհս սուտ փորձու-
թեան եւ պատերազմի է․ եւ աղօթքն զէն
եւ փուստ քրիստոնէից է․ այլ զէն-
ուորն տայիմ ՚ի մէջ պատերազմի գո-
լով՝ զզէնն ՚ի ձեռաց չի պիտի որ ձգէ։
այլ միշտ ՚ի գործոյ դադարելով աղօ-
թելն անհնար է․ սակայն մտօք աղօ-
թելն միշտ՝ կարելի է։

ՙԵւ՝ այն յամենայն ժամ ասելն՝ ո՛չ
ցուցանէ թէ քսան եւ չորս սահաթն
այլ պիտի աղօթեն․ զերէ քնոյ ժա-
մանակ կայ․ գործոյ ժամանակ կայ․
կամի ասել թէ, ՚ի ժամու և՚ի սահ-
մանեալ ժամանակի աղօթիցն՝ մի՛ յետ
կենար յաղօթելոյ։ որպէս թէ աշակեր
տի մի ասեմք թէ, ո՛վ մանուկ՝ տայ-
իմ ջանա՛ ուսանիլ․ կամիմք ասել թէ,
յուսման ժամանակն մի՛ դատարկ
կենար։

Դարձեալ՝ որովհետեւ աղօթքն է դար-
ձուած

ծումն մտաց առ ած , և պտուղ սըր-
տի և բերանոյ ընծայեալ այ վասն ըն-
կալեալ բարերարութեանց ՚ի նմանէ ․
Ուրեմն յամենայն ընկալման բարեաց
ժամանակն՝ ով որ շնորհակալ լինի
զայ և գոհութիւն տայ այ , այնպիսին
միշտ կարօղ է առ ած ․
Նաև՝ ամենայն բարեգործութիւն՝ է
աղօթք և շնորհակալութիւն այ ․ վերէ
աղօթից անունն՝ կերպիւ մի յամէն բա-
րեգործութեան վերայ կու դրվի ․ զի
անդադար աղօթող կոչի բարեգործ
մարդն ․ Նաև՝ սուրբ կենցաղավարու-
թիւնն մարդոյ՝ է աղօթք առ ած ․ զի
սուրբն սրտիւ և գործով՝ տեսանէ զած-
ղիւր նմանն՝ որպէս ՚ի հայելւոջ զպատ-
կերն այ ․ և ՚ի պղծալից գործոց դառ-
նայ առ աստուած ․
Ուստի՝ այն որ հաստատէ ՚ի սրբու-
թեան միշտ , ՚ի սրբութեան խորամ
երևեցուցանէ զպատկերն աստուծոյ
և տեսանէ զնա ․

ըստայնմ թէ, երանի որք սուրբք են
սրտիւ. զի նոքա զած տեսցեն.
Ապա այլ է աղօթքն, և այլ աղաչանքն.
զի աղօթքն՝ խնդրէ զպարգև ինչ յայ.
և աղաչանքն՝ խնդրէ ազատիլ ՚ի չարէ.
Դարձեալ՝ այն միշտ և անդադար ա
ղօթէ, որ զամ ինչ առ ած վերաբե
րէ որպէս առ տվօղն բարեաց. զէրէ
ինչ բան կայ մեզ որ յայ
առած չէ մք.

Այլ թէ ՚ի մէջ աղօթից ինչ պիտոյ
խնդրեմք յայ, քս կուսուցանէ
՚ի մէջ Հայր մերին՝ եօթն բան.

Առաջինն է այս. Հայր մեր որ յեր
կինս՝ սբ եղիցի անուն քո.
Երկրորդն է այս. Եկեսցէ արքայու
թիւն քո. Երրորդն է այս. Եղիցին
կամք քո որպ յերկինս և յերկրի.
Չորրորդն է այս. զՀաց մեր հանապա
զորդն՝ տուր մեզ այսօր. Հինգե
րորդն է այս. Թող մեզ զպարտս մեր

ԽԳ.



որ

որպ և մեք թողումք մերոց պարտապա-
նաց։ Վեցերորդն է այս․ Մի՛ տա-
նիր զմեզ ՚ի փորձութիւն։ Եօթն-
երորդն է այս․ Այլ փրկեա՛ զմեզ
՚ի չարէ։ Իսկ վերջինն՝ գոհութիւն է
և ոչ խնդրուած որ ասէ թէ, զի քո է
արքայութիւն և զօրութիւն և փառք
յաւիտեանս։

*

*Մեկնութիւն Աղօթին բանի
Հայր Մերին։

Հայր մեր որ յերկինս՝ սբ եղիցի
անուն քո։

Այսու բանիւ եղանէ երկրածին
մարդն յորդեգրութիւն հօրն երկնա-
ւորի և յեղբայրութիւն քի․ զերէ ՚ի
նոր արարչութեան՝ բնութեամբ որդին
այ՝ եղև որդի կուսին բնուբ․ և զմեր
բնութիւնն բարձրացոյց ինքեամբ։ լա-
քին յայս տեղս հայր անուանն ՚ի դէմս
սբ Երրորդութեանն է։
Արդ՝ ած ասի հայր մեր․ նախ զի

ստեղծեց զմեզ 'ի պատկեր իւր և 'ի նմանութիւն. Երկրորդ՝ զի գնեաց զմեզ ած պատուական արեամբն քի 'ի դժոխոց և 'ի մահուանէ. Երրորդ՝ զի 'ի ձեռն մկրտութե աւազանին ընդու-հաց՝ զմեռեալքս 'ի նոր կեանս հասոյց. Չորրորդ՝ զի որդեգրեաց զմեզ 'ի ձեռն շնորհաց յորդիութիւն. Հինգերորդ՝ կոչմամբ. որ զմեզ յերկնից արքայութիւնն և ժառանգութին հրաւիրեց.

Եւ թէ՝ վասն էր քն ուսոյց մեզ զած-հայր կոչել յաղօթս. Նախ՝ զի իբրև որդիք հնազանդ լիցուք նմա և ծառայեսցուք. և երկիցուք որդիական երկիւղիւ. որպէս ասէ սուրբն պետրոս առաքեալն, եթէ հայր կոչէք զայն՝ որ առանց ակնառութեան դատէ, երկիւղիւ զձերոյ պանդխտութե ժամանակն գնասջիք.

Երկրորդ՝ զի 'ի մէջ ամենայն բարեաց ոչ ինչ է առաւել ազնիւ բարի՝ քան զորդի. և թէ մեծ փառք է մարդոյ՝

աստուծոյ ծառայ կոչել, ո՛րչափ առա-
ւել փառք է որդի կոչել։ Եւ որպէս հօր
բարին՝ որդինն է, այսպէս և որդւոյ բա-
րին՝ հայրն է․ յորոց միջն հեռ և նա-
խանձ չէ արմատանար։

Երրորդ՝ զի հայրն առաւել լսէ որդ-
ւոյ և Ճ̄ խնդիրն հաճի, քան թէ Ճ̄
խնդիր ծառային։ Ուստի՝ վասն բնու-
թեամբ որդւոյն ասաց հայր 'ի յորդա-
նան թէ, ընդ որ հաճեցայ։ Եւ մեք
հայր կոչելով զած, զամ խնդիրս մեր
քաղցր ցուցանեմք նմա։

Եւ որդին՝ որո՛յ առաւել խնդրէ հա-
ճոյանալ քան թէ հօրն։ Զէրէ մինչ
զած հայր կոչեմք, զսէր նորա 'ի վերայ
մեր կու զարթուցանեմք․ և 'ի ծնո-
ղական գութ կու շարժեմք։

Մ․ւլ որպէս հայրն առաւել լսէ որդ-
ւոյն, և որդին առաւել պիտի լսէ
հօրն։ զէրէ թէ մարմնաւոր ծնողաց
և հարց հնազանդ պիտի գտնվիմք, որ
երկինքի պատճառ են

 մեզ

ազգի միայն մարմին տալով մեզ , ապա ա̃յ հօր որքան պիտի հնազանդիմք՝ որ զհոգին մեր ունիմք 'ի նմանէ .

Չորրորդ՝ զի որդին ժառանգ և միրասխօր է բարեաց հօրն . որպէս ասէ ս̃բն պօղոս . եթէ որդի , ապա և ժառանգ . իսկ թէ ա̃ծ զհայրական անուննն չի խնայեց մեզ , պիտի խնայէ՞ 'ի բաշխան իւր 'ի տալ մեզ . անոր համար ուսոյց մեզ հայր կոչել զա̃ծ , որ ժառանգակից առնէ զմեզ իւր բարեացն . քաւութե̃ , թողութեան , և յաւ̂իտենական կենաց . Հինգերորդ՝ զի եթէ մեզ հաճոյ է որ զա̃ծ հայր կոչեմք . որ պիտի զնմանութի̃ հօրն ունենամք . այսպէս և ա̃յ հաճոյ է մեզ հայր կոչել՝ յորժամ տեսանէ թէ զն̃ր մանութիւն իւր 'ի մեզ բերեմք . այլ զի ա̃ծ հայրն մեր երկնաւոր է . և մեզ պէտք է երկնային կենցաղավարութիւն ստանալ .

Եւ թէ վասն է՞ր ասաց՝ մեր ասել .



զէ

զիարդ միայն Ք՟ս է բնութ՟բ որդի ա՟յ·
և նա միայն կարէ ասել հայր իմ · և
մեք շնորհօք որդի եմք և ոչ բնութ՟բ·
և ոչ մէկ մարդ է միայն որդի ա՟յ շը֊
նորհօք , այլ ա՟մ քրիստոնեայք·

Անոր համար չեմք կարեր ասել հայր
իմ , այլ՝ հայր մեր · որ զամէն քրիս֊
տոնեայ՝ մեզ եղբայր իմանամք և ժա֊
ռանգակից արքայութե · և իբրև միոյ
հօր որդիք սիրեմք զիրեարս։ և՛ի թու֊
լանալն միոյն 'ի յաղօթից և՛ի կարօտին
իւր իմիք , միւսոյն աղօթիւքն օգ֊
տիմք · զիարդ կամեցաւ Ք՟ս՝ աղօթել
մեզ վասն ա՟մցուն · զի և ա՟մքեան ա֊
ղօթեսցեն վասն մեր · զի յամենից
աղօթից առնիցեմք զպտուղ հոգևոր
վարձուց·

Որ յերկինս ես։) Ո՛վ Տէր երկինքն
պարունակէ զամենայն ստեղծ֊
ուածս , և այս որ կասեմք թէ՝ յեր֊
կինս է , կամիմք ասել թէ , որ կայ
յամենեսեան նախախնամելով

և

և կռուավարելով։ Պարծեալ՝ թէպէտ ած յամ տեղի է, զիւր զերկինս և զերկիր ես լնում ասաց, լաւքին առաւել զօրութիւն ած երևի յերկինս. ով 'ի հրեշտակս. 'ի լուսեղէն երկինքն.

և յաստղալից երկինն.

Պարծեալ՝ ասեմք յերկինս, ցուցանելով թէ զժառանգութիւն զոր ած մեզ խոստացեր է՝ ոչ է երկրաւոր և ապականացու, այլ երկնային և անապական. Պարծեալ՝ ասեմք յերկինս, զի յաղօթելն մեր զմիտս մեր համբարձցուք 'ի վեր յերկինս.

Անոր համար յաղօթելն մեր՝ դարձուցանեմք զերեսս մեր յարևելս. զի յարևելից համբարձաւ Եղբայր մեր Քս յերկինս. և յարևելից խաչն փայլելոց է. և յարևելից գալոց է փրկիչն մեր 'ի դատաստան. Պարծեալ՝ ասեմք յերկինս, զի իմասցուք թէ, յաղօթելն մեր՝ խնդրելոց եմք զերկնայինսն և ոչ զերկրաւորս. որպէս



ասէ

ասէ յակոբոս , զվերինն խնդրեցէք
և խորհեցէք . ուր քս̃ նստի ընդ աջմէ
հօր . և մի՛ որ յաշխարհի աստ են .

Սուրբ եղիցի անուն քո . ) Նախ՝ կա-
միմք ասել թէ , ով ա̃ծ հայր՝ զայն
որդութիւն զոր ՚ի մկրտութեան վայելե-
ցաք՝ հաստատա պահեա ՚ի մեզ . մաքուր
և անարատ . Երկրորդ՝ կամիմք ասել
թէ , հայր ե̃ր՝ խնդրեմք , որ քո ս̃բ
անունդ յամենից փառաւորի . և ոչ
թէ կռոց , և հերձուածողաց , և սա-
տանայի անուանն . զերբէ հայրական ա-
նուանն՝ միայն քեզ կու վայելէ . այլ սա-
տանայ և կուռք և հերձուածողք՝ աշ-
խարհ և ունայնութիւնք տէր՝ ոչ են
մեզի հայր . այլ միայն դու .

Ուրեմն զայդ հայրական անունդ որ
մեք կու խոստովանիմք , արա՛ զի յա-
մենից փառաւորեսցի . որ մեք ՚ի լսելն
զփառաւորելն անուան քո միայն , ցըն-
ծամք և ուրախանամք

վասն յայտնվելոյ Ճշմարտութեան։
Ո՛վ էրէ և քե՛ գալուստն յՏ՟՝ էր առ
՚ի ծանուցանել զայս քաղցր և օրհնեալ
հայր անուն։ որպէս ասաց թէ, հա՛յր
յայտնեցի զանուն քո մարդկան։
Երրորդ՝ կամիմք ասել թէ, քո ա–
նունդ որ է սուրբ և մաքուր հայրու–
թեան անուն. որ ոչ ախտիւ ծնանիս,
այլ անախտաբար, որո՛մ զքեզ յամենից
սրբութիւն անուան քոյ հռչակվի. և
կայուն և հաստատուն մնայ յամենայն դարս
և ժամանակս։ Ո՛վ է որ՛ ՚ի մէջ հրեղ
տակաց երեք սրբեան օրհնութեամբ
գովիս և օրհնիս, նոյնպէս և բանա–
կան արարածք ճանաչեսցեն սուրբ ա–
նել զանուն քո, որ է սրբացուցիչ մեր։
Որպէս և մարիամ ա՟ծածինն յօրհնու–
թեան մէջն ասէր թէ, արար ինձ
մեծամեծս հզօրն. որ սուրբ է անուն
նորա։ Լ.Ժ. յորժամ ասեմք թէ, սր՟
եղիցի անուն քո, ոչ թէ սրբեմք ըզ–
մաքուր անունն աստուծոյ. որ է

 ամեն

ամենեքին սուրբ և մաքուր, այլ խնդ-
րեմք՝ զի որպէս զհայրական անուանն
մեզ հաղորդեաց, և զորդութիւնն
հաղորդեսցէ մեր հոգւոյն. որպէս
և Քս̄ ասէր թէ, ես 'ի վերայ նոցա սբ̄-
աւնեմ զանձն իմ. զի եղիցին և նոքա
սրբեալք ճշմարտութեամբ: Որ է
մինչ զԱ̄յ անուանն սուրբ քննել գովեմք,
յայն աստ սրբութենէն մեզ բաժին
անուամք և վայելեմք. որ է հաւատն,
յոյսն, և սէրն. և այլ ամ̄ բարե-
պաշտութիւնք:

Որ 'ի սրտին մեր և մաքրապէս կեն-
ցաղավարին՝ փառաւորի անուանն Ա̄յ.
որպէս ասաց Քս̄, այնպէս լուսաւո-
րեսցի լոյս ձեր առաջի մարդկան. ոյ̄
զի տեսցեն զգործս ձեր բարիս, և
փառաւորեսցեն զՀայր ձեր որ յեր-
կինս է. Այլ անմաքուր կենցաղավա-
րութեամբ ո՛չ փառաւորի
անուանն Ա̄յ, այլ
հայհոյի:

*Մեկնութիւն Աղօթիցն Երրորդ Բանին
Հայր Մերին.

Եկեսցէ արքայութիւն քո։ Յաւուր քան զքո գալուստն 'ի յաշխարհ՝ մարդիկ այնքան տգէտ էին, որ ըզ դևս և զկուռս՝ խուրեանց վերայ կու թագաւորեցնէին. և զիրենք ծառայ կանէին չնչին ստեղծուածոց. որպէս ասէ պօղոս, մինչ տղայքն էաք, ընդ տարերբ աշխարհիս 'ի ծառայութեան կայաք։ Իսկ զքին քո որ եկաւ յաշխարհ, կամեցաւ ազատել զմեզ 'ի ծառայութենէ ստեղծուածոց. մեղաց, և մահու. և միայն կամեցաւ զի թագաւորեսցէ 'ի վերայ մեր անունն երկնաւոր թագաւորին. անոր համար մեզ ուսոյց աղօթել և զայս խնդրել՝ որ է հաճոյ մէյ, և մեզ շահաւէտ.

Ո՛վ Տէր զի՞նչ օգուտ է ծառայել այնպիսի տիրոջ, որ ինձ ծառայեցիր տէյր՝ 'ի վերջն զմեզ չարչարելոց է.

որ է՝ աշխարհ ։ սատանայ ։ և մեր մար-
մինն և մեղքն։

Այլ արքայութիւնն և թագաւորու-
թիւնն այ՝ չորս կերպ է։

Առաջինն է տէրութիւն ի վերայ ամե-
նայն ստեղծուածոց ։ և այս թագա-
ւորութես համար ասէ դաւիթ թէ,
արքայութիւն նորա՝ ամ̃ցուն տիրէ։
որ թէ ստեղծուածք կամենան և թէ
ոչ, ած իւր կարողութեամբն կու տի-
րէ հարկաւորապէս ։ և այս մօջս ոչ է
բանն քո։ Երկրորդ՝ արքայութիւնն
այ՝ է թագաւորութիւն հոգևոր ։ որով
տիրէ ած ի հոգիս հաւատացելոց մ̃րց
և ընտրելոց։ և զայս պարտիմք խնդրել։
զի ած թագաւորեսցէ ։ և սատանայի
իշխանութիւնն խափանի ։ և մեղքն
արտաքսի ։ զի մի՛ թագաւորեսցեն մեղքն
ի մահկանացու մարմինս մեր։ զի մինչ
ած թագաւորէ, այ հակառակ թա-
գաւորութիւնն սատանայի՝ ոչնչանայ
և հերքի։

Երրորդ՝ Թագաւորութ՟ին ա՟յ է յերկինս. յորում ա՟ծ կու Թագաւորէ՛ 'ի վերայ սրբոց և երանելեաց. և զայս կու խնդրեմք յա՟յ, թէ և զմե՛զ մասնակից արա այն քո արքայութեան որ է յերկինս. յորժամ մերժեալ են ցաւք և նեղութ՟իք և ներհակ թագաւորութ՟իք. որպէս զի 'ի թագաւորելն քո, և մեք ընդ նմա թագաւորեսցուք յերկինս.

Չորրորդ՝ Թագաւորութ՟ին ա՟յ է կատարեալ. որ է յայտնելոց յաւուրն դատաստանի. որ ք՟ս յաղթելով զսատանայ՝ զմեղս և զմահ ջնջելով յա՟է, թագաւորեսցէ 'ի վ՟ր թշնամեաց իւրոց արդարութ՟ք. զի արդարութ՟ի հաստատէ զաթոռ թագաւորի. Եւ մեք զայս և կու խնդրեմք. որ գայ ք՟ս արքայութեամբ իւրով. և զսատանայ և զմեղս և զմահ խափանէ 'ի մէնջ. և զկարողութիւն սատանայի և անզգամ հալածողաց քրիստոնէից բնաջինջ առնէ.

Նաև այս բանիւս կամիմք ասել թէ,

ով

ով տր ած՝ դու միայն Թագաւորեա՛ ՚ի հոգիս մեր, շնորհօք կայս կեանքս, և փառօք ՚ի միւս կեանքն ։ զի ընդ քն և մեզ նորա յերկինս Թագաւորեսցուք. և քս ՚ի մեզ որպ փեսայ յառագաստի իւրում Թագաւորեսցէ.

*

## *Մեկնութիւն Խորհրդոյ Բանի Հօյր Դրբին.

Եղիցին կամք քո որպ յերկինս և յերկ-րի. Ասամք ասել թէ, ով տէր ած և հայր՝ մեք մեզքէն մեր կարողութեամբն մեկ բան մի կարող չեմք որ առնեմք. զի ոչ եթէ անձամբք մե-րով բաւական եմք առնել ինչ որպէս ՚ի մենջ. այլ բաւականութի մեր ՚ի քէն է ըստ պօղոսի. Ուրեմն որպէս զհրեշ-տակս ՚ի յերկինս լցեր ես ածային շնոր հօքդ և հաստատեր ես ՚ի բարին՝ որ տայիմ զքո օրհնեալ կամքն կու կատա րեն և՚ի կամաց քոց ՚ի դուրս չեն ելա նեն, (որպէս երէց ուղէն ասաց



հօրն

հօրն Թէ , այսչափ ժամանակ ը̅ քեզ
եմ և երբէք զհրամանաւ քով ո՛չ անցի.
որ զբոյս ասօղն հրեշտակք էին . որ
մեզ մեծ եղբարք կասմին) այսպ̃ և մեզ
տո՛ւր շնորհք և կարողութիւն . որ յամ̃
գործս մեր՝ քո կամքդ կատարվի . և
ըստ կամաց քոց մեր գործն աւարտի.
Ս. ԺԼ որպ̃ս զԹագաւորելն նորա խնդրե
ցուք 'ի վերայ ամ̃ի , այսպէս և զկամա
րուամ̃ կամաց նորա կու խնդրեմք Թէ ,
յամենայն քո կամքդ Թող կատարվի՝ ո՛պ̃
յերկինս 'ի մէջ հրեշտակաց.
Ս. ԺԼ կամքն ո՛պ̃ է բարին , և հաճոյն ,
և կատարեալն. Որքամն կամիմք ասել
Թէ , որպէս հրեշտակքն յերկինս բա
րութեամբ և շնորհօք լցեալ են , և՛ի
ձեռն այն շնորհաց՝ զհաճոյն քո կու
ջանան առնել , և՛ի ձեռն ջանից կու
կատարեն՝ և զկամքն քո 'ի կատար կու
հասուցանեն , ուրեմն խնդրեմք որ
զմեզ այլ՝ բարի շնորհօք լցուցանես , որ
զհաճոյն կամաց քոց կատարեմք . և ո՛չ
մի

միայն մեզ , այլ և ամ̃ ստեղծուածք
'ի բարերարեն մեզ , կամ 'ի տանջեն
և 'ի խրատեն , կատարողք կամաց քոց
գըտանվին ։

Ուրեմն ո՛չ է տրտնջելի ընդդէմ ցըր-
տութեան և ջերմութեան · երաշտու-
թեան և անձրևի · սովու և առատու-
թեան ։ Վասն ի՞նչ պատճառի · ա-
նոր համար որ կասեմք թէ , եղիցին
կամքն քո ։ Օ երբ ո՛չ գիտեմ՝ պէտքի
քեզ որ մէկ բան մի զըլթ կու երևի ,
լինի թէ՝ կամօքն այ̃ այն քեզ պատա-
հեր է · կամ 'ի խրատ , կամ 'ի զգու-
շութիւն ։

Օ երբ կասեմք թէ ; որպէս յերկինս ·
այլ յերկնից հպարտ հրեշտակքն ան-
կան · զի այնպէս կամեցաւ ած̃ ։
Ուրեմն և 'ի վերայ աշխարհի պարտ չէ
որ տրտնջայ մարդ՝ թէ ինչի՞ համար
այսպէս և այնպէս կու պատահի ։

Օ երբ այն որ մեզ չար կերևի , բազմիցս
բարի է և բարւոյ պտ̃ճառ ։ Ինչ այլ չար-


չա

չարամիքն դառն և լեղի կերևէր․ լաքին
ասաց առ հայր թէ, եթէ հնար է անց-
ցէ բաժակս այս յինէն․ ապա թէ
ոչ՝ որպէս զոր, եղիցին կամք քո․
Նաւ յոր երանելին ՚ի մէջ փորձութեան
կասէր թէ, եթէ զբարիսն ընկալաք
յայ, չարեացս ո՞չ համբերիցեմք․
Օ երէ յամի՛ զկամքն այ պիտիր նա-
խադասեմք մեր կամացն․ և զկամքն այ
այնպս պիտիր կատարեմք, որպ թէ ըզ
մեր կամքն կու կատարեմք․
Դարձեալ՝ կամքն այ այն է՝ զոր արար
և ուսոյց քս․ որպէս ասէ սբն կիպրի-
անոս․ այսինքն, խոնարհութի ՚ի յըն-
կերակցութե․ հաստատութիւն ՚ի հա-
ւատն․ անկարծառութիւն ՚ի յոյսն․
ջերմութի ՚ի սէրն․ ճշմարտութիւն ՚ի
բանս․ արդարութիւն ՚ի գործս․ ողոր-
մութիւն ՚ի պիտանաւորութե․ իմաս-
տութի ՚ի վարս․ համբերութի ՚ի նախա-
տինս․ խաղաղութի ընդ եղբարս․
Անսել պտծ․ զի բարի է․ հնազան-

դիլ նմա · զի հայր է· երկնչիլ 'ի նը-
մանէ · զի թագաւոր է· յուսալ 'ի
նմանէ · զի ո՛չ է խաբօղ· ապաւինիլ
'ի նա · զի կարօղ է· լսել և հաւա-
տալ նմա · զի ճշմարտութիւն է ·
Եւ ո՛չ ինչ քան զքս̃ բարի հաւատալ
և պատուելի համարիլ · զի և նա ո՛չ ինչ
բարի համարեցաւ քան զմարդն · որ
զբոլոր կեանքն վասն մարդոյն եդ·
'Ի սէր նորա մերձենալ · և առ խաչ
նորա կամօք մօտենալ · և զչարչարանս
նորա յանձն առնուլ· Երբ որ վասն
նորա բան հարցանիցի, առանց ամօթոյ
և երկիւղի զճշմարիտն պատասխանել·
Ահա այս է զկամքն Այ̃ կատարել, և
զկամաց նր̃ կատարումն խնդրել·

*

## *Մեկնութիւն Աղօթից Բանին Հայր մերին.

Զհաց մեր հանապազորդն տուր մեզ
այսօր· Կամիմք ասել թէ, ո՞վ

տր մեր և Հայր երկնաւոր. որովհետև զքեզ կորուսաք հայր. և զանուն քո մեր բարեգործութեն կամեցաք փառաւորիլ յամենից. և զկամացդ կատարոմն խնդրեցաք. և զպատուաստ արքայութեանդ. և զոխերեալդ 'ի վերայ ամի ցանկացաք.

Ուրեմն և դու երկնաւոր հայր՝ զհանապազորդական հոգեպէս հացն մեր տուր մեզ և յայսմիկ աւուր. զի դու յամենայն ժամու նախախնամիչ և պահպանիչ ես արարածոց քոց. Ս հրեշտակս քո և զեղբարս մեր կերակրես իմանալի հացին տեսութեանդ.

Նաև զերկնային աստեղսն կերակրես մըշտընջենաւոր փայլմամբ առանց նուաղի և պատրոյկի. Նաև զամ թռչունս առանց սերմանելոյ և հնձելոյ և շտեմարանի կերակրես բարեգութ կամօք քո։ Նաև զգազանս և անասունս և զձկունս 'ի ծովու դարմանես և կերակրես նախապատրաստեալ ուտելեօք.



Նաև

Եւ զմեր հանապազորդական կերա_
կուրն և հացն տուր · որպէս յերէկ,
նոյնպէս և այսօր. Եւ որպէս որդւոցն
Իսրայէլի յանապատին՝ ի տարի մանա_
նայ իջուցեր յերկնից առանց աշխա_
տանաց կերակուր նոցա պատրաստելով.
Եւ մեզ այլ՝ որ կամք 'ի վերայ աշխար
հի և մեղաւոր գոլով յեմք արժանի մեր
կերած հացին , պարգէ՝ դու որպէս
աննախանձ հայր գթած՝ տուր մեզ ըզ
հաց մեր հանապազորդական.

Ո՛չ է որպէս մուրացկանք առ մեզ դի_
մեն , և մեք 'ի տվեալ բարեացդ ըզ
նոսա ուրախացնեմք · և մեք մուրաց_
կա՛ն եմք շնորհաց քոց. աղքատն 'ի
մենէ մուրայ , և մեք աղքատքս 'ի քէն.
մեք տամք աղքատին զմարմնաւոր հաց,
և խնդրեմք 'ի քէն զերկնաւոր հացն՝
որ է քրիստոս.

Եւ թէ ընդէ՛ր դէ ասէ. Ա՞սէ ս͞բն
յօհան ոսկեբերան թէ , որ ըզ
վասատակս ձեռաց արդարու թեամբ
ձա

Ճաշակէ՝ զիւր հացն ուտէ. և որ մե֊
ղօք և դառնութեամբ կեայ՝ զօտա֊
րին հացն ուտէ.

Իսկ այլաբանօրէն, իմացի՛ր որ իս֊
րայէլացիք յանապատին զմանանայն
ժողովէին յուրբաթի օրն և վասն շա֊
բաթի աւուր. և մեք կամիմք ասել,
և դու մ՟ր և հ՟յր երկնաւոր՝ զհացն
զոր այսօր խնդրեմք, զվաղուեանն ևս
պատրաստեա՛. այսինքն, զայն որ յար֊
քայութեանդ վայելելոց եմք ՚ի վաղ ա֊
ւուր յարութեան մերոյ.

Նաև ըստ Նկարագրին՝ խնդրեմք ըզ֊
հաց, որով մարմին մեր սնանի. զի որպէս
զկեանքն յԱյ ունիմք, այսպէս և զկե֊
նաց դարմանն ՚ի Նմանէ պէտք խընդ֊
րեմք. զի ՚ի հեշտալ փառաւորաց զկեր֊
կուր շահիմք. և այլոց փառաւորացն
ձեռնամուխ լի լինիմք.

Նաև այսօր անոր համար կասէ, զի
վաղն ոչ գիտեմք զապրելն մեր. և
թէ ապրիմք՝ որպէս յերէկ ոչ խընդ֊



րե

րեցաք վասն աւուրս՝ և ետ , նոյնպս
և զվաղուեանն կարող է տալ .

Ո՛չ է աշակերտն քի՝ զայս աւուր դար
մանն միայն խնդրէ . և 'ի վաղորդենէն
արգելանի . զի վաղուեան տէրն՝ ած է
կասեն դուեհիկք .

Ապա շատք կան 'ի վարդապետաց՝ որ
զայս հացս մեկնեն 'ի վերայ հաղորդու
թեան հացին . զէրբ որ մարմնաւոր
հացն է , ած աւանց խնդրելոյ կու
տայ . այլ զայս հացս՝ խնդրելոյն մի
այն . Ասաց մեզ . հաց հանապազոր
դական ասէ . և մեք 'ի տարին մէկ
անգամ պիլէ կիւճիլէ կու ճաշակեմք .
և զայն այլ չեմք գիտեր թէ արժանա
պէս . զի առ երեսօք պատրաստութին
այնքան է , մինչև որ մէկ անգամ 'ի
բերան տանիմք . և յետ ճաշակելոյն
թէ զվարիճէ յառաջին փոխած մեղքն
մեր կու դառնամք .

Նու շատք կան որ չարաչար ու խտ կու
դնեն յուդայի նման ասելով , հեշէ



հեղ

հեղմի սրբութիւն առնեմ, տէս թէ
ինչ պիտի անեմ։

Որ կամի ասել, զկիրակն ՚ի հոգիս վա-
ռեմ, և զալէքն դու քետոյ տէս։
Աստուծով միւսաքիր կու բերեն ՚ի
տուն. և ծեծելով կու վարեն։

*

## *Մ՜եկնութիւն Հինգերորդ բանի Հայր Մերին.

Եւ թող մեզ զպարտիս մեր՝ որպէս
և մեք թողումք մերոց պարտապա-
նաց։ Կամիմք ասել թէ, մեք հուա-
ւոր և չափաւոր մարդ լինելով՝ քո ան-
հուն և անչափ ա̃ծութեանդ դէմ
մեղանչեցաք. և պարտական եղաք բիւր
քանքարոյ. և այլ ոչ կարող չեղաւ մեր
պարտուցն քէֆիլը պիլմալ լինիլ.
այլ Քս̃ որդին քո և Ա̃ծ մեր եղա-
ւ մեզի միջնորդ. և զմեր պարտքն վը-
ճարեց անապական հեղմամբ արեան
իւրոյ. Ուրեմն վասն նորա անհուն



մի

սիրոյն և պատուական և անգին արեան
խաթէրն համար՝ թող մեզ զպարտս մեր.
Լաքին՝ ամենևին դատարկ չէ լինիլ.
ահա՛ մեք քէզ անհուն մեղօք պարտա-
կան գտնվէր եմք. և մեր պարտատէրը-
քըն փոքր ինչ մեղօք խաթրպէնտէ ըղ
մեզ անելով, մեք անոնց պարտույն
թողութիւն անեմք, և դու մեր պար-
տուցն. մեք զնորա մէկ սուակն պա-
ղըշլամիշ անեմք, և դու որպէս ա-
ռատ և ձեռնամէրտ ամ՝ զմեր բիւր հա-
զար քանքարն շնորհեա մեզ.

Եւ որպէս աշխարհի պարտականքն՝
իրենց պարտատիրացն եթէ ո՛չ հատու-
ցանեն զպարտսն ՚ի սահմանեալ ժամա-
նակի՝ ՚ի բանտ արկանին, այսպէս և
ով որ այ պարտական է և ո՛չ հատուցա-
նէ ապաշխարութեամբ, վերջապէս ՚ի
յաւիտենական բանտն դժոխոց կար-
գելանի.

Եւ այս պարտքս մեղաց՝ ո՛չ լինի
շնորհեալ, եթէ ո՛չ և մեք մեր պար-
տա

տակաւին շնորհեմք և պաղըշխամիշ անեմք զսու չէ։ Նա շատ վատթար մարդ է այն՝ որ հագր ողջ վաստակիմ տէյլ՝ ըզ մէկն չի տայ։ և կամ ու ողջ պարտք ունենայ․ և ինքն մէկ ողջ յայըց վէ րայ․ և՛ի մէկ ողջէն չանցնի, որ ՚ի հա գուրէն այլ՝ իւր պարտապանն անցնի։ Նոյն՝ մեք այ անհուն պարտք ունիմք․ և յորժամ զերքօր սակաւ պարտքն չի շնորհեմք, և ոչ մեզ թագուամն շնոր- հեալ լինի։ Զի երբ կասեմք թէ, թող մեզ․ որպէս և մեք թողումք։ ու- րեմն թէ որ չի թողումք, և ոչ մեզ թողեալ լինի։

*Մեկնութիւն Աշխարհի բանի
Խոյժ Դրքին։

Նա մի՛ տանիր զմեզ ՚ի փորձութիւն։
Ասեմք ասել թէ, վա մեղաց մերոց շատ փորձու ինք կանայ զմեր ոտքն պլտիր առնէն․ թէ աշխարհի փորձութի, թէ մարմնոյ, և թէ սատանայի, լաքին կու



խընդ

խնդրեմք 'ի հայրական գթութենէդ՝ մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն, որոց ոչ կարեմք հանդուրժել։

Այլ եւ եկեղեցին տայիմ կաղաչէ զՏր̃ ասելով թէ, վասն չանկանելոյ մեզ 'ի փորձութիւն. որում ոչ կարեմք հանդուրժել՝ զՏր̃ աղաչեսցուք։

Նա եւ առաքեալն ասէ, փորձութի̃ 'ի ձեր վերայ ոչ է եկեալ բայց 'ի մարդկանէ. այլ Ած̃ հաւատարիմ է որ ոչ արկցէ զձեզ 'ի փորձութիւն առաւել քան զկար ձեր. այլ արասցէ ընդ փորձութեանն եւ զելս. զի համբերել կարասջի՛ք։

Սուրբ՝ երեք են փորձիչք. Ած̃, եւ մարդ, եւ սատանայ. Ած̃ փորձէ՝ զի այլոց ծանուսցէ. որպէս զԱբրահամ փորձեաց. որ ինքն գիտէր զնորա հաւատոյ հաւատն. լաւքին այլոց իմացնելոյ համար ասաց թէ, այժմ գիտացի, զի երկիւղած ես դու յԱյ. կամի ասել թէ, այժմ ծանուցի եւ գիտ-



ցու

ցուցի այլոց. և զայն թոյլ ետ փոր-
ձիլ՝ զի առաւել պայծառասցի.
Մարդ փորձէ զի գիտասցէ և ճանա-
չիցէ. Նաև սատանայ փորձէ զի յաղ-
թեսցէ և ընկճեսցէ. Նաև մեք աղա-
չեմք թէ՝ մի՛ տանիր զմեզ ՚ի փորձու-
թիւն. Իբր թէ ասեմք, դու որ ա-
մենագէտ ես և կու ճանաչես և գի-
տես թէ՝ ո՛ւր տեղ մեզի փորձութիւն
և տուգախ կայ լարեալ. զոր մեք չեմք
կարեր ճանաչել և խափիլ կու գլոր-
վիմք և որպէս ճնճղուկ և ձուկն՝ ՚ի
ծուղակ ՚ի տուգախ և՚ի կարթն կանկա-
նիմք, դու քո կարողութեամբդ ըզ-
մեզ յե՛տ քարշեա.
Նաև կամ թէ, որ վասն մեղաց մե-
րոց ՚ի պատրաստեալ փորձութիւնն
պիտիր անկանիմք, նա՝ զպատճառն
փորձութեան զմեղքն ջնջեա՛ ՚ի մէնջ.
զի և փորձութիւնն հեռասցի և անցցի
՚ի մէնջ. զի մի՛ առանց քո օգնու-
թեան և եարողմին անկցուք. և դու-



ցէ

ցէ ելանել ո՛չ կարասցուք․ զի անկա՛
նելի գիւրին է , բայց ազատելն դըժ
ուարին ․ և երբեմն անհնարին․

Զի որպէս ըղմարիտ ձուկն 'ի սէփէ
թըն կու մտանէ սիրով հացին , լաքին
այլ ամենևին չի կարեր ելանել ․ այս
պէս և մարդիկ երբեմն կը'բռնըվին
'ի փորձութիւնս , և ո՛չ կարեն ազա
տիլ․ Լաքին չիմա՛ր է այն մարդն որ
խընդրէ ազատիլ 'ի փորձութենէ , և
սախընմիշ չի լինի․

Նաւ թէ այլ հնար որ չի կայ ազատ
ման 'ի փորձութենէ , յաղթել ապա
ւինելի է ․ որպէս ասաց Քս թէ , ա
ղօթս արարէք զի մի՛ անկանիցիք 'ի փոր
ձութիւն․

Լաքին շատք 'ի սրբոց՝ երբեմն կու
խնդրէին յայ որ 'ի նշան սիրելութե
իւրեանց՝ տայր հի՛անդութիւն և կամ
այլ նշան սիրոյ փորձութիւն մի ․ որպ
և աթենացւոց մանկունքն կաղաչէին
զաւթենա չաստուածուհին

 ասէ

ասելով թէ, զն՛ս տեղա 'ի մեզ ըղ
փորձութիւնս։ Օ երբ որպէս որ լա-
նաւապետն ոչ 'ի ժամանակս խըմանց և
հանդարտութեան պէտք կու լինի, 
այլ 'ի ժամանակս ալէկոծութեան. այս
պէս և առաքինին հոգին 'ի մէջ փորձու-
թեան պատերազմի։

Սակայն այս կատարելոց կերակուր է. 
զէլէ կամի յառաջացթէ, հէր առա-
մա տէ հիլ տիր քալամանտա պօղայ
լըմէք. Նոյնպէս և ամէն մարդոյ չէ
'ի մէջ փորձութեան ընտիր գտանիլ
որպէս զոսկ. Ն. ս լինէնքի այսպէս է'
որ նէմալիմ բան մի է 'ի փորձութեան
մէջն ընտիր գտանիլ, և որպէս ոսկի 'ի
բովս քննիլ, ուրեմն զդա աղաչելի է
որ թոյլ չի տայ դալ 'ի վերայ մեր փոր
ձութիւն. Օ երբ յառաջագոյն կամի
թէ, թէ հլքէտուն էմին օլմաք' չէրի
ակելը. և 'ի տարակուսելի խոս' վստա-
հութեամբ մերձենալի չէ։

Օ երբ 'ի փորձութիւն գնայ' որ յա-


ղօթս

զօթս ոչ յուսայ. զի ուրանօր աղօթքն յառաջ ընթանայ, մեղքն և փրկու-
թիւնն դժուարաւ զլուանեն
զոճղի.

*Մեկնութիւն Աղօթին Տէրունական եօթներորդ
Հայր Մերին.

Այլ փրկեա՛ զմեզ 'ի չարէ. Զայն չորս կերպիւ է. Նախ՝ չար ասի մեղքն. Երկրորդ՝ չար ասի պատիժն և պատուհասն. Երրորդ՝ չար ասի փիստն մեղաց. որ զըկէ զմարդն 'ի տեսութենէն աստուծոյ. և Չորրորդ՝ չար ասի և սատանայ. Նոյայս չորս կերպիւ չարէս կու խընդրեմք ազատիլ. Ոչ էրէ մարդ առանց այ շնորհացն օգնականութեան չի կարեր ազատիլ 'ի մեղաց և յորոգայթիցն սատանայի. որպէս որ Քրիստոս ասաց թէ, առանց իմ ոչ ինչ կարէք առնել. և սողոմոն իմաստունն ա է, գիտացի թէ՝ ոչ այլ ինչ կրեմ քինիլ ժուժկալ.

կալ, եթէ ո՛չ ած տայցէ։ Վասն
այնորիկ՝ քս ուսոյց մեզ յաղօթելն՝ փոյթ
վերջապէս ասել․ որ է կատարումն ա-
ղօթից և խնդրուածոց․ զի ամենայն
աղօթք և բարեգործութիւնք՝ վասն ՚ի չա-
րէ ազատմանն են և երանութեան
ժամանելոյ։ Դարձեալ՝ այսու բանիւ
խնդրեմք ազատիլ ՚ի չարէ, որ առ մեզ
քարշէ զմեզ և արգելէ ՚ի բարեգործու-
թենէ։ Ո՛ Տէր մինչ ասեմք՝ փրկեա՛
զմեզ ՚ի չարէ, գոլով վերջին աղա-
չանք՝ այլ խնդրելի բան չիք մեր․ զէ-
րէ զհովանաւորութիւն այս որպէս վա-
հան կու խնդրեմք ընդդէմ ամ չարեաց․
աշխարհի և սատանայի։
Ամէն․ Եւ ոմանք ասեն թէ, չար կայսմ
վայրի զբղջախոհութիւն կոչէ քս․ զի
այս հրովս առանել տոլորի բնութիւնս
մարդկային․ զի ընդհանրական է, և
առ ամենայն մարդ մօտ և մերձակայ։
Ասոր՝ ընդդէմ այս հրոյս բղջախո-
հութեան՝ պէտ է ածային փրկութեանն

խնդրեմք․ զի փորձութիւն ամփոփ
ձութեանց և գարշելի մոլութիւն քան
զեղջախոհութիւնն ոչ գոյ․ որ միայն
յերկինս կատարելապէս խափանի․ յոր
ժամ այս մահկանացուս խափանեսցի ՚ի
կենաց անտի, և ոգին միայն առ Ա̃ծ
դարձցի և միաւորեսցի։

Եւ զի յետ ազատելոյ ՚ի չարէ՝ մնայ մեզ գոհութիւն և փառս մատուցանել ազատողին․ վասն այնորիկ ՚ի վերջըն ասեմք թէ, զի քոյ է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս ամէն։

Որ կամիմք ասել թէ, յայնքան չարեաց մեք դժուարաւ կարեմք ազատիլ․ լա-քին քոյ է արքայութիւն և թագաւորութիւն և զօրութիւն․ և դու միայն կարես քո զօրութեամբդ փրկել զմեզ ՚ի չարէ և հասուցանել ՚ի փառս։

Եւ դարձեալ թէ, եթէ փրկես զմեզ ՚ի չարէ, այն քո զօրութեդ վայելէ



և

և թագաւորութեանդ և փառաց քոց
յաւիտեանս յաւիտենից.

Եւ դարձեալ թէ, ո՛ւմ է թագաւո-
րութիւն յաւիտենական և զօրութիւն
և փառք, եթէ ո՛չ քո Հայրութեանդ.
և այն է յաւիտենական. ուրեմն երկի-
ցի երկեցի. զի ամէն ասելն՝ նոյն է
թէ, եղիցի.

Այսինքն, քո թագաւորութիւնդ և
զօրութիւնդ և փառքդ յայտնեսցի
ամենայն աշխարհի.
Ամէն.

Վերջ Գործոյս Քրիստոնէականին
Առաջնոյ.

Նու արդ՝ 'ի վերջ շնորհս եդից զա-
ղօթ մի պիտանի՝ (Թէպէտ եւ յայլմէ)
համեմատ մտաց տ͞րունական հայր մե-
րոյն. որ թէ աշխարհականք ուրիշ ա-
ղօթք չի կարենան առնել, եւ յոր-
ժամ յեկեղեցի չի կարենան գալ վասն
առաւ՛ել հարկաւոր եւ պէճիտ բանի,
պարէ՝ զայս աղօթս 'ի հարկէ ասեն. եւ
մանկանց իւրեանց ուսուցանեն եւ ա-
սել տան. որ ամենայն պէճիտ իրաց
եւ խնդրուածոց պարունակօղ է.

*Աղօթ.

Ամենակալ Հայր մեր եւ ստեղծօղ.
Փրկիչ մեր Յ͞ս Ք͞ս. եւ միսի-
թարիչ մեր ս͞բ Հոգի. որ ես 'ի յեր
կինս 'ի մէջ հրեշտակաց՝ լուսաւորելով
զնոսա առ 'ի ճանաչել զքեզ. քանզի
դու ես լոյս յաւիտենական, որ բո-
բոքես զնոսա 'ի սէր քո. եւ դու ես
սէր՝ որ ընակիս 'ի նոսա, դու ես ծայ-

բարդյն և յաւիտենական բարի, որ ա-
ռանց քեզ ո՛չ գոյ բարի. զի դու ես աղ-
բիւր բարութեան. Սուրբ եղիցի ա-
նուն քո ո՛վ տէր մեր և հայր երկնաւոր.
պայծառասցի և 'ի մեզ յայտնութիւն
քո. զի ճանաչեսցուք զլայնութի բա-
րերարութեան քո. զբարձրութիւն
խոստմանց քոց. 'ի վեր քան զմիտս ըղ-
դերբադոյն փառս քո. և զանքննին խո-
րութիւն դատաստանաց քոց.
Եկեսցէ արքայութիւն քո. զի թա-
գաւորեսցես դու մեզ միայնակ 'ի ձեռն
շնորհաց քոց. և տարցես զմեզ յար-
քայութիւն քո. որ է տեսութիւն քո
յայտնապէս. և ուրախացուսցես զմեզ
'ի սէրն երկնաւոր բարեաց քոց.
Եղիցի կամք քո ո՛պ յերկինս և յերկ-
րի. զի սիրեսցուք զքեզ 'ի բոլոր սրտէ.
զքէն խորհեսցուք 'ի բոլոր անձնէ.
և քեզ միշտ ցանկասցուք 'ի բոլոր մը-
տաց. և զամենայն միտս և զխոր-
հուրդս մեր 'ի քեզ ուղղեսցուք. և


ըղ

զպատիւ քո՛ յամենայնում խնդրես-
ցուք. և զամենայն գործս և հոգս մեր՝
զմարմին և զհոգի մեր 'ի ծառայութի̅ն
քո ընծայեսցուք։ և զընկերս մեր իբրև
զմեզ սիրեսցուք վասն սիրոյ քո. և
'ի վերայ բարեաց այլոց՝ իբրև 'ի վե-
րայ մեր բարեացն խնդասցուք. և չա-
րեաց և վշտաց նոցա ցաւակից լիցուք։
Ս Հաց մեր հանապազորդ տուր մեզ
այսօր։ զսիրելի որդին քո հայր երկնա-
ւոր՝ զոր յմ̃ քմ̃ տուր մեզ 'ի կերա-
կուր և յըմպելի. և զխորհս հոգւոյդ
սրբոյ մեզ դաստիարակ և ձեռնտու
պարգևեա։

Եւ թող մեզ զպարտիս մեր։ 'ի ձեռն
ողորմութեան քո հայր երկնաւոր, և
անճառելի զօրութեամբ սիրելի որդ-
ւոյ քո տեառն մերոյ յի̅ քի̅, և
ամենառատ աղբերն բարութեան հոգ-
ւոյդ սրբոյ, և սրբուհւոյ ա̃ծածնին
և ամենայն ընտրելոց

և որդւոյ բարեխօսութեան թո՛ղ մեզ ըզ
մեղս · զի մեք որպէս մարդ մեղաք ,
և դու որպէս կարօղ ած ողորմեա՛ ·
Որպէս և մեք թողումք մերոց պարտապա
նաց · բարձ ա՛ր ՚ի սրտից մերոց զան
դրդութիւն և զնախանձ · զի թերևս
լիապէս և մեք թողութիւն շնորհես
ցուք յանցաւորացն մերոց · և զթշնա
միս մեր՝ վասն քոյ սիրեսցուք · և ո՛չ
ումեք չարի զչ՚ր փոխարէն հատուս
ցուք · Այլ մի՛ տանիր զմեզ ՚ի փոր
ձութիւն · այլ ՚ի յայտնի և յաներևոյթ
փորձութեանց ապատեա՛ զմեզ · և փրկ
կեա՛ զմեզ ՚ի չարէ · յանցելոցն , և յայժ
մէն , և որ գալոցն է · և զամենայն
գործս մեր հոգևորս և մարմնաւորս ՚ի
գիշերի և ՚ի տուընջեան ՚ի բարին
յաջողեա՛ ·
Զի քո է արքայութիւն և զօրութի̄ն
և փառք յաւիտեանս ·
Ամէն ·

Այս յարմարագոյն աղօթս նաև՝ առ ՚ի ընթ-
ռնլոյն առաւօտու ՚ի շաբթնոջն մեր ՚ի ընդոյ
տուէլ. ՚ի Հինգշաբթնջէ գիշերս էր
շարագրեալ.

Փառք քեզ Ած արթուն բնութի· որ ո՛չ երբեք ննջես պահապանդ իսրայէլի· Որ յանմահ պաշտօնէից քոց՝ իմացական ձայնիւ անդադար օրհնաբանիս· Որ և զմեզ զհողեղէն ծառայս քո յանձնեցեր ՚ի պահպանութի հրշտ· և կարգեցեր զքնածու բնութիս՝ արթուն ծառայիցդ խնամակալ թէ․ Զորս և կարգեցեր թմրեցեալ ծառայիս քո ձայնատու և արթնացուցիչ գիշերային խօնակս․ և ՚ի հողեղինացս հաճեցար առնուլ զօրհնութիւն․

Գոհանամ զքէն՝ երեքերանեան և անմատչելի լոյս մի Աստուածութի․ որ զիս ազատեցեր ՚ի խաւարադնաց գիշերաց՝ փոփոխութես իմոյ ՚ի թշնամեաց․ և զը՛ արթուն բնութի հրեշտակացդ՝

4:I օրհ

օրհնաբանակից քեզ արարեր։

Օ ի՞նչ տաց քեզ տրիտուր և փոխա-
նակ բարերարութեանդ՝ Տէր իմ, կեա՛նք
իմ, լոյս իմ և աղբիւր ամենայն բա-
րեաց. եթէ ո՛չ զկեանս իմ, զոր ե-
տուր և շնորհեցեր ինձ ՚ի գիշերիս
յայսմիկ, քեզ նուիրեցից՝ ՚ի մշտըն-
ջենաւոր և յանդադար փառաբանու-
թիւն. թէպէտ՝ չեմ բաւական ը͞ս
արժանեաց քոց փառաց օրհնել զքեզ։
Միայն թէ՝ դու որպէս որ հրեշտա-
կաց քոց տաս նոր ՚ի նոցա զկերպ՝ զա-
նազանապէս զքեզ օրհնելոյ և երգե-
սրբենի՛ փառաբանելոյ. տուր և
ինձ արթնութիւն մտաց, զի նորանմս
զնորոգիչդ կենաց իմոց օրհնեցից. և
զառաւօտս խաղաղութեան մինչև ցե-
րեկոյ՝ առանց փորձանաց հաճեսցիս
անցուցանել. որ խնդրեմս զարքայու-
թիւն քո՝ ՚ի սկզբան ամենից
խնդրանաց։

Որո՞ զի՝ ամենայն ազգ և ազինք ծա-



նի

նիցեն զքեզ տիրող երկնի եւ երկրի ,
եւ հրամայող ծովու եւ ցամաքի .
Դու եւ զմեզ բարիս բնութեան՝ ընդ
հաց եւ փառաւորաց քոց , ողորմութեամբդ
պարգեւեսցես . եւ արդար փառաւորելոց
քոց՝ յաւուրս յայտնման զքո արժանի
արասցես .
Որով եւ շնորհք իմ եւ խնդրս ընթանիցին ,
եւ աղաչանք 'ի փրկանաց սեղանոյ մեծա-
տանդ յագեսցին . եւ զքեզ խնե
օրհնեսցեն միշտ .
ամէն .

# Ցանկ 'ի վերայ Այբուբենից.


| | |
|---|---|
| Ագահութիւն | 247 |
| Աղօթք | 372 |
| Աղօթք անարժան | 376 |
| Աղօթք պիտանի | 417 |
| Աղօթելով ք ի՞նչ խնդրելի է | 384 |
| Այլ փրկեա զմեզ 'ի չարէ | 413 |
| Այն այո , և ոչն ոչ | 200 |
| Ապաշխարութիւն | 317 |
| Աստիճանք հաւատոյ | 28 |
| Աստիճանաց հաւատոյ մեկնութիւն | 33 |
| Աստուածպաշտութիւն | 103 |
| Արդարութիւն | 88 |
| Արիութիւն | 83 |
| Բանք առաքելոց 'ի վերայ հաւատոյ | 31 |
| Բարկութիւն | 237 |
| Բարոյական առաքինութիւն | 75 |
| Բղջախոհութիւն | 258 |




Գու

Գիտութիւն 100

Դրոշմ 301

Եղբայրական յանդիմանութիւն 209
Եկեսցէ արքայութիւն քո 394
Եղիցին կամք քո 397
Երանի աղքատաց 111
Երանի հեզոց 113
Երանի սգաւորաց 115
Երանի որք քաղցեալք են ար" 117
Երանի ողորմածաց 119
Երանի որք սրբք են սրտիւք 121
Երանի խաղաղարարաց 123
Երանի որք հալածեալք են 126
Երանի՛ է ձեզ 120
Երեք են փորձիչք 409
Երկիւղ 104
Եւ թո՛ղ մեզ զպարտս մեր 406
Եւ մի՛ տանիր զմեզ ՚ի փորձ" 408

Զհաց մեր հանապազորդ 401



Զըղ

Ողջունն 319
Օրութիւն 99

Իջ ՚ի դժոխս 47

Ժամանակ աղօթից 381

Ի դատել զկենդանիս և զմեռեալ 55
Ի թողութիւն մեղաց 63
Իմաստութիւն 92
Ի մի տր̅ յս̅ քս̅ 35
Ինն երանութիւն 107
Ի ցոյցս չգործել զչարն 203

Խաչն քի̅ որպ̅ տանելի է 13
Խաչն ո՞ւր տեղ նկարելի է 15
Խաչակնքելոյն մեկնութիւն 10
Խոհեմութիւն 80
Խոստովանութիւն 330
Խորհուրդ 96
Խորհուրդք եկեղեցւոյ 280

Ծուլութիւն 242

Կաթուղիկէ եկեղեցի 59
Կամաւոր աղքատութիւն 192

Հայր մեր որ յերկինս 385
Հանճար 94
Հաւատոյ միութիւն 25
Հաւատոյ մասունք 26
Հաւատամք ՚ի մի ա̅ծ 33
Հաւատամք ՚ի հոգին սուրբ 57
Հեզութիւն 196
Հեռանալ ՚ի պատճառէ մեղաց 202
Հնազանդութիւն որ ո՛չ է ՚ի մեղս 193
Հոգևոր ողորմութիւն 362
Հպարտութիւն 218

Մասնաւոր աստիճան 340
Մարմնաւոր ողորմութիւն 362
Մեղաց հասարակօրէն 212
Մեղաց սահման 213
Մեղք սկզբնական 218
Մեղք ներգործական 224

Մեղք որ առ ա̃ծ բողոքեն 266
Մեղք ը̃դդէմ հոգւոյն ս̃բյ 269
Մի՛ սպանաներ 164
Մի՛ շնար 166
Մի՛ գողանար 169
Մի՛ սուտ վկայեր 172
Մի՛ ցանկար կնոջ ընկերի 175
Մի՛ ցանկար ընչից ընկերին 180
Մկրտութիւն 292
Մշտնջենաւոր ողջախոհութիւն 194

Յարեաւ ՚ի մեռելոց 48
Յարութիւն մարմնոց 65
Յղացաւ ՚ի հոգւոյն ս̃բյ 38
Յսն զի՞նչ է 68

Նախանձ 232
„Պաս առնել և ապա ուտել" 205
Պերճերէ մեղք 263
Նստաւ ընդ աջմէ հօր 53

Շաբաթ և կիրակի 153


Որդ

Ողորմութիւն 198
Ողորմութիւն 315
Ողջախոհութիւն 84
Ո՛չ հոգալ վասն վաղուին 206
Որկրամոլութիւն 253

Չարչարեալ, խաչեալ, թաղ" 42

Պահոց վերայ բանք 364
Պատարագ 304
Պարգեւք հոգւոյն սրբյ 90
Պատիւ ծնողաց 160
Պատուել զանուններն այ 150
Պատուիրանքն այ 140
Պատուիրան վս միութենն այ 144
Պատուիրանք քի 192
Պսակին խորհուրդն 344
Պտուղք հոգւոյն սրբյ 134

Սահման հաւատոյ 20
Սահման խորհրդոց 283
Սահմանողքն աստուծ" հաւոյ 29

Սէրն զի՞նչ է 73
Սէրն այ և ընկերին 182 188
Սիրել զթշնամին 195
Մէ եղբայր անուն քո 391

Վերջին օծումն 336

Տէրն աղօթից 379

Քահանայութիւն 337
Քրիստոնէին նշան մը խաչն 11
Քրիստոնէական ուսանելին 7
Քրիստոնէական անունն 8
Քրիստոնեայ կոչիլը 8

## *Յիշատակարան Տպողի·

Փառք և երկրպագութիւն և'ի ձայն անլռելի գոհութե ամե-նասբյ Երրորդութեն Հօր ամենակալի և Որդւոյն միածնի և Հոգւոյն Ճշմարտի· որ իւրով ամենառատ շնորհի և ողորմութեն և անդառնալի բարեխօսութե Երջանիկ Կուսին Մարիամու և ամենօրհնեալ Սրբուհւոյ Ածածնին (յորոյ պատիւ Եկեղետանեցիս փրկաւէտ ուսանելի սոյն Գիրքս՝ որ յօդուած Ազգին՝ աշխարհաբառ ոճիւ, 'ի Տէր Յակոբ Արքեպիսկ և Կոստանդնուպօլսոյ Սէզ Պատրիարգէ՝ արդէն առ Քս հանգուցելոյ էր շարադրեալ·) և յաւկապէս օգնականութե Սբյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, և Մինասայ արագահաս սբյ վկային, ետ կարողութիւն անարժան ծառայիցս իւրոց՝ ներհինգամենայ միջոցի՝ այսր 'ի փրկութե

մեր ուսման հարկաւ որ՝ ծաղկերանդ
բուրաստանիս՝ երրորդին տպեցմամբս
բոլորջման 'ի կատար հասանիլ ։
Արդ՝ ով Ռոմաէր և 'ի մէջ հա-
ւատոյ ջերմեռանդ՝ լուսաւորչեան Սե-
րմէք ։ մինչ սիրով ստացեալ և զքաղց
րութիւնն ճաշակել և վայելեալ օգտիք
ինչ 'ի սմանէ , նախապէս՝ յաջողողին
Աստուծոյ արարչին ամի բերանալիր
փառս մատուսջիք ։
Այլ զկնի՝ զոր Գաղատասարեան Արիս-
տակէս Ռահանայս յետին ( որ 'ի
սէր սորին վառեալ և յորմէ ստիպեալ՝
յայսմիկ ԺԲ ամի երաշտացեալ եղանակի՝
բազում աշխատանօք զայս համադամ
խորտիկ՝ տպեցուցմամբ ձեզ Սիրե-
լեացդ սեղանաւորեցի) նոյն ծերունի
հարբս և Տալիթայ իրիցակին մարբս ,
և Իսկուհի և Տիրուհի քերբքս իմովք
հանդերձ , և զմկրտիչ և զյօհաննէս որ-
դիսն իմ , զուսիա՝ զկայենիկէ և ըզ
մարիամ դստերսն իմ ընդ Միլքի անուն

ԻԼ . 432 իւր

Երրեակին մօր Խուրեանց՝ ՚ի պահպա-
նումն յամենայն պատահարաց չարաց,
՚ի մաքուր մաղթանս ձեր աղերսեմ
յիշել ՚ի Տր̃·
Նա և՝ զննջեցեալ տէր յօհաննէս
մայրապապն իմ և զտէր պօղոս որդին,
և զերեցականայսն Նոցա զուլդանն և
զմարգարիտն · և զպապն իմ զհիւմ-
րիւզն և զմամն իմ զնուրին · և ինձ
աներացեալ՝ զտէրցու Արսէնի եղբայր
զխալէմքեար մահտեսի Ակոփիչ և
բախտաշատ փարպեան իմ՝ ընդ պ.ւհա
մօրէն արենամերձ ննջեցելոցն իմ
յիշեսջի՛ք առ Քն̃:
Յիշեսջի՛ք նա՝ զԱիրիձանեան հան-
գուցեալ Շնորհ Ակոփիչ Ա.ծ-
րայն, որ զայս Տպարան եացոյց յայս
մեկ Պօպրատան · և որոյ նարդենիս
Ախ-թ-ւ վէլէ զորդի նորին զՍու-
րատ ամիրայն, և ընդ նմին՝ զպայա-
զատ Սանուէլ և զՌեբրօբէ մի ս
որդիսն, Խուրեանց արենակցօքն



հան

Հանգերձ.

Նուէր՝ զպատրաստական ծառայ ձեր
զտպագրիչ տըցու Մարտիրոսն՝ որ
շարօղ և ցրուօղն է կազմարեայց ․ և
զայլ աշխատաւոր մշակսն գործարա-
նիս զքաւրուցի պաղատաարն և զաղաւամն
միշեսջի՛ք ․ զի և դուք միշեաջք եղի-
ջիք ՚ի Քն̃է Աստուծոյ
Տն̃է մերմէ ․
Ամէն.

Ի Յունուարի սկզբան սկսեալ և՚ի
Մայիսի վախճանին աւարտեալ.



ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ